

## ՀԱՅՈՑ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ

### ՑԱՆԿ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ

Պատասխանի թղթոյն սահակայ, և խոստումն կատարել գիայցուածս նորա:

Թէ ընդէր, վասն զի Քաղղէացւոց և Ասորեստանեայց մատենից ցանկագոյն են մեր իրք, ի յունականէն կամեցաք մեք ցուցանել:

Յաղագս անհմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց:

Յաղագս զի ոչ սակս Աղամայ և այլոց նահապետացն միաբանեցան այլքն ի պատմագրաց:

### ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

#### ԾՆՆԴ ԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ Ա

**Պատասխանի թղթոյ Սահակայ, եւ խոստումն կատարել գիայցուածս նորա:**

Սովոր Խորենացի յաղագս մերոյս ի սկզբան յայսմ բանիցս Սահակայ Բագրատունուոց խնդալ:

Չանսպար խաղացնունս ի քեզ աստուածայնոցն շնորհացն և զանդուլ հոգւոյն ի վերայ քոց իմացուածոցդ զշարժուն ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ՝ զիոգույդ ընկալեալ զծանօթութիւն, որ սիրելի իսկ իմոց ախորժակացս է, առաւել ևս սովորութեանցս: Վասն որոյ ոչ միայն գովել արժան է զքեզ, այլ և ի վերայ քո աղօթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի:

Զի եթէ վասն բանին մեք, որպէս ասի, պատկեր Աստուածոյ, և դարձեալ՝ Առաքինութիւն բանականին է խոհականութիւն, և քո յայսոսիկ անհատ ցանկութիւն՝ ապա ուրեմն գեղեցիկ մտածութեամբ գիտիականութեանդ քո վառ և բորբոք պահելով զկայծակն՝ զարդարես զբանն, որով մնաս առ ի լինելն պատկեր. ի ձեռն որոյ և զայսորիկ զսկզբնատիպն ասիս ուրախացուցանել, գեղեցկ և չափաւոր մոլութեամբ յայսոսիկ մոլեալ և զակատեալ:

Առ որով տեսնեմ և զայս, զի եթէ որք յառաջ քան զմեզ և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել զիշատակս բանից, և ոչ արտաքրուստ ուստեք այսոցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, և զքեզ այժմ այսպիսի եղեալ ծանեաք, – ապա ուրեմն յայտ է, թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ձանաչիս վեհագոյն, և բարձրագունից արժանաւոր գովութեանց, և յայսպիսի պատկանաւոր դնիկ յարձանագրութիւնս բանից:

Յաղագս որոյ հեշտաբար ընկալեալ զքո խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ի կատարումն, յանմահ յիշատակ թողուլ զայս քեզ և որ զկնի քո գալոց են ազգք. զի ազգի ես նախնականի, և քաջ և արգասաւոր՝ ոչ միայն ի բանս ևի պիտանաւոր խոհականութիւնս, այլ և ի մեծամեծ և ի բազում գործս արժանափառս. զորս յիշատակեսցուր ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի ի հօրէ ծննդաբանելու ազգաբանիցեմք զբովանդակն, իսկ զհայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն գուսան և զգիարդն յայտնելով համառօտ և հաւաստի, որպէս ի յունականս կայ ի պատմութիւնս:

Բ

**Թէ ընդէր, վասն Քաղղէացւոց եւ Ասորեստանեայց մատենից ցանկագոյն են մեր իրք, ի յունականէն կամեցաք մեք ցուցանել:**

Եւ ընդ այս մի որ զարմասցի, եթէ բազում ազգաց լեալ մատենագիրք, որպէս ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից և Քաղդէացւոց, յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք զՅունացն միայն յիշեցաք զպատճագիրս, և անտի զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել։ Քանզի ոչ թագաւորքն Յունաց միայն՝ որպէս զաշխարհակալութեանն, այսպէս և որ ինչ իմաստութեան ջանք՝ փոյթ յանձին կալան աւանդել Յունաց յետ զարտնին իրեանց յարմարել իրս, – որպէս և Պտղոնէոս, որ և Եղբայրասէր, պէտ արարեալ զամենայն ազգաց զմատեանս և զվէպս ի յոյն լեզու փոխարկեաց,–

(Բայց մի՛ ոք աստանօր զմեզ անուսումն համարեալ բամբասիցէ իբրև զանվարժս ոմանս և զտգէտս, որպէս թէ Եգիպտացւոց լեալ թագաւոր՝ մեր այժմ զնա յունաց գրեցաք։ Քանզի նուածեալ նորա և զՅոյնս ընդ իւրով ձեռամբ՝ անուանեցաւ Աղէքսանդրի և Յունաց թագաւոր, որպէս և ոչ մի ոք ի Պտղոննեանցն կամ յայլոցն տիրելոցն Եգիպտացւոց անուանեցաւ ոք երբէք. որ և վասն առաւել յունասէր բասր ունելոյ՝ ի յոյն լեզու զաշխատութիւն իւր ժողովէաց։ Է և այլ բազում այսպիսի ինչ պատճառ վասն ասելոյն մեր զնա Յունաց թագաւոր. այլ վասն համառօտելոյ զՃառս՝ բաւական լիցի ասացեալս վասն նորա:– այլ և բազում արք անուանիք և իմաստութեան պարապեալք ի յունաց աշխարհէն՝ հիգացան ոչ միայն զգիրս գիւանացն այլոց ազգաց թագաւորացն և զմեհենիցն յեղուլ ի յոյն բան, որպէս գտանեմք զայն, որ և զԲերոսսոսն յայս յորդորեաց զայր քաղդէացի և զվարժ ամենայն իմաստութեամբ, – այլ և զմեծամեծս և զզարմանալոյ արժանաւորս յարուեստից. և ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ. առ Ք. և զԹ. և զԿ. առ Ե. և զԾ առ Թ.: Եւ ժողովէալ զայսոսիկ արանց, զորոց և մեք զանուանսն հաւաստի գիտեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացւոց աշխարհին։ Եւ գովելիք են, որպէս իմաստասիրեցեալքն, յաղագս ջանին և իմաստութեանն առ ի յայլոց լինելոյ գտակք, առաւել ևս ոք ընկալան և պատուեցին զայսպիսի գիւրաս իմաստից։ Վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մոյր կամ դայեակ ասել իմաստից։

Եւ վասն առ ի յունաց զրուցաբանսն զակնարկութիւն մերոյ պիտոյիցս առնելոյ՝ բաւական է այսչափ։

#### Գ

### *Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց եւ իշխանաց։*

Կամին զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ, այլ աստէն իսկ, ի սկզբան մերոյ գործառնութեանս, զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս։ Զի թէ արդարէ արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցեն, որք գրով և պատճութեամբ գիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս, և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս և ի պատճութիւնս՝ ըստ նոցանէ և պարապեալքն այսպիսում ճգնութեան դիւանագիրք մատենից՝ ներբողականաց ի մէնջ արժանի եղեն ասից. ի ձեռն որոց և մեք յընթեռնուլն զար ի նոցանէ շարածս բանից՝ ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասինք, և քաղաքականս ուստմել կարզս, յորաժամ զայսպիսի ընթերցասիրեցեմք իմաստութեան ճառս և զրուցատրութիւնս, որք են Քաղդէացւոց և Ասորեստանեայց, Եգիպտացւոց և Հելլենացւոց. առ այսորիւք և փափագիցեմք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կալան, – ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն տիսմարութիւն, և անկատարութիւն ոգույն բանականի։ Զի թէպէտ և ենք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքրու սահնանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անզամ նուածեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել։ Արդ՝ այնոքիկ, որ և ոչ անձանց խորհեցան բարիառնել, և անուն

յիշատակի յաշխարհի թողուլ, զի՞ արդեօք և մեղադրութիւն մեր այնպիսիեացն ի ձահ պատահիցէ, զևս մեծագոյնս ի նոցանէ պահանջել և որ ինչ հնագոյն քան զնոսա:

Այլ ասիցէ ոք արդեօք. վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի ի վերայ զային: Այլ ոչ արդարև այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և զաւառաց, ևս և իրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբար գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպիական ազատութեան պայազատութիւն: Այլ ինձ թուի, որպէս այժմ և առ ինսն Հայաստանեայց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագ արանց անրանից, թուլամտաց վայրենեաց ձառել:

Բայց ընդ քո յոյժ զարմացեալ են ընդ մտացդ ծննդաբերութիւն, որ ի սկզբանցն մերոց ազգաց մինչև ցայժմուսս միայն գտար զայսպիուոյ մեծէ իրէ բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել–երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդի՛ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից, թէ ով յումմէ, և զինչ իրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ով ոք ի ցեղից որոշելոց ընտանի և մերազնեայ, և ոյք ոմանք եկը ընտանեցեալք և մերազնացեալք. և զգործս և զժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ մինչև ցայժմ.–գեղեցիկ զայս քեզ համարեալ ի փառս և անջան հեշտութիւն:

Առ որ այսչափ միայն ասացից. միթէ մատեան մերձ կայցէ ինձ, որպէս առի ի Յովք, կամ դպրութիւն քոց հայրենեացն, որով նմանագոյնս արդեօք Երբայեցւոցն պատմագրաց՝ ի վերուստ ի քեզ իջուցանիցեան անսխալ, կամ ի քէն և յայլոց սկսեալ՝ անդր ի վեր հանիցեամ ի սկիզբն: Բայց սակայն սկսայց թէպէտ և ջանիւ. միայն թէ շնորհակալ ոք մերոց գտանիցի աշխատութոանց: Եւ սկսայց՝ յորոց և այլքն, որք յեկեղեցւոց և ոյք քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս սկզբանն առասպեկտ, բայց եթէ զկնիս՝ ժամանակս ինչ արդեօք և զարս յայանիս, որում և աստուածայինքն ի ձահ զայցեն պատմութիւնք բանից. մինչև ի հարկէ երեեալ հասանիցեամք ի հեթանոսականսն զրուցատրութիւնս. սակայն և ի նոցանէ՝ զոր ինչ հաւաստին կարծենք, առնոլ:

#### Դ

### Յաղագս զի ոչ սակս Աղամայ եւ այլոց նահապետացն միաբանեցան այլքն ի պատմագրաց:

Յաղագս Արմատոյն հանուր մարդկութեանս, կամ թէ հաճոյ ումեք թուիցի ասել ծայրին, պարտ էր մեզ սակաւ ինչ անցանել բանիւ, թէ ընդէր հակառակ Հոգուն խորիեալ՝ անմիաբանեցան այլքն ի պատմագրաց, զթերոսեայ ասեմ, զբազմավիալէն և զԱրիւդենայ. կամ զնոյն ինքն զնաւակառուցէն և յայլոց նահապետացն, ոչ միայն վասն անունաց և ժամանակաց, այլ և վասն ոչ սկիզբն զար ի մէնջ հաւտարմացեալս կարգելոյ ազգի նարդական:

Քանզի ասէ վասն նորա Աբիւդենոս հանգոյն այլոցն այսպէս. «Եւ զնա ամենախնամն Աստուած եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն»: Յետ որոյ ասէ. «Թագաւորեաց Աղովքոս շարս տասն», որ լինին ամք երեսուն և վեց հազար: Նոյնպէս և յաղագս Նոյի այլով անուամք վարին և ժամանակօք անբահիք. թէպէտ և վասն սաստկութեան և վասն ապականութեան երկրի՝ զոյգ հոգևորացն բարբարին բանից. նոյնգունակ ր զիթի նահապետացն տասն՝ Քսիսութեալ հանդերձ թուեն: Որ ոչ միայն ըստ բոլորման առ ի յարեգականէ չորեքժամանակեան ըստ մեզ լինոյ տարուոյ՝ հեռանայ յամաց մերայնոցն,–մանաւանդ թէ և յաստուածայինոցն,– այլ և ոչ որպէս Եգիպտացիքն զլուսնականսն հաշուեն ծագմունս. նա և ոչ, զար ի գիցն ոմանց

առացեալս թէ տարիս ոք վարկցի՝ գուգեալ համեմատէ անհուն թուոց առարկութեանցս առ ի հաւասարել ծշարտութեանն, երբեմն նուազ և երբեմն սաստիկ զհաւաքումն գումարելով: Արդ օրէն էր մեզ աստանօր զկարծիս նոցա յայտնել ըստ կարողութեան, թէ զինչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհեցան այսպէս զայսոսիկ գրել. այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ, հատուցուք աստանօր զբանս, սկսանելով յաղազս այսորի՝ որպէս և հաւատացեալ ենք:

Աղամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր և երեսուն՝ ծնանի զՍէթ. Սէթ կեցեալ ամս երկերիւր և հինգ՝ ծնանի զԵնովս: Սորա երկունքն յարձանագրութեանցն ընդդէմ երկուց հանդերձելոցն, արպէս ասէ Յովսեպս. թէպէտ և ուրն անյայտ է: Ենովս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած:

Եւ ընդէ՞ր արդեօք այս, և կամ վասն որո՞ց պատճառանաց նախ սա յուսացեալ կոչելոյ զԱստուած, և կամ ո՞րպէս կոչելն իմանի: Քանզի է Աղամ ծշմարտապէս աստուածաստեղծ, և սա ի բերանոյ Աստուածոյ առեալ ասի պատուիր, այլ և յանցուցեալ և ի թագստեան եղեալ՝ զՈ՞ւր ես— յԱստուածոյ և ոչ յայլմէ ումեք հարցանի. սապէս և զՎճիր վարկին ի նորին բերանոյ լսէ: Իսկ յետոյ և Արէլ մերձաւոր և ծանօթ Աստուածոյ լեալ՝ պատարագ մատուցանէ, և ընկալեալ լինի: Արդ՝ սոցա այսպէս յընդունելութիւն և ի ծանօթութիւն Աստուածոյ լեալ՝ ընդէ՞ր առաջին սա ասի կոչել զԱստուած, և այս՝ յուսով: Արդ՝ զայլսն վասն սորա ի տեսութեանց ի հրաւիրեալն մեր յուղարկեսցուք տեղի. իսկ որ առ ձեռն պատրաստն է՝ ասացուք:

Քանզի ի պատուիրանազնցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ ի դրախստէն և յԱստուածոյ, չարին աղազաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ: Զկնի և ընտանեզոյնն Աստուածոյ յորդուցն Աղամայ՝ ի հարզատէն իւրմէ սպանանի յեղօրէ: Յետ որոյ ոչ բանի ինչ աստուածայնոյ և ոչ յայտնութեան ինչ իրիք եղելոյ, ի տարակուսանս և յանյուսութիւն ազգ մարդական հատեալ լինի, այլ և յինքնեան հածոյ արդարէն գործն. յորոց միջի սա քաջայոյս եղեալ ուղութեամբ հանդերփ կոչէ զԱստուած: Իսկ կոչելոդ կրկնակի իմանի կամ անուանել որպէս զմոռացեալ, կամ յօգնականութիւն կարդալ: Արդ՝ անուանեալն որպէս զմոռացեալ՝ ոչ է չդէպ. զի բազմութիւն ամաց ընդ մէջ անցեալ, որ ի մոռացումն նոցա զԱստուածդ ածէր զանուն և կամ զնոյն ինքն՝ որոյ անունն, և ոչ դարձեալ մահու և թաղման դեռ ևս յԱստուածոյ ստեղծեալն հասեալ էր: Ապա ուրեմն յօգնականութիւն կոչէ սա զԱստուած:

Սա կեցեալ ամս հարիւր և իմնսուն՝ ծնանի զԿայինան. Կայինան կեցեալ ամս հարիւր և եօթանասուն՝ ծնանի զՄաղաղայէլ. Մաղաղայէլ կեցեալ ամս հարիւր վաթսուն և հինգ՝ ծնանի զՅարեն. Յարեն կեցեալ ամս հարիւր վաթսուն և երկու՝ ծնանի զԵնովք. Ենովք կեցեալ ամս հարիւր վաթսուն և հինգ՝ ծնանի զՄաթուսաղայ: Սա յետ ծնանելոյն զՄաթուսաղայ՝ ամս երկերիր արժանի և հածոյ վարս ստացեալ, որպէս գիտէ որ հաճեցաւն, փոխեալ ասի ի միջոյ ամբարշտաց. զորոյ զպատճառն յետոյ հատուցուք: Մաթուսաղայ կեցեալ ամս հարիւր վաթսուն և հինգ՝ ծնանի զՂամեք. Ղամեք կեցեալ ամս հարիւրութսուն և ութ՝ ծնանի որդի, և անուանէ զնա Նոյ:

## ՅԱԴՍ ՆՈՅԻ

Եւ ընդէ՞ր արդեօք զսա միայն որդոյ անուամբ յորջորջեաց, իսկ վասն այլոցն ամենեցուն պարզաբար ասաց, թէ ծնան. զորմէ ընդդէմ իմն մարգարէանայ հայրն. «Սա, ասէ, հանգուցէ զմեզ ի գործոց և ի տրտմութենէ ձեռաց և յերկոր՝ զոր անէծ տէր Աստուած»: Որ եղէ ոչ հանգիստ, այլ զնջումն որ ինչ միանգամ ի վերայ երկրի: Ինձ թուի՝ հանգուցանելն դադարեցուցանել է. իսկ դադարեցուցանելն՝ զամբարշտութիւն և զչարիս, սատակմամբ մարդկան զազրագործաց դարուն երկրորդի: Քանզի գեղեցկաբար ասաց, թէ «ի գործոց մերոց», որ է յանօրէնութեանց, «և ի տրտմութենէ

ձեռաց», որովք կատարեմք զպղծութիւնս: Բայց և հանգչին արդարէ ըստ այսն մարգարելութեան ոչ ամենեքին, այլ կատարեալքն յառաքինութեան ոգիք, յորժամ չարիք որպէս հեղեղաւ ջնջեալ մաքրին, իբր առ Նոյի մոլեալքն ի չարիս: Իսկ որդույ անուանք մեծարեաց զնա Գիր՝ իբրև զյայտնի և զնշանաւոր և զարժանաւոր ժառանգ հայրենեացն առաքինութեանց:

## Ե

### *Յաղագս հաւասար գալոյ ազգաբանութեան երից որդուցն Նոյի զԱբրահամ եւ ցՆինոս եւ ցԱրամ. եւ թէ Նինոս ոչ է Բէլ եւ ոչ որդի Բելայ:*

Եւ այս յայտնի է ամենեցուն զի դժուարահաւաք և տաժանելի է որպէս զիւտ ժամանակացն ի սկզբանէ մինչև առ մեզ՝ առաւել ևս զիւտ նախարարականաց ազգաց ծննդոց յերից որդուցն նոյի, ցորքան կամք իցեն խուզել ումեք ըստ իւրաքանչիւր դարուց: մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զիւրսն ի բաց հատեալ յինքն սեպիական ազգ՝ ելիք գայլոցն իբր զարհամարհելեացն և իւրոց անարժան կարգելոց բանից: Չորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զիաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենկին անսուտ: Իսկ դու, ով ուշին ընթերցաւրդ, հայեաց աստանօր ընդ հաւասարութիւն կարգի երից ազգացդ մինչև ցԱրահամ, ցՆինոս և ցարամ, և զարմացիր:

Սեն կեցեալ ամս հարիւր, յետ երկուց ամաց ջրհեղեղին, ըստ աստուածային բանից, ծնանի զԱրփաքսաթ:

## Ս Ե Ս

Սեն ամս հարիւր՝ ծնանի զԱրփաքսաթ.

Արփաքսաթ ամս հարիւր երեսուն և հինգ՝ ծնանի զԿայինան.

Կայինան ամս հարիւր և քսան՝ ծնանի զՍաղայ.

Սաղայ ամս հարիւր և երեսուն՝ ծնանի զԵբեր.

Եբեր ամս հարիւր երեսուն և չորս՝ ծնանի զՓաղեկ.

Փաղեկ ամս հարիւր երեսուն և երիս՝ ծնանի զՇազաւ.

Շազաւ ամս և երեսուն՝ ծնանի զՍերուք.

Սերուք ամս հարիւր և երեսուն՝ ծնանի զՆաքովր.

Նաքովր ամս եօթանասուն և ինն՝ ծնանի զԹարայ.

Թարայ ամս եօթանասուն՝ ծնանի զԱբրահամ:

## Ք Ա Ս

Քամ ծնանի զՔուշ.

Քուշ ծնանի զՄեստրային.

Մեստրային ծնանի զՆեբրովք.

Նեբրովք ծնանի զԲաք.

Բաք ծնանի զԱներիս.

Աներիս ծնանի զԱրբէլ.

Արբէլ ծնանի զՔայազ.

Քայազ ծնանի զմիւս Արբէլ.

Արբէլ ծնանի զՆինոս.

Նինոս ծնանի զՆինուաս:

## Յ Ա Բ Ե Թ

Յաբեթ ծնանի զԳամեր.

Գամեր ծնանի զԹիրաս.

Թիրաս ծնանի զԹորգում.

Թորգում ծնանի զհայկ.

Հայկ ծնանի զԱրամանեակ.

Արամանեակ ծնանի զԱրամայիս.

Արամայիս ծնանի զԱմասիայ.

Ամասիայ ծնանի զԳեղամ.

Գեղամ ծնանի զՀարմայ.

Հարմայ ծնանի զԱրամ.

Արամ ծնանի զԱրայն գեղեցիկ:

արդ զԿայինան չորրորդ ի Նոյէ ամենայնք ի ժամանակարգրացն գրեն, ո ի Սեմայ երրորդ: Նոյնակտս և զԹիրաս՝ չորրորդ ի Նոյէ, իսկ ի Յաբեթայ երրորդ. թէպէտ և ըստ մերում թագաւորութեանս ոչ ուրեք ի բնագրի գտանի: Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի նոյէ և երրորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմանութեանս և ոչ ի ժամանակարգրացն ուրեք կարգեալ գտանեմք: Այլ այսակտս զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ և յընթերցասիրէ ումեննէ Ասորույ. և հաւատարիմ թուեցաւ մեզ ասացեալն: Քանզի Մեստրայիմդ է Մեծրայիմ, որ իմանի Եգիպտոս. և բազումք ի ժամանակարգրաց զՆեբռովթ, որ է Բէլ, Եթովպացի գոլ ասելով՝ հաւանեցուցին զմեզ այսակտս հաւաստի լինել, յաղագս բնակութեան սահմանացն ընդ Եգիպտոս:

Յետ որոյ ասացուք և զայս. զի թէպէտ և ամք ժամանակաց ծննդոցն Քամայ մինչև զՆինոս ոչ ուրեք գտանին թուեալ, և կամ թէ առ մեզ ոչ հասեալ, այլ հաւատեալ և ոչ նորին ինքեան Նինոսի, իսկ մերոյ Յաբեթի ամենսին, ոչ, սակայն ասացեալ ազգաբանութիւնն հաւաստի է, երեցուցն ցԵղիցն մետասան զոլով ցԱբրահամ և ցՆինոս և ցմեր Արամ. զի Արայն Երկոտասաներերդ՝ է յետ Նինոսի, մանուկ տիովք վախճանեալ: Եւ է Ճշմարիտ, և մի ոք յԵրկուասի. քանզի պատմէ մեզ զայսոսիկ ի յոլով իրս հաւատարիմն Աբիւդենոս, և ասէ այսակտս. « Նինոս Արբեղայ, Քայաղայ, Արբեղայ, Անեբայ, Բաբեայ, Բելայ»: Նոյնակտս և զմերն՝ ի Հայկայ մինչև ցԱրայն գեղեցիկ, զոր Եսպան կաթոսն Շամիրամ՝ թուէ այսակտս. Արայն գեղեցիկ՝ Արամայ, հարամայ, Գեղամայ, Ամասեայ, Արամայիսայ, Արամանեակայ, Հայկայ, որ եղև հակառակ Բելայ, միանգամայն և կենախուզ: Եւ զայս մեզ Աբիւդենոս յիւրումն առաջնում առանձնականի իմն մանր ազգաբանութեան ասէ. զոր աստ ուրեմն յետոյ ոնանք բարձին:

Այսոցիկ վկայէ և Կեփաղիովն. քանզի ասէ ի միում զլիսոցն այսակտս. «Մանր զամնեյն ի սկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն ի դիւանացն արքունի. այլ առաք իրաման ի թագաւորաց՝ թողով զաննշանից և զվատաց արանց ի հնոցն ի զյշտակն, և գրել միայն զքաջս և զիմաստունս և զաշխարակալս նախնիս, և մի յանակտս զժամանակս մեր ծախել», և զայսն:

Այլ այս մեզ ամենսին օտար և արտաքոյ Ճշմարտութեան, ոդք զՆինոս որդի Բելայ ասեն, կամ թէ նոյն ինքն Բէլ. զի ոչ ազգաբանութիւնն ո ոչ ամացն ժաղավումն այսոցիկ վկայէ: Բայց եթէ ըստ նշանաւոր և անուանի՝ լինոյ՝ ոք պատեհ համարեալ այսակտս կարգից գիեռին մօտաւոր:

Եւ գտաք զայսոսիկ արդարէ յունաց դպրութեամբ. զի թէպէտ և Յոյնք ինքեանք ի Քաղդէացոցն փոխեցին յիւրեանց լեզուն, և թէպէտ և Քաղդէացիք ինքնակամ յօժարութեամբ և կամ ի իրաման թագաւորաց հարկեալ զայս իրագործել, որպէս Առիոս ոմն և այլք բազումք սակայն մեք Յունաց համարիմք, որպէս ի նոցանէ ուսեալք:

## Զ

**Յաղագս թէ ինչ որ հաւասար, եւ է ինչ որ օտար ի մովսիսէ պատմեն այլքն հնախօսք, եւ յաղագս Ոլիմպիոդորայ փիլիսոփայի անգիր հին զրուցացն:**

Զհաւաստին որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ բանից՝ կարգեցաք զծնունդ երից որդուցն Նոյի յԱբրահամ և ցՆինոս և ցԱրամ. որում ոչ զոք ընդդիմանալ կարծեմ ի միտս ունողացն. բայց եթէ զՃշմարտութեանն ոք խորհելով քակել զոճ-

յառասպելս զՃՄարիտ բանս ախորժելով փոփոխել փութասցէ: Եւ յայսոսիկ իրաքանչիր միտք որպէս կամին՝ ուրախասցին:

Այլ եթէ շնորհակալ և մերոցս տքնութեանց և ջանից լինիցիս, ով ուսումնասէր դու և յայսոսիկ զմեզ աշխատեցուցանօղ, անցից սակաւ բանիւք յիշատակաց յաղազս որոյ վերագոյնդ կարգեցաւք, թէ որպէս առաջինքն ի վիպասանացն յաղազս այսորիկ հաճեցան շարագրել. թէպէտ և ոչ ունիմ այժմ ասել, յանբարանոցս մատենից թագաւորացն այսպէս արդեօք գտեալ, եթէ ըստ ախորժելոյ որպէս կամեցան իրաքանչիրքն փոփոխել զանուանս և զգրոյցս և զժամանակս, և կամ վասն այլ զինչ և իցէ պատճառանաց: Բայց որպէս ի սկզբանն երբեմն Ճշմարտեն, երբեմն ստեն–որպէս նախաստեղծին, ոչ առաջին մարդ ասելով զնա, այլ թագաւոր, սոյնապէս անուն խժական նմա և աննշանակ կոչելով, և ամս տալով երեսուն և վեց հազր, իսկ թուով նահապետացն և ջրհեղեղին յիշատակաւ՝ զոյց և հաւասար Մովսիսի,– նոյնպէս և յետ ջրհեղեղւն երիս կարգելով արս անուանիս յառաջ քան զաշտարակաշինութիւնն, զկնի նաւարկութեանն Քսիսութեայ ի հայս՝ Ճշմարտեն. իսկ անուանցն փոփոխմամբ և թագնօք այլովք ստեն:

Բայց ես այժմ ուրախացայց, հաւ առնելով առաջիկայիցս իմոց բանից ի սիրելոյն իմնէ և քան զշատս արդարախօսողէ, ի Բերութեանն Սիբիլայ: «Յառաջ քան զբուրգն, ասէ, և զբազմաբարբառն լինել ձայն ազգի մարդկան և զկնի նաւարկութեանն Քսիսութեայ ի Հայս՝ Զրուանն և Տիտանն և Յապետոսք լինէին իշխանք երկրի»: Որ ինձ թուին Սեմ, Քամ, Յարեթ:

«Եւ ի բաժանել սոցա, ասէ, զամնեայն տիեզերս ընդ իրեանց իշխանութեամբ՝ հարստացեալ տիրէ ի վերայ երկոցունցն ևս Զրուանն»: Չոր աստ ուրեմն Զրադաշտ մոզ, արքայ Բակտրիացւոց, որ ԷՄեղաց, սկիզբն և հայր աստուածոցն ասաց լինել. և թագում այլ ինչ զնմանէ առասպելեաց, զոր անտեղի է մեզ այժմ երկրորդել:

«Արդ՝ ի բանանալ, ասէ, Զրուանայ՝ ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսք, ի մարտ պատերազմի ընդ նմա զրգելով, վասն զի թագաւորեցուցանել զորդիս իր ի վերայ ամենեցուն խորհէր: Եւ յայսպիսում խռան յափշտակեաց, ասէ, Տիտանն զմասն ինչ ի ժառանգութենէ սահմանացն Զրուանայ: Աստ ի մէջ անցեալ քոյր նոցա Աստոիկ՝ համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն, և յանձն առնուն թագաւորել Զրուանայ. բայց դաշինս ուխտից և երդմանց ի միջի հաստատեն, սպանանել զամնեյան արու՝ որ ծնանիցի Զրուանայ. զի մի ազգաւ ի վերայ նոցա թագաւորեսցէ: Ուստի և արս հզօրս ի Տիտանացն ի վերայ ծննդոց կանանց նորա կարգէին: Եւ սպանեալ զերկուս ոմանս վասն երդմանն և ուխտին հաստատուն՝ կալոյ՝ խարիին այնուիետև քոյր նոցա Աստոիկ հանդերձ կանամբք Զրուանայ, հաւանեցուցանել զոնանս ի Տիտանացն՝ ապրեցուցանել զայլ մանուկս, և յարկանուտս կոյս յուղարկել ի լեառն, որ անուանեալ կարդային Դիցընկէց, իսկ այժմ կոչի Ոլիմպոս»:

Արդ՝ զայսոսիկ այլ ոք թէպէտ առասպելս, թէպէտ –Ճշմարտութիւն հաշուեալ համարեսցի՝ բայց որպէս ես հաւանեալ եմ, թագում ինչ Ճշմարիտ է: Քանզի և որ Կիպրացւոց Կոստանդեայ Եպիսկոպոս Եպիփանոս ի հերձուածոցն Յանդիմանութեան, յորաժ Ճշմարիտ և արդարադատ զԱստուած ձեռնարկէ ցուցանել, և վասն ջնջելոյ որդուցն Իսմայէլի զեօթն ազգսն ասէ այսպէս, եթէ արդարադատապէս Աստուած զազգսն զայնոսիկ ջնջեաց յերեսաց որդուցն Իսմայէլի. զի ի բաժին որդուցն Սեմայ հասեալ էր երկիր կալուածոցս այսոցիկ, և թռնութեամբ Քամայ ի վերայ Եղեալ յափշտակեաց զերկիրն: Իսկ Աստուծոյ իրաւունս պահեալ զերդման ուխտին՝ վրէ հատուցանէ ազգին Քամայ, ի բաց դարձուցանելով զժառանգութիւնն՝ որդուցն Սեմայ: Այլ զՏիտանսն և զՌափայիմսն յիշեն աստուածային Գիրք:

Բայց պարտէ մեզ զոնանց անգիր իին զրոյցս, որ պատմեալ Եղեն վաղ ուրեմն ի մէջ ինաստոնցն Յունաց, (և հասին մինչև ի մեզ այս զրոյցք ի Գորգի և ի Բանան անուն

կոչեցելոց, և երրորդ ոմն Դաւիթ), թէպէտ և յոյժ սակաւուք՝ Երկրորդել: Յորոց մի ոմն ի նոցանէ, Վարժեալ փիլիսոփայութեամբ, ասէր այսպէս, թէ «Ով ծերք, յորժամ էի ի մէջ յունաց զիմաստութիւն վարժելով՝ Եղի ի միում աւուր, զի վասն աշխարհագրութեանց և բաժանմանց ազգաց ի մէջ արանց իմաստնոց և հնտագունից բան ձարիլը. ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար զրոյցս մատենից տային. իսկ որ կատակելագոյնն էր ի նոսա, Ոլիմպիոդորոս անուն, այսպէս ասաց. «Պատմեցից ձեզ, ասէ, և զրոյց անգիրս յաւանդութենէ ի մեզ հաեալ, զորս և բազումք ի գեղջկաց զրուցեն մինչև ցայժմ: Մատեան լեալ զՔսիսութեայ և զորդոց նորա, որ այժմ ոչ ուրեք Երևի, յորում, ասեն, կարգ լեալ բանից այսպիսի: Յետ նաւելոյն Քսիսութեայ ի Հայու և դիակելոյ ցանաքի, գնայ ասէ, մի յորդոց նորա կոչեցեալն Սեմ ընդ արևմուտս հիւսիսոյ ոիտել զերկիրն, և դիակեալ դաշտի միում փոքրու առ Երկայնանստու միով լերամբ, գետոյ ընդ մէջ նորա անցանելով, ի կողմանս Ասորեստանի, դադարէ առ գետովն Երկլուսնեայ աւուրս, և անուանէ յանուն իւր զլեառնն Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ, ուստի Եկն: Իսկ ի կրտսերագունից որդոցն նորա Տարբան անուն, Երեսուն ուստերօք և հնգետասան դստերօք և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն՝ բնակէ անդէն ի նոյն գետեզեր, յորոյ անուն և զգաւառն անուանէ Տարաւն, և զանուն տեղւոյն, ուր բնակեցաւն՝ կոչէ Յրոնս. զի անդ զառաջինն սկիզբն Եղի բաժանելոյ արդոց նորա ի նմանէ:—Նորին դարձեալ և առ Եզերք սահմանացն Բակտրիացւոց ասէին բնակել սակաւ աւուրս, մնացեալ և մի ոմն յորդոց նորա անդ: Քանզի կողմանք արևելից Զրուան զեմ կոչեն, և Զարուանդ զգաւառն անուանեալ ասեն մինչև ցայժմ»:

Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեայց ի նուազս փանդրան և յերզ ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ: Եւ այսոքիկ զբոյցք սուտ և կամ թէ արդարէ լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ: Այլ վասն գիտելոյ քեզ զամենայն, որ ինչ ի լրոյ և որ ինչ ի գրոց՝ անցանեմ ընդ բնաւն ի գիրսս յայսոսիկ, զի իմասցիս զար քեզ պարզմտութիւն իմոց խորհրդոցս:

## Ե

### **Յայտարարութիւն սակաւուք, թէ ըստ արտաքնոցն առացեալ Բէլի՝ ըստ աստուածային բանից ծշմարտութեամբ է Ներրովք:**

ԶԲԵԼԱՅ, առ որով նախնին մեր Հայկ բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն. բայց ասեն զԿռոնոսդ անուն և զԲԷԼ՝ Ներրովք լեալ. որպէս Եգիպտացիք թուեն հաւասար Մովսիսի՝ Հեփեստոս, Արեգակն, Կռոնոս, որ է Քամ, Քուշ, Նեբրովք, թողեալ զՄեստրային: Զի առաջին ասեն իւրեանց մարդ լեալ զՀեփեստոս և զտակ հրոյ: (Եւ ընդէ՞ր սա զտակ հրոյ, և կամ Պրոմեթէոս գողացեալ առ ի յաստուածոցն զիուր և շնորհեալ մարդական,— որ է այլաբանութիւն,— ոչ բերէ ասել կարգ բանիս): Որում և հարստութեանցն Եգիպտացւոց կարգ, և ամացն ժողովումն ի Հովուացն հարստութենէ մինչև ցՀեփեստոս՝ վկայէ հաւասար Եբրայեցւոց լեալ, որ է ի Յովսեփի ժամանակացն մինչև ցՍեմ, Քամ և զՅաբեթ:

Եւ այսոքիկ բաւական ասել այսչափ: Զի եթէ զամենայն Եղեալսն յաշտարակագործութենէն մինչև առ մեզ ի հասողութիւն քեզ ի մերումս ածել ջանասցուք պատմութեան, Ե՞րբ ապա յըղձալին քո հասանիցեմք զրուցաց պատմութիւնն. մանաւանդ զի առաջիկայս մեր Երկար է զործ, և ժամանակ մահկանացուաց սուլ և անյայտ: Այլ սկսեալ ցուցից քեզ զմերն, թէ ուստի և որպէս:

## Ո

### **Թէ ով կամ ուստի՝ զայսպիսի եգիտ զրուցաբանութիւնս:**

ԶԱՐՉԱԿ մեծ, արքայ Պաչսից և Պարթևաց, որ և ազգաւ իսկ Պարթև, ապստամբեալ\* ասեն ի Մակեդոնացւոց և թագաւորեալ ի Վերայ ամենայն արևելից և Ասորեստանեայց, և սպանեալ զԱնտիոքոս թագաւոր ի Նինուէ՝ հնազանդեցուցեալ զամնեայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ: Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր

զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, պատեհ համարեալ այսպէս իմն անշարժ իւրոյ թագաւորութեանն մնալ: Եւ քաղաք թագաւորութեան տայ նմա զՄծրին, և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարևմտեայ Ասորոց և զՊաղոստին և զԱսիա և զամենայն Միջերկրեայս և զթետալիա, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին՝ ուր Կաւկաս յարևմտեանն յանգի ի ծով, և զԱստրապատականս, «և այլ որչափ միտք քո և քաջութիւն հասանիցեն. զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի»:

սորա կարգեալ զիշճանութիւն իւր մեծապէս, և հաստատեալ զթագաւորութիւն իւր՝ կամ եղէ զիտել սորա, թէ ոյք արդեօք և որպիսի արք տիրեալ ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ցնա. զքաջա՞ց արդեօք եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի: Եւ գտեալ զոմն ասորի Մար Արաս Կատինայ, այր ուշիմ ի վարժ քաղրէացի և յոյն գրով, զոր յոէ առ եղբայրն իւր Արշակ Մեծ արժանի ընծայիւք, բանալ նմա զդիւանն արքունի: Եւ գրէ առ նա ձև բանից օրինակ զայս.—

## Թ

### **Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ Մեծն Արշակ արքայ Պարսից:**

«Արշակ թագաւոր երկրի և ծովու, որոյ անձն և պատկեր-որպէս և իսկ-մեր աստուածոց, իսկ բախս և պատահումն ի վեր քան զամենայն թագաւորաց, և մտաց լայնութիւն՝ որչափ երկնի ի վերայ երկրի. Վաղարշակ կրտսեր եղբայր քո և նիզակակից, որ քէն կարգեալ արքայ հայոց. Ողջ լեր ամենայն յաղթութեամբ:

«Քանզի պատուէր ընկալայ ի քէն՝ քաջութեան և ամենայն իմաստութեան հոգ տանել՝ ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյովն անցի զխրատու, այլ խնամ տարեալ հոգացայ ամենայնի, որչափ միտք և հասողութիւն բաւեցին: Եւ այժմ ի քումնէ խնամակալութենէ զետեղեալ զթագաւորութիւն՝ խորհուրդ ի մտի եղի զիտել, թէ ոյք ոմանք յառաջ քան զիս իցեն տիրեալ աշխարհիս Հայոց, և ուստի նախարարութիւննս որ աստ կան: Զի ոչ կարգք ինչ աստ լեալ յայտնի, և ոչ մեհենից պաժտամունք. և զիխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է, և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն և վայրենի:

«Կասն որոյ աղաչեմ զքո տէրութիւնդ, իրամայեալ բանալ զդիւանդ արքունի ընդդէն առնդ եկելոյ առաջի քոյոյ հզօր տէրութեանդ. զի գտեալ զընձալին եղբօր քոյ և որդուոյ բերցէ փութաօէս. և զմեր հեշտութիւն, որ լեր երկելիդ բնակութեամբ ի մէջ դից»:

Եւ ընկալեալ Արշակայ Մեծի զգիրն ի ձեռաց Մար Արայն Կատինալ՝ մեծաւ լրջութեամբ իրամայէ առջի առնեալ նմա զդիւանն արքունի որ ինինուէ, միանգամայն և ուրախացեալ ընդ այսպիսի միտս ունեալ եղբօր իւրոյ, որուն զկէս թագաւորութեան իւրոյ հաւատացեալ էր: Եւ խուղեալ նորա զամենայն մատեանն՝ գտանէ մատեան մի հելենացի գրով, յորոյ վերայ էր, ասէ, վերնագիր այսպիսի:

## Ս Կ Ի Զ Բ Ն Ս Ա Տ Ե Ն Ի Ն

«Այս մատեան իրամանաւ Աղեքսանդրի ի Զաղրէացոց բարբառոյ փոխեալ ի յոյն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս»:

Որոյ սկիզբ լեալ ասէ զՁրուանն և զՑապետոսքէ, յորումն և զիւրաքանչիւր ոք ի ծննդոց երից նախարարականաց այսոցիկ արանց, զարս անուանիս, կարգաւ շարադասեալ յիւրաքանչիւր տեղիս մինչև ցքազում ամս:

Յայսմ մատենէ Մար Արաս Կատինայ զմերոյ ազգիս միայնհանեալ զպատմութիւն հաւատի՝ բերէ առ Վաղարշակ արքայ ի Մծրին յոյն և ասորի գրով: Զոր առեալ անձնագեղոյն և քաջաղեղանն արին Վաղարշակայ, կորովաբանոյն և հանձարեղի, առաջին իւրոյ զանձուն համարելով՝ դնէ յարքունիսն ի պահեստի մեծաւ զգուշութեամբ, և զմասն ինչ յարձանի իրամայէ դրոշմել: Յորմէ մեր հաւատի ի վերայ հասեալ կարգի գրուցաց՝ երկրորդեմք այժմ քում հարցասիրութեանդ, ձգելով զմեր բնիկ

նախարարութիւնս մինչև զքաղդէացւոց Սարդանապաղոս, և ևս մօտագոյն: Յորում է սկիզբն բանիցն այսպիսի:

«Ահեղք և երևելիք առաջինքն ի դից, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառը, որ սկիզբն աշխարհի և բազմութեան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն անհեղեղք, յաղթնդամք մարմնով և վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և նոյն լինէին ի գործ անկեալք. յոր հորդ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի դիցն ցամաննէ գրէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառ իրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին: Յորոց մի էր Յապետոսթեանն Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովածիգ և հաստարելն»:

Եւ այս կարգ զրուցաբանութեան դադարումն առցէ. զի հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր և գրուն հին նախնիս: Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետութէ, Մերոդ, Սիրաթ, Թակլադ. որ է Յաքեթ, գոմեր, Թիրաս, Թորգոն: Յետ որոյ նոյն ժամանակիր յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արամանեակ, և զայսն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք:

Ժ

### **Յաղագս պատերազմին Հայկայ:**

Այս, ասէ, հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ: Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, և ընդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ մոլեզնեալ այր իրաքանչիւր, սուր ի կող ընկերի իրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամնեայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազնադ լինել Հայկայ յետ ծնանելոյ զորդի իր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ զնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդուովք իրովով և դստեկօք և որդուոց որդուովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջգոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կառւածոց և տայ ի ժառանգութիւն Կաղմեայ որդույ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյց:

«Եւ ինքն խաղայ, ասէ, այլով ընդ արևմուտս հիւսիսոյ. զայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն թորգոնայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուան Հայկաշէն»: Յիշի և աստանօր ի պատմութեան՝ ի հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միու լերամբ, բնակեալ յառաջագոյն առք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անզիրս:

ԺԱ

### **Յաղագս պատերազմին Եւ մահուանն Բելայ:**

Եւ յառաջ մատուցեալ զբանս իր ասէ, թէ ի հաստատել Տիտանեանն բելայ զթագաւորութիւն իր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդուոց իրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, զալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռոջցեալ մեղկետ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հածոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»: Եւ ի բաց դարձուցեալ

Հայկայ զպատգամաւորսն բելայ՝ խստութեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն Բաբելովն:

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց, զայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադեմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկը, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ զայ ի վերայ քո Բէլ յարեժիք քաջօք և երկնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ ինացեալ ին զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, և զամ աւասիկ տագնապաւ: Արդ՝ աճապարեա խորհել զոր ինչ գործելոց ես»:

Իսկ Բէլն, յանդուգն և անձունի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինձ սաստիկ ընդ զար ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնայութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց: Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջազանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաք զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլսն ևս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ ձկունս: Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն մեր հանդէա ամբոխին Բելայ՝ դիպել ջանացուք տեղույն, ուր անցեալ կայցէ ի մէջ խռան քաջացն Բէլ: Զի կամ մեռցուք, և աղիս մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»:

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց ինչ դաշտաձն՝ լերանց բարձրագունից: Եւ յաջմէ ջուրաց հոսանաց ի բարձրաւանդակում կուր կալով ի տեղուց, ի վեր գերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխի մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրև ի դիտանցի: Ծանեալ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորուն Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ձանապարհի ընդ նա և ընդ ամբոխն: Եւ ինքն գլխանց ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջիք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. գոտևորեալ զմէջսն, և յահեկէ զսուրն երկսայրի. և նիզակ անարի ի ձեռին իւրուն աջոյ, և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին զՏիտանեանն կուր վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս՝ կարգէ զԱրամանեակն երկու եղբարբք ընդ աջմէ, և զկաղմոս և զայլս երկուս յորդոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց. երեքանկիւնի իմն կարգեաց ձևով, հանդարտ յառաջ մատուցեալ:

Եւ հասեալ երկոցուցն կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին դրոդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով,, և ահս պակուցանողս տարագուք յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին: Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց արք յաղթանդամբք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին, և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան զարհութեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջուտնեալ ելանէր. քանզի խորհել ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգան ձակատ յօրինեսցէ: Զայս ինացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիձն, դիպեցուցանէ զերեքթեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարսի վլաքն. և այսպէս Ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւի դէա երեսաց իւրեանց: Եւ վասն ասորիկ այսչափ բաւական լիցի ասել:

Բայց զտեղի ձակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղազաւ և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ ասին

Գերեզմանակք: Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոց, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնուոյն մերոյ Հայկայ՝ Հայք:

Ժ Բ

### **Յաղագս որ ի Հայկայ ազգք եւ ծնունդք, եւ թէ զի՞նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց:**

Բագում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին. այլ մեէ՝ որ ինչ պիտոյն մերոյ հաւաքմանս է շարեսցուք:

Զկնի այսորիկ դարնալ ասէ Հայկին ի նոյն տեղի բնակութեան, և Կաղմեայ թուին իւրում բազում ինչս յանկարծէ պատերազմին պարզեւէ, և յիւրոց ընդոծնացն արս անուանիս: Հրամայէ զնոյն տեղի բնակութեան ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն, և ինքն երեալ դադարէ յանուանեալ դաշտին Հարք: Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բաբելոնի, որպէս վերագոյն ասացաք: Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւ՝ մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնն Արամանեկայ որդուոյ իւրում:

Իսկ նորա թողով գերկուս յեղբարց իւրոց, զեսոր և զՄանաւազ, ամենայն աղխին իւրեաց ի կոչեցեալն Հարք, և զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀայք, իսկ որդի նորա Բազ՝ յարևմտից հիւսիսոյ զեզո ծովուն աղլոյ, և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուանք: Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան և զԲզնունեաց, և Որդունին անուանեալ, որք աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին միմեանց պատերազմաւ: Իսկ խոռն ի կողմանս հիւսիսոյ բազմանայ, կարգէ զշնս իւր. և ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին խորխոռունեաց, առք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք:

Իսկ Արամանեկայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարևելս հիւսիսոյ, և երեալ իջանէ ի խորին դաշտավայր մի, ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց, գետոյ կարկաջասահի յարևմտից ընդ մէջ անցանելով: Եւ զդաշտ արևելից գոզցես իմն իբրև որսայսեալ, ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ. և առ ստորոտովք լերանցն բազումք ականակիտ բխեալ աղբիւրք, որք գետոց հաւաքումն հեզաքար: Առ սահմանօք նոցա, ծնիւք լերամբք և եզերօք դաշտին՝ պատանիք ոմանք իբր առ երիտասարդուիեօք Ճեմիցին. այլ հարաւայինն արեգակնաձեմ լեառն, սպիտակափառ ունելով զագաթն, ուտղորդ յերկնէ բրուսեալ, երեքօրէի, որպէս ասաց ոմն ի մերոցն, քաջազօտուոյ առն շրջապատեալ –անապարհաւ, և առ փոքր ի շեշտումն անկեալ, ծեր ոմն արդարն լեառն ի մէջ երիտասարդացեալ լերանցն: Յասմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լերին ի նոյն կողմանէ, զլեառն անուանէ յանկագոյն յիւր անուն Արագած, և զկալուածն՝ ոտն Արագածոյ:

Բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի յոլով տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնուոյն Հայկայ:

Այս Արամանեակ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամայիս. և յետոյ կեցեալ ամս շատ՝ մեռաւ: Իսկ որդի նորա Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերք գետայն, և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր. և զանուն գետոյն յանուն թուին իւրոյ Երաստայ՝ Երասխ: Եւ զորդի իւր զՃարայ, զյոլովածին և զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ և բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած. յորոյ անուն և զգաւառ ասեն անուանեալ Շիրակ: Վասն որոյ թուի արդարանալ առասպելին որ ասի ի մէջ գեղջկաց. «Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն. մեր Շիրազայ ամբարքն չեն»: Այս Արամայիս կեցեալ ամս՝ ծնանի զորդի իւր զԱմասիա. ի վերայ որոյ կեցեալ և այլ ևս ամս մեռաւ:

Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի գԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոխ արի և զՑոլակ: Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառն հարաւոյ, և շինէ անդ առ խոշիւք լեռնոտինն մեծապէս ծախիւք երկուս տունս, զմին յարևելս կոյս, մօտ յակունս աղբերցն, որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւն յարևմուտս կոյս առն ձանապարհի: Եւ ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդուց իւրոց, արւոյն Փառոխի և կայտարին Ցոլակայ. յորս բնակեալ՝ յիւրեանց անուն զտեղիս կոչեցին, ի Փառխայ՝ Փառախոտ, և ի Ցոլակայ՝ Ցոլակերտ: Բայց զլեառն՝ Ամասիա անուանէ իւրով անուամբ Մսիս. և ինքն դարձեալ յԱրմաւիր՝ եկաց ամս սակաւ, և մեռաւ:

Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր. և թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանդերձ որդուովք բնակել, և ինքն զնաց զմիւս լերամբն արևելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զլեառն անուանէ Գեղ, և զշէնսն՝ Գեղարքունի, որով կոչի և ծովն: Աստ ծնաւ զորորի իւր զՍիսակ, զայր սէգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և զեղեցկաղեղն: Սմա զմեծ մասն ընչից իւրոց տուեալ և ծառայս անձինս բազումն՝ սահմանս հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խորխոնս ձիզս և նեղս, ահագին դնդնչմամբ իջանէ ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յըստակագոյնս ևս Սիսական կոչեն: Ի սորա ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ, որ առաջին ի Պարթևաց արքայ Հայոց, գտեալ արս անուանիս՝ ռեարս աշխարհին կարգէ, որ է Սիսականդ ազգ. և զայս առնէ Վաղարշակ՝ ի պատմութենէն ստուգեալ: Այլ այս թէ որպէս է, յիւրուն տեղուց պատմեսցուք:

Բայց ինքն Գեղամ դաշնայ անդրէն ի դաշտ անդր, և առ ոտամբ նորին լերինն ի ձորակի միում ամրոց շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի: Ի սորա ծննդոց աստ ուրեմն առ Արտաշիսի թոռամբ Վաղարշակայ ոմն Վարաժ անուն պատամի լեալ, աջող յորս եղջերուաց և այժեմանց և Վարազուց, դիպաձգութեամբ նետից կորովի. զսա ի Վերայ որսոց արքունականաց կարգէ, և շէնս պարզէն նմա առ եղերբ գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան: Եւ ի սմանէ ասեն լինել գտունն Վարաժնունի: Այս Գեղամ, որպէս ասացաք, յետ ամաց կենաց իւրոց ծնաւ զՀարմայ. յետ որոյ կեցեալ և այլս ևս՝ և մեռաւ: Եւ հրամայեաց որդուոյ իւրուն Հարմայ բնակել յԱրմաւիր:

Այս Հայկ որոյ Թորգոնայ, որդուոյ Թիրասայ, որդուոյ Գամերայ, որդուոյ Յաբեթի, նախնի Հայաստանեայց. և այս ազգք նորա և ծնունդ և աշխարհ բնակութեան նոցա. և յայսմ հետէ սկսան, ասէ, բազմանալ և լնու զերկիրն:

Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամ:

Արամայ բազում գործք քաջութեան պատմին մարտից նահատակութեան, և ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյքն՝ Արամէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիքը: Բայց զընդարձակութիւն պատմութեան սորա և զգործն քաջութեան, թէ զիարդ կամ առ որով ժամանակաւ, թէ կամիցիս՝ արտաքոյ այսորիկ զրոց կարգեսցուք, և կամ թողցուք. ապ թէ ոչ ի սմին:

#### Ժ Գ

### Յաղագս ընդ արեւելեայս պատերազմին եւ յաղթութեանն, եւ մահուան Նիւքարն Սաղեսայ:

Եւ վասն զի հաճոյ թուեցաւ մեզ զաշխատութիւնն, որ ի Վերայ քոյ հրամանիդ, համարել հեշտութիւն, քան զար ի յայլոցն որ ի կերակրոց և յըմանեաց լինի խրախճանութիւնք՝ հաւանեցաք անցանել սակաւուք և ընդ կարգ բանից

պատերազմացն որ ի Հայկեանն Արամայ: Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռանելն ի Վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս նորա տիրել արանց օտարաց:

Այս Արամ, սակաւուք ամօք յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց և Նինուէի, նեղեալ յազգացն որ շուրջ զիրեաւ՝ ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որք ի տէգ նիզակի կամակարողը, նորատիք և հարուստք յոյժ և յաջողաձեռնութիւն իսկ, և երեսաւորք ի սիրտ և ի պատրաստութիւն պատերազմի, իբր թէ բիւրս հինգ: Պատահէ Մեղացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւքար ոմն ասացեալ Մադէս, այր հպարտ և պատերազմասէր, որպէս ցուցանէ նոյն ինքն պատմագիրն, յեզերս սահմանացն Հայոց: Որոց միանգամ քուշանաբար հինիւ սմբակակոխ արարեալ զսահմանն Հայոց՝ ծառայեցոյց ամս երկուս: Որում յանկարծօրէն ի Վերայ հասեալ Արամ յառաջ քան զծագել արեգական՝ սատակեաց զբազմութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն զլսիւքարն զկոչեցեալն Մարտս ծերբակալ արարեալ ածէ յԱրմաւիր, և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարեալ երկարի ընդ ճակատն, յորումն վարսել հրամայէ, ի տեսիլ անցաւորաց և ամենայն եկելոց անդր. և զաշխարհն նորա մինչև ի լեառն անուանեալ Զարասապ՝ ի ծառայութեան հարկի կալաւ մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի Վերայ Ասորեստանի և Նինուէի:

Իսկ Նինոս թագաւորեալ ի Նինուէ՝ յիշատակ զնախնոյն իւրոյ զբելայ ունէր ի մտի, ի զրուցաց ուսեալ. և զայս խորիէր հասորուցանել յամս ձիզու, նկատել որսալ զյաջողութիւն աւուրց, բառնալ ջնջել զամենայն ձետ սերմանեալ յարանց քաջին Հայկայ: Այլ երկիւղ կասկածանաց խարդաւանակ լինելոյ իւրոյ թագաւորութեանն զայսպիսիս համարեալ իրագործութիւնս՝ ծածկէ զչարութիւնն, և հրամայէ նմա զնոյն իշխանութիւն անկասկածաբար ունել. և համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտեայ, և երկրորդ նորա կոչել: Այլ այս շատասցի ասել այսչափ. քանզի չթողացուցանէ զմեզ որ առաջիկայս է իր՝ յեզերումն յամել այսր պատմութեան:

#### Ճ Դ

### **Յաղագս ընդ Ասորեստանեայս կրուոյն եւ յաղթութեանն, եւ Պայպայյն Քաաղեայն, եւ Կեսարու, եւ առաջին եւ այլոց անուանեալ Հայոց:**

Կարգեսցուք դոյզն յիշատակօք բանից և որ ինչ զկնի այսորիկ յարևմուտս սորա գործք քաջութեան պատմին ի նոյն մատենի, և որ ընդ Ասորեստանեայս կրիւն զպարտձառս և զզօրութիւն իրացն միայն յայտնելով, և զերկարութիւն գործոյն համառօտ բանի յանդիման կացուցանելով:

Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայ՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմանքը Ասորեստանի. գտանէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վաթելովք հետևակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն յազգէ սկայիցն, որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր: Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտ Ասորեստանի արկանէ, զբազումն ի նոցանէ սատակելով. իսկ բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ՝ մեռանի: Եւ զայս Բարշամ վասն իւրոց արութեան բազում գործոց աստուծացուցեալ պաշտեցին Ասորիք ժամանակս յոլովս: Իսկ զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի Արամ բազում ժամանակս:

Այլ որ ինչ յարևմուտս կոյս ընդ Տիտանեանսն է սորա գործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի: Աստ յարևմուտս շարժեալ ի Վերայ առաջնոյն չորիւք բիւրովք հետևակազօրու և երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա: Եւ քանզի զարևելեանն և զհարաւայինն նուաճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց գեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարևելս, և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին՝ ոչ ինչ այնուիետև կասկած շփոթից ուստեք ունէր: Վասն որոյ

յերկարեալ ժամանակս լինել յարևմուտս՝ պատահէ նմա Պայապիս Քաաղեայն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն և զՈվկիանու: Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով ի կողի ինչ ասխական ծովուն: Եւ իւր թողեալ զո՞ն Մշակ անուն յազգէ իւմէ և բիւր մի ի զօրացն ի Վերայ աշխարհին՝ և ինքն դառնայ ի Հայս:

Բայց իրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխոսս և զլեզուս հայկական. վասն մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկողիմայն զայն Պոտոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք:

Եւ զդաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, ձոքրագումիւք պարսպեալ որմովք, անուամէին իինք աշխարհին՝ Մաժաք, որպէս ոչ կարելով ուղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարի: Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցրուն իւր սայհմանսն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ: Այս է առաջին և Ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարկամտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք: Իսկ որ այլ ի յոմանց ասի ի յունական կողմանսն՝ մեզ ոչ է հաճոյ. այլոց որչափ կամք իցեան:

Արդ սա այսպէս հզօր և անուանի եղեալ՝ յանուն սորա մինչև ցայսօր, որպէս ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօք զագք զաշխարհս մեր անուանեն: Բազում և այլ գործք քաջութեան ի սամանէ գտանին կատարեալ, այլ մեզ բաւական լիցի ասացեալս:

Բայց թէ ընդէր այսոքիկ ի բուն մատեանս թագաւորացն կամ ի մեհենիցն պատմութիւնս ոչ յիշատակեցան, մի ոք ընդ այս Երկրայացեալ տարակուսեսցի: Մի՛ զի յառաջ զՆինոսի ժամանակ թագաւորութեանն է, յորուն ոճոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր. Երկրորդ՝ զի ոչ հարկ ինչ և ոչ պէտք կարևորք էին նոցա՝ զազգաց օտարաց և զաշխարհաց ի բացեայ և զիամբաւս իինս և զգրոյց նախնականս յիւրեանց թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել մանաւանդ զի և ոչ պարօնք ինչ նոցա և ոչ թարգաւածանք՝ օտար ազգաց քաջութիւն և գործք արութեան: Բայց թէպէտ և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպէս Մար Արաս Կատինայ պատմէ՝ ի փոքրուց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց: Ասէ և այլ իմն պատճառս նոյն այր, թէ, որպէս ուսայ՝ հպարտ և անձնատր գոլով Նինոս, և կամելով զինքն միայն աշխարհակալութեան և ամենայն քաջութեան և աւութեան ցուցանել սկիզբ՝ հրամայէ զբազում մատեանս և զգրոյց առաջնոցն, տեղեաց տեղեաց և ուրուք ուրուք գործոց քաջութեան, այրել, իսկ որ առ իւրովք ժամանակօք՝ դադարեցուցանել, և որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել: Այլ զայս աւելորդ եղև մեզ Երկրորդել:

Բայց Արամ յետ ամաց կենաց իւրոց ծնաւ զԱրայն. յետ որոյ և այլս բազումս կեցեալ ամս՝ մեռաւ:

## Ժ Ե

### **Յաղաց Արայի, Եւ մահուան նորա պատերազմաւ ի Շամիրամայ:**

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախչանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ ի Նինոսէ որպէս և հայրն իւր Արամ: Բայց վաւաշն այն և բորբորիտոնն Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա՝ ցանկայր հասանել. այլ ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել: Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ, որպէս հաւանեալ են, համարձակ պատուելով Շամիրամայ զախտն՝ առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիք և պատարազօք, բազում աղաչանօք և խոստնամք պարզեց, զալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնութեան և թագաւորել ի Վերչայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ պատարազօք և խաղաղութեամբ ի տեղի իւր:

Եւ ի բազում անգամ երթևեկութեան հրեշտակագնացութեանն լինել, և յու հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթայ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի: Բայց որչափ ի դիմացն էր նշանակեալ, ոչ այնչափ ի ապանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուածել կամ զբռամբ ածել, զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ յոյժ ցանկականի մոլեզնութեանն, ի բանսն որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն շամբաշութեմբ վառեալ էր: Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ: Եւ լինել ձակատուն՝ պատուէր տայ զօրապետաց իւրոց, թէ դէա լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն: Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի մեռանի և արայ ի պատերազմին ի մանկացն Շամիրամայ: Դիակապուտս առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ձակատուն, խնդրել ի մէջ դիականցն անկելոց զըղձալին իւր և գտարփածուն: Գտանն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, հրամայէ զնել զնա ի վերնատուն ապարանիցն:

Իսկ ի գրգռել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոցն Շամիրամայ, քինախնիդիր լինել մահուանն Արայի՝ ասէ. «Հրամայեցի աստուածոցն ինոց լեզով զվէրս նորա, և կենդանացից»: Միանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վկիութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տռփական ցանկութենէն: Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին զփափազ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւոլ յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք»: Կանգնէ և նոր իմն պատկեր յանուն դիւց, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ: Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս հայոց, և հաւանեցուցեալ զամեննեսեան՝ դադարեցուցանէ զխազմն:

Եւ որ ինչ յաղազս Արայի՝ կարձառօսիւ և այսչափ շատ լիցի յիշատակել: Սա կեցեալ ամս՝ ծնաւ զկարդոս:

## Ժ Զ

### **Թէ որպէս յետ մահուանն Արայի Շամիրամ շինէ զքաղաքն եւ զամբարտակ գետոյն եւ զիւր տունն:**

Իսկ զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւ ի դաշտին, որ անուանեալ ոչ կոչի յանուն Արայի այրարատ, ելանէ ի լեռնակողմանս երկրի հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառային էր, զբունով կամելով ի հովիտս և ի դաշտ ծաղկաւէտս: Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրի և զօդոցն մաքրութիւն և զաղբերացն յստակագոյն բղյամունս և զկարկաջահոսութիւն գետոց բարեգրացից՝ «Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան օդոց և մաքրութեան ջուրց և երկրի, քաղաք և արքունիս շինել բնակութեան, որպէս զի զըրորորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղենակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցուցանիցեմբ ի Հայս, և զայլս ևս երիս որոշմունս օդոցն զովութեան տածիցեմբ ի Նինուէ»:

Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ. և տեսեալ առ եզերք ծովուն երկայնաձև բլուր մի, որոյ նիստ երկայնութեանն ի մուտս կոյս արեգականդ, սակաւ ինչ առիկողեալ ի հիւսիսոյ, իսկ միջօրեայ կողմանէ դէա ուղիղ առ երկին հայելով՝ քարանձաւ կանգուն անշեղ. և ի սմանէ զիարաւով բացագոյն հովիտ իմն դաշտաձև և երկայնաձիգ յարևելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն, ընդարձակ և գեղեցիկ ձորաձև, որոյ ընդ մէջն հոսանք ջուրց բարեհամաց ի լեռնէն իջանելով, ի ծործորոց և ի հովտաց քամեալք, և ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք ի ծաւալումն գետոց պերձանային. և շէնք ոչ սակաւք ի

հովտաձև և որակին, յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. և յարևելից կողմանէ հաճեցեալ բլրոյն՝ լեառն մի փոքրագոյն:

Աստ իմն ակնակառոյց լեալ այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ, իրաման տայ չորից բիւրոց և եկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յասորեստանեայց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենակին կատարեալք իցեն յարուեստագիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին. և գործն հաւասար իրամանին առնոյր զկատարումն: Եւ վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն խառնազանչից գործաւորացն և բազմարուեստից հանձարեղաց ինաստնոցն: Եւ իրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ զիմօք շինել, կրով և աւազով մածուցեալ, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ. որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանէի:

Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հեն և ի զաղթականս փախստեամբ ամրանան, իբր ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք: Եւ եթէ զկորձ առնուլ դէպ ումեք լինիցիէ և ոչ իբր պարսատկաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խել ոք զօրեսցէ, թէև մեծաւ աշխատութեամբ ջանայցէ: Եւ ի հեղուսուածս արուեստին որ զքարամբքն՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երևեցուցանէ կարծիս: Եւ այսպէս ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հասուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին:

Եւ անդ իրամայէ զամբոխն ի բազումն դասս որոշել, և ի վերայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել. և այսպէս ի սաստիկ ճգնութեան պահեալ՝ յետ սակաւ ամաց կատարէ զիրաշալին ամրագունիւք պարսպօք հանդերձ դրամբք պղնձակերտիւք: Շինէ և ընտիր ընտիրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, կրկնայարկս և եռայարկս, և ըստ պատեհի իւրաքանչիւք՝ արեգակնակս. և գեղեցկագունիւք և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով: Շինէ և զչքնաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից միջոցաց քաղաքին լուալիս: Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի սպաս ամենայն պիտոյից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց. և զայն զեզերք ծովակին յաջմէ և յահեկէ՝ քաղաքին և բովանդակ շրջակային յարբուցումն: Եւ զամենայն արևելեան և զիիւսիսային և զիարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուլս և ի տերևս. և բազումս բազմաբերս և զիներերս ի նմա տնկեաց ովիտս: Եւ ամենայնի հոյակապ և հոչակաւոր զպարսպեալն յօրինէ, և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ:

Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա իրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարդկան ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն: Չորոյ պարսպեալ զգագաթն՝ դժուարամուտս ոմանս և դժոխելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս, և ծածուկս իմն ահագինս: Որոյ որպիսութիւն դրութեամն յօրինուածոյ ոչ ի լսելի մեր հասեալ ճշմարտութեամբ յումեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեն միայն, թէ ամենայն թագաւորականաց գործոց, որպէս լուաք, առաջին և վեհագոյն համարեալ:

Իսկ զընդդէմ արեգական անձաւին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէս պէս տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն իրաշակերտեաց: Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոն հարթեալ՝ բազում զիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս,

այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր:

Արդ՝ որ ինչ յաղազ Շամիրամայ գործոց որ ի Հայս՝ ասացեալ է:

Ճ Ե

**Յաղազ Շամիրամայ,թէ է՞ր աղազաւ կոտորեաց զորդիս իւր. Եւ թէ ո՞րպէս փախստական լինի ի Զրադաշտէ մոգէ ի Հայս, Եւ մեռանի ի Նինուասայ որդույ իւրմէ:**

Սա հանապազ յանանայինսն ի խաղալն իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի զոր շինեաց ի Հայս՝ կողմնապետ և Վերակացու Ասորեստանի և Նինուէի թողու զԶրադաշտ մոգ և նահապետ Մարաց: Եւ զայս այսպէս բազում ժամանակս կարգեալ Շամիրամայ՝ ամենսկին հաւատայ նմա յարդարել գիլր իշխանութիւնն:

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց՝ կոտորէ զամենեսեան, և ապրի կրտսերագոյնն միայն, որ Նինուաս: Բարեկամաց և հիմանեաց իւրոց պարգևելով զամենայն իշխանութիւն և զգանձն ոչ ինչ վասն որդոց իւրոց փոյթ յանձին ունէր: Քանզի և այրն նորա Նինոս ոչ, որպէս ասի, մեռեալ թաղեցաւ ի նմանէ ի Նինուէ յարքունիսն, այլ իմացեալ զախտասէր բարս նորա և զշարասէր, թողեալ զբազաւորութիւնն փախստական անկամէր ի Կրտսէ: Իսկ ի հասակ և ի միտս հասեալ որդոց նորա՝ յիշեցուցանեն նմա զայս ամենայն, կարծելով ցածուցանել զնա ի դիւական պակշոտութենէն, և աւանդել գիշխանութիւնն և զգանձն որդոց իւրոց: Ընդ որ առաւել զայրագնեալ՝ սատակէ զամենեսեան. և մնայ միայն, որպէս վերագոյնն ասացաք, Նինուաս:

Իսկ ի լինել սխալանաց ինչ զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկամել, և պատերազմ ի վերայ նորա յարուցանէ Շամիրամ. քանզի քռնանալ ի վերայ ամենայնի խորհեր մարն: Եւ ի սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտ ի Հայս: Աստ ժամանակ զրէժխնդրութեան պատեհ գտեալ Նինուասայ՝ սպանանէ զմայրն և ինքն թագաւորէ ի վերայ Ասորեստանի և Նինուէի: Ահա ասացաք և յաղազ մահուանն Շամիրամայ, թէ ուստի և որպէս:

Ճ Ո

**Յաղազ թէ հաւատի նախ լեալ պատերազմն Շամիրամայ ի հնդիկս, Եւ զկնի մահ նորա որ ի Հայս:**

Ունիմ ի մտի զկեփաղինին, վասն ոչ տալ զմեզ բազմաց ծաղրել, զի ասէ ի բազմաց այլոց նախ յաղազ ծննդեանն Շամիրամայ, և ապա զպատերազմն Շամիրամայ ընդ Զրադաշտի և զաղթելն Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն հնդկաց: Այլ հաւատի մեզ թուեց որ ի Մար Արայն Կատիկինայն է քննութիւն քաղրէական մատենից քան զայսուիկ. քանզի սծով իմն ասէ զպատճառս պատերազմին յայտնէ: Իսկ առ այսորիւք և առասաւելք աշխարհին մերոյ զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն՝ աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ, և զիետևակ փախուստն, զպաքումնն և ի զիոծս ջրոյն և զարբումնն, այլ և ի մօտ հասանել սուսերաւորաց՝ և զյուռութոն ի ծով, և բան ի նմանէ. «Ուկունք Շամիրամայ ի ծով»: Այլ թէ ախորժես առասպել՝ Շամիրամ քար առաջին քան զնիորէ: Արդ այս շատ է. բայց մեք որ ինչ զկնի այսորիկ:

Ճ Թ

**Որ ինչ մահուանն Շամիրամայ:**

Յարմարեայ զամենայն կարգեցից քեզ ի գիրս յայսոսիկ զազգիս մերոյ աւազագոյն արս և զխաննիս, և որ ինչ վասն նոցա զրոյցք և իրականութիւնք իւրաքանչիւր, ոչ ինչ կամաց մտածական և ոչ ինչ անպատշաճ ի սմա յօրինելով բան, այլ որ ինչ ի գրոց իսկ. ըստ նմանեացն ապա և որ ինչ ի բանից արանց ինաստնոց և յայսոսիկ քաջախոհաց, յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զինագրութիւնն: Եւ ասենք լինել արդարաբար ի պատմութեանս յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղամտութեան. իսկ ըստ որոց հաւաքումնն Աստուծոյ լինել յայտնիս, և մարդկան

գովելիս կամ բասրելիս. մեք այնոցիկ օտար և ի բաց կացեալ: Բայց զուգութիւն բարբառոց և հաւատարութիւն թուոյ կարգի պատանեացն՝ զՃշմարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ: Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւաստի և կամ գոյզն ինչ կասեալ յարդարոյն՝ սկսայց քեզ և որ ինչ զկնի այսոցիկ ի Հիւման պատմութենէ Պիտոյից:

Արչդ՝ յետ մահուան Շամիրամայ ի Զամեսեայ որդուոյ իւրմէ, որ է Նինուաս, որ եղև յետ սպանանելոյն զԱրայն այսպէս հաւաստեաւ գիտասցուք զկարգ բանից: Թագաւորէ Նինուաս, սպանեալ զմայրն հեշըասէր և խաղաղական կեցեալ. և առ սովաւ Աբրահամու աւուրք բաւեալք:

(հ)

*Համեմատութիւն ծննդաբանութեան ազգիս մերոյ ընդ Եբրայեցւոցն եւ ընդ  
Քաղդէացւոց մինչեւ ցՍարդանապաղոս, որ կոչէր Թօնոս Կանկողերոս:*

Ե Բ Ր Ա Յ Յ Ց Ւ Ո Ց

Իսահակ.  
Յակոբ.  
Ղևի.  
Կահաք  
Ամրամ.  
Սովսէս.  
Յեսու:

Ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան արանց. զի ամենեքեան յԱբրահամէ: Ի սատակել սորա զՔանանացիս՝ անցի ի սմանէ փախստականք յԱզրաս, նաւելով ի թարսիս. և այս յայտնի է դրոշմամբն, որ յարձանսն Ափրիկեցւոց աշխարհին գրեալ կան մինչև ցայսօր արդարապէս այսպէս. «իՅեսուայ գողոյ փախուսեալ՝ մեք նախարարք Քանանացւոց Եկաք բնակել աստ»: յորոց մի և Քանանիդար պատուանագոյն մեր ի Հայս: Եւ ստուգեալ հաւաստի գտաք զերունդս ազգին Գնթունեաց ի սմանէ առանց հակառակութեան լեալ. զայս և բարք արանց ազգին յայտնեն՝ Քանանահց գալ:

Գոթոնիէլ.  
Աւովդ.  
Բարակ.  
Գեղէոբ.  
Աբրիմելէք.  
Թովդայ.  
Յայիր.  
Եփիթայի.  
Եսեբովն.  
Եղովն.  
Ղարդոն.  
Սամիսոն.  
Հեղի.  
Սամուէլ.  
Սաւուլ.  
Ղալիթ, և որ ի կարգին:

Ք Ա Դ Դ Ե Ա Ց Ւ Ո Ց

Արիոս.  
Առալիոս, /որ/ Ամիռոս.  
Բսերքսէս, /որ և/ Բաղէոս.  
Առմամիթքէնս.  
Բելոքոս.  
Բալէոս.  
Աղտաղոս.  
Սամիթոս.  
Սառքաղէոս.  
Սկերոս.  
Սամիդոս.  
Սպարեթոս.  
Ասկատաղէս.  
Ամինտէս.  
Բելոքոս.  
Բաղոտոթէս.  
Ղամպառիտէս.  
Սուսառիս.  
Ղամբառիս.  
Պաննիաս.  
Սոսառնոս.  
Միթքոս.  
Տևտամոս.  
Տևտէոս.  
Թինկս.  
Ղեռկիւղոս.  
Եւպաղնոս.  
Ղաւսթենիս.  
Պերիտիաղէս.  
Ովհատիոս.  
Փռատինիս.  
Ակռազանիս.  
Սարդապաղոս:  
**Հ Ա Յ Ո Յ**  
**Արայեան Արայ:**

Սա մերոյ Արայի որոդի, Արայ ի Շամիրամայ կոչեցեալ, և զգործ վերակացութեան աշխարհիս նմա հաւատացեալ: Իսկ նորա՝

Անուշաւան.  
Պարէտ.  
Արբակ.  
Զաւան.  
Փառնակ.  
Սուր:

Առ սովու Յեսու որդի Նաւեայ:  
Հաւանակ.  
Վաշտակ.  
Հայկակ:

Չսմանէ ասեն լինել առ Բելոքոսիւ և ամբոխս իմն արարեալ անխորհուրդն և մեռանել ի նմին:

Ամպակ.  
Առնակ.  
Շաւարշ.  
Նորայր.  
Վատամկար.  
Գոռակ.  
Հրանտ.  
Ըսձաւք.  
Գզակ.  
Հօրոյ.  
Զարմայր:

Սա օգնական Պողմու ի Տևտամայ առաքեալ ընդ Եթովպացի զօրուն՝ մեռանի ի քաջացն Հելլենացւոց:

Պերճ.  
Արբուն.  
Բազուկ.  
Հոյ.  
Կայպակ.  
Սկայորդի:

### Ի (ԻԱ)

#### **Վասն արայետնն Արայի, Եւ սորա որդի Անուշաւան Սոսանուէր:**

Այլ Անդրէն իսկի կենդանութեան իւրում Շամիրամ զծնեալն ի Նուարդայ ի սիրելի կնոջէն Արայի, որ էր երկոտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, վասն առաջին իւրոց խանդաղատանացն որ առ Արայն գեղեցիկ՝ կոչէ զանուն նորա Արայ, և կարգէ զնա ի վերակացութիւն աշխարհիս, մտերմութեամբ հաւատացեալ ի նա. զորմէ և մեռանել ասեն ընդ Շամիրամայ ի պատերազմին:

Բայց յարէ զկարգ բանից զկնի այսորիկ օրինակ զայս: Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանձար յիր և ի բան՝ զԱնուշավանն Սոսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրմաւիր. զորոց զսաղարթուցն սօսահիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օգոյն, և թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազնաց, և այս ցբազուն ժամանակս:

Այս Անուշաւան բաւական ժամանակս արհամարհութիւն կրեալ ի Զամեսեայ տուայտի ի գրան արքունի, իսկ օգնեալ ի բարեկամաց՝ շահի զմասն ինչ աշխարհիս, հարկահանութեամբ խնամել, զկնի ապա և զբոլորս: Այլ կարի շատ լինի, եթէ զամենայն որ ինչ արժանն իցէ՝ ասիցեմք ի ճառիս զնախակարգելոց արանց զբանս և զգործս:

### ԻԱ (ԻԲ)

#### **Որ ի Սկայորդոյն Պարոյր՝ առաջին ի Հայս թագաւորէ, օգնական լինի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ:**

Թողլով զոյ կարևորագոյնսն ի բանից՝ ասասցուք որ ինչ հարկաւորն է: Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն և որք ի Շամիրամայ և կամ թէ ի Նինոսէ՝ զմերս ասեն Պարոյր առ Սարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդարապալլայ:

Եւ այժմ ահա զուարչացայց, ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասելով ի ռեղիս, յորում մերոյ իսկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն

որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս ձառից. զորոց մեզմէն իսկ զիհնունս այսպիսեաց բանից ընթեռնով արժանաւորեցաւք ի չորս հազնեգութիւնս, զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ և ի մէջ իմաստնոց իմաստնագունին:

Քանզի Վարբակէս գաւառաւ մեղացի, ի փոքրնց կողմանց ի ծագաց գաւառին ամրագունի, խորամանկգոյն ի կենցաղավարութեան և ի մարտս երեսաւոր, ծանուցեալ զանարդի բարս և զիեշտասէր թուլամորթութիւն յուլութեան Թոնոյն Կոնկորեռայ՝ խտացուցանէ բարուցն և ձեռացն առատութեամբ ի քաջաց և ի պիտանեաց արանց բարեկամս, որովք և աշխարհակալութիւնն Ասորեստանի առ այնու ժամանակաւ վարիլ յայտնապէս մեշաւ հաստատութեամբ: Յինքն և զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուրջ և ձև նմա խոստանալով: Եւ բազում զմբոխ արի արանց, և որք ի տէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողաձեռնագոյն գումարէ. և այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի և Նինուէի: Բայց վերակացու զայլս թողլով ասորեստանի փոխէ զթագաւորութիւնն ի Մարս:

Այլ այս եթէ առ այլ այլազգաբար պատճի մի ինչ սքանչանար: Զի որպէս վերագոյն ուրեմն յառաջին ճառսն ամբաստանեցաւք զառաջնոցն մերոցն նախնեացն անիմաստասէր բարուց և ախորժակաց՝ այս հանդիպի և աստանօր: Քանզի և որք ի հօրէն Նաբուգողոնոսորայ գործք, գործան յիւրեանց յիշողութեանցն վերակացւոց. իսկ մերոցն, ոչ այս պիսի ինչ խորհեցելոցն, մնացին նշանակեալ ի վերջինսն: Ապա եթէ ասիցես, ուստի՝ մեզ և զնախնեացն մերոց գիտել զանունս զյսպէս, իսկ զբազմաց և զգործս՝ ասեմ. ի հնոց դիւանաց քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէ արքունի, իբրև գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացուցելոց և մեծաց կողմնակալաց:

#### ԻԱ (հ4)

#### **Կարգ թագաւորաց մերոց եւ համար նոցունց որդի ի հօրէ առնլով:**

Արդ՝ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւարնդ թէ թագաւորաց, մինչև ցտէրութիւնն Պարթեաց: Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկը և ինոյ արեան առուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ զալ Փրկչին և զիս գնել, և առ նորօք յաշխար զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ, և յարդեացս ապրել վտանգից: Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէջն պատահումն այն, թէ արդեօք և վիճակ: Բայց արդ ես առ օտարաց թագաւորութեամբն կացեալ՝ ընդ նոցայն զմերս ազգի ածից զկարգ թագաւորացն, զի մերոյ աշխարհիս բնիկը պսկաւորք առք այնոքիկ, զորոց զանուանսն ի ներքոյ դրոշմեսցուք:

Եւ զի արդարէ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիտ մարգարէ ի բանս իւր, իրաւ իրելով ընդրէմ բարելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն առ այնու ժամանակաւ:

Այլք մեք զկարգն կանովնելով, առընթեր և զՄարաց թագաւորսն:

Մ Ա Ր Ա Ց Ա Ռ Ա Զ Ի Ն

Վարբակէս  
Մօդակիս  
Սոսարմոս  
Առտիկաս  
Դէովկիս  
Փռաւորտիս  
Կուքսարէս  
Աժդահակ:

## ԻՍԿ ՄԵՐ ԱՌԱՋԻՆ Ի ՎԱՐԹԱԿԱՅ ՄԱՐԵ ՊՍԱԿԵԱԼ

Պարոյր, որդի Սկայորդոյ  
Հրաչեայ

Սա Հրաչեայ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ: Առ սովայ ասեն կեցեալ զՆաբուգողոնսոր արքայ Բաբելացւոց, որ գերեց զՀրեայս: Եւ սորա ասեն զմի ի զլխաւորաց Եբրայեցւոցն գերելոց խնդրեալ Նաբուգողոնսորայ՝ Շամբաթ անուն, ածեալ բնակեցոյց յերկրիս մերում մեծաւ պատուվ. ի սմանէ ասէ պատմագիրն լինել զազգն Բագրատունեաց, և հաւաստի Է:Բայց թէ որպիսի ջան եղև թագաւորացն մերոց՝ զնոսա ի պաշտօն կորոց խոնարհեցուցանել, և կամ թէ քանիք և ոյք ոմանք ի նոցանէ որք աստուածպաշտութեամբ ՎՃարեցին զկեանս յետոյ պատմեսցուք ոճով: Քանզիասելն ոմանց անհաւասիտի մարդոց, ըստ յօժարութեան և ոչ ըստ Ճշմարտութեան, ի Հայկայ զթագագիր ազգի Բագրատութեաց լինել: Վասն որոյ ասեն. մի այսպիսեաց յիմար քանից հաւանիր. զի և ոչ մի շաւիր կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարդարութիւն ակնարկէ. զի ի բայ բանից և անոձ յաղազ Հայկայ և նմանեացն կակազէ: Բայց ծանիր, զի Սմբատդ անուն, զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն՝ Ճշմարտութեամբ Շամբաթ է, ըստ նախնինի իւրեանց խօսիցն, որ է Եբրայեցի:

Փառնաւազ  
Պաճոյձ  
Կորնակ  
Փառու  
Միւս Հայկակ  
Երուանդ սակաւակեաց  
Տիգրան:

Քանզի և զվերջին Երուանդ և զՏիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ ասեն արդեօք. ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին, յիշեաց ոք զանուանս զայսոսիկ:  
ԻԱ (ԻԴ)

**Յաղազս որդոց Սենեքերիմայ, եւ թէ Արծրունիք եւ Գնունիք եւ բղեաշխն անուանեալ Աղծնեաց՝ ի նոցանէ են սերեալք եւ ի նոյն Ճարի՝ եթէ Անգեղ տունն ի Պառքամայ:**

Այլ յառաջ քան զծերնարկելն մեր ի բանսն որ յաղազս մեծին Տիգրանայ, որ իմներորդ ի բնաց մերոց պսակաւորաց էր, հումկու, անուանիւ յաղթող ընդ այլ աշխարհակալս՝ Ճառեսցուք որ ինչ կարեւորագոյնն է ոճոյ բանիս: Եւ ի մոռացումն եկն արդեօք յաղազս Սենեքերիմայ. քանզի ութուն, աւելի կամ պակաս, ամօք յառաջ քան զթագաւորութիւնն Նաբուլորինոսորայ էր Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի. որ զԵրուսաղէմ պաշարեաց առ Եզեկիայի: Հրէից առաջնորդաւ. զոր սպանեալ որդոց նորա Աղրամելեքայ և Սանասարայ՝ Եղին փախստկան առ մեզ:

յորոց զմինն յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկայորդինմեր քաջ նախնին, այս ինքն է զՍանասարն. և ի սմանէ աճումն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերձքն զլխաւոքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վասակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբդեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ: Իսկ Արդամոզանն յերևելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ. ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս: Արդ յիշելոյն մեր զՍենեքերիմ այս էր պատճառն:

Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն պատմագիր ի Պասքամայ ումեմնէ ի Հայկայ թոռնէ լինել:

ԻԱ (ԻԵ)

## **Յաղագս Տիգրանայ, թէ որպիսի ամենայնմիւ:**

Բայց անցցուք այսուհետև որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նմանէ գործք: Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհենագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և Կիւրովի աջակցեալ, զՄարացն ի բաց բարնալով գիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, զկնեացս ըղձալի ինքն և ժամանակ իւր:

Զի ո՞ ոք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքն ոչ արձասցի, և յորդորեսցի այսպիսի այր լինել: Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ զծով կացեալս՝ լծադիրս և հարկապահանցս կացոյց բազմաց. մթերս ոսկոյ և արծաթոյ և քարան պատուականաց և զգեստուց և պէս պէս գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք ազեղագոյնքն իբրև հասարակ դիցազնացեալք: Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպադեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վարեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլ միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողինք զթշնամիսն արտահալածել: Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զամենայն հասակ պարարեալ:

Չայս և որ այլ այսպիսի բազումք, երեր մերոյ աշխարհիս խարտեաշս այս և աղերեկ ծայրի հերաց Երուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէան, առոգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս, և ի խրախս–անութիւնս օրինաւոր. զորմէ ասէին ի հինսն մեր, որք փանդուամբն երգէին, լինել սնա և ի ցանկութիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստ և պերձարան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի: Եւ զի՞նչ ինձ ի գիրս յայսոսիկ արդեօք իցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել: Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր: Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զինամոցն իւրոց ի վերայ տարծանել զգեստս:

Սա նախ յառաջագոյն դաշնաւոր եղեալ Աժդահակայ, որ ի Մարաց էր, տայ նմա զքոյր իւր Տիգրանուիի կնութեան, ընձիւք խնդրելով զնա Աժդահակայ: Քանզի ասէր. կամ ի ձեռն այսպիսոյ մերձաւորութեան սէր հաստատուն առ Տիգրան ունել, կամ դիւրաւ այսպէս դաւաճանել զնա ի սպանումն: Զի էր նմա խէթ կամաց իւրոց, մարգարէութիւն իմն յոչ կամաց լեալ նմա առաջիկայ դիպուածն իւր:

ԻԱ (ԻՉ)

## **Վասն երկիրի կասկածանացն Աժդահակայի միաբանութենէ սիրոյն Կիւրոսի Եւ Տիգրանայ:**

Բայց էր նիւթ այսպիսոյ խոհականութեան դաշնաւորութիւն մտերմութեանն՝ որ ի Կիւրոսէ առ Տիգրան. յորմէ բազում անզամ և ախտ քնոյ ի բաց փախուցեալ լինէր յԱժդահակայ յիշատակաւս այսուիկ. և խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր հարցումն վասն այսպիսոյ պատճառի. «Ո՞րպիսի հնարիւք լուծանել կարասցուք, ասէ, զկապ սիրոյ պարսկայնոյն և հայկազինն բազմաբիւրաւորի»: Եւ յայսպիսում շփոթման խորհրդոց հասանէ նմա առաջիկայիցն յայտնութիւն ի ձեռն անդշականաց իմն նախատեսութեանց, օրինակաւս այսուիկ, ասէ՝ որ պատմէն:

ԻԱ (ԻԵ)

## **Թէ որպիսէս ի խիթի լինելով Աժդահակայ՝ զառաջիկայ իւր դիպուածն տեսանէ սքանչելի երազով:**

Եր, ասէ, յաւուրսն յայնոսիկ ոչ սակաւ ինչ վտանգ՝ որ ի Մարացն Աժդահակայ, ի միաբանութենէն Կիլրոսի ի Տիգրանայ: Վասն որոյ և ի սաստկութենէ ծփանաց խորհրդոց լինէր նմա ի տեսլեան երազոցն երևութանալ ի քուն գիշերոյ, զոր ոչ երբէք յարթնութեան ետես աչօք, և ոչ ի լուր ականջաց լուալ: Ուստի և ընդուստ ի քնոյն լինելով՝ ոչ յամէ ըստ սովորութեն կարգին ի ժամ խորհրդականութեանն. այլ այն ինչ գիշերոյն ժամս ունելով ոչ սակաւս՝ ձայնէ զխորհրդակիցն: և տրտում երեսօք յերկիր հայելով ի խորոց սրտին մռնչէ յոգլոցհանութեամբ: Եւ ի զվասն էրն ի խորհրդակցացն հարցանի՝ յերկարէ ժամս ինչ զպատասխանիսն, և ուրեմն հեծութեամբ սկիզբն արարեալ յայտնէ զամենայն, որ ի ծածուկս սրտին խորհուրդ և կասկած, ընդ նմին և գիրս ահազին տեսլեամն:

«Եր ինծ, ասէ, ով սիրելիք, լինել այսօր յերկրի անծանօթում, մերծ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ գագթնն սաստկութեամբ սարնանանեաց թոշէր պատել. և ասէին գոգես յերկրին Հայկազանց զայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյն ի լեառն՝ կին ուն ծիրանազգեստ, երկնագոյն ունելով զիւրեաւ տես, նստեալ երևցաւ ի ծայրի այնպիսւոյ բարձրութեան, աչեզ, բարձրահասակ և կարմրայտ, երկանց ընթռնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյնս նայել իմ յայնպիսի երևումն և ի հիացման լինել՝ ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազան հասակաւ և բնութեամբ: Առաջինն զերանսն ածեալ ի վերայ առիւծու՝ սլանայր յարևմուտս, և երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով. իսկ երրորդն զվիշապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս:

«Եւ ի մէջ խառնից այսպիսեաց երազոց, թուէր ինծ կալ ի վերայ տանեաց ինոց արքունեացս, և զնոյն ինքն վերին երեսս յարկացս տեսանել գեղեցկօք և բազմագունիւք զարդարեալ շատուանօք, և զպակողսն մեր զդիսն հրաշատեսիկ տեսեամբ ի վերայ կացեալս. և զիս ձեօք հանդերծ պատուել զնոսա զոհիւք և խնդրովք: Եւ յանկարծ ի վեր նայեցեալ, զայն որ ի վերայ վիշապին հեծեալ էր այր, արծուոյ ինն արդարէ սլացեալ թեսովք տեսի յարձակեալ, որ մօտ հասեալ՝ խարհէր կոծանել զդիսն: Իսկ ես Աժդահակ խորոց ընդ մէջ անկեալ՝ յիս զայսպիսի ընկալայ զյարձակումն, մարտ ընդ սրանչելոյն առնելով դիւցազինն: Եւ նախ ի տէղ նիզակաց զմարմինս երկաքանչիւրոց յօշելով, վտակս արեան ի վայր հոսեցուցաք, և զարեգակնատես երեսս ապարանիցս արեան հոսեալ ցուցաք ծով: Այսպէս և զկնի ալիովք գինուք ժամս ոչ սակաւս:

«Բայց զի՞նչ օգուտ ինծ և խօսիցս երկարութիւն զի վախճան գործոյն՝ ինն էր կործանումն. ուստի և ի քրտան սաստկութեան յայսպիսւոյ եղեալ տագնապէ՝ փախեաւ յինէն քունն, և այսուիետու ոչ թուիմ կենդանի: Զի ոչ այլ ինչ նշանակէ երևութիցս շարժումն, եթէ ոչ որ ի հայկազնեանն Տիգրանայ հասանելոց է մեզ բռնութեան յարձակումն: Բայց ո՞վ արդեօք, յետ աստուածոցն օգնականութեան, բանիւ և գործով մեզ օգուտ խորհելով, ոչ զինքն կարծիցք թագաւորակից մեր լինել»:

Եւ բազում ինչ ի խորհրդակցացն լուեալ օգտութեան մտածութիւն՝ շնորհակալութեամբ պատուէ զնոսա:

## ԻԱ (ԻՐ)

### **Յաղազս որ ի խորհրդակցացն բան, զկնի ապա եւ որ ինչ իւր մտածութիւն, եւ նոյննետոյսն գործն:**

«Բազում ինչ հանձարով և իմաստութեամբ ի ձէնջ լուեալ, ասէ, ով սիրելիք, ասացից և որ ինչ իմ յետ աստուածոցն օգնականութեան յայսպիկ օգտակարագոյն բան և մտածութիւն: Բանզի ոչ ինչ առ թժնամեացն զգուժութիւն վեհագոյն բերէ օգնականութիւն, և ծանօթութիւն նոցայց առաջի արկելոց գործոց՝ բան թէ որ ի ձեռն սիրով դաւելոյն զկորուստ խորհեսցի: Եւ զայս դարձեալ ոչ ի ձեռն զանձուց, և ոչ ի ձեռն բանից պատրողաց այժմ մեզ հնարաւորութիւն է կատարել, եթէ ոչ որպէս կամք են ինձ այժմ գործել: Եւ այն է նիւթ կատարման խորհրդոյս և հնարք որոգայթիցս, գեղեցիկն ի

կանայս և խոհեմն, քոյր նորա Տիգրանուիի: Զի այսպիսիքս իսկ արտուաքուստ և եկամուտ հարազատութիւնք համարձակ գդաւելն ի ձեռն երթևեկութեան անյայտաբար ընդարձակ մարթեցուցանիցեն վարժել. կամ յանկարծօրէն իւրոց մտերմաց, ընչիք և խոստմամբ պատուոց, տալ իրաման խողխողել սրով և կամ հնարինք դեղոց, և կամ զմտերիմս նորա և զկուսակալս գանձիք ի նմանէ բաց մերկանալ, և այսպէս իբրև զանգօր տղայ ի բուռն առցուք»:

Եւ ազդո համարեալ բարեկամացն զայսպիսի խորհուրդ՝ նիւթեն և զգործն: Ի ձեռն միոյ ուրումն ի խորհրդակցացն տուեալ բազմութիւն զանձուց՝ ի ձեռն թղթոյ, օրինակաւս այսուիկ, յուղարկէ:

#### ԻԱ (ԻԹ)

### **Թուղթ Աժդահակայ. յետ եւ յօժարութիւն Տիգրանայ, յուղարկումն Տիգրանուիեայ ի Մարս:**

«Գիտէ սիրել եղբայրութիւնդ քո, ոչ ինչ օգտակարագոյն ի կեանսաշխարհիս ի դիցն մեզ պարզեալ քան զսիրելեաց բազմութիւն, և այս՝ իմաստնոց արդեօք և հզօրագունից. զի այսպէս և արտաքրուստ ոչ ի վերայ համարձակին խռովութիւնք, և եկեալքն վաղվաղակի հերքին. իսկ ի ներքս ոչ զմուտն յումեքէգտեալ այսպիսւոյ չարութեան՝ հալածեալ լինին: Արդ՝ զայսպիսի շահ օգնութեան, որ ի բարեկամութենէ լինի, տեսանելով՝ խորհեցայ ևս հաստատուն և խորագոյն զսէրն որ ի միջի մերուն է, հաստատել. զի երկոքեան յամենայն կողմանց ամրացեալքն՝ ողջ և անշարժ զտէրութիւն մեր կալցուք: Եւ այս լինի ի տալն քում զօրիորդդ հայոց մեծաց, զքոյր քո Տիգրանուիի, ինձ կնութեն. թէ արդեօք և բարի համարեսցիս դմա, զի թագուիեաց թագուիի լիցի: Ողջ լեր, թագակից մեր և սիրելի եղբայր»

Եւ առանց յերկարելոյ զբանս ասցից: Գայ առաքեալն և կատաէ յաղագս օրիորդին գեղեցկի. զի յանձն առեալ Տիգրանայ՝ տայ զքոյր իւր Տիգրանուիի Աժդահակայ կնութեան: Եւ չև ևս գիտելով զար ի նմանէ դաւաճանութիւնն՝ յուղարկէ զքոյր իւր որպէս օրէն թագաւորաց, Չոր առեալ ժդահակայ, ոչ միայն վասն նենգին որ ի սրտի իւրուն այլ և վասն գեղեցկութեանն, առաջին իւրոց կանանցն կարգէ և զչարութիւնն ի ներքոյ ոստայն հինու:

#### ԻԹ (Լ)

### **Եթէ որպէս յայտնեցաւ նենգութիւնն եւ զոգուեցաւ մարտն. յորումն եւ մահն Աժդահակայ:**

Չկնի այսորիկ ասէ, թէ ի հաստատել աժդահակայ զՏիգրանուիի ի տիկնութիւն, ոչ ինչ առանց նորա ի թագաւորութեան իւրուն գործէր. այլ բերանով նորա կարգէր զամենայն, և իրամանի նորամենեցուն հնազանդ լինել իրամայէր: Եւ յօրինեալ զայս այսպէս՝ սկսանի նմա մեղմով պատրանս մատուցանել. «Ոչ գիտես, ասէ, եթէ եղբայր քո Տիգրան խանդացաւ զտիկնութիւնդ քո ի վերայ Արեց, ի կնոշէ իւրմէ ի Զարուիեայ զրգուեալ: Եւ զի՞նչ լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մեռանել, և ապա լինել զԶարուիի ի վերայ Արեաց և զաստուածուիեաց ունել զտեղի: Բայց արդ՝ ընտրելի է քեզ զմի յայսցանէ. կամ լինել եղբայրասէր, և կործանումն խայտառակելի յանդիման Արեաց յանձն առնուլ, կամ զանձին իմանալով զբարի խորհուրդ օգտակար ի մէջ բերել և յաղագս առաջիկայիցն հոգալ»:

Բայց էր ի մէջ այսպիսւոյ խորամանկութեան թագուցեալ և զմեռանեալն Տիգրանուիեայ, եթէ ոչ ինչ ըստ կամաց խորհիցի մարազմեռանելն Տիգրանուիեայ, եթէ ոչ ինչ ըստ կամաց խորհիցի մարտապարսացւոյն: Այլ իմացեալ խորագիտոյ գեղեցկին զայսպիսի դաւաճանութիւն՝ պատասխանի առնէ սիրոյ բանս Աժդահակայ, և արազագոյն ի ձեռն մտերմաց պատմէ եղբօրն զնենգութիւնն:

Եւ ձեռնարկէ այնուիետն ի գործն ի ձեռն պատգամաւորութեան, զալ նոցա ի տեսութիւն միաբանութեան ի տեղի միջոց սահմանաց երկոցունց թագաւորութեանցն.

իբր բան ինչ և գործ հարկաւոր հասեալ, որ ի ձեռն գրոյ և հրեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ և դէմք երկոցունց հանդէա լինիցին: Այլ գիտելով Տիգրանայ զառաքելոյ իրին կատարումն՝ ոչ ինչ յորոց խորհերն Աժդահակ՝ ծածկէ, այլ ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ ի նորայն խորութեն սրտի: Եւ յայտնեալ այսպիսւոյ Ճարութեան՝ ոչ ինչ էր այնուիետև բան և խորամանկութիւն, որ զայսպիսի առադաստիր զչարութիւն, այլ յայտնի այնուիետև գրգռէր խազմն:

Եւ ժողովէ աղքայն Հայոց ի սահմանացն Կապադովկացւոց, և որչափ ընտիրը Վրաց և Աղուանից, և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքրունց: Եւ խաղայ ամենայն զօրութեամբ իրով զկողմանբք Մեդացւոց: Կտանգ այնուիետև հարկ առնէ Աժդահակայ՝ պատահել պատերազմաւ հայկազինն ոչ փոքր ինչ ամբոխիւ: Եւ երկայնէր հակառակութիւնն մինչև յամիս հինգ. քանզի հիւանդանայր գործն արագ և առողջ, յորած զմտաւ զծէր Տիգրան յաղաս քեռն իրոյ սիրելույ: Զի այսպէս ինն զեւս իրացն հնարիդ յարդարել, զի ապրելոյ Ճար լիցի Տիգրանուիեայ: Պատահէ և այս, Ժամ մարտին մերձենայ:

Բայց զովեմ զքաջ նահատակն իմ զնիզակաւորն և զամեննեին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ. քանզի առոյգ, ամենայնի, ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զոք ունելով իւր զոյց: Եւ զի՞ երկայնեմ զքանս քանզի ի լինի մարտին նիզակաւ օրինակ ինն որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփուտ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփել միւսանգամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ զինուն ի զուրս բերէ: Բայց մարտն էր սքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղվաղակի թիկունս ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին մինչև ի ժամս ծիզս: Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ. և այսպիսի դիպուածս ի բարերախտութիւն յաւելեալ՝ փառս յաճախսէր Տիգրանայ:

### Լ (ԼԱ)

#### **Յաղաս յուղարկեաց զքոյր իւր Տիգրանուիի ի Տիգրանակերտ. Եւ վասն Անուշայ, առաջին կնոջն Աժդահակայ, Եւ բնութեն զերւոյն:**

Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուիի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառս զայնոսիկ ի ծառայութիւն ննա իրամայէ: Եւ անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս:

Իսկ զԱնոյշ զառաջին կինն Աժդահակայ, և զբազումս ի սերմանէն Աժդահակայ աղջկունս, հանդերձ պատանեկօք և բազմութենք զերեացն, որչափ թէ աւելի քան զբիւր մի, բնակեցուցանէ յարելեայ ուսոյ մեծի լերինն մինչև ի սահմանս զողթան, որ են Տամբատ, Ուկիորայ, Դաժգոյքն, և որ այլք առ եզերք գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէա ամրոցին Նախճաւանու. և զերիս աւանսն, գլւրամ և զԶուղայ և զԽորշակունիս իսկ ի միւս կողմանէ գետոյն. զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն անուրն Նախչաւանու: Բայց զնախսասցեալ կինն Անոյշ բնակեցուցանէ որդուվք իւրովք յանդորրութեան սպառուածի փլածին մեծի լերինն: (Զորմէ լեալ ասեն յահագին իմն շարժմանէ. զոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ իրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զբնակութիւնս մարդական չափեցին, այլ և մասն ինչ զծով և զանբնակս յայրեցածէն մինչև զՔիմիւռոն): Իսկ պաշտօնեայս տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ոտամբ լերինն բնակեցան:

Յայտնեն զայս ճշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախորշելով, որպէս լսէմ, մարդիկ կողմանն գինսէտ զաւարին Գողթան. յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոց նորա, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Աժդահակայ, վիշապազունս զնոսա կոչելով. զի Աժդահակի՝ ի մեր լեզուս է վիշապ: Այլ և Ճաշ ասեն

գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց: Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, ասեն քաջի որդուոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից ի հիմնանալն Արտաշատու՝ նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ. որ է ի դաշտին՝ որ անուանել կոչի Շարուայ: Այլ և տենչայ, ասեն, Սաթինիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարատ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ:

Եւ արդ՝ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ Ճշմարտապատմութեանս, թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յԱզատն ի վեր ի Մասիս:

#### ԼՍ (ԼԲ)

##### **Թէ ոյք ոմանք սորա զարմք, եւ ոյք ի սմանէ որոշեալ ցեղը:**

Հաւաստի պատմել զբուն և զառաջին Տիգրանն և որ ինչ ի նմանէ գործք՝ սիրելի, որպէս ինձ պատմողիս ի մէջ ինոց բանից որ ինչ յաղագ Երուանդեանս Տիգրանայ բանք՝ եղիցի և քեզ ընթերցողիդ, որպէս այրն և զորք, այսպէս և զնմանէ բանք: Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան–Հայկ, Արամ, Տիգրան,, քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք. իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումեք թուիցի կոչել: Բայց ըստ դիւցազնութեանն կարծեաց՝ Ճշմարիտ է ասելս մեր: Ոչ Արամազդ ոք, այլ կամեցողսն. յորոց մի է Կունդ ոմն Արամազդ: Այսպէս և բազումք անուանեալք Տիգրան, մի է և միայնակ սա ի հայկազանց, որ զԱժդահակ սպան, և զտուն նորա ի գերութիւն վարեաց և զԱնոյշ մայրն վիշապաց. օժանդակ՝ կամօք և յօժարութեամք զԿիւրոս ունելով՝ զիշխանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց:

Սորա որդի Բաբ, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելք աշխարհիս. «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր և ծովն ծիրանի. Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ. ընդ եղեգան փոխ ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր. և ի բոցոյն վագէր խարտեաշ պատանեկիկ. նա հուր հեր ունէր, ապա թէ բոց ունէր մօրուս, և աչկունքն էին արեգակունք»: Զայս երգելով ոմանց փանդռամք, լուաք մերովք իսկ ականջօք: Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանազոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգին: Այլ ասեն զսա և աստուածացեալ. և անդրի ի Վրաց աշծարիկն զսորա չափ հասակին կանգնեալ՝ պատուիկն զոհիք: Եւ սորա են զարմք Վահունիք. ի սորա կրտսեր որդուոյն Արաւանայ Արաւենեանք: Սորա Արաւան, սորա ներսեհ, սորա Զարեհ. ի սորա զարմից և որ Զարեհաւանիցն կարգան ազգք: Իսկ սորա առաջին Արմոզ, սորա Բազամ, սորա Վահան, սորա Վահէ: Սա ընդզենք մեռանի յԱղեքսանորդ մակեղոնացւոյ:

Յայսն հետէ մինչև ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս՝ ոչ ինչ Ճշմարտազոյն ունին պատմել քեզ. քանզի շփոր իմն ամբոխից լեալ՝ այր զարանք ելանէին տիրել աշխարհիս. և վասն այսորիկ զիւրամուտ ի Հայս լեալ Արշակ Մեծ՝ թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց:

#### ԼՍ (ԼԳ)

##### **Թէ Եղիական պատերազմն առ Տեւտամաւ. եւ մեր Զարմայր ընդ Եթովպացի զօրուն լինել սակաւուք, եւ ի նոյն մահ:**

Երկունք այսոքիկ են, որք աշխարհութիւնն տագնապաւ մեզ ի վերայ ի քունմէդ հասուցանեն հարցասիրութենէ– համաօտասահրուկիին, ակազաբանութին. և այսոքիկ՝ պերչք և պայծառք, պղտոնականք իբր եղանէլ բանք. հեռի ի ստութենէ, և լի որ ինչ ընդդէմ ստութեան. և զայսոսիկ յառաջին մարդոյն մինչև զքեզ առ շամայն պատմել: Եւ այսոցիկ ի միասին ակնարկութեամք ի քննել ական զամենայն կացուցանել՝ ոչ այսպէս հաստատէ, այլ աւուրս որոշէ և կարգս ի ստեղծուածն. քանզի են ոմանք առաջնոյ և ոմանք երկրորդի և երրորդի և այլոցն աւուրց ստեղծուածք: Եւ այսու մեզ այսպիսի իմն

ակնարկէ կարգս վարդապետութիւն Հոգւոյն: Իսկ զքո փափագ արտաքոյն այսպիսւոյ աստուածայնոյ տեսանեմք սահմանի, զի արդար և բնաւ և առ ժամայն ամենայնք քեզ եղիցին ասացեալ: Այլ առ ի մէնջ այսոքին կամ յերկար, և քեզ ըստ կամաց, կամ փոյթ, և քեզ ոչ հաշելիք: Զի այսպէս ի քոյ հապճեպելոյ ահա ոչ ինչ յաղազ Մակեդոնացւոյն, և ոչ վասն Եղիականին ի կարգին նշանակեցաք, այլ զօդեմք աւասիկ: Ոչ ունիմք ասել, օմաստո՞ւն կամ անհանձար աստանօր լինել մեզ իին, պատկանաւո՞ր կամ աչ՝ զայնոցիկ այժմ ուրեմն զկնի հեղուսելով բանս, զկարևորսն և մերոյս արժանի շարադրութեանս:

Եւ ո՞յք արդեօք այսպիսեաց ձառից առաջինք, եթէ ոչ որք ի Հոմերոսէ պատմին. այն, որ վասն Եղիականին պատմի պատերազմին առ Տևտոնաւ Ասորեստանեայց: Եւ մեր Զարմայր ի ծառայութեան Ասորեստանեայց սակաւուք ընդ Եթովպացի զօրուն օգնական Պոխամու, և անդ ի քաջացն Հելլենացւոց Վիրաւորեալ մեռանի. այլ կամին յԱքիլեայ, և մի յայլմէ ումեքէ ի քաջացն:

ԿԱՏԱՐԵՑԱՆ ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ ԾՆՍԴԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ:

## Ի ՊԱՐՍԻՑ ԱՌԱՍԴԵԼԱՑ

### Յաղազ Բիրասպեայ Աժդահակայ:

Բայց զի՞նչ արդեօք տարփանք քեզ՝ և Բիրասպեայ Աժդահակայ փծուն և անձոռնի առասպեկտն իցեն. և կամ է՞ր սակս զմեզ Պարսից անյարմար և անոնց բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան, առնես աշխատ, և անբարի առաջնոյ նորա բրերարութեան, և դիւաց նմա սպասաւորութեան, և ոչ Վրիտեցուցանել կարելոյ զՎրիապեալն և զսուտն. և ուսոցն համբութումն, և անդուստ Վիշապացն ծնունդ, և յայնմ հետէ չարութեան յաճախութիւն, ծախսել զմարդիկ ի պէտս որովպայնի: Իսկ ապա և Հրուսենայ ումեմն զնա կապել սարեօք պղնձեօք, և ի լեաւնն տանել, որ կոչի Դըմբաւընդ: Այլ և ի ճանապարհի ննջելն Հրուտենայ, և Բիրասպեայ քարշելն ի բլուրն, և զարթշելն Հրուտենայ, և տանել զնա յայրս ինչ լերին և կապել, և զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել. յորմէ պակուցեալ՝ հնազանդեալ կայ շղթայիցն, և ոչ զօրէ ելանել և ապականել զերկիր:

Զի՞նչ քեզ այսոքիկ կարօտութիւն առասպեկտ սուտք, կամ զի՞նչ պէտք անմիտ և անհաճար բանից յարմարանք: Մի՞ արդեօք յունական պերծ և ողորկ առասպեկտն իցեն հանդերձ պատճառաւ, որք զՃմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքրուցեալ: Այլ ասես՝ մեզ պատճառս տալ անբանութեան նոցա, և զարդարել զանզարդսն: Նոյն առ ի յինէն քեզ բան. զի՞նչ այսոքիկ կարօտութիւնք. ո՞րպիսի իղձք՝ անբաղձալոյ իրիք բաղձալ և մեզ յաւելու աշխատութիւն: Այլ տացուք զայսոսիկ՝ մանկականի քոյց տիրոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք: Վասն որոյ եղիցի և աստանօր լնով մեզ զփափագ կամաց քոց:

### Սուորագրութիւն, որ ինչ սակս Բիրասպեայ հաւաստին:

Չպղատոնականն համարձակագոյն այժմ բարբարիմ. «իսկ արդ արդեօք իցէ՝ սիրելոյ այլ ոք ես. քանզի և չէ իսկ ոք»: Զի ի վերայ այլոց անհնարիցն, հնարաւոր վասն քո արարելոց մեր, կատարեմք, և զայս. զի զորոց ատեմք զբանս և զգործս, և այնոցիկ մանաւանդ թէ լուրն զլսելիս մեր տաղտկացուցաներ՝ այօր ձեռամբ ինով շարագրեն զայնոսիկ, միտս անմտութեան նոցա տալով, և զկարի վաղուց նոցա իրս և նոցա անհասանելիս աւասիկ յայտնեմ. միայն թէ և քեզ այսոքիկ ուրախութիւն և կամ շահ օգնութեան: Այլ ծանիր զատելութիւն մեր առ այսպիսի բան, զի ոչ յառաջինսն մեր ասացեալ գիրս, և ոչ ի վերջին բանս արժանաւորեցաք շարել, այլ զատ և որիշ: Եւ սկսայց այսպէս:

Ասացեալն ի նոցանէ Բիւրասպի Աժդահակ՝ առ Նեբրովքաւ նախնի նոցա: Քանզի ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր, ոչ խառն ի խուռն և ոչ անառաջնորդ այս լինէր. այլ աստուածայնով իմն ակնարկութեամբ գլխաւորք և ցեղապետք որոշեալք զիւրաքանչիւր սահմանս ժառանգեցին կարգաւ և զօրութեամբ: Եւ զայս Բիւրասպեայ հաւաստի անուն ձանաչեմ ես Կենտաւրոս Պիւրիդայ, ի քաղդէականի գտեալ մատենի: Սա ոչ քաջութեամբ քան թէ հարստութեամբ և ձարտարութեամբ զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր, հնագանդեալ Նեբրովքայ. և հասարակաց զկենցաղս կամէր ցուցանել ամենեցուն, և ասէր՝ ոչ ինչ իւր առանձին ունեք ունել պարտ է, այլ հասարակաց: Եւ ամենայն ինչ նորա յայտնի էր քան և գործ. և ի ծածուկ ինչ ոչ խորհիր, այլ զամենայն յանդիման արտաքս բերէր լեզուաւ զժածուկս սրտին: Եւ գել և զմուտ բարեկամացն որպէս ի տուընջեան նոյնպէս և ի գիշերի սահմանէր: Եւ այս է առաջին նորա ասացեալ անբարի բարերարութիւնն:

Այլ քանզի աստեղաբանութեամբ հզօր եղեալ՝ յօժարեցաւ ուսանել և զկատարեալ չարութիւնն. և այսոքիկ անկարելիք նմա. քանզի որպէս վերագոյնն ասացաք՝ սովորութիւն ունէր պատրանաց աղազաւ առ բազումս՝ ոչ ինչ ի ծածուկ գործն, և զայնպիսի վերջին և կատարեալ չարութիւն յայտնի ուսանել կարողութիւն ոչ էր: Հնարի այսպիսում ուսման դառնութեան հնարս, – ցաւս ինչ յորովայնի ունել բաղբաղէր չարաչարս, որ ոչ այլով իւիք, քան թէ քանիւ իմն և անուամբ սուկալեաւ բժշկիցի, զոր վայրապար լսել ունեք ոչ է կարողութիւն: Եւ այս սովորեալ, որ զչարութիւնն նիւթէր, ուսուցանէր նմա ի տան և ի հրապարակս. անկասկած զգլուխն ի վերայ ուսոցն Բիւրասպեալ դնելով և խօսելով յականջսն՝ ուսուցանէր զանբարի արուեստն. զոր յառասպելին՝ մանուկ սատանայի, ասեն, սպասաւորելով լինէր կամակատար. և ապա վասն որոյ պարզէ ի նմանէ խնդրեալ՝ համբուրէր զուսսն:

Իսկ վիշապացն բուսումն, կամ կատարելապէս վիշապանալն Բիւրասպեայ, որ ասի, է այս: Քանզի անբաւ մարդիկ սկսաւ զրիել դիւաց. մինչև տաղտկանալ ի նմանէ բազմութեանն և միաբանեալ ամենեցուն և հալածել, և փախչել նմա նախասացեալ լերինն կողմնանս. և ի սաստիկ վարելոյն զնա՝ թօթափեցաւ ամբոխ նորա ի նմանէ: Յայս վստահացեալ վարողացն զնա՝ հանգեան աւուրս ինչ զտեղեօքն: Իսկ Բիւրասպեայ ժողովեալ զցրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ ի վերայ, վնաս սաստիկ առնելով, այլ յաղթէ բազմութիւնն, և փախստական լինի Բիւրասպի. և հասեալ սպանեն զնա մերձ ի լեառնն, և ընկենուն ի վիհ մեծ ծծմբոյ:

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՌՈ

### **ԲԵՆ ՄԻԶԸ Կ ՊԵՏՄՈՒԹԵԸ ՄԵՐՈՑՆ ՆԱԽՆԵԱՑ Ա**

Գրեմ քեզ այժմ և որ ինչ առանձին մերոյ աշխարհիս գործք, երկրորդ առնելով գիրս, սկսեալ ի թագաւորութենէն Աղեքսանորի, մինչև ցթագաւորութիւն սրբոյ և քաջի առնն մեծին Տրդատայ, կարգաւ, որ ինչ եղեալ աստ գործ քաջութեան և արութեան, իմաստից և կարգաց միոյ միոյ ուրուք ի նոցանէ, որք յարքայէն Պարսից յԱրշակայ և ի Վաղարշակայ եղբօրէ նորա, զոր մերոյ ազգիս թագաւորեցոյց. և որ ինչ որք յետ նորա եղեն թագաւորք աշխարհիս մերոյ ի նորին սերմանէ, որդի ի հօրէ առնելով գտէրութիւնն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ. աւելորդքն յազգ և ի թագմութիւն աճեցեալք, և միակն ըստ կարգի հետևանայ ի թագաւորութիւն: Բայց գրեմ կարձ ի կարձոյ՝ որ ինչ մեզ անկն է, զաւելորդսն թողում: Քանզի բաւական է յաղազս այլոց ազգաց որ ինչ ի թագմաց ասացեալ եղէ:

Յետ տիրելոյ ամենայն տիեզերաց Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, որդույ Փիլիպպեայ և Ոլոնայիադայ, որ էր քսան և չորրորդ յԱքիդդայ, բազմաց տալով գտէրութիւնն կտակաւ, զի ամենեցուն իշխանութիւն՝ Մակեդոնացւոցն անուանեսի՝ ինքն մեռանի: Զենի որոյ թագաւորեաց Բաբելովնի Սելևկիոս, զյուրից կորգելով զիշխանութիւն. ուստի և զՊարթևս հնազանդեաց մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ Նիկանովը այնորիկ աղազաւ: սորա տիրեալ ամս երեսուն և մի՛ թողու գթագաւորութիւնն որդույն իւրում Անտիոքայ, անուանեցելոյն Սաւատէր, ամն ինն և տասն: Զսա յաջոչէ Անտիոքոս, ասացեալն թեւոս, ամս տասն. և ի մետասաներորդին ապստամբեն Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոցն: Ուստի և թագաւորեաց Արշակ Քաջ, որ էր ի զաւակէ Աբրահամու, ի Քետուրական ծննդոց, առ ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ, թէ «թագաւորք ազգաց ի քէն ելցեն»:

Բ

### **Թագաւորել Արշակայ Եւ որդուցն. պատերազմ ընդ Մակեդոնացիս Եւ սէր ընդ Հռովմայեցիդ:**

Որպէս ասացաք՝ յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ թագաւորէ ի վերայ Պարթևաց Արշակ Քաջ ի քաղաքին, որ կոչի Բահդ Առաւօսին, յերկրին քուշանաց: Եւ տայ պատերազմունս սաստիկս յոյժ, թափելով յինքն զամենայն արևելեայս: Հալածէ և ի Բաբելովնէ զՄակեդոնացւոց իշխանութիւնն: Լսէ և զզօրանալն Հռովմայեցւոց ի վերայ ամենայն արևատից և ծովու, և թէ ի Սպանիացւոց թափեցին զբովսն, ուստի ոսկի և արծաթն հատանի. և զԳաղատացիս հարեալ ընդ հարկաւ արարին, և զթագաւորութիւնն Ասիացւոց: Հրեշտակս առաքեալ խնդրէր զդաշնաւորութիւն, զի օգնեսցեն Մակեդոնացւոց. ոչ տալով հարկս, այլ պատարազս միայն ամի հարիւր քանքարոյ:

Այսպէս տիրեալ ամս երեսուն և մի. ո յետ նորա Արտաշէս որդի նորա ամս քսան և վեց: Զսա պայազատէ նորին որդի Արշակ, որ կաչեցաւ Մեծ. պատերազմի ընդ Ղեմետրեայ և որդույն Ղեմետրեայ Անտիգոնեայ. քանզի ի վերայ նորա եկն ի Բաբելովն մոկեդոնական զօրու, և պատերազմեալ՝ ի գերութիւն ըմբռնեցաւ. զոր կալեալ Արշակայ՝ տարաւ ի Պարթևս հանդերձ երկաթելէն կապանօք, ուստի և Սիրիակինդէսն կոչեցաւ: Այլ իմացեալ ողբօր նորին Սիրիացւոյ Անտիոքայ զգնալն Արշակայ՝ գայ ունի զԱսորիս: Իսկ Արշակայ երկոտասան բիւրու անդրէն դարձեալ, և Անտիոքոս ի սաստիկ ծմերայնոյն հերքեալ՝ պատահի նմա պատերազմաւ յանձուկ տեղիս, և կորչի հանդերձ զօրօքն. և Արշակ տիրէ երրորդ մասին աշխարհիս, որպէս յիրականացն պատմութեանց Հերոորտեայ է ուսանել ի չորրորդէն, որ յաղազս բաժանելոյ զբոլոր երկիրս յերիս մասունս, և կոչել զոմն Եւրոպէ, և զոմն Լիբիէ, և զոմն Ասիայ, որում և տիրեաց Արշակ:

Գ

### **Թագաւորեցուցանել զՎաղարշակ աշխարհիս Հայոց:**

Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ աշխարհիս Հայոց, զիիսիսի և զարևնուտս տալով նմա սահմանս: Սա, որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այր քաջ և խոհեմ՝ ընդարձակ տիրեաց ի վերայ սահմանաց իւրոց, և կարզս կենցաղականս, որչափ մարփէր, սահմանեաց աշխարհիս. և նախարարութիւնս և նոցին նախարարութեանցն նահախսետութիւնս հաստատեաց զարս պիտանիս, որք ի զաւակաց նախնւոյն մերոյ Հայկայ և յայլոց:

Քանզի յետ սանձահարելոյ զՄակեդոնացիս և դադարելոյ պատերազմացն՝ սկիզբն առնէ բարեգործութեանց Պարթևն քաջ. նախ և առաջին փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորին և իմաստնոյ, որ ի Հրեհցն՝ Շամբատայ Բագրատ. տալով նմա իշխանութիւնն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց. և որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել կոչմանբ յանուն նորա Բագրատունի, որ է այժմ մեծ նախարարութիւնն և մէջ

աշխարհիս: Քանզի այս Բագրատ նախաձեռն ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զօտերազմունսն Արշակայ ընդ Մակեդոնացիսն, և սա ի դրան արքունի: Իսկ ի ծայրս հայրերէն պօսից կողմնակալ, իշխան բիւրուց և հազարաց, յարևմուտից կուսէ:

Բայց զարձութ անդրէն ի վեր, պատմելով յաղաս պատերազմին Վաղարշակայ ընդ Պոնտացիս, և որ ի Փոխիգիայ, և վասն յաղթութեանն:

## Ղ

### **Եթէ որպէս միաբանեալ Վաղարշակայ զքաջս Հայոց ի կարգս զօրու՝ խաղայ ի վերայ Սակեդոնացւոցն մտերմաց:**

Յետ պատերազմին Արշակայ ընդ Մակեդոնացիս և ունելոյ գբարելոն և զարևելս և զարևմուտս Ասորեստանի՝ միաբանէ և Վաղարշակ զօր բազում յԱստրապատականէ և ի Հայոց, որ ի միջոցի աշխարհիս, արս անուանիս և քաջս, և զկոչեցեալն Բագարատ, և որք ընդ նովալ քաջք, և ծովեզերեայսն մանկունս, որք ի Գեղամայ և ի Քանանացւոց, և Շաբայի ծնունդը և գուշարայ, և առ թեր Սիսակեանսն, և զկադմեանսն և զնոցա մերձաւորսն, որպէս թէ զկէս մասն աշխարհիս: Հասանէ ի միջոց աշխարհիս, վերագոյն քան զակունս մօրին մեծի, յափն Երասխայ, մօտ յԱրմաւիր որ ասի բլուր. աւուրս շատս առնելով անդ, որպէս պարտ է ասել. զի ոչ գիտէին զկարգս ինչ:

Եւ աստի միաբանեալ զբոլոր կողմանս աշխարհիս՝ հասանէ առ սահմանօքն Խաղտեաց: Քանզի Դագիկայ, Պոնտոս, Փոխիւիայ, Մաժաք և այլք, ոչ գիտելով զհամբաւ պատերազմին Արշակայ՝ առ Սակեդոնացւոց օետութիւնն զմիաբանութիւն դաշտանցն հաստատուն պահէին: Վասն որոյ ոմն Մորփիւղիկեայ միաբանեալ զասացեալ կողմանս զայսոսիկ, և զրգոհի ի պատերազ ընդ Վաղարշակայ: Բայց պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարազագաթնիւ, որ այժմ ասի Կողոնիայ. և մօտեալք առ միմեանս ձիգ ասպարիսօք միջոցացն՝ ամբանան կողմանքն Երկրոքին բովանդակ աւուրս:

## Ծ

### **Պատերազմ Մորփիւղիկեայ եւ մկնդահար մահ:**

Զկնի անցանելոյ բազում աւուրց ամբանալոյ կողմանցն Երկոցունց, գրգիռ պատերազմ. ի մերմէ կողմանէս դիմեալ. վասն որոյ յարդարէ կամաւ կամ ակամայ Մորփիւղիկեան դիւրոյ կողման Ճակատն, հասանէ յանդուգն յարձակմամբ: Քանզի այս սրտեայ էր և անդամովք Երկար և ընդ իւեարս պատշաճ, զոյզ մարմնոյն և ոյժ սաստիկ ունելով, ամրացեալ պղնձով և Երկաթով, և այլովք ընտիր վառելովք, ոչ սաստիկ ինչ թոջով՝ տապաստ յերկիր արկանէր արս ընտիրս և քաջս ի մանկանցն Վաղարշակայ. և ջանայր անցանել հասանել յարքայն Հայոց ի մէջ խմբի մեծի և զինու ամրացելոյ: Եւ մօտ անցեալ՝ աջողեցաւ ձգել զսուինն. քանզի էր կորովի և Երկայնաձիգ, հերի զաշտէսն արձակեալ, որպէս ի թռիչս սրբս հաւուց: Այլ ոչ ինչ կարի յամենցին ընդ մէջ անցանել արք քաջք և անուանիք ի զարմիցն Հայկայ և ասորեստանւոյն Սենեքերիմայ. և հարեալ աշտէիք զքաջն՝ սատակէին և զզօրսն առաջի արկեալ՝ ի փախուստ դարձուցանէին. բազում վտակս արեան հեղեալ զերկիրն ոռոգանէին իբրև հեղեղօք անձրևաց: Եւ յայն հետէ դադարեալ խաղաղէր Երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ, և մակեդոնացւոց դադարէր գոռն:

## Զ

### **Եթէ որպէս կարգեաց Վաղարշակ զարեւմուտս եւ զիհիսիսի մերոյ աշխարհիս:**

Եւ այսպէս կատարեալ՝ կարգէ զկողմանս Մաժաքայ և զՊոնտացիս և զԵգերացիս. դառնայ զիհիսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց, ի զիջին և ի մառախլուտ տեղիս մայրեաց և ի լոռաւէտս. գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հաւասարելով զերոնայինն և զզերմահոտն ի բարխսաւն և ի զուգագեղ Վայելչութիւն իւրոյ թագաւորութեանն. ամառնային ժամանակին հովանոցս պատրաստելով, յորաժ

զիհւսիսեաւ Երթիցէ: Գոմս գերկուս տափարակսն անտառախիտս հանդերձ լերամբքն կազմելով, և որսոց տեղիս, և զջերմութիւնն Կողայ՝ ի մարմանդս այգեաց և բուրաստանաց: Այլ խտրեմ աստ վասն սիրելի առնն յայտնի գրել զամենայն և մանրապատում. զի անցի միայն զտեղիսն նշանակելով հաւատի, և զո՞ն ի բաց թողեալ, վասն զկապ սիրոյ զիրաշալոյն անխոդելի պահելոյ:

Եւ աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասոյ, և որ ի հովիտս կամ ի ծորս երկայնաձիգս խորացեալս, ի լեռնէն որ զիարաւով՝ իջեալ մինչ ի դաշտաբերանն մեծ. պատուէր տալով զաւազակութիւն և զմարդադապութիւն ի բաց քեցել յինքեանց, և հրամանաց և հարկաց արքունի հայտակ լինել. որպէս զի միւսանզամ տեսեալ զնոսա՝ առաջնորդս և իշխանս հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յիւրմէ: Եւ ինքն արձակեալ զարենտեայ բազմութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտուէտս մերձ ի սահմանն Շարայի. զոր իինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յտոյ վասն հատուածի Վզընդուկ Բուլղարայի Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ Կանանգ. և անուանք շինիցն յանուն եղբարց և զարմից նորա անուանեալ կոչին մինչև ցայժմ:

Իսկ ի ցրտանալ հիւսիսոյ և ի դառն հողմ փշելոյ, խաղայ իջանէ ի դաշտն մեծ. և անդ զափամբ մօրին մեծի բանակի ի տեղւոց, ուր գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի ի մօրն մեծ: Եւ անդ կարգեալ զզօրս աշխարհիս, և թողեալ յինքենէ վերակացուս, և իւր առեալ զամենայն զլխաւորսն՝ չուէ ի Մօրին:

Է

### **Յորինուածթազաւորութեանն. Եւ թէ ուստի զնախարարութիւնսն կարգեաց, թորպէս եւ զիարդ կենցաղավարել հրամայեաց:**

Այս դրուագ մեխս, և հաւաստի պատմութեամբ լի, և արժշանի բանից ողորկագունից և յոլովից: Քանզի իմչ աստ կարգաց և յորինուածոց տանց, ազգաց, քաղաքաց, և որ ինչ շուրջ զթազաւորութեամբն զօրաց, զօրապետաց, կողնանց կողմակալաց, և որ նմա այսոցիկ:

Արդ՝ նախ և առաջին օրինադրէ թագաւորն զինքն և զտուն իւր, սկիզբն առնելով ի զլխոյ իւրմէ և ի թագէ: Եւ զկոչեցեալն Բազարատ, որ ի Հրէիցն, շնորյակալութիւն նմա վասն յառաջազոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն զյառաջասացեալ տանուտիրական պատիւն ազգին պարզելով. և իշխել նմա թագ ի զլուս զնել թագաւորին, և կոչել թագադիր, այլ և ասպետ. և առանց ոսկոյ և ականց, զկտսեր մարգարիտն երեքտակեան վարսակալ ածել՝ յորաժ յարքունիս և ի տան թագաւորին շրփիցի:

Եւ զգեցուցանողս իւր դձեռէս ի զաւակէ քանանացւոց. և անուն կոչէ ազգին գնթունիս, ոչ գիտեմ էր աղազաւ: Եւ թիկնապահս իւր, զինու հանդերձ, ի զաւակացն Խորայ Հայկազնոյ, արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսեաւորս, և զլուս նահապետութեան նոցա զՄազխազ ոմն այր բարի և սրտեայ: Բայց անուան ազգին զնախնականն պահէ: Իսկ զԴատ ի զաւակէ Գառնայ, որ Գեղամայ, ի վերայ որսոց արքունականաց կարգէ: Որոյ որդի Եղեալ Վարժ յանուն նորա անուանի ազգք. բաց այս զկնի, յաւուրս Աստաշիսի: Եւ զԳաբաղ ոմն անուն ի վերայ կուտից, և զԱբէլ սպասաբար և զահաբար. և շէնս պարզէն նոցա, յորոց անուն կոչին. սապէս և նախարարութիւնքն՝ Արեղեանք և Գաբրեղեանք:

Եւ գուլս և պահապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վաթելովք ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս: Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ. այլս ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ, ոչ գիտեմ թէ վասն սպառելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդիմութեան իրիք արդեօք շկապեալ և ի բաց ընկեցեալ՝

զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարութին գունդմ՝ անուամբ արքունի: Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց, որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ Սէփէծուլն կոչի, Նա և ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. և նահապետ նոցա զՀայրէ իշխան մասին յԱստրականէ մինչև զՃուաշ և զՆախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ: Բայց թէ որպէս կամ ուր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ:

## Ը

### **Երկրորդ թագաւորութեան լինել ի զաւակէ Աժդահակայ Մարաց թագաւորին:**

Բայց յետ կարգելոյ զտուն թագաւորին՝ Երկրորդ թագաւորութեանն լիներ ի զաւակէ Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի, որ այժմ Մուլացեանդ կոչեն: Զանգի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուլացեան տէր, այլ Մարացոցն տէր: Եւ թողու ի վերայ նորա զամնեայն շնու որք ի գերութենէն Մարաց: Եւ յարենից կողմանէ, գեզերը հայկական խօսից, կողմնակալս բիւրաւորս գերկուս ի ցեղից տանց նահապետութեանց, զՍիսակեանսդ և որ ի Կադեայ տանէն, զորոց զանուանսն ի միում ի յառաջագունից ասացեալ ձարիցն կարգեցաք:

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարենից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն զործ մտաւորութեան և հանձարոյ առաջին, զԱռան առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիրեա, զի զցեղու զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, իգետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուաք. զի աղու ձայնէին զնա: Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացոց և Գարդմանացոց և Ծաւդէացոց և Գարգարացոց իշխանութիւնսն:

Իսկ Գուշարայ, որ յորդոցն Շարայի, Ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և զկէս մասինն Զաւախաց, զԿողք, զԾոր, զՉոր, մինչև ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրութիւնն ոցայ, և զսեպհականութիւնն Տաշարաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զիզօր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բդեաշն Գուգարացոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի. զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի վերիացոց ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Արիւենոս պատմէ այսպէս ասելով. «Մեծագօրն Նաբուգոդոնոսոր, որ ուժգնագոյն էր բան զՀերակլէս, ի Լիբիացոց և ի Վերիացոց աշխարհն զօրաժողով լեալ հասանէր և վանեալ վկանդեալ ընդ ձեռամբ նուաչէր. և զմասն մի ի նոցանէ յաջակողմն Պոնտոսս ծովու տարեալ բնակեցուցանէր»: Եւ է Վերիայն յեզր Երկրի յարևմուտս: Իսկ ի հովիտին մեծի Բասենոյ կարգէ նահապետութիւն զՈրդունին անուանեալ, որ ի զաւակացն Հայկայ:

Իսկ զայր խոժոռագեղ և բարձր և կոտարանձն և տափակարիթ, խորակն և դժնահայեաց, ի զաւակէ Պասքամայ, ի հայկայ թուռնէ, Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգերեայ, Վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արևմտից. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն: Բայց եթէ կամիս՝ ստեմ և ես յաղազ նորա անյաջ և փցուն, որպէս և Պարսիկք վասն Ռոստոնայ Սագչի հորիւր և քսան փղոց ոյժ ասեն ունել: Քանզի կարի իմն անյարմար թուէին և նմա երգ բանից վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն. որք ոչ Սամսոնի և ոչ հերակեայ և ոչ Սագճին յարմարին այս զրոյցք: Քանզի երգէին նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեզութիւն, և ձեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել եղնգամբքն և կազմել արպէս տախտակ, և գրել նոյնպէս Եղնգամբք իւրովք

արծուիս և այլս այսպիսի: Եւ յեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի խաղալն նոցա ի խորն իբրև ասպարէզ ութ, և սա ոչ ժամանեալ նոցա՝ առնու, ասեն, վէճս բլրաձևս, և ձգէ զկնի. և ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամարծումն ալեացն, որ ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս: Ո՞հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել: Բայց քեզ զի՞ է. քանզի էր արդարն սաստիկ հօր և այսպիսեաց գրուցաց արժանի:

Բայց զկնի դորա հաստատէ զմեծ նախարարութիւնն Ծոփաց ի Չորրորդ կոչեցեալ Հայս: Այլ և զնախարութիւնն Ապահունեաց և զՄանաւազեանն և զԲզնունականն ի նոյն զաւակացն Հայկայ. իբրակչացն գտեալ զպերձագոյնսն՝ տեարս կարգէ, յանուն շինից և զաւառաց կոչելով:

Այլ մոռացաք և զդժնեայ անուանեալ այր, զոր ոչ կարեմ հաւաստեաւ ասել, ի Հայկայ՝ եթէ յառաջադունից քան զնա եղելոց յաշխարհիս, զոր իին զրոյցքն պատմեն լինել. բայց էր այր քաջ: Չսա կարգէ սակաւ արամբք զլեառն և որսալ զքօշն, որք անուանեցան Սլկունիք: Այսպէս և ի նոյն իրս և զՄիանդակն անդառնալի. և ի սմանէ Մանդակունիք:

Բայց յորդուցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խնդրեցին զմեհենից պաշտամունսն՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զքրոնութիւնն. և կարգէ ընդ առաջին նախարարութիւնսն, և անուն կոչէ Վահունիս: Սապէս և զԱռաւենեանսն և Զարեհաւանեանսն գտեալ ի զարմից առաջնոց թագաւորացն՝ կարգէ ի նոյնանուանս աւանս:

Եւ զՇարաշան ի տանէ Սարասարայ հաստատէ բղեաշխ մեծ և կուսակալ յարկանտից հարաւոյ, յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ավն Տիգրիս գետոյ, զաւառս պարզելով զԱրձն և որ շուրջ զնովաւ, և զլեառն տաւարոս, որ և Սիմ, և զԿղեսուրն ամենայն:

Իսկ զմոկացին ի նոյն զաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իրեն սրիկայս բազումն՝ նախարարութիւն հաստատէ: Նոյնպէս և զԿորզուացիս և զԱնձեացիս, և զԱկէացիս ի նոյն զաւառաց: Իսկ զՇտունիս և զգողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարն հատուած. ոճ գիտեմ, թէ յանուն արա՞նցն զգաւառն անուանեալ, և թէ յանուն զաւառաց զնախարարութիւնսն կոչեցեալ:

Իսկ յետ այսր ամենայն մեհեան շինեալ յԱրմակիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսին և իւրոց նախնեացն: Եւ աղերսեալ որ ի Հրէիցն Շամբատայ Բազարատ, որ և թագաղիր և ասպետ, հանդերփ հարկեցուցանող բանիւք, թողու զօրէնս հրէութեանն, և պաշտել զկուռս. զոր ոճ առեալ յանձն՝ ըստ կամաց թողու զնա արքայն Վաղարշակ:

Հրաման տայ և զքաղաքն Շամիրամայ նորոգել, և յայլ բազում տեղիս շինել քաղաքս բազմաբնակս, և շէնս զիխաւորս և մարդախիտս:

Եւ օրէնս իմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ, և ժամս որոշէ Ելից և մտից և խորհրդոց և խրախնձանութեանց և զքուանաց\* Եւ կարզս զինուորութեանց, և նոցունց առաջինս և Երկրորդս և Երրորդս, և որ ի կարգին: Եւ յիշեցուցանողս Երկուս ի ձեռն գրոյ. այլ ոմն զբարի յիշողութիւնս առնելու, և այլ ոմն զվրէժխնդրութեանցն: Եւ բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրաւն և զմարդասիրելն: Իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանս: Հրաման տայ՝ և քաղաքացեաց մարդական արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքցիս որպէս զիշխանս և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերձանալ, այլ Եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձու կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ:

Եւ քանզի բազում ունէր ուստերս՝ պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի զաւառն Հաշտենից, և ի ձորն նորին

սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ռոճկաց կարգելոց յարջունուստ: Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոճէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան, և զնորին ուստր, զոր անուանեաց Արտաշէս և յոյժ սիրեաց. քանզի էր արդարէ տղայն կայտար և հզօր մարմնով. որպէս զի կարծիս հայեցողացն տալ՝ որ ի նմայն աձելոց էին արութիւնք: Եւ եղև այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց— միոյ որդոյ բնակել ընդ արքայի փոխանորդ լինել թագաւորութեան, և այլոց ուստերաց և դստերաց գնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին ժառանգութիւն:

Բայց Կաղարշակ յետ այսպիսեաց արութեանց և բարեկարգութեանց մեռամի ի Մծրին, թագաւորուեալ ամս քսան և երկուս:

Թ

### **Յաղագս մերայ Արշակայ Առաջնոյ եւ նորին գործոց:**

Արշակ որդի Կաղարշակայ թագաւորէ ի վերայ Հայոց ամս երեքտասան. նախանձաւոր և հետևող հայրենեացն լեալ առաքինութեանց՝ բազում կարգս ուղղութեան գործեաց. պատերազմելով ընդ Պոնտացիս, և նշանակ եթող ծովուն մեծի. զնիզակն իւր ասեն, զբոլորատէգ որ էր արեամբ զեռնոց միտեալ, ձգեալ ի հետևակուց՝ խորագոյնս նստոյց յերկանաքար արձանին, զոր կանգեաց ի ծովեզերն: Զայս արձան բազում ժամանակս պատուեցին Պոնտացիք որպէս զար ի յաստուածոցն գործ: Իսկ ի գոռալն Արտաշիսի միւսանգամ ընդ Պոնտացիս՝ ընկեցեալ ասեն զարձանն ի ծով:

Ի սորա աւուրս աղմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերինն Կաւկասու յաշխարհին Բուլղարաց, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր, և բնակեցան ի ներքոյ Կողայ, յարգաւանդահող և ի հացուաւէտ տեղիս մինչև ի ժամանակս բազում:

Ի սմանէ նեղեալ որդիք Բագարատայ վասն զկուռս պաշտելոյ՝ երկուք ոնանք ի նոցանէ սրով կատարեցան արհաբար ի վերայ հայրենի օրինացն. զոր ոչ պատկառեմ ասել հետևող լինել Անանիանց և Եղիազարեանց: Բայց այլքն յանձն առնուն այսչափ միայն, ի շաբաթու հեծանել յորս ի պատերազմունս, և զմանկունս թողով անթվատս, յորած լինիցին. քանզի անկինք էին: Եւ իրամայեցաւ յԱրշակայ՝ մի տալ նոցա կանայս յամենայն նախարարութեանց, եթէ ոչ ուխտ պայմանի դիցեն՝ թողով զթվատութիւնն: Չոր յանձն առնուն զերկուս զայս միայն, այլ ոչ և զերկրպագութիւն կրոց:

Աստանօր սպասին բանք ծերունւոյն Մար Արայ Կատինայ:

Ժ

### **Եթէ ուստի եզիս զպատմութիւնն զկնի մատենիցն Մար Արայ Կատինայ:**

Սկիզբն արասցուք պատմել քեզ ի իինգերորդ գրոց Ավրիկանոսի ժամանակագրի, որում զկայէ Յովսեպոս և Հիւպողիտայ և այլք բազումք ի Յունաց: Քանզի նա բովանդակ փոխադրեաց որ ինչ ի քարտէսս դիւանին Եղեսիայ, որ Ուրիհայ, որ յաղագս թագաւորացն մերոց պատմէր. որ մատեանքն ի Մծրնայ էին փոխեալ անդր և ի Սինոպայ Պոնտեռոսէ ի մեհենական պատմութեանցն: Մի ոք անհաւատացի, քանզի և մեղէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի: Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ գիրք Եւսերի Կեսարացւոյ, զոր ետ թարգմանել երանելի Վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու: Խնդիր արասցես թեանն յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յԵղեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱբգար, ո զկնի Աբգարու մինչև ցԵրուանդ: Որ և այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի:

ԺԱ

### **Յաղագս մերոյ Արտաշիսի Առաջնոյ եւ յակիշտակելոյ զնախազահութիւն:**

Արտաշէս թագաւորէ հայոց փոխանակ Արշակայ հօր իւրոյ ի քսան և ի չորրորդ ամի Արշականայ Պարսից արքայի. և յառաջադէմ եղեալ՝ ոչ զերկրորդականն ունի զահ,

այլ զաւագութեանն թեկն ածէ. որում հաւանեալ, յանձն առնու: Արշակ տալ նմա զնախագահութիւնն: Քանզի էր այր հպարտ և պատերազմաէր որ և արքունիս իւր ի Պարսից աշխարհին շինաց, և դրամ առանձին զիւր պատկերն հարկանէր. և զԱրշական ընդ իւրով ծերանբ կացուցանէր թագաւոր Պարսից, որպէս զՏիգրան որդի իւր՝ Հայոց:

Բայց տայ զՏիգրան որդի ցպատանի ոմն Վարաժ անուն, որդի դատայ, որ ի զաւակէ Գառնկայ՝ որ ի գեղամայ, քանզի էր պատանին նշաւակ ի նետաձգութիւն կորովութեան, ուսուցանել զՏիգրան: Անա իշխան արքունականացն արարեալ որսոց, և շէնս պարզեալ նմա զՀրազդան գետով՝ յանուն նորա կոչի ազգն Վարաժնունի: Բայց զդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Սիհրդատայ աւմեմն Վրաց բդեշխի մեծի, որ էր ի զաւակէ Սիհրդատայ, Դարեհի նախարարի, զոր կացուցեալ էր Աղեքսանորի ի Վերայ գերութեանն Վերիացոց աշխաչին, որպէս յառաջն պատմեցաք. և հաւատայ նմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնտոս ծովու:

ԺԲ

### **Խաղալն Արտաշիսի յարեւմուտս, Եւ ծերբակալ առնել զԿրիստոս, Եւ աւարել ընձեռել հայոց զպատկերս կորց:**

Յայնժամ իրաման տայ Արտաշէս՝ զօր յարուցանել յարեւելից և ի հիւսիսոյ բազում յոյժ. մինչև ոչ գիտել նմա զհամարն, այլ յանցս և յիշեանս քար ըստ մարդաթուի կարկառ՝ նշան բազմութենն թողով: Եւ խաղայ այնուիետև յարեւմուտս, և ծերբակալ առնէ զԿրիստոս թագաւոր Լիւդացոց:

Եւ գտել յԱսիայ պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպոլոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաիր: Չոր առեալ քրնապետացն, որ էին յազգէն Վահունեաց՝ զԱպոլոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաիր. իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր ի Սիկիւդեայ և ի Դիպինոսէ կրետացոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական զիւլն յԱշտիշատ, յետ նահուանն Արտաշիսի:

Բայց Արտաշիսի նուաչեալ զցանաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս բազմութեանբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս: Քանզի մեծ յոյզք խռովութեանց ի Հռովմ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս: Այլ ոչ գիտեմ ասել յորպիսի ազդմանէ, ահագին իմն աղմուկ լեալ շփորից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մերանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, թագաւորեալ ամս քսան և իինգ:

Բայց և յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփիստու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. ողք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զրօթ նահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին զիետ լինելով, դադրեն առ նոսա:

ԺԳ

### **Վկայութիւնք տիեզերակալութեանն Արտաշիսի Եւ կապելոյն զԿրիստոս, յայլոց պատմագրաց:**

Զայս ասացեալ պատմագրացն Յունաց, ոչ միոյ կամ երկուց, այլ բազմաց. ընդ որ տարակուտեալ մեր՝ բազում խոյզ խնդրոյ արարաք: Քանզի լուաք ի պատմութեանց ոմանց Կիւրոսի սպանեալ զԿրիստոս և բարձեալ զթագաւորութիւնն Լիւդացոց: Եւ դարձեալ պատմի առարկութիւնն Կրիստոս և նեքտաներայ. և է Նեքտաներոսս այս վերջին թագաւոր Եգիպտացոց, ի Մանեթոսէ պատմեալ, զոր ոնանք հայր աղեքսանդրի ասացին: Եւ գտանենք զժամանակս կրիստոսի երկերիւր ամաւ յառաջ քան զնեքտաներայն, իսկ զՆեքտաներայ ժամանակս աւելի ևս երկերիւր ամաւ յառաջ եղեալ քան զառաջնոյն Արտաշիսի թագաւորի Հայոց:

Բայց քանզի բազումք են, որ ասեն զԿրիստոս մերոյ Աչտաշիսի կալեալ, և ոճու իմն պատեմ՝ ես հաւանեալ եմ: Քանզի ասէ Պոլիկրատէս այսպէս. «Կեհ ինձ Արտաշէս

Պարթև քան զՄակեդոնացին Աղեքսանդր, զի կալով յիւրում աշխարհին՝ իշխեաց թերայ և Բարելոնի. և չնդ Ալիս զետ անցեալ՝ զիւդական սատակեաց զօրոս, և կալաւ զԿրիստոս. և յառաջ քան յԱսիայ հասանելն՝ յԱտտիկէ զդեկին քարոզեցավ: Աւագ բախտին. միայն թէ ի տէրութեանն և ոչ ի փախստեան էր վախճանեալ»:

Հանգոյն զմին ասէ Եւազարոս. «Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմն առ Արտաշիսի բաղդատեալ. քանզի նոցայն ոչ ի փոշտոյն մաքուր երևէր լոյս տուրնջեանն. այլ սա ծածկեաց նետաձգութեամբն և ստուերացոյց զարեգակն, ձեռագործ գիշեր զմիջօրէի արարեալ: Ոչ փախստեայ՝ համբաւարեր Լիւդացւոցն թողեալ. այլ և զթագաւորն նոցին զԿրիստոս ի տապակի հրամայեաց կացուցանել: Վասն սորա և ոչ ուուխք զգետն ստուարացուցին, արբանամբն ի ծմեռային նուազութիւն իշուցանելով. վասն զի և զթուցն եցոյց տակը լինել՝ բազմութեամբ զօրացն, մինչ զի չափոյ պէտք եղեն առաւել քան զհամարոյ: Նա ընդ այս ոչ հպարտացաւ, այլ արտասուեաց ասելով. «Աւան փառացս անցաւորի»:

Գրէ և Սկամադրոս այսպէս. «Խարկանք լինէին հպարտացելոյն Լիւզացւոց Կրիստոյ՝ Պիւթիայ հարցուկն պատասխանելով. «Կրիստոս անցեալ ընդ Ալիս զետ՝ քակեսցէ զիշխանութիւնս»: Չոր նորա զօտարաց կարծեցեալ՝ զինքն քակէ. քանզի կալեալ զնա Պարթևին արտաշիսի հրամայեաց հանել յերկաթեղէն տապակ: Իսկ կրիստոսի յիշեալ զբանսն սորոնի Աթենացւոյ, ասէ յիւր լեզուն.«Ո՞վ Սողոն Սողոն, զեղեցիկս բարբառեցար, ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան»: Եւ լուեալ որք մերձն կային՝ պատմեցին Արտաշիսի, եթէ զնոր ոմն աստուած կորդայ Կրիստոս: Եւ զթացեալ Արտաշիսի՝ հրամայեաց ածել. և հարցեալ և ուսեալ, թէ զի՞նչ է որ աղաղակեացն՝ հրամայեց ներել զտանջանսն»:

Գրէ և Փղեզոնիսս. «Ամենեցուն թագաւորաց հումկու եղեալ Պարթևն Արտաշէս, ոչ միայն զԼիւդացի վանեալ և զԿրիստոս կապեալ, այլ յերկսպոնտոս և ի թրակէ զտարեցն փոխեաց զբնութիւն. ծովագնաց ընդ երկիր բերել լինէր, և ընդ ծով հետևակելով. թեռաղացւոցն սպառնալով, և համբաւն հիացուցաներ զՀելլենականն: Կործանեաց զԼակեդեմոնացիս, փախոյց զՓոկէացիս. Ղովկրացիք անձնատուրք եղեն, Բիւտացիք մասն են ի կազմածոյ նորա. առ հասարակ ննա Ելլադայ մատուցաներ զահն: Յետ փոքր ժամանակի աղէտք անցին զամենեքումբք. ոչ այնքան թշուառացաւ կիւրոս ընդ Մասքութ պատերազմելով, ոչ այսպիսի կիրս կրեաց Դարեհ ի Սկիւթացւոցն փախուստն, և ոչ Կամբիւսէս նոցա զգանծս և զխորանս, միայն կենդանի փախուցեալ մազապուր: Այլ սա մեծամեծ յաղթանակօք պանծեալ՝ ի յիւրոց զօրացն խողխողի»:

Արդ՝ ես հաւատարմութեան արժանի համարիմ զայսոսիկ պատմութիւնս. և զայն Կրիստոս, որ առ Կիւրոսիւ և կամ Նեքտանեբաւն պատմին, կամ սուտ լեալ և կամ միով անուամբ բազում թագաւորաց վարեալ, որպէս յոլովից է սովորութիւն:

ԺԴ

**Յաղազս թագաւորութեանն Տիգրանայ Միջնոյ եւ ընդդէմ կալոյ զօրացն Յունաց, եւ զմեհեանսն շինելոյ, եւ արշաւանս առնելոյ ի Պաղեստին:**

Յետ Արտաշիսի Առաջնոյ թագաւորէ Տիգրան որդի նորա ի քառասուն և յիններորդ ամի Արշականայ թագաւորի Պարսից: Եւ ժողովեալ զօրս Հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յունաց, որք յետ մահուանն Արտաշիսի հօրն իւրոյ և ցրուելոյն զօրացն՝ հետամուտ լեալ դիմեալ զային յաշխարիս մեր: Որաց ընդդէմ պատահեալ Տիգրանայ՝ արգելեալ ի վերջ նահանջէ: Եւ ի քեռայր իւր Միհրդատ հաւատացեալ զՄաժաք և զհոգս Մէջերկրայցն և զօր բազում թողեալ առ ննա՝ դառնայ յաշխարիս մեր:

Առաջին գործ զմեհեանսն շինել կամցաւ: Իսկ քրմացն, որ եկեալ էին ի յունաց, զմտաւ ածեալ, զի մի ի խորագոյն Հայս վարիցին՝ պատճառեցան ըղձութիւնս, իբր թէ դիրքն անդրէն կամիցին զբնակիլն: Որում հաւանեալ Տիգրան, կանգնեաց զՈղիմպիական պատկերն Դիոսի յամուրն յանի, և զաթենայն ի թիլ, և զԱրտեմիդայ

զմիս պատկերն յերիզայ, և գԵփեստուն ի Բագայառինց: Բայց զափրոդիդեայ զպատկերն, իբրև հերակլեյ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն: Եւ ցասուցեալ ընդ Վահունիսն, եթէ ընդէր յիւրեանց սեպիականին իշխեցին կանգնել զպատկերն հերակլի, զառաքեալն ի նորին հօրէ՝ ընկենու զնոսա ի քրմութենէն, և զգիւղն յարքունիս առնու, յորում պատկերքն կանգնեցան:

Եւ այսպէս մեհեանս շինեալ, և առաջի մեհենիցն բագինս կանգնեալ, զոհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր յանձն արանց ազգին Բագրատունեաց. յորոց զմիոյ ուրումն զլեզուն հատեալ, որում անուն էր Ասուր, վասն պատկերացն անարգանաց՝ ոչ այլ իր խոշտանգէ. քանզի յանձն առին ուտել ի զոհիցն արքայի և զմիս խոզի, թէպէտ և ոչ ինքեանք զոհեցին երկրպագութեամբ: Վասն որոյ առնու ի նոցանէ ի բաց զիշխանութիւն զօրուն. բայց միայն զթագակապ ասպետութիւնն ոչ հանէ: Ինքն իջանէ ի Միջագետս, և գտեալ անդ զԲարշամինայ զպատկերն, զոր ի փողոսկրէ և ի բիւրեղէ կազմեալ անդ զԲարշամինայ զպտակերն, զոր ի փողոսկրէ և ի բիւրեղէ կազմեալ էր արծաթովէ հրամայէ տանել կանգնել յաւանին Թորդան:

Եւ նոյն հետայն դիմէ յաշխարին Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պտղոմայիդ Կողէպատրայ յաղազս Գիոնիսի որդուոյ նորա առ հայր իւր յանցանաց: Արեալ զերի բազում և Հրէից՝ նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ: Իսկ դշխոյն Հրէից Աղեքսանդրիայ, որ և լեալ կին Աղեքսանդրի, որդուոյ Յոհաննու, որդուոյ Շնաւոնի, եղբօր Յուդայ Մակարէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչու բազումս տալով՝ դարձոյց զնա անտի: Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ մինչև յանուն լեղուզակին կոչին Վայկունիք:

ԺԵ

### **Դիմումն ի մեզ Պոմպէի Հռոմայեցւոց զօրավարի եւ առնույն զՄաժաք, եւ մահն Սիհրդատայ:**

Յայնն ժամանակի Պոմպէոս Հռոմայեցւոց զօրավար բազմօք եկեալ հասեալ ի Միջերկրեայս՝ զԱկաւրոս սպարապետ իւր յԱսորիս առաք՝ տալ պատերազմ ընդ Տիգրանայ: Որոյ եկեալ, և ոչ պատահեալ Տիգրանայ: Որոյ եկեալ, և ոչ պատահեալ Տիգրանայ, քանզի էր դարձեալ յիւր աշխարհի վասն խուճապանաց յեղուզակին: Անցեալ Ակաւրոսի ի Դամասկոս, և տեսեալ զքաղաքն առեալ ի մետեղայ և ի դուղայ՝ զնոսա հալածեալ անտի, ինքն ի Հրէաստան փութայր հասանել ի վերայ Արիստաբրուիի, յօզնականութիւն եղբօր նորա երիցու, Հիւրկանու քահանայապետի, որդուոյ Աղեքսանդրի:

Իսկ Պոմպէի պատերազմեալ ընդ Միհրդատայ՝ տեսանէ սաստիկ ընդդիմակացութիւն և ահազին մարտս, և վտանզի յոյժ. սակայն բազմութեանն յաղթեալ՝ փախստական լինի Միհրդատ ի կողմանս Պոնտոսի: Յորմէ իբրև զերծեալ Պոմպէոս, որում ակն ոչ ունէր, և առեալ զՄաժաք, և կալեալ զորդի նորա զՄիհրդատ՝ նստուցանէ զօր ի քաղաքին. ինքն ոչ հետամուտ լինի նմա, այլ ընդ Ասորիս ի Հրէաստան փութայ հասանել: Եւ ի ձեռն հօրն Պիզատոսի Պոնտացւոյ զՄիհրդատ սպանանէ թունաւոր դեղովք: Վկայէ այսմ բանիս և Յովսեպոս ի Ճառին, որ վասն ապրամին պատմէ, այսպէս ասելէվ. «Պոմպէի հուազ զԵրիքով հասանեն աւետիք մահուանն Սիհրդատայ»:

ԺԶ

### **Յաղազս յարձակելոյն Տիգրանայ ի վերայ զօրացն Հռոմայեցւոց, եւ խոյս տալ Դարիանոսի, եւ արծակելոյնզմանուկն Սիհրդատ:**

Իսկ բազաւորն Հայոց Տիգրան զգերութիւնն Հրէից նստուցեալ յԱրմաիր և յաւանին Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ, և զեղուզական բնաջինջ արարեալ ի

լեռնէն, և զուգն Միհրդատայ կատարեալ՝ խաղայ գնայ յԱսորիս ի վերայ զօրացն Հռոմայեցւոց, առ ի վրէս պահանջել: Ընդդէմ նորա զայ Գաբրիանոս սպարապէտ զօրացն Հռոմայեցւոց զոր թողեալ էր Պոմպէի ի դաշնալն իրում ի Հռոմ. և Գաբրիանոս ոչ իշխեաց ի դիմի հարկանել Տիգրանայ, դաշնայ Եփրատայ յԵզիպտոս, զՊտղոմէտոս ունելով պատճառ: Եւ գաղտ ի հաշտութիւն խոսեցեալ ընդ Տիգրանայ՝ տալ զքեռորդին նորա զպատանին Միհրդատ, զորդին Միհրդտայ, զոր կալեալ էր Պոմպէի ի մաժաք, ասելով թէ գաղտ գնաց:

ԺԷ

### **Պատերազմ Կրասոսի, եւ սատակումն նորի ի Տիգրանայ:**

Զկասկած առեալ Հռոմայեցւոցն՝ զԳաբրիանոս փոխեն և զԿրասոս փոխանակ առաքեն. որոյ եկեալ և առեալ զամենայն զանձս գտեալս ի տաճարին Աստուածոյ յԵրուսաղեմ՝ խաղայ ի վերայ Տիգրանայ: Եւ անցեալ ընդ Եփրատ՝ սատակի ամենայն զօրօքն հանդերձ ի պատերազմելն ընդ Տիգրանայ: Զորոյ զգանձսն ժողովեալ Տիգրանայ դաշնալ ի Հայս:

ԺԸ

### **Թէ որպէս Կասսիոս ընդիմակաց եղեւ Տիգրանայ. եւ ապստամբելն Միհրդատայ, եւ շինել զկեսարիա:**

Զչարեալ Հռոմայեցւոց՝ առաքեն զԿասսիոս անթիւ զօրօք: Սա եկեալ և ընդդէմ կացեալ, չտայ թյլ զօրացն Հայոց անցանել ընդ Եփրատ և ասպատակել յԱսորիս:

զայսու ժամանակաւ թերահաւատութիւն լեալ Տիգրանայ ի պատանին Միհրդատ, ոչ զիւրն կարծելով քեռորդի, չտայ նմա մասն ինչ իշխանութեան, այլ և ոչ զիւր աշխարհին Վրաց: Եւ Միհրդատայ արհամարհութիւն կրեալ ի քեռույն իրմէ Տիգրանայ՝ ապստամբութեամբ անկանի առ Կեսար. իշխանութիւն գտեալ ի նմանէ զՊերգեայ քաղաքի, զօրավիզն օգնականութեան լինի Անդիպատրոսի հօր Հերովդի, Կեսարու հրամանաւ: Սա շինէ զՄժաք ընդարձակագոյն և պայծառ շինուածովք, և անուանէ Կեսարիայ ի պատիւ կեսարու: Եւ յայնն հետէ բարձեալ. լինի իշխանութիւնն Հայոց քաղաքէն յայնանէ:

ԺԹ

### **Յաղազս մմիաբանութեանն Տիգրանայ եւ Արտաշիզի, եւ առաքել ասպատակ ի պաղեստինէ. եւ զերութիւն Հիւրկանու քահանայապետի եւ այլ բազմութեանն Հրէից:**

Յետ այսր ամենայնի ի հիւանդութեան եղեալ Տիգրանայ՝ աղերսէ ի սէր զԱրտաշեզ արքայ Պարսից, յաղազս հպարտութեան հօրն՝ հանելով ի նոցանէ զնախազահութիւնն: Իսկ սա իրովք կամօք զերկորդականն ունելով ըստ իրաւանց՝ դարձուցանէ ի նա զնախազահութիւնն. և ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէզ՝ առնու ի նմանէ զօր յօգնականութիւն ինքեան: Յայնն ժամանակի առեալ Տիգրանայ զԲարզափրան նահապետ Ռշտունեաց նախարարութեանն՝ սպարապետ կացուցանէ զօրացն Հայոց և պարսից և առաքէ ի վերայ զօրացն Հռոմայեցւոց, հրաման տուեալ զբնակիչս աշխարհին ասորուց և Պաղեստինացւոց ի հաշտութիւն հաւանութեան խօսել: Նմա ընդ առաջ լինի ոմն Պակարոս անուն, որոյ հայրն թագաւոր լեալ Ասորուց, և ինքն խնամի անտիգոնեայ Արիստաբուլեանց: Եւ եկեալ առ Բարզափրան նահապետ ռշտունեաց և սպարապետ Հայոց և պարսից՝ խոստանայ իինգ հարիւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկոյ, զի օգնեսցէ նոցա՝ ընկենալով թագաւորութենէ Հրէից զՀիւրկանոս, և թագաւորեցուցանել զԱնտիգոնոս\*

Իբրև ետես Հիւրկանոս Հրէից քահանայապետ և թագաւոր, և Փասայեղոս եղբայր Հերովդի, եթէ զզօրս Հռոմայեցւոց փախստական արարեալ, զոմանս ի ծով, զոմանս ի քաղաքս, խաղաղութեմբ ընդ երկիրն անցանէր Բարզափրան՝ խօսին և ինքեանք զխաղաղութիւն առ Բարզափրան: Եւ նա զԳնէլ ոմն, որ էր տակառապետ արքային հայոց, յազգէն Գնունեաց, առաքէ յԵրուսաղէմ հանդերձ հեծելազօրու, իբր թէ ի

պատճառս խաղաղութեան, բայց ի գաղտնիս՝ օգնել Անտիգոնեայ: Եւ Հիրկանոս զտակառապետն ամենայն զօրօքնոչ ընդունէր յԵրուսաղէմ, այլ միայն իհնգ հարիւր հեծելով: Եւ տակառապետին դաւով խրատ տուեալ Հիրկանու՝ զի առ Բարզափրան երթից վասն աւերածոյ աշխարհին. և ինքն խոստանայր լինել բարեխոս: Եւ Հիրկանու երդումն խնդրեալ ի Բարզափրանայ՝ երդնու նմա յարեգակն և ի լուսին և յամենայն պաշտամունս իրեանց երկայնիս և երկրայինս, և յարև Արտաշէզի և Տիգրանայ: Ընդ որ վստահացեալ Հիրկանոս՝ թողով զՀերովդէս ի վերայ Երուսաղեմի, և Փասայելոյս գերեց եղբայր հերովդի առեալ՝ ընդ իր՝ գայ առ Բարզափրան ի ծովեզրն, ի գեօղն որ կոչի Եքտիպոն\*:

Եւ Բարզափրան խորամանկութեամբ պատուէր զնոսա և ինքն յանկարծակի զնացեալ անտի՝ մնացելոց զօրացն հրաման տայր՝ ի բուռն առնուլ զնոսա և ի ձեռն Անտիգոնի մատնել: Եւ Անտիգոնոս ի վերայ հիրկանու անկեալ՝ զականջս նորա ատամանքն ի բաց կտրէր. զի թէ և այլ ժամանակ փոխեսցի՝ անհնար լիցի նմա զքահանայապետութիւնն ունել. քանզի օրենքն զողջանդամսն հրամայեն կացուցանել քահանայս: Եւ Փասայել եղբայր հերովդի իրով զարկեալ զգուխ իւր զքարի՝ առաքեցաւ բժիշկ յԱնտիգոնեայ, իբր թէ բժշկել զնա. ելից զվէրն նորա թունաւոր դեղովք և վախճանեցոյց:

Եւ Բարզափրանայ հրաման տուեալ Գնէլոյ տակառապետին արքայի Հայոց յԵրուսաղեմ զՀերովդէս որսալ. իսկ Գնէլ զՀերովդէս արտաքս քան զպարհսան ելանել պատրէր. զոր չառեալ յանձն հերովդի, այլ և ոչ ևս կալ ի քաղաքին իշխեաց, երկուցեալ ի պատառմանէ Անտիգոնեանցն, ի գիշերի ի ծածուկ ընտանեօքն հանդերձ առ Եղոնայեցիդ փախչէր. ի մասազան յամուրն թողեալ զընտանիսն՝ ինքն ի Հռոմ փութայր հասանել: Բայց զօրքն հայոց ձեռնտուութեամբ Անտիգոնեանցն յԵրուսաղէմ մտանէին՝ ոչ ինչ ումեք վնասեալ, բայց միայն զՀիրկանու զինչսն առնուին աւելի քան զերեքարիւր քանքար: Եւ ընդ գաւառն ասպատակեալ՝ զիհիրկանեանսն առեալ աւերէին. զՍարհսացոց քաղաքն զերի առեալ, թագաւոր կացուցանէին զԱնտիգոնոս: Եւ կապեալ զՀիրկանոս աօտն տիգրանայ հանդերձ զերութեամբն. և Տիգրան հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զգերին Հռէց որ ի Մարսացոց՝ ի քաղաքն Շամիրամայ: Եւ Տիգրանայ ոչ աւելի բաւեալ քան զերեամ յԵտ այնորիկ՝ վախճանի, թագաւորեալ ամս երեսուն և երիւ:

## Ի

### *Այլ պատերազմ Հայոց ընդ աօրս Հռոմայեցուց եւ պարտումն Սիղոնի եւ Քենդիդեայ:*

հերովդէս անցեալ ի Հռովմ՝ առաջի Անտոնիոսի և Կեսարու և սինկղիոսին զինքեան միամտութիւն առ Հռոմայեցիսն պատմէ, և թագաւոր Հրէտատանի յԱնտոնիոսէ եղեալ՝ առնու իւր զօրավիզն օգնականութեան զթենդիդիոս սպարապետ Հռոմայեցուց զօրօք, ի պատերազմէլ ընդ զօրս Հայոց և քակել զԱնտիգոնոս: Որոյ հասեալ յԱսորիս, փախստական առնէ զզօրս Հայոց, և զՍիղոն թողեալ ընդդիմակաց Հայոց մերձ ի յԵփրատ, և զՊակարոս սպանեալ՝ դառնայ յԵրուսաղէմ ի վերայ Անտիգոնի: իսկ Հայոց միւսանգան օգնականութիւն ի Պարսից գտեալ՝ դիմեալ ի վերայ Սիղոնի փախստական զնա ի թենդիդիոս արկանեն. հեղմունս արեանս առնելով անքաւս:

## ԻԱ

### *Եթէ զիարդ Անտանիոս իրովի դիմեալ ի վերայ զօրացն Հայոց, առնու զՇամշատ:*

Զչարեալ Անտոնիոս՝ իրովի հասանէ ամենայն զօրօք Հռոմայեցուց և հասեալ Շամշատ լսէ զմահն Տիգրանայ. և առեալ զքաղաքն, և թողել զՍովսիոս զօրավիզն Հերովդի, մարտ դնել ընդ Երուսաղեմի ի վերայ Անտիգոնի՝ ինքն ի ձմերոցն զնայ յԵգիպտոս: Փութայր հասանել ըստ շամբշութեան առն կնամոլոյ, ցանկութեամբ վարեալ ի Կղէոպատրայ դշխոյն Եգիպտացոց: Այս Կղէոպատրայ դուստր էր Պտղոմէոս

Դիոնիսի, թուն Պտղոմայիդ Կղեռպատրեայ, և սիրելի յոյժ հերովդի. վասն որոյ առաւել ևս յանձնէ Անտոնիոս զՀերովդէս Սովուայ: Որ և մարտուցեալ իսկ քաջապէս՝ առնու զԵրուսաղէմ. և սպանեալ զԱնտիգոնոս՝ թագաւորեցուցանէ զՀերովդէս ամենայն Հրեաստափի և Գալիլեայ:

## ԻԲ

### **Յաղագս թագաւորելոյն Արտաւագդայ, եւ պատերազմել ընդ Հռոմայեցիս:**

Հայոց թագաւորէ Արտաւագդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զԵրբարս իւր և զքորս ի գաւառս Աղույ ովտի և Աօբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ առանձինն մտից և ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից, որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաւել թագաւորազն քան զայնս Արշակունիս. միայն օրինագրէ որ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի:

Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և ընպելեաց պարապեալ, մօրից և Եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզու արածելով. զիմաստութենէ և զքաջութենէ և զքարի յիշատակաց արարեալ, ծառայ և ստրուկ որովայնի արդարս լինելով՝ զաղբիս մեծացուցանէր: Սա բասերելով յիւրոց զօրացն վասն առաւել պղերգութեանն և սաստիկ որկրամոլութեանն, մանաւանդ զի զՄիջագետս Անտոնիոսի հանել էր ի նանէ, այրացեալ՝ հրաման տայր զօր յարութանել զբիւրաւորս Աստրատական նահանգին և զբնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք. խաղայ իջանէ ի Միջագետս, և հալածականս առնէ զգօրս Հռոմայեցուց:

## ԻԳ

### **Եերակալ առնել զԱրտաւագդ Անտոնիոյ:**

Մոնչեալ առիւծաբար զազանութեամբ Անտոնիոս, առաւել ևս թունեալ ի Կղեռպոտոյ, քանզի քէն պահէր վասն լլկանաց իւրոյ հանոյն, որ ի Տիգրանայ. և ոչ միայն Հայոց, այլ բազմաց այլոց թագաւորաց լիներ մահաբեր, զի նոցայնոցն տիեսցէ իշխանութեանց: Սակա որոյ բազում թագաւորս սպանեալ Անտոնիոս՝ ի Կղեռպատրայ հաւատայ զնոցա իշխանութիւնս, բայց ի Տիգրոսէ և ի Սիրովնէ, և որ միանգամ ընդ Ազատ գետովն էին: Եւ առեալ զբազնութիւն զօրացն՝ զիմէ ի Վերայ Արտաւագդայ. և անցեալ ընդ Միջագետս՝ կոտորէ անհնարին զգօրս Հայոց և ծերակալ առնէ զարքայն նոցա: Եւ դարձեալ յօդիպոս, պարզէ Կղեռպատրայ զԱրտաւագդ որդի Տիգրանայ, հանդերձ բազում ընչիւք յանկարծ պատերազմին:

## ԻԴ

### **Յաղագս թագաւորելոյն Արշամայ, եւ զառաջինն մասնաւոր հարկի Հայոց Հռոմայեցուց եւ արձակումն Հիւրկանու, եւ վասն նորին վտանգ ազգին**

#### **Բագրատունեաց:**

Ի քսաներորդի ամի, ի կատարումն աւուրց թագաւորութեանն Արշէզի, ժողովեալ զօրքն Հայոց հրամանաւ նորին թագաւորեցուցին ի Վերայ ինքեանց զԱրշամ, որ Արշամ, որդի Արտաշիսի, Եղբայր Տիգրանայ, հայր Աբգարու: Զատ ոմանք յԱսորւց կոչեցին Մանովայ, ըստ յոլովից սովորութեան՝ կրկին ունելով անուանս. որպէս Հերովդէս Ագրիպպաս, և որպէս Տիտոս Անտոնիոնու և կամ Տիտոս Յուստոս: Բայց քանզի ի նմին ամի վախճանեցաւ Արշէզ, թողլով զթագաւորութիւնն Պարսից որդւոյն իւրումն Արշաւրի, մարկան փոքրկան յոյժ և տղայոյ՝ ոչ ոք էր օգնէր Արշամայ՝ ընդդէմ կալ Հռոմայեցուց. խոսի ընդ նոսա ի հաշտութիւն խաղաղութեան, տալով զիարկս ի Միջագետաց և ի կողմանց Կեսարու ի ծերն Հերովդի: Այս Եղևս սկիզբն Հայոց մասնաւոր մտանել ընդ հարկաւ Հռոմայեցուց:

Զայսու ժամանակաւ Եղևս մեծ զասումն Արշամայ ի Վերայ Ենանոսի ասպետ, զոր գերեալ էր Բարզակրանայ Ռշտութեայն յաւուրս Տիգրանայ: Խսկ Ենանոս պատճառի առ

արքայի, ասելով Եթէ փրկանս խոստացաւ հարիւր քանքար. ակն ունելով առնուլ ի նմանէ. և յանձն էաւ տալ: Վասն որոյ ժամագրութիւն ի Վերայ նորա սահմանէ Արշամ: Եւ նորա առաքեալ զմի յեղբարց իւրոց ի Հրէաստան, որում անուն էր Սենեքիայ, առ Հիւրկանոս, զի տայցէ ինչս յաղագ իւրոյ փրկութեանն: Եւ Երթեալ առաքեալն յԵնանոսէ՝ պատահէ սպանեալ զիհիրկանոս հերովդի, զի մի ինչ դաւ լիցի թագաւորութեան նորա: Արդ՝ իբրև Եհաս ժամադրութիւնն, և չտայ զգանձս փրկանացն Հիւրկանու Ենանոս՝ բարկանայ ի Վերայ նորա Արշամ, և ընկեցալ ի պատույն՝ հրամայէ գնել ի բանտի:

Յայնն ժամանակի քսութիւն զնմանէ մատուցանէ արքայի Զօրայ նահապետ ազգին Գնրունեաց, ասելով. «Գիտեա, արքայ, զի ապստամբել ի քնն կամեցաւ Ենանոս, խորհուրդ ընդ իս բերելով, զի Երդումն խնդրեսցուք ի Հերովդէ թագաւորէ Հրէաստանի, իբր ընդունել զմեզ և տալ ժաշանգութիւն ի բնակ Երկրի մերում. քանզի նորակտուտ ծանակեցաք յաշխարհիս յայսմիկ: Եւ իմ ոչ առնելով յանձն՝ ասեմ զնա. Ընդէ՞՞ պատրիմ զրուցօք վաղնջուց և պառաւեալ առասպելօք, պաղեստինացիս զմեզ վարկանելով: Եւ նորա անյուսացեալ յինէն՝ նմին իրի առաքեաց զքահանայապետն Հիւրկանոս, և առաւել ևս ի Հերովդէ անյուսացաւ. այլ ոչ մեկին ի դժգոհութեան բարուցն՝ Եթէ ոչ արքայդ աճապարեսցես նմա»: Այսն քսութեան հաւատացեալ արքային Արշամայ՝ հրամայեաց տանջանս պէսպէս ի Վերայ Ենանոսի կուտել. և վախճան գործոյն— կամ թողով ի սպառ զօրէնս հրէութեան, և Երկիր պագանել զրեգական, և պաշտել զկուրս արքայի, ընդ որ վստահացեալ արքայի տացէ նմա զնոյն իշխանութիւն, կամ կախել զփայտէ և բնաշինջ լինել ազգի նորա: Եւ սպանեալ յազգականացն առաջի նորա, որում անուն էր Սարիայ, և առ ընթեր զորդիսն մատուցեալ ի տեղի սպանմանն, որոց անուանքն Սափատիայ և Ազարիայ՝ յերկիւդէ մահուան որդուցն և ի թախանձելոյ կանանց կատարէ զկամս արքայի հանդերձ ամենայն ազգատոհմիւն, և յառաջին պատիւն իւր հաստատի: Սակայն ոչ ամենկին վստահանայ ի նա արքայ. այլ իւր հաստատի: Սակայն ոչ ամենկին վստահանայ ի նա արքայ. այլ առաքէ ի հայս, հաւաստելով նմա զաշխարհն, զի ի Միջագետաց միայն հեռացուցէ զնա:

## ԻԵ

### **Գժողութիւն ընդ Հերովդի Արշամայ Եւ ակամայ հնազանդութիւն:**

Յետ այսորիկ Եղև խորվութիւն ի մէջ հերովդի արքայի Հրէաստանի և մերոյ արքային արշամայ: Քանզի Հերովդէս, յետ թագում գործոց արութեանց ձեռնամուխ լինի ի բարեգործութիւնս, շինուածս թագումս առնելով յոլու քաղաքաց, սկսեալ ի Հռոմէ մինչև ցՂամասկոս: Խնդրեաց ի յԱրշամայ թագմութիւն արանց անարուեստից գործաւորաց, որովք զԱսրորուց զԱնտիռքայ զանանց և զանկոխ հրապարական ի խոհերացն և ի տղմոց՝ լցցէ: Զոր չառել յանձն Արշամայ՝ զօրս ժողովէ ընդդիմանալ հերովդի. և ի ձեռն հրեշտակաց յոէ առ կայսրն ի Հռոմ, զի մի զնա ընդ իշխանութեամբ Հերովդի արասցէ: Իսկ կայսրն ոչ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէն, այլ և զամենյան Միջերկրեայս նմա հաւատայ:

Յայնն ժամանակի Հերովդէս զաներ Աղեքսանդրի որդույն իւրոյ, որ էր հօրէ Տիմոնէ և ի մօրէ ի թագաւորութենէ Մարաց, ի զաւակէ դարեկի Վշտասպեաց, ընդ իւրով ձեռամբ թագաւոր Միջերկրեցն կացուցանէր, առեալ իւր ի սպասաւորութիւն գունդ ի Գաղատացւոց և ի Պոնտացւոց: Տեսեալ զայն Արշամայ՝ Երկրապագէ Հերովդի իբրև տեառն ամենայնի իսկ, տալով նմա զոր խնդրէրն գործաւորս. որովք լցեալ զիրապարակսն անտիռքացւոց քսան վտաւանաւ Երկայնութեամբ, յատակեց սպիտակ կճեայ սալայատակօք, զի ուխաւորք յատակացն զիւրագոյնս կարգեցին, առ ոչ ինչ վնաս առնել քաղաքին: Բայց Արշամայ վարեալ զթագաւորութիւնն ամս քսան, վախճանեցաւ:

## ԻԶ

**Թագաւորութիւն Արքարու, Եւ մտանել բոլորովիր Հայոց ընդ հարկաւ  
Հռոմայեցոց Եւ պատերազմ ընդ զօրս Հերովդի, Եւ սպանանել զեղբօրորդի նորա  
զՅովսէփ:**

Թագաւորէ Արքար որդի Արշամայ ի քսաներորդ ամի Արշաւրիարքայի Պարսից: Այս Արքարոս կոչէր աւագ այր, վասն առաւել հեգութեանն և իմաստութեանն..որում յետոյ և տիքն զայս ոչ կարելով ուղղախօսել յունաց և Ասորուց՝ կոչեցին Արքարոս: Ի սորա երկրորդ ամի թագաւորութեանն հարկին Հռոմայեցոց բոլորովիմբ ամենայն կողմանքն Հայոց: Քանզի հրաման ել յԱւգոստ կայսերէ, որպէս ասի ի Ղուկայ աւետարանին, աշխարհազիր առնել ընդ ամենյն տիեզերս. վասն որոյ և ի Հայս առաքեալ գործակալք Հռոմայեցոց, բերելով զգապատկերն Աւգոստոսի կայսեր՝ կանգնեցին յամոնյն մեհեանս: Զայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ:

Չսմին աւուրբք լինի խռովութիւն ի մէջ Արքարու և Հերովդի: Քանզի Հերովդի հրամայեալ զիւր պատկերն հուա ի կայսերական պատկերն կանգնել ի մեհեանս Հայոց. զոր չառեալ յանձն Արքարու՝ պատշառս ի վերայ նորա յուգէ Հերովդէս: Առաքէ զգօրս թրկացոց և Գերմանացոց ասպատակաւ հինից յերկիրն Պարսից, հրաման տուեալ ընդ աշխարհն Արքարու անցանել: Իսկ Արքարու ոչ հաւանեալ՝ ընդ դիմանայ ասելով, եթէ անապատ է հրաման կայսեր անցանել զօրացդ ի յերկիրն Պարսից: Ընդ որ դառնացեալ հերովդէս՝ անձամբ ինչ ոչ կարէր վՃարել, պէսպէս ցաւոց զնա ընթառնեալ, –վասն զի ի Քրիստոս համարձակեցաւ՝ որդանց ի նմա եռացեալ–որպէս պատմէ Յովսեպոս. առաքէ զեղբօրորդի իւր զՅովսէփ, որում տուեալ էր զդուստր իւր, որ էր յառաջ կին Փերուրի եղբօր իւրոյ: Եւ նորա առեալ զբազմութիւն զօրացն՝ հասանէ յաշխարհն Միջագետաց, պատահէ Արքարու ի զօրանիստ գաւառի Բուգնան. և մարտուցեալ մեռանի, և զօրքն փախստական լինի: Նոյն հետայն վախճանի և Հերովդէս, և Հրէից ազգապէտ՝ զԱրքեղայոս նորին որդի Աւգոստոս կացուցանէ:

ԻԵ

**Ծինուած Եղեսեայ քաղաքի, Եւ յիշատակումն սակաւուք ազգի մերոյ Լուսաւորիչն:**

Չկնի ոչ բազում աւուրց վախճանի Աւգոստոս, և փոխանակ նորա թագաւորէ Հռովմայեցոց Տիբեր. և Գերմանիկոս կեսար Եղեալ՝ ծաղէ զառաքեալսն ի Հռովմ գիշխանսն Արշաւրի և Արքարու, յաղազս պատերազմին նոցա, յորում սպանին զեղբօրորդին Հերովդի: Ընդ որ խստացեալ Արքարու, խորիի ապստամբութիւն և պատրաստութիւն պատերազմի: Յայնժամ շինէ քաղաք զտեղի պահպանութեն գնդին Հայոց, ուր յառաջազդյն զգուշանային Եփրատու ի Կասսիոսք, որ կոչի Եղեսիայ. և փոխէ ի նա զարքունիս իւր որ ի Մօքին, և զամենյն կուռս իւր, զՆաբոզ և զԲէլ և զԲարնիքաղ և զԹարաթայ, և զմատեանս մեհենից վարժարանին, և միանգամայն զդիւանս թագաւորացն:

Յետ այր մեռեալ Արշաւրի՝ թագաւորէ ի վերայ Պարսից Արտաշէս որդի նորա: Արդէ թէպէտ և ոչ է կարգ պատմութեանս ի ժամանակի, և ոչ ըստ կարգի զոր ասելս ձեռնարկեցաք, այլ քանզի սերունդք Արշաւրի թգաւորին են որք Հայոց ազինս հաւասոց Եղեն առիթ, և հարազատութիւն Արտաշիսի որդույն նորա՝ սկիզբն արասցուք յաղազս պատուականութեան մարդականն, նախակարգեալ ի գիրսս առընթեր Արտաշիսի զի իմասցին որք ընթեռնուն, եթէ համազգիք քաջին են: Իսկ զկնի ապա նշանակեսցուք և զժամանակ գալստեան հարցն նոցա ի Հայս, որք են Կարենեանք և Սուրենեանք, յորմէ սուրբն Գրիգոր, և յորմէ Կամսարկանք, յորժամ ի շարի կարգին հասանիցենք ի ժամանակս թագաւորին որ զնոսա ընկալաւ:

Բայց Արքարու ոչ յաջողեցաւ խորհուրդն ապստամբութեան. զի խռովութիւն անկեալ ի մէջ ազգականաց իւրոց, թագաւորութեանն Պարսից՝ զօր ժողովեալ անդր չուէր ի համոզել և ի դադարեցուցանել զնոսա:

**Յաղագս Երթալոյն Արգարու յարեւելս եւ թգաւորեցուցանելոյ Պարսից զԱրտաշէս. Եւ թէ զիարդ կարգեաց զեղբարս իր, յորոց մեր Լուսաւորիչն եւ նորին ազգակիցքն:**

Երթեալ Արգարու յարեւելս՝ գտանէ թագաւորեալ Պարսից զԱրտաշէս որդի Արշաւրի, և ընդդիմացեալ նմա զեղբարս իր. քանզի նա խորհեր ազգաւ ի վերայ նոցա թագաւորել, և նոք ոչ առնուին յանձն: Վասն որոյ պաշարեալ զնոսա Արտաշիսի և Երկիւ մահու Երեալ ի վերայ նոցա՝ քազում պատառնունք և անմիաբանութիւնք ի մէջ զօրացն և այլոց ազգականացն լինէին: Քանզի էին Արշաւրի թագաւորի որդիք Երեք և դուստր մի. առաջին նոյն ինքն արքայն Արտաշէս, Երկրորդն՝ Կարէն, Երրերդն՝ Սուրէն, և քոյր նոցին՝ որ ամուանեալ կոչի Կոշմ, կին զօրավարին ամենյն Արեաց ի հօրէն կարգեալ:

Իսկ Ագարու համոզեալ զնոսա խաղաղանալ, ի մէջ ամենեցուն հաստատէ զայս ինչ սահմանելով. թագաւորել Արտաշիսի հանդերձ ծննդովք իւրովք՝ որպէս և խորհեցաւ, և զեղբարսն ամուանել Պահլաւս՝ յանուն քաղաքին իւրեանց և աշխարհին մեծի և քաջաբերոյ. որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաջին քան զամենայն նախարարութիւնս պարսից, որպէս արդարն զարմս թագաւորաց: Եւ դաշինս և Երդմունս ի միջի հաստատել, զի թէ լիցի սպառել զարմից Արտաշիսի ի պատանեաց՝ նոքա մատիցեն ի թագաւորութիւնն: Եւ արտաքոյ զեղի նորա թագաւորեցելոյ՝ զեղս որոշել զնոսա Երիս, կոչմամբ այսպիսեաւ. Կարենի Պահլաւ, Սուրէնի Պահլաւ, և զքոյրն՝ Ասպահապետի Պահլաւ, յառնն տանուտէրութենէ զնոսուն որոշեալ:

Եւ ասեն զսուրբն Գրիգոր ի Սուրէնենանն Պահլաւէ, և զԿամսարականս և Կարենեանն Պահլաւէ: Այլ զայս զալոյն զորափսութիւն ի կարգին պատմեսցուք. միայն նշանակելով այժմ առ ընթեր Արտաշիսի, զի ծանիցես զազգս զայս մեծ, թէ հաւաստի արիւն Վաղարշակայ են, այս ինքն զարմ Արշակայ մեծի, եղբօր Վաղարշակայ:

Եւ այսոցիկ այսպէս կարգելոց և զգիր ուխտին ընդ իր առեալ Արգարու՝ դառնայ ոչ մարմնով, այլ չարաչար ցաւովք ախտացեալ:

## ԻՇ

### **Դարձ Արգարու յարեւելից, եւ տալ օգնականութիւն Արետայ ի մարտ ընդ Հերովդի չորրորդապետի:**

Իբրև դարձաւ Արգար յարեւելից՝ լուաւ նա զՀռոմայեցւոց, թէ ի կասկածանս անկեալ են վասն նորա, ուպուս թէ զկնի զօրու զնաց յարեւելս: Վասն որոյ գրեաց առ զործակալս Հռոմայեցւոց զպատճառս Երթալոյն իւրոյ ի Պարսս, միանգամայն և զգիր ուխտին, որ ընդ Արտաշէս և ընդ Եղբարս նորա՝ տայ տանել: Եւ նոքա ոչ հաւատացին նմա. վասն զի և թշնամիք չարախսուէին զնմանէ, Պիղատոս և հերովդէս չորրորդապետ Լիսանիա և Փիլիպպոս: Իսկ Արգարու Եկեալ ի քաղաքն իւր յԵղեսիայ՝ միաբանեաց ընդ Արետայ արքայի Պատրիացւոց սատարա տալով նմա ի ձեռն Խոսրանայ ուրումն Արքունութիւն՝ մարտնչել ընդ Հերովդի: Քանզի նախ զորուստրն Արետայ արքայի կին առեալ Հերովդի, և ապա անարգեալ ի քաց Եթող, և զՀերովդիադայ մեկնեալ յառնէ իւրմէ Եհան կենդանուոյն, յաղագս որոյ ստէպ յանդիմանեալ ի Յովիաննէ Մկրչէ՝ այնր աղազաւ Եսպան զՅովիաննէս Մկրտիչ: Եւ պատերազմ ընդ նա և ընդ Արետ վասն անարգանաց դստերն. յորում սաստկապէս հարեալ սատակեցան զօրքն հերովդի յօգնականութենէ քաջացն Հայոց, որպէս յաստուածային իմն տեսչութենէ, վրէժս հատուցանել ընդ մահուանն Յովիաննու Մկրտչին:

## Լ

### **Առաքումն իշխանացն Արգարու առ Մարինոս, յորում տեսին զՓրկիչն մեր քրիստոս, ուստի եղեւ սկիզբն հաւատոցն Արգարու:**

Ընդ այս ժամանակս Եկաց ի գործ հազարապետութեան կայսեր ի վերայ Զիւնիկեցւոց և Պաղեստինացւոց, Ասորուց և Միջագետաց Մարինոս որդի Ստորգեայ. առ որ առաքեաց Արգար Երկուս ի գլխաւորաց իւրոց, զՄար Իհար բդեաշխն Աղձնեաց և

զԾամշագրամ նահապետ Ապահովութեաց տոհմին և զԱնան հաւատարիմ իւր՝ ի քաղաքն Բեթքութին, զգացուցանել նմա զպատչառս Երթալոյն իւրոյ յարենես, ցուցանելով և զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս և ընդ Եղբարս իւր, և առնել զնա թիկունս օգնականութեան։ Որոց Եկեալ գտնի զնա յԵլքերոյալիս։ Եւ նորա ընկալեալ զնոսա խնդութեամբ և մեծարանօք՝ առնէ պատասխանի Աբգարու. «Մի կասկածեր ի կայսերէ սակս այնր, միայն զի զհարկելն լիով փութացիս»։

Եւ նոցա դարձեալ անտի՝ ելին յԵրուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր Քրիստոս վասն լրոյ համբաւուց սքանչելագործութեանցն, որում և ականատես Եղեալ՝ պատմեցին Աբգարու։ Ընդ որ զարմացեալ Աբգարու՝ հաւաստաց Ճշմարտապէս իբր արդարս յորդիԱստուծոյ, և ասէ.«Այս զօրութիւնք ոչ մարդոյ են Աստուածոյ. զի չիք ոք ի մարդկանէ, որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստուած»։ Եւ քանզի ապականեալ էր մարմինն իւր ի չարաչար ցաւոց, որ պատահեցին նմա ի Պարսից աշխարհին յառաջ քան զեօթն ամ, և ի մարդականէ ոչ եղև նմա հնար բժշկութեան՝ ետ տանել նմա թուղթ աղաչանաց, գալ և բժշկել զնա ի ցաւոցն, օրինակ զայս.՝

ԼԱ

### **Թուղթ Աբգարու առ Փրկիչն:**

Աբգար Արշամայ, իշխան աշխարհի, առ Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար յԵրուսաղէմացւոց աշխարհիդ, ողջոյն։

Լուեալ է իմ վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել և կաղաց զնալ, և զբրոտս արբես և զայս պիղծս հանես, և որ միանգամ չարչարեալ յԵրկար հիւանդութենք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայս՝ եղի ի մտի իմում մի յԵրկուոց աստի. կամ թէ դու Աստուած իցես, իցեալ յԵրկնից, և գործես զայդ. կամ թէ որդի իցես դու Աստուծոյ, և զայդ առնես։ Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և Եկեսցես առ իւ և բժշկեսցես զիհիւանդութիւնս զոր ունին ես։

Նա և լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և զեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունց։

Որոց տարեալ զթուլթն՝ պատահեցին նմա յԵրուսաղէմ։ Զայս վկայէ և աւետարանական բանն, եթէ «Եին ոմանք ի հեթանոսաց Եկելոց առ նա». վասն ոչ համարձակին, որք լուանն, ասել ցՅիսուս, այլ ասեն զՓիլիպպոս և ցԱնդրէաս. և նոքա ասեն զՅիսուս։ Իսկ ինքն Փրկիչն մեր յայնմ ժամանակի յորում կոչեացն զնա Աբգար՝ ոչ առ յանձն. բայց թղթոյ արժանի արար զնա, որ ունի օրինակ զայս.՝

ԼԲ

### **Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալ հրամանաւ Փրկիչն:**

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատացեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատացեն և կեցցեն։ Իսկ վասն այնր զի գրեցեր դու առ իս, գալ ինձ առ քեզ՝ արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես։ Եւ իբրև կատարեցից զայս՝ ապա համբարձայց առ այն որ առաքեացն զիս. և յորժան համբարձայց առաքեցից զի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսէ, և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսց։

Զայս թուղթ եբեր Անան սուրհանդակ աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատերին, որ կայ յԵղեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի։

ԼԳ

### **Քարոզութիւն յԵղեսիայ առաքելոյն Թաղէոսի, Եւ պատճէն թղթոցն ենզից.**

Բայց յետ համբաւնալոյ Փրկիչն մերոյ՝ Թովմաս առաքեալ, մի յԵրկոտասանիցն, առաքեաց զմի յԵօթանասնից անտի զԹաղէոս ի քաղաքն Եղեսիայ՝ բժշկել զԱբգար և

աւետարանել ըստ բանին Տեառն: Որոյ Եկեալ Եմուտ ի տուն Տուրիայ իշխանի հրէի, զոր ասեն լինել յազգէն Բգրատունեաց. որոյ խուսեալ յԱրշամայ՝ ոչ ուրացաւ զիրէուրիւն ընդ այլ ազգականս իւր, այլ նովին օրինօք Եկաց մինչև հաւատալ ի Քրիստոս: Եւ Ել համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն: Լուեալ Աբգարու ասէ. «Նա է վասն որոյ գրեացն Յիսուս», և իսկոյն կոչեաց զնա: Եւ Եղև ի մտանելն Թաղէի՝ տեսիլ սքանչելի Երևեցաւ Աբգարու յերեսսն Թաղէի. և յարուցեալ ի գահոյիցն անկաւ ի Վերայ Երեսաց իւրոց և Երկիր Եպագ նմա. և զարմացան ամենայն իշխանքն որ շուրջ կային, զի ոչ գիտացին զտեսիլն: Եւ ասէ ցնա Աբգար, Եթէ «Դո՞ւ իցես արդարէ աշակերտ օրինելոյն Յիսուսի, զոր ասաց առաքել ինձ այսր, և կարո՞ղ իցես բժշկել զցաւս իմ»: Պատասխանի Եւ նմա Թագէ. «Եթէ հաւատացես ի Քրիստոս Յիսուս յորդին Աստուծոյ՝ տացին խնդրուածք սրտի քոյ»: Ասէ ցնա Աբգար. «Ես հաւատացի ի նա և ի հայր նորա. վասն որոյ կամեցայ առնուլ զցօրս իմ և գալ կոտորել զՀրեայս որ խաչեսցին զնա, Եթէ ոչ էր իմ արգելեալ վասն թագաւորութեանն Հռովմայեցւոց»:

Եւ յայսմ բանէ սկիզբն Թաղէի՝ աւետարանեաց նմա և քաղաքի նորա. և Եղեալ ձեռն ի Վերայ բժշկեաց զնա, և զԱբդիու պատագրոս իշխան քաղաքին և պատուական յամենայն տանն արքայի, նա և զամենայն որ էին ի քաղաքին հիւանդը և ախտաժէտը, բժշկեաց: Եւ հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն և զդուրս տաճարաց կրոցն փակեցին. և որ ի Վերայ բազմին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին Եղեգամբ. և ոչ զոր ածէր բռնութեմբ ի հաւատու, բայց օր ըստ օրէ յաւելեալ ի հաւատացեալսն բազմանային:

Իսկ առաքելոյն Թաղէի զխոյրարար ոմն մետաքսագործ մկրտեալ, և անուն կոչեցեալ Ազդէ, ձեռնադրեալ ի Վերայ Եղեսչայ՝ փոխանակ իւր թողու առ արքայի: Եւ իւր առեալ հրովարտակ յԱբգարէ, զի ամենեքեան լուիցեն աւետարանին Քրիստոսի՝ զայ առ Սանատորուկ քեռորդի նորին, զոր կարգեալ էր ի Վերայ աշխարհին և զօրացն: Բայց Աբգար յօժարեցաւ գրել թուղթ առ Տիբերիոս կայսեր, որ ունի օրինակ զայս.—

### *Թուղթ Աբգարու առ Տիբերիոս:*

Աբգար արքայ Հայոց տեառն իմում Տիբերի կայսեր Հռովմայեցւոց խնդրեալ:

Գիտելով իմ, Եթէ ոչ ինչ ծածկի ի քումնէ թագաւորութենէտ, այլ իբրև զմտերիմ քո՝ աւելի ևս իմացուցանեմ ի ձեռն գրոյ: Զի Հրեայք, որ բնակեալ են ի գաւառս Պաղեստինացւոց՝ ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց, ի Վերայ մեծամեծ Երախտեաց, զոր արար առ նոսա, նշանս և սքանչելիս, մինչև զմեռեալս անգամ յարուցանել: Եւ գիտեա, զի զօրութիւնքս այս ոչ Ենսոսկ մարդոյ, այլ Աստուծոյ: Զի և ի ժամանակին յորում խաչեցինն զնա՝ արեգակն խաւարեցաւ, և Երկիր շարժեալ տատանեցաւ. և ինքն յետ Երից աւուրց յարեաւ ի մեռելոց և Երևեցաւ բազմաց: Եւ այժմ յամենայն տեղիս անուն նորա ի ձեռն աշակերտաց նորա սքանչելիս մեծամեծս կատարէ. որ և առ իս ինքեան եցոյց յայտնապէս: Եւ արդ՝ այսուհետու տէրութիւնդ քո գիտէ, որ ինչ արժան է իրամայել ի Վերայ ժողովրդեանն Հրէից, որք զայն գործեցին, և գրել ընդ ամենյն տիեզերս, զի Երկոպագեսցեն Քրիստոսի՝ իբրև Ճշմարիտ Աստուծոյ: Ողջ լեր:

### *Դարձեալ գրէ թուղթ Աբգար առ Տիբերիոս:*

Աբգար արքայ Հայոց, տեառն իմում Տիբերի կայսեր Հռովմայեցւոց խնդալ:

Զթուղթ գրեալ ըստ արժանի քոյոյ տէրութեանդ տեսի, և ընդ իրաման մտածութեանդ քոյ ուրախացայ. և Եթէ ոչ ցասնուցուս ինձ՝ գործ սինկղիտոսիդ յոյժ այպանելի է. քանզի առ դոսա՝ ի քննութենէ մարդական տուեալ լինի աստուածութիւն: Եւ արդ՝ այսուհետու Եթէ ոչ լինիցի Աստուած հաճոյ մարդոյն՝ Աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայսմանէ մարդոյն արժան է քաւել զԱստուածն: Բայց քեզ տեառն իմում հաճոյ թուեսցի առաքել զայլ յԵրուսաղէմ փոխանակ Պիղատոսի, զի լուծցի նա անարգանօք

յիշխանութենէն յոր կարգեցեր զնա. վասն զի արար զկամս Հրեհցն, և խաչեաց զքրիստոս ի տարապարտուց առանց քոյոյ հրամանի: Ողջ լինել քեզ ըղձամ:

Չայս գրեալ Արքարու՝ զհաւասար թղթոյն եղ ի դիւանի իրում, որպէս և զայսն: Գրեաց և առ Ներսէի մանուկ արքայ Ասորեստանի ի Բաբելոն:

### **Թուղթ Արքարու առ Ներսէի:**

Արքար արքայ Հայոց, որդուոյ իմում Ներսէիի խնդալ:

Զգիր ողջունի քոյ տեսի, և զՊերոզ լուծի ի կապանաց, և զվնաս նորա թողի ննա. և եթէ կամ իցէ քեզ՝ կարգեցես զնա ի վերակացութիւն Նինուէի, որպէս և կամիս: Այլ վասն այնր զի գրեցեր առ իս, թէ տուր ածել բժիշկ, որ զնշանսդ առնէ և քարոզ այլ Աստուած ի վեր քան զիուր և զջուր, զի տեսից և լուայց զմա՝ նա ոչ էր բժիշկ ըստ արուեստից մարդական, այլ աշակերտ որդուոյն Աստուածոյ, արարչի հրոյ և ջրոյ. և վիճակ հասեալ ի կողմանս Հայոց առաքեցաւ: Բայց յընկերաց նորա զիխաւորաց, Սիմովն անուն, այդո ի կողմանս Պարսից առաքեալ է. խնդիր արարեալ՝ լուիցես ննա, յորած և հարյն քո Արտաշէս: Եւ նա բժշկեցէ զամենայն հիւանդութիւնս, և ձանապարհ կենաց ցուցցէ:

Եւ յաւել ևս գրել առ Արտաշէս արքայ Պարսից օրինակ զայս.

### **Թուղթ Արքարու Արտաշէս:**

Արքար արքայ Հայոց, Արտաշիսի եղբօր իմում Պարսից արքայի խնդալ:

Գիտեմ զի արդ լուեալ է քո վասն Յիսուսի Քրիստոսի որդուոյն Աստուածոյ, զոր խաչեցին Հրեայքն. որ յարեաւն ի մեռելոց, և առաքեաց զաշակերտսն ընդ ամենայն տիեզերս՝ ուսուցանել ընդ հանուր: Եւ մի յաշակերտաց նորա զիխաւորաց, Սիմովն անուն, է ի կողմանս քոյոյ տէրութեանդ: Արդ՝ խնդիր արարեալ զոցես զնա, և նա բժշկեցէ զամենայն ախտս հիւանդութեանց՝ որ ի ձեզ, և ձանապարհ կենաց ցուցցէ. հաւատասցէ քանի նորա, դու եղբարք քո և ամենեքեան, որ հնազանդին քեզ կամաւոր: Զի ախորժելի է ինձ՝ զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ:

Եւ մինչ դեռ պատասխանի այսց թղթոց ոչ էր ընկալեալ՝ վախճանի Արքարիոս, թագաւորեալ ամս երեսուն և ուր:

## ԼՇ

### **Յաղագս Վկայութեան առաքելոցն մերոց:**

Յետ մահուանն Արքարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յեղեսիայ, և քեռորդի նորա Սանատորուկ ի Հայս: Գտանի որ ինչ առ սոցա ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ առաքելոյն թաղէի ի հայս, և հաւատալ Սանատորկոյ. և թողով զհաւատսն յերկիւէ նախարարացն Հայոց, և կատարումն առաքելոյն և որք ընդ նմա՝ ի գաւառին Շաւարշան, որ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրեարս գալ և ընդունել զմարմին Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին. և մարտիրոսանալ դստերն արքայի Սանդիստոյ հուա ի ձանապարհն և աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց, և փոխել յառապարն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք ոճով երկրերդէլ: Դոյնպէս և որ ինչ վասն կատարմանն Աղդէի աշակերտի առաքելոյն յեղեսիայ յորդուոյն Արքարու՝ գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ:

Որ իբրև թագաւորեաց յետ մահուան հօրն՝ ոչ եղև ժառանգորդ հայրենի առաքինութեանն, այլ եբաց գտաձարս կռոցն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն: Եւ յզեաց առ Աղդէ, զի արասցէ նմա խոյր բեհեզեայ անգուածով ոսկոյ, որպէս յառաջագոյն առնէր հօրն նորա: Եւ պատասխանի ընկալաւ, թէ «ոչ արասցեն ձեռք իմ խոյր զագաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուածոյ կենդանուոյ»: Եւ խկոյն հրամայեաց միուն ի զինակրացն՝ կտրել զոտս նորա սրով: Որոյ երեալ, և տեսեալ զնա, զի նստէր

յաթոռ վարդապետութեանն՝ էած սուսերաւ և ի բաց կտրեաց զսրունս նորա. և նոյն ժամայն աւանդեաց զհոգին: Զայս ծայրաքաղ արարեալ համառօտ յիշատակեցաք, որպէս զար ի յայլոց պատմեալ նախսկին:

Բայց վիճակեցաւ Հայոց և Բարթուղիմէոս, որ և կատարեցաւ առ մեզ յԱրեբանս քաղաքի: Իսկ զՍիմովնէ, որ Պարսիցն վիճակեցաւ, ոչ զհաւաստին կարեն պատմել, եթէ զի՞նչ գործեաց և կամ ուր կատարեցաւ: Քանզի պատմի յոմանց՝ Սիմովն ումեմն առաքելոյ կատարի ի Վերիոսկիրայ. և նա իցէ Ճշմարտի, և թէ էր աղագաւ գալուստ նորա անդր՝ ոչ գիտեն. այլ միայն նշանակեցի, զի գիտացես թէ ոչ ինչ մնայ յինմէ ջանից պատմել քեզ զամենայն, որ ինչ անկ է:

## ԼԵ

### **Կասմ Սանատրկոյ թագաւորութեանն, եւ սպանման ծննդոցն Արգարու, եւ վասն Հեղինեայ տիկնոց:**

Սանատրուկ թագաւորեալ՝ զօրս ժողովէ ի ձեռն քաջաց Բագրատունեաց և Արծրունեաց դայեկաց իւրոց, իջանել տալ պատերազմ ընդ որդիսն Արգարու, զի բոլորունս տիրեսցէ թագաւորութեան: Եւ մինչև դեռ նա յայսմ էր՝ աստուածային իմն ակնարկութեամբ խնդրեցաւ վրէժ մահուանն Աղդէի յորդոյն Արգարու: Քանզի սիւն կճեայ կանգնել տայր յԵղեսիայ. ի վերնատունս ապարանից իւրոց, և ինքն ի ներքոյ կալով իրամայէր զորպէսն առնել. որ գերծեալ յունողացն՝ անկաւ ի վերայն նորա և խորտակեաց զոտսն և սատակեաց:

Եւ իսկոյն պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ, խնդրելով պայման ուխտի, զի մի վրդովեսցէ զնոսա ի քրիստոնէութեան հաւատոց, և նոքա տացեն զքաղաքն ի ձեռս և զգանծս թագաւորին: Զոր արարեալ՝ յետոյ ստեաց. նա և զամենայն զաւակ տանն Արգարու մաշեաց սրով, բայց յաղջկանց, զորս եհան ի քաղաքէն բնակել ի կողմանս Հաշտենից: Սապէս և զգլուխ կանանցն Արգարու, որում անուն էր Հեղինէ, առաքեաց յիւրային քաղաքն բնակել ի Խառան, թողլով ննա զտիկնութիւնն ամենայն Միջագետաց, փոխանակ բարեացն զոր գտեալ էր ի ձեռն նորա յԱրգարէ:

Այս Հեղինէ զարդարեալ հաւատովք, որպէս և զայր իւր զԱրգար, ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն. այլ չոզաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղաւեայ, ի սեվին՝ զոր մարգարէացաւն Ազարոս. և տուեալ զամենայն գանծս իւր յԵգիպտոս՝ զնաց ցորեան բազում յոյժ և բաշխեաց ամենայն կարօտելոց. որում և վկայէ Յովսեպոս. որոյ և շիրիմ նշանաւոր կայ առաջի դրանն յԵրուսաղէմ մինչև ցայսօր ժամանակի:

## ԼԶ

### **Յաղագս նորոգման Մծրին քաղաքի, եւ անուանակոչութեան Սանատրկոյ եւ մահուան նորին:**

Այլ որ ինչ գործք եղեալ Սանատրկոյ՝ ոչ ինչ յիշատակաց արժանի համարեցաք ի շինուածոյ Մծրին քաղաքի: Զի ի շարժման՝ խախտեալ՝ քակեաց և վերստին շինեաց պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարսպով և պատուարաւ. և զինքն անդրի ի միջին հաստատեաց, գրան մի ի ձեռն ունելով. որ նշանակէ այսպիսի ինչ, եթէ ի շինել քաղաքիս ամենայն գանծքս ծախտեցան, և այս միայն մնաց:

Բայց թէ ընդէր սանատրուկ կոչեցաւ՝ ասելի է: Քանզի յաւուրս ձմերայնոյ ձանապարհորդեալ ի Հայս քոյր Արգարու Աւգէ՝ պատահէ բքոյ ի լերնիս Կորդուաց. զամենեսեան նրիկն, մինչ ոչ գիտել ընկեր զընկեր՝ ընդ որ վարեցաւ: Իսկ դայեկին նորա Սանոտայ, քեր Բիւրատայ Բագրատունույն, կնոջ Խոսրենայ Արծրունույ, առեալ զմանուկն, քանզի տղայ էր, եղ ի մէջ ստեանց իւրոց, մնալով ի ներքոյ ձեանն զերիս տիւս և զերիս գիշերս: Զորմէ առասպելաբանեն, եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն: Բայց որչափ մեք եղաք վերահասու՝ այսպէս

է. շուն սպիտակ ընդ խնդրական լեալ, պատահեաց մանկան և դայեկին: Արդ՝ կոչեցաւ Սանատրուկ, ի դայեկէն զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանոտայ:

Սա թագաւորեալ յերկոտասաներորդի ամի Արտաշիսի արքայի Պարսից, կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորիս, նետի ուրուք դիպեալ փորոտեացն. իբր թէ վրէժ հաստուցեալ ընդ չարչարանաց սրբոյ դստերն: Ղերութնայ որդի ափշադարայ դպրի գրեաց զամենայն գործս, որինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ, և եղ ի դիւանին յԵղեսիայ:

ԼԵ

### **Թագաւորել Երուանդայ Եւ Կոտուել զորդիսն Սանատրկոյ, Եւ գերծանել Արտաշիսի փախստեամբ:**

Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփորի իմն թագաւորութիւնն: Քանզի Երուանդ որսի կնոջ Արշակունուոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ: Եւ ունին գրոյցը յաղագս նորա այսպէս: Կին ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորագեղ, վարար զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս զՄինոտովրոս: Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ և Երուազ: Եւ ի չափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ և անդանովք յաղթ: Սա ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ ի Սանատրկոյ, գտանի երևելի, մինչև ամենայն նախարարացն Հայոց առաջին լինե. և խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ զամենայն ոք յանգուցեալ յինքն յարուցոյց: Եւ ի մեռանելն Սանատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա, առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր:

Բայց ի թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդուցն սանատրկոյ՝ կոտորէ զամենեսեան: Թուի թէ վրէժ հաստուցաւ սպաննան որդուցն Աբգարու: Բայց մի ոմն տղայ, Արտաշէս անուն, զոր առեալ ստորանուի նորա՝ փախեաւ ի կողմանս հերայ, ի հովուավանս Մադխազանի, լուր առնելով դայեկի նորա Սմբատայ, որդույն Բիւրատայ Բագրատունուոյ, ի Սպեր գաւառի, ի շէնն Սմբատաւանի: Արդ՝ իբրև լսէ Սմբատ որդի Բիւրատայ զբօթն Սանատրկոյ և զգոյժ կոտորման որ դւոց նորա՝ առեալ զերկուս դստերս իւր, զՄինբատանոյշ և զՄինբատուիհ՝ նստուցանէ ի Բայբերդի, արս քաջ թողլով ի վերայ ամրոցին. և ինքն հանդեմ միով կնաւ իւրով և սակաւ արամբք զայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշիսի: Որում իրազգաց եղեալ արքային Երուանդայ՝ հետայոյզս առաքէ. վասն որոյ բովանդակ ժամանակս ընդ երեսս լերանց և դաշտաց այլակերպեալ շրջելով հետի հանդերձ մանկամբն՝ սնուցանէ ի հովուավանս և յանդէորդս, մինչև պարապ գտեալ ժամ՝ անցանէ առդարեհ արքայ Պարսից: Եւ քանզի այս քաջ էր Սմբատ և ծանօթ յառաջազոյն՝ պատուի մեծապէս զօդագլուխսն պարսից, սապէս և մանուկն ընդ որդիս թագաւորին, տեղի բնակութեան առեալ զԲատ և զՈզոնն կոչեցեալ զաւառս:

ԼՇ

### **Որ ինչ ջան Երուանդայ վասն ի քուրն ածելոյ զմանուկն Արտաշէս, Եւ ի բաց թողլոյ զՄիջազետս:**

Բայց Երուանդայ զմտաւ ածեալ, թէ որպիսի չար նորա թագաւորութեանն սնանի ի Սարս՝ խէթ ի սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն: Հանապազ ի յարութնութեան յայն հոգալով, նաև ի քուն անուրջս ահազինս նմին տեսանէր: Վասն որոյ ի ձեւն հրեշտակաց և պատարազաց խնդրէր հաշտեցուցանել զարքայն Պարսից՝ տալ ի ձեւս զԱրտաշէս, ասելով թէ «Արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր սնուցանես զՄարզդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս, լսելով բանից Սմբատայ յԵղուզակի, որ ասէ, թէ որդի է Արտաշէս Սանատրկոյ. և զորդի հովուաց և զանդէորդաց ջանայ առնել Արշակունի, և արիւն քո և հարազտութիւն համբաւելով զնմանէ: Նա չէ որդի Սանատրկոյ, այլ ընդ խաբս գտեալ Սբատայ զմար ոմն տղայ՝ բաջադից»: Նոյնպէս և առ Սմբատ յղէր բազում անգամ, թէ «Ընդէ՞ր այդքան սնոտի աշխատութիւն կրես. խաբեալ

ի ստուգական գորդի Մարիդ հակառակ ինձ»: Եւ լսէ ոչ սիրելի քանս պատասխանեաց: Յանժամ առաքէ Երուանդ և սատակէ զքաջսն ի Բայբերդի. գերեալ զդատերս Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարապէս:

Բայց թիկունս առնելով Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս: Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն հայց ի Միջագետաց. և հարկս և առաւելագոյնս տայր ի Հայց Երուանդ: Իսկ գործակալաց Հռոմայեցոց մեծապէս հանդերձեալ զքաղաքն Եղեսիայ՝ ի նմա հաստատեն զտունս գանձուց հարկացն ժողովելոց ի Հայց, ի Միջագետաց և յԱսունեստանեաց: Եւ ժողովեն ի նմա զամենայն դիւանս, և կարգեն զդպրոց Երկուս, մի՛ գրունն իւրեանց զԼսորին, և միւս ևս զՅոյնն. և գոհիանն հարկաց և զմեհենականն, որ կայր ի Սինոպ Պանտացուց՝ անդր փոխեն:

## ԼՇ

### **Յաղագ շինուածոյ Երուանդաշատ քաղաքի:**

Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլոր. քանգի էր հեռացեալ գետն Երասխի, և ի յերկարել ձմերայնոյն, և ի դաշնահոտ փշմանէ հիւսւոյ պաղացեալ ձուլեալ վտակն ոչ ուստեք արքուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղոյ ելեալ ի խնդիր փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ: Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարհսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլոր հաւասար գետոյն, մինչև դիմել ջուրց գետոյն ի փորուածն. յընակելեաց պատրաստութիւն: Զնիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև զդուռնն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիշանացն, որպէս զի ընթռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամհցի զարքայն: Եւ էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորաց արքունի և ամենայն ելամտից ճանապարհ տուրնջենային, իսկ միւսն զիշերային և մարդադաւաց:

## Խ

### **Թէ որպէս շինեաց զԲազարան քաղաք կրոց:**

Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր և փոխեալ զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն կրոցն, զոր ոչ օգուտիւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի ի զալ և ի զոհել անդ աշխարհի՝ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարհսաւ զիհիսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բազարան, այս ինքն թէ ի նմա գրագնաց յօրինեալ է զկազմութիւն. և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ գեղբայր իւր գԵրուազ քրնապետ կացուցանէր:

## ԽԱ

### **Կասն տնկելոյ զանտառն, որ կոչի Ծննդոց:**

Տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ, արգելով ի ներքս այժեմունս երագունս, և զեղանց և զեղջերուաց ազգ, և ցիոս և վարազս. որք ի թագմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց:

## ԽԲ

### **Կասն ծեռակերտին, որ կոչի Երուանդակերտ:**

Քաղցր է ինձ ասել և յաղագ գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք: Քանգի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեմբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբուն զայլ

բոլորակութիւն ական: Իսկ զբագմութիւն այգեստանոյ՝ իբր զարտևանանց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարէ գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօսից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ գերկթերթիսն նշանակէ շրթուն: Եւ այսպիսի գեղեցկութեան դի՛ անքթելի իմն գոզես ի բարձրաւանդակ թագաւորանիստն ահայեցուածսն ունի. և արդարէ բերի և թագաւորական դաստակերտն:

Զայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ պարզէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մտերմաց և արեան կցորդաց ազգին Արշակունեաց. զոր յիւրում տեղուցն պատմեսցուք:

Բայց ասեն զերուանդայ՝ ըստ հմայից դժմեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՛ վէճս որձաքարեայս ունել ընդունեալ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժմութենէ ասեն պայթել որձաքար վիմացն: Բայց այս կամ եղիցի սուտ և առասպէլ, և կամ դիւականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի:

#### Խ4

### **Թէ որպէս Սմբատայ օգնականս իւր արարեալ զնախարարսն Պարսից՝ խնորդ թագաւորեցուցանել զԱրտաշէս:**

Բայց ի զարգանալ մանկանն Արտաշիսի, և ի թագում արութիւնս քաջութեան ցուցանել դայեկին Սմբատայ՝ հաճեալ ընդ նա նախարարքն Արեաց, մաղթեն զթագաւորն տալ նմա պարզէս զինչ և խնորդեսցէ: Եւ յանձն առեալ թագաւորին՝ ասէ ցնախարարսն. «Տեսէք թէ զինչ կամիցի այրն քաջ»: Եւ նոքա ասեն.«Անմահ բարերարութիւնդ քո. ոչ այլ ինչ կամի Սմբատ, քան թէ զարիւն քո և զիարազատութիւն, զԱրտաշէս որդի Սանատորկոյ, զմերժեալն ի թագաւորութենէ իւրմէ, հաստատել յիւրում թագաւորութեանն»: Եւ յանձն առեալ արքային արքայից՝ տայ ի ձեռս Սմբատայ նասն ինչ ի զօրացն Ասորեստանի և զօրս Աստրապատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեսցեն ի զահն հայրենի:

#### Խ5

### **Յաղագս լսելոյ Երուանդայ զգալն Արտաշիսի, եւ գումարել զօրս ի պատրաստութիւն պատերազմի:**

Լուր հասանէ առ Երուանդ յՈւտէացւոց զաւարին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի Վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր: Զայս լուեալ Երուանդայ՝ եթող անորդէն զբազումս ի նախարարացն կողմնապահս, և ինքն գնաց ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զզօրս Հայոց, զԿրաց և զկողմանցն Կեսարու, այլ և զՄիջազետացն՝ աղերսիւք և տրովք: Եւ էին աւուրք գարնայնոյ. վասն որոյ երագ ժողովեցան զօրքն ամենայն. նա և Արգամ, տանուտէր ազգին Մուևացեան, որ ի ծննդոցն Աժդահակայ, ամբոխ հետևակաւ: Քանզի էր Երուանդայ դարձուցեալ ի նա զզահն երկրորդական, զոր հանեալ էր նոցանէ Տիգրանայ և տուեալ իւրում քեռաշնն Միհրդատայ. իսկ յետ մահուանն Միհրդատայ՝ ոչ լինէք ումեք տուեալ, մինչև Երուանդայ դարձուցանել զնա առ Արգամ: Եւ ոչ միայն նմա, այլ և ամենայն նախարարացն տայր պարզէս պատիւս, և զօրացն ամենեցուն պարզէր առատապէս:

#### Խ6

### **Եթէ որպէս ընդ մուտն Արտաշիսի յիւր աշխարեն յաջողեցաւ գործն:**

Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսի աճապարէն հասանել ի սահմանս Ուտէացւոց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զորս եթող

Երուանդ: Զայն ինրև լուան այլ նախարարքն հայոց՝ լուծանէին լքանէին և զատչել յԵրուանդայ խորհին. նա և զայն ևս տեսանէին, եթէ օգոքն Հռոմայեցւոց ոչ հասեին նմա ի թիկունս: Իսկ Երուանդ առաւել ևս յորդագոյն տայր զպարզեսն, և բաշխէր միոյ ումեք ի նոցանէ զգանձսն և որչափ շատ տայր՝ շատ ևս ատելի լինէր: Քանզի գիտին ամենեքեան, եթէ ոչ առ առատութեան տայր, այլ առ երկիրի վատնէ: Եւ ոչ այնչափ սիրելի զայնոսիկ առնէր, որոց շատն տայր, քան թէ թշնամի զայնս՝ որոց ոչն տայր պերճագոյնս:

## ԽԶ

### **Երուանդայ պատերազմ ընդ Արտաշիսի եւ փախուստ, եւ առումն քաղաքի նորին եւ մահ:**

Բայց Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսի ելանէ առ ափն ծովուն Գեղամայ, զթիկամբքն Արագածն կոչեցեալ լերին. աճապարէին հասանել ի բանակն Երուանդայ: Առ ոչինչ համարեալ զբազմութիւն օգորաց նորա՝ միայն ակնածէին ի Մուրացենէն Արգամայ, զի այր քաջ էր և բազմաց տէր տիգաւորաց: Եւ ձամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ ի Հիւսիսոյ, ի Վերայ գետոյն Ախուրեան: Զայս իբրև լսէր Երուանդ հանէր ընդ առաջ զբազմութիւն օգորացն, և ձակատէր ոչ հերի յիւրմէ բանակէն: Իսկ Արտաշիսի առաքեալ պատգամ առ Աբգար նահապետ Մուրացեան հանդերձ բազում երդմամբք՝ թողուլ ի Վերայ նորա զոր ինչ գտեալ էր յԵրուանդայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զի զԵրուանդ թողեալ ի բաց գնացէ:

Եւ իբրև հանգէա ձակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի՝ Արգամայ առել զբազմութիւն հետրակացն՝ ի կողմն ելանէր: Եւ Սմբատ իրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ զձակատն իւր՝ զարծուի յԵրանց կաքուաւուց խոյանայր: Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ և յահեակ թևսն էին, ի նա խառնեալ միանային: Եւ օգոքն Վրաց, հանդերձ արքային յիւրեանց Փարսանաւ. թէպէտ և յանդուզն յարձակմամբ յառաջեալ բախէին՝ արագապէս դառնային ի միւս կողմն փախուցեալ: Եւ անդ էր տեսանել կոտորած անհնարին զգնին Երուանդայ և զգօրաց Միջագետաց: Եւ ի խառնակել այսպիսի ձակատուց՝ պատահեն Արտաշիսի արք քաջք Տաւրացիք, որոց զոգիս ի բաց եղեալ, Երուանդայ պայմանեալ՝ սպանանել զԱրտաշէս: Որոց դիպեալ ի հետ ընդ մէջ անցանէ Գիսակ որդի ստնտուին Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և կէս դիմաց նորա ի վայր բերեալ սուսերա, զյաղթութիւն ստացեալ՝ մեռանի ի Վերայ այսպիսեաց: Եւ մնացեալ օգոքն ի փախուստ դառնային:

Իսկ Երուանդ ծիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի խանս կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ծիս հանգոյց ի հանգուցէ փախչել: Եւ քաջին Սմբատայ զիւտ մտեալ՝ սաստկագոյնս վարէր զնա ի գիշերի մինչև զդուուն քաղաքին: Եւ Մարաց օգորացն անցեալ ի կողմն Երուանդական գնդին, նսեմաւ ի Վերայ դիականցն բանակէին: Իսկ Արտաշիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն, ի կաշեայ և ի կտաւեայ պարսպին, էջ, և ի խորին նորա բնակեցաւ զայն գիշեր: Եւ այգուն եղելոյ՝ տիրաբար արարեալ, զսպանեալսն թողել իրամայեաց. և անուանեաց զիովիտն, ուր ի Վերայ դիականցն բանակեցաւն՝ Մարաց մարգ, և զտեղի ձակատուն՝ Երուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայսն տեղուց վանեաց զԵրուանդ: Եւ ինքն չուեաց ի քաղաքն Երուանդայ, յառաջ քան զմիջօրեալ հասեալ ի դաստակերտն Երուանդայ, և միաբան գոշմամբ իրամայեաց աղաղակել օգորացն՝ «Մար ամատ», որ թարգմանի Մարս եկն, յիշեցուցանելով զթնամանսն, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար զնա կոչելով: Յայս ի սոյն ձայն անուանեցաւ դաստակերտն Մարմէտ, իբր ի կամաց Արտաշիսի՝ բանալ զանուն Երուանդայ ի տեղուցէն, այս պատճառ է անուանակոչութեան դաստակերտին:

Բայց Սմբատայ գիշերայն զիես Երուանդայ եկեալ սակաւ վաշտկանաւ՝ զդուռն քաղաքին պահէր մինչև ի զալն Արտաշիսի և զօրացն ամենեցուն: Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եցեն մարդիկ ամրոցին, և բացին զդուռն քաղաքին: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերք զգութիւն Երուանդայ, և ցրուեաց զուղիւղն ի յատակս տանն. և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան: Բայց Արտաշիսի յիշեալ, թէ խառնուած Արշակունույ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք:

ԽԵ

### **Թագաւորել Արտաշիսի եւ առնել բարիս իւրոց երախտաւորացն:**

Յետ մահուանն Երուանդայ մտեալ Սմբատայ զարդունականն յուգէր զգանձսն. և գտեալ զթագն Սանատրկոյ արքայի՝ դնէ ի զլուխն Արտաշիսի և թագաւորեցուացանէ ի վերայ ամենայն երկրի Հայոց ի քսան և իններորդի ամի Դարեհի Պարսից արքայի: Իսկ Արտաշիսի առեալ զթագաւորութիւնն՝ տայ պարզէս զօրացն Մարաց և Պարսից, արձակեաց յաշխարհն իւրեանց: Տայ և առնն քաջի և պատուականի Արգամայ զխոստացեալ զահն երկրորդական, և պսակ յակնթակապ, և գինդ յերկոսին ականջսն, և կարմիր զգեստ միոյ ոտինն. տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինօք ընպել նուազօք: Եւ ոչ ինչ ընդհատ յայսց պատուոց տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն և ի կարմիր կօշկէ. և աւելի քան զիայրենական զիւր թագակապ ասպետութիւնն և զիշխանութիւնն արևմտեայ զօրուն՝ հաւատայ ի նա զամենայն զօրս Հայոց, և զբոլոր աշխարհիս զգործակալս և զիամօրէն տունն արքունի: Եւ զներսէս զորդի որդույն իւրոյ ստընտուին Գիսակայ, ազգ զնա սերելով՝ անուն կոչէ զնահատակութեանց հօրն–Դիմաքսեան. քանզի, որպէս ասացաք՝ զկէս դիմացն սուսերաւ ի վայր բերին ի վերայ Արտաշիսի:

Պատմի սորա ի նոյն աւուրս սերեալ ազգ և զորդիսն Տուրայ, պատանիս հինգ հանդերձ տասամբ, յանուն հօրն իւրեանց Տրունիս. ոչ վասն արութեան ինչ գործոց, այլ միայն վասն քսութեան հօր նոցա, զոր առնէր ի տանէն արքայի առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուանդայ, սակս նորին և սպանաւ ի նմանէ:

ԽԸ

### **Սպանումն Երուազայ եւ շինել միւսոյ Բագարանի, եւ հարկի Արտաշիսի Հրոմայեցուց:**

Զկնի այսորիկ հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ հուա ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպանցէ զերուազ զեղբայր Երուանդայ: Չոր կալեալ Սմբատայ՝ երկան զուլանէ հրամայէ կապել, և ընկենուլ ի պտոյտ մի գետոյն: Եւ ի տեղի նորա ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ մոզի ուրումն երազահանի, որ յայն սակս և Մոզպաշտէ անուն կարդային: Եւ ապա աւար առեալ զգանձսն Երուազայ, և ծառայս անձինս հինգ հարիւր, նա զընտիր գանձուցն մեհենից՝ բերէ Արտաշիսի: Եւ Արտաշէս պարզէս Սմբատայ զժառայսն Երուազայ. բայց զգանձսն հրամայէ տանել Դարեհի արքայի Պարսից, հանդերձ յաւլմամբ յիւրոց զանձուց, ի շնորհակալութեան պատիւ իբրև հօր և օգնականի:

Յայնժամ Սմբատայ զժառայսն Երուազայ, զոր գերեացն ի Բագարանէ, տարեալ բնակեցուցանէ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուն Բագարան կոչելով զձեռակերտն: Ինքն անցանէ ի Պարսս, ընծայատար Դարեհի, ոչ ինչ փոյթ առնելով զշռոնայեցուց տէրութենէն: Իսկ ի զնալն Սմբատայ Պարսս հասանեն հարկահանք կայսեր և սպայ ծանր ի սահմանս Հայոց, զորս մաղթեալ Արտաշիսի և կրկին տուեալ զիարկսն՝ հաշտեցուցանէ: Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմապ քուրմ Հանույ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգը վիպասանաց:

## Յաղագ շինուածոյ Արտաշատ քաղաքի:

Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանցն, որ պատմին ի Գոդքան–շինել գքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդը զարմիցն, և իբր տրփանք Սարինկան ընդ Վիշապազունս՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմն Աժդահակայ, որ ունին զամենայն զար ստորոտովն Մասեաց. մարտ ընդ նոսա և քայլքայումն յիշանութենէն, և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ որդուցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն. բայց յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զայլաբանութիւնն ճշմարտեսցուք:

Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն Արտաշատ: Զեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ և երազ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արմեդիեայ և զամենայն կուրս հայրենիսի: բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուա ի Ճանապարհն: Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ: Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ և զոր անդրէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքենէ յօրինէ իբրև զքաղաք արքայանիստ:

## Ծ

### Յարձակումն Ալանաց ի մեզ եւ պարտումն, եւ խնամութիւն Արտաշիսի ընդ նոսա:

Չայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Կրաց աշխարհին՝ մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս գիւրոց զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ Երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց: Սակաւ ինչ տեղի տայ ազգն Ալանաց, և զնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերք գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշէս բանակի ի հարաւոյն, և գետն ընդ մէջ նոցա:

Բայց քանզի զորդի ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս՝ զխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խնդրեսցէ. և երդունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի մի ևս մանկուք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհս Հայոց: Եւ ի չառնալ յանձն Արտաշիսի առ ի մի մեծ, և ի ձեռն թարգմանաց ձայնէ ի բանակն Արտաշիսի. «Քեզ ասեն, այս քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց. Եկ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ. զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել, և թշնամութիւն յալիտենական ի մէջ Երկոցունց ազգաց քաջաց հաստատել»: Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի իմաստութեան բանս՝ զնաց յեզր գետոյն. և տալ տեսեալ զկոյսն գեղեցիկ, և լուեալ ի նմանէ բանս իմաստութեան՝ ցանկացաւ կուսին: Եւ կոչցեալ զդայեակն իւր զՍմբատայ՝ յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, ախոնւ զօրիորդն Ալանացի կնութիւն իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին արձակել ի խաղաղութիւն: Եւ հաճոյ թուեցեալ Սմբատայ, յղէ առ արքայն Ալանաց՝ տալ զտիկին օրիորդ Ալանաց զՍարինիկ ի կնութիւն Արտաշիսի: Եւ ասէ արքայն Ալանաց. «Եւ ուստի՝ տացէ քաջն Արտաշէս հազար ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգույ կոյս օրիորդին Ալանաց»:

Չայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն. «հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ, և հանեալ զոսկէոյ շիկափոկ պարան, և անցեալ որպէս զարծուի սրաքն ընդ գետն, և ձգեալ զոսկէոյ շիկածոկ պարան՝ ընկէց մէջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ

հասուցանելով բանակն իւր»: Որ և Ճշմարտութեամբ ունի այսպէս: Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր՝ լայք շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս՝ առնու գտիկին օրիորդն Սաթինիկ: Այս է ոսկէող շիկափոկ պարանն: Դոյնապէս և զիարսանեացն առասպելեալ երգեն, այսպէս ասելով.«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»: Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ գահեկանս ձապաղել ինը զիհապատեանն Հռոնայեցոց. սապէս և թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ: Այս է Ճշմարտութիւն բանիցու:

Սա առաջին եղեալ ի կանանցն Արտաշիսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ և զայլս բազումս, զորս ոչ կարևոր համարեցաք այժմ անուամբ թուել. բայց զկնիսն յորած ի գործ ինչ հասանիցենք:

## ԾԱ

### *Սպանումն Արգամայ եւ որդուց նորա:*

Ի չափ հասեալ Արտաւազդայ որդուոյ Արտաշիսի՝ եղեւ այր քաջ, անձնահած և հպարտ. և նախանձ բերելով ընդ ծերունույն Արգամայ՝ հրապութեաց զհայր իւր ցանուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ անենայն խորհիցի: Այսպէս ընկեցեալ զնա ի պատուոյն՝ ինքն առնու զերկորորդութիւնն: Յետ այսորիկ երթալով Արտաշիսի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ, իբր թէ դաւել զարքայն խորհիցին՝ յարուցանեն որդիքն արքային ապշոտ, և անդրէն իսկ ի հացին քարշեն զալիսն Արգամայ: Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէս արքայ՝ դարձեալ արձակեաց զորդի իւր զՄաժան մեծաւ գնդաւ, և զբազումս յազգէն Մուրացեան սպանանել հրամայեաց, և զապարանսն Արգամայ այրել. և զիարձ նորին, որ կարի չքնաղ էր զեղով և մնացեալ գնացիք ոսից, զոր կոչէին Մանդու, ածել ի հարծութիւն Արտաշիսի: Զոր դարձեալ նուածեալ յետ երկուց ամաց, ի բաց տալ հրամայէ զինչսն բայց ի հարձէն:

Իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկորորդութեանն պատի՝ յաւելու ևս հանել զՆախճան, և ըստ հիւսիսոյ Երասխսայ զամենայն գիւղս, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւնն: Այսմ ոչ կարացեալ համբերել որդուոցն Արգամայ՝ ընդդիմանան նմա պատերազմաւ. բայց յաղթեալ աչքայորդուոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարբն, և որք միանգամ երևելիք էին յազգէ Մուրացեան. և գրաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւնս նոցա: Եւ ոչ ոք ապրեաց ի նոցանէն, բայց միայն աննշանք ոմանք և կրտսերքն փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի դրան արքունի: Այս Արգամ է, որ յառասպելին Արգաւանն անուանի, և այս պատճառ պատերազմի ընդ Արտաւազդայ:

## ԾԲ

### *Եթէ որպիսի էր Սմբատ, եւ զինչ յԱկանս գործեաց. եւ բնակել Արտազու:*

Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ. քանզի արդարս ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի ի Ճշմարտութենէն. որունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն, և առաքինութեան ոգուցն որսորդ, և զեղեցկութեն ալեօք վայելչացեալ. սակէ ինչ արեան նիշ ունելով յաչսն որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր. և ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի, և տուչութիւն յաջողուածոց ունէր ի մարտս առաւել քան զամենայն ոք: Զի յետ այնչած արութեանց՝ օգնական եղբօրն Սաթինկայ յաշխարին Ալանաց հանդերձ զօրու երթայ հրամանաւ Արտաշիսի: Քանզի մեռաւ հայր Սաթինիկան, և այլ ոմն բռնացեալ թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր զեղբայրն Սաթինիկան. զոր վանեալ հերքէ Սմբատ, և տիրացուցանէ ի վերայ ազգին զեղբայրն Սաթինիկան, և զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ զերի սաստիկ յԱրտաշատ: Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր

Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն արտագ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Արտագ կոչի մինչև ցայօր ժամանակի:

#### ԾԳ

### **Աւերումն Կասրից, Եւ գրգռութիւն ընդ Սմբատայ զարմիցն Արտաշիսի Եւ ընդ միմեանս:**

Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զիանանուն իւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին: Եւ ոչ հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար գաւառ, որ էԳեղամանց լեառն, և ծովեգերեայք, և այսր ևս քան զնոսա. նա և Կասրից երկիրն յայն սակս ապստամբեն ի մերոյ արքայէն: Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրօք Հայոց, ինքն արքայ յուղարկ երթալով աւուրս եօթն Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կասրից աւերեալ առաւել քան զԱրտազեան զերի ածէ ի Հայս. ընդ որս և զՉարդմանոս անուն թագաւոր նոցին: Վասն որոյ արժանի ըստ վաստակոցն պարզէն նմա Արտաշէս զմասն արքունի, որ ի շէնս Գողթան, և զՈւղտու ակունսն, և առ այսոքիք և զաւարն ամենայն նմա թողու: Ընդ որ նախանձեալ Արտաւազդ՝ կամեցաւ սպանանել զՍմբատ. և յայտնեալ խորհրդոյն, բազում խռովութիւն վասն այնր լինէր հօրն: Իսկ Սմբատ տեղի տուեալ գնաց զկողմամբք Ասորեստանի, իւրովք կամօք թողլով զիշխանութիւն զօրացն Հայոց, ընդ որ խանդայրն Արտաւազդ: Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդիք, ի յԱկի նստուցեալ զբազմութիւն գերոյն. քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեաց հուա յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ և զնորին կողմամբք բնակեցաւ:

Իսկ Արտաւազդ յետ գնալոյն Սմբատայ առնու ի հօրէն՝ որում ցանկայրն, զիշխանութիւն զօրացն ամենեցուն: Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարցն ի գրգռութենէ կանանց իւրեանց. վասն որոյ կարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի. և զՄաժան կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ: Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարևելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ, և զարևանտեանն տայ Տիրանայ, զիարաւայինն ի Սմբատ հաւատայ և զիհւսիսայինն ի Զարեհ: Եւ Զարեհ էր սէգ և յորս երէոց նահատակ, իսկ առ պատերազմունս վաստ և տաղտուկ. զորոյ ափորձ առեալ Քարձամայ ուրումն արքայի Վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն, և կալեալ զՉարեհ, ի բանտի դնէ ի կաւկաս: Ընդ որում պատերազմեալ Արտաւազգայ և Տիրանայ հանդերձ Սմբատաւ դարձուցանեն զեղբայրն ի մեծէ կարակմէ:

#### ԾԴ

### **Պատերազմ ընդ զօրս Ղոմետիանոսի ի Բասեան:**

Աղմուկ շփոթից իմն լեալ յարևմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդդիմանայ Հռոմայեցուցն տէրութեամն, աչ տալով հարկս: Իսկ Ղոմետիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ. որոց հասեալ ի կողմանս Կեսարու, զՏիրան և զզօրսն արևմտեան առաջի արկեալ՝ ածեն տագնապաւ մինչև ի քաջ ընդարձակ հովիտն Բասենայ, յորում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արևելեայ և հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որոդուվքն, արքայի, և պատերազմեալ՝ սաստկապէս վտանգին: Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն՝ ընդ մէջ անցեալ ապչեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ: Զի թէպէտ և ծերազոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց և մղեաց զՃակատն, և հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն Հռոմայեցուց մինչև ի սահմանս Կեսարու:

Չայս կամելով երգել յառասպելսն՝ Ռոմետ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն Ռոմետիանոս. ոչ ինքն այսր, այլ զիրաման նորա և զօրս այլաբանելով յանուն նորա կոչեն:

Բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի դոմետիանոս ի Հռոմ, և զկնի նորա Ներուաս ոչ աւելի թագաւորեալ քան զմի ամ: Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց և Պարսից՝ ասպատակ ևս ի Յոյնս արարին: Ընդ սոսա հայելով Եգիպտացոց և կողմանցն Պաղեստինացոց՝ արգելուն և նոքա զիարկին Հռոմայեցոց:

## ԾԵ

### **Յաղագս Տրայիանոսի եւ նորին գործոց, եւ մահուանն Մաժանայ յեղբարցն:**

Չայսու ժամանակաւ թագաւորեալ լինի Հռոմայեցոց Տրայանիոս, և խաղաղացուցեալ զամենյն արևմուտս, դիմէ ի վերայ Եգիպտացոց և Պաղեստինացոց. և նուաճեալ զնոսա ընդ հիրով ձեռամբ, խաղայ յարևելս ի վերայ Պարսից: Աստ աճապարեալ Արտաշէս մեծապէս ընծայիք իջանէ ընդ առաջ նորա, զմեղանս յանձն առեալ, հանդերձ հարկօք անցելոց ամացն լինի առաջ նորա. և թողութիւն ի նմանէ գտեալ, դառնայ յաշխարհս Հայոց: Եւ Տրայիանոսի անցեալ ի Պարս, և զամենայն զկամս իւր կատարեալ՝ դառնայ ընդ Ասորիս:

Ընդ առաջ նորա իջեալ Մաժան՝ մատնութիւն գեղբարցն առնէր. «Գիտեա, ասէ, արքայ. Եթէ զԿրտաւազդ և զՏիրան Վտարանդիս ոչ արասցես, և զօրսն Հայոց Զարեհի ոչ հաւատացես, հարկքն անաշխատ առ քեզ ոչ եկեսցեն»: Չայս արար Մաժան՝ քէն պահելով վասն Սմբատայ, զի և զնա նորա էր սնուցեալ. ընդ նմին և զՏիրան խորհեցաւ հանել, զի ինքն լիցի քրնապետ միանգամայն և սպարապետ արևմտից: Զորմէ ոչ ինչ փոյթ արարեալ Տրայիանու, արձակէ ունայն: Իսկ Արտաւազդայ և Տիրանայ ինացեալ զխորհուրդն նորա՝ դարան գործեալ յորս սպանին զՄաժան, զոր տարեալ թաղեցին ի Բագնացն աւանի իբրև զքրնապետ: Իսկ Արտաշէս յայնմ հետէ անսայթաք հարկեաց Տրայիանու, և յետ նորա Աղրիանոսի կայսեր զամենայն աւուրս իւր:

## ԾԶ

### **Թէ որպէս բազմամարդացոյց Արտաշէս զաշխարհս, եւ սահմանս հաստատեաց:**

Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիտից և ազարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, Եկամուտս բազմունս ածելով ազզս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքլուսիս, և պնակած կիսել զմէջսն, և ծածկելով յերկրի. և չորեքլուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ: Ընդ որ նախանձեալ Արտաշիսի որդուոյ Սասանայ՝ զնոյն նման հրամայէ առնել և ի Պարսից աշխարհին և յիւր անունն անուանել, զի մի ևս յիշեսցի անունն Արտաշիսի:

Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս:

## ԾԷ

### **Յաղագս նախարարութեանն Ամասունեաց:**

Յաւուրս սորա ասեն Եկեալ զազգն Ամասունեաց ի կողմանցն արևելից Արեաց աշխարհին: Բայց են սոքա բնութեամբ հրեայ, ի Մանուեայ ումեմնէ. որոյ որդի էր մեծահասակ և ուժեղ, Սամսոն անուն Կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրէից՝ ըստ յուսոյ զնախնեաց կոչել զանուանս: Բայց է Ճշնարիտ, որպէս և այժմ իսկ է տեսանել ի զարմս Ամասունեաց, քանզի անձեայք և բարեձեք ըստ պատշաճի վեյել են ամենայն իրօք և ուժեղք: Տարեալք են նոքա ի յԱրշակայ առաջին ի Պարթևաց թագաւորեցելոյն. և յառաջադիմութեամբ անդրէն յԱրեաց աշխարհին ի պատիւ հասեալք ի կողմանս Ահմատանի: Բայց թէ յինչ պատճառաց գալուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ, այլ պատուին

յԱրտաշիսէ գեղիւք և դաստակերտօք, և անուանին Ամատունիք, որպէս թէ Եկը: Եւ կէսք ի Պարսից՝ Սանուեանս գնոսա կոչեն յանուն նախնույն:

ԾՇ

### **Վասն Առաւելիինաց տոհմին, թէ ուստի սերեալ ազգ:**

Ի սոր աւուրս և Առաւելեանք, յազգէ Ալանաց, մերձաւորք Սաթինկան, զիետ նորա եկեալք՝ կարգեցան յազգ և ի նախարարութիւն աշխարհիս Հայոց, որպէս հարազատք թագուիւյն։ և ի ժամանակս Խոսրովու հօրն Տրդատայ խնամեցեալ ընդ ումենն քաջի Բասղացն եկեալ հատուածի:

ԾՇ

### **Որ ինչ արուեստից գիտութիւն յաւուրս Արտաշիսի:**

Քանզի բազում ինչ գործք յաւուրս Արտաշիսի գործեցան, վասն այնորիկ ի բազում ճառս կոտորեցաք, զի մի երկայնութիւն բանից տաղտկութիւն ընթերցողացն լինիցին. որոյ է Վերջին ճառս այսպիսի ինչ, յիշատակել և զայլսն ևս ինչ ի ժամանակս Արտաշիսի: Զի թէպէտ և այլն ամենայն, զոր յիշատակեցաք յառաջազոյն ճարիցն, կարգք և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն՝ այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս ինից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեն և զամսոց և զտարեաց բոլորնանց: Քանզի ոչ այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց ազգաց վարելով. և ոչ ի ծովակս աշխարհիսն նաւազնացութիւնք, և ոչ ի Վերայ գետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որոց. այլ և ոչ յամենայն տեղիս Երկրագործութիւնք, բայց դոյզն ուրեք. այլ ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերպութեամբ և այլովք այսպիսեօք կեցեալք: Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի:

Կ

### **Յաղագս մահուանն Արտաշիսի:**

Գեղեցիկ ինն պատմէ և Արիստոն Փեղլացի յաղագս մահուանն Արտաշիսի: Քանզի ի ժամանակին որպէս ապստամբեցին Հրեայք յԱղրիանոսէ Հռոնայեցոց թագաւորէ, և ետուն պատերազմ ընդ Ռուփոսի Եպարքոսի, առաջնորդութեամբ առն ուրումն աւազակի, որում անուն էր Բարքորայ, այս ինքն աստեղ որդի, որ էր գործովք չարագործ և սպանող, բայց անուամբ իւրով մեծարանեալ պարծէր, որպէս թէ յերկնից ծագեաց նոցա փրկիչ, իբր նեղելոց և գերեաց: Եւ այնքան սաստկացոյց զմարտն, մինչև ի նա հայելով ի բաց կացին ի հարկելոյ Հռոնայեցոց Ասորիս և Միջագետք և Պարսք ամենայն. քանզի էր և լուեալ. եթէ եմուտ յԱղրիանոս ախտ ուրկութեամ: Բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց ի նմանէ:

Եւ եղև ընդ նոյն ժամանակս հասանել Աղրիանոսի ի Պաղեստինէ և սատակել զապստամբսն պաշամամբ ի քաղաքի մի փոքր, հուայ յԵրուսաղէմ. վասն որոյ և ամենյն ազգին Հրէից հրամայեաց մերժել ի հայրենի աշխարհէն, որ ի բազում հեռաստանէ հայսեցին յԵրուսաղէմ: Եւ ինքն շինէր զԵրուսաղէմ, զաւերեալն ի Վեսպասիանոսէ և ի Տիտոսէ և յիւրմէ. և անուանեաց Հեղիայ յիւր անուն, որպէս և կոչէրն իսկ Աղրիանոս՝ արեգակն: Բնակեցոյց ի նմա հեթանոսս և քրիստոնեայս, որոց Եպիկոպոս էր Սարկոս ոմն: Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր զկողմամբք Ասորեստանի. և մերոյն Արտաշիսի հրամայեաց երթալ ի Պարսք հանդերձ իւրովք զիւգոստատօք. որոյ զիետ քարտուղարութեամբ լեալ այս այր, որ զայս պատմութիւն ետ մեզ, հանդիպի Արտաշիսի ի Մարս, ի Սոհունդ անուանեալ տեղիւջն:

Եղև հիւանդանալ նմա ի Մարանդի, ի Բակուրակերտ աւանի. և զԱբեղոյ առմն նահապետ Արեղենից տոհմին, զայր շոյտ և զզոմարար և սուտակասպաս, և նորին խնդրոյ արձակէ յԵկեղեաց յԵրիզայ, ի մեհեանն Արտեմիդեայ, խնդրել ի կրոցն բժշկութիւն և զբազում կեանս: Որոյ ոչ ժամանեալ դաշնալ՝ հասանէ վախճան

Արտաշիսի: Եւ գրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարձք ծառայք. և որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն, քաղաքականաց կարդօք և ոչ որպէս զբարբարոս: Գագաղքն էին, ասէ, ոսկեղէն, գահոյքն և անկողինքն բեհեզեայ. և պատմութանն որ զնարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և գէնն ոսկով առաջի եղեալ. և զգահոյիքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն, և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հյանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. և առաջի պղնձիս հարկանելովկիոյս, և զկնի կուսանք ձայնարկուք սևազգեստք և աշխարող կանայք, և զիետ՝ բազմութիւն ռանկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին: Եւ շուրջ զգերեզմանաւնինէին կամաւոր մահունք, որպէս վերագոյնն ասացաք: Եւ սորա այսպէս սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս քառասուն և մի:

ԿԱ

### **Արտավազդայ թագաւորութիւն, եւ հալածել զեղրարս իւր եւ զքորս, եւ մահ հանդերձ այլաբանելով:**

Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատ զամնեայն եղբարս իւր ի գաւառ Ազինվտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի, որսալ կինձս և իշավայրիս զակամբք Գինայ, և աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յածելով Երիվարաւն՝ անկանի և խոր իմն մեծ, և խորասոյգ անհետի:

Զսամնէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լիմէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդէ ասելով զհայրն. «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»: Վասն որոյ անհծեալ զնա Արտաշիսի՝ ասաց այսպէս. «Եթէ դույորս հեծցիս յԱզտն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզտն ի վեր ի Մասիս. զնդ կայցես, և զլոյս մի տեսցես»:

Զրուցեն զսմանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում, կապեալ Երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն՝ ջանալ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կրանահարութեան դակբնաց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, զիետ երթալով առասպելին՝ յաւուր միաշաբաթւոց Երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն շղթայքն Արտաւազդայ: Բայց է ճշմարտութեամբ այսպէս, որպէս ասացաք վերագոյն:

Այլ ոնանք ասեն և ի ծնանելն զսա դիպեալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմիցն Աշրահակայ. վասն որոյ զնոսա բազում չարչարեաց Արտաշէս: Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ «Վիշապազունք գողացան զնանուկն Արտաւազդ, և դև փոխանակ եղին»: Բայց ինձ արդարացեալ թուի լուր այն, թէ ի ծննդենէն և եթ մոլորութեամբ լեալ, մինչև նովինք և վախճանեցալ: Եւ առնու զթագաւորութիւնն Տիրան եղբայր նորին:

ԿԲ

### **Որ ինչ վասն Տիրանայ:**

Թագաւորէ Հայոց Տիրան որդի Արտաշիսի յերրորդ ամի Պերոզի առաջնոյ Պարսից արքայի: Սորա ոչ ինչ պատմին գործք մեծամեծք, այլ միայն թէ մտերմութեամբ ծառայեաց Հռոմայեցւոց. Եկեաց խաղաղութենք, որսոց և զբուանաց պարապեալ, որպէս ասեն: Եւ ձիոց երկուց լեալ՝ թեթև առաւել քան զՊիգասոս, Երագութեամբ անբաւ. զորս ոչ երկրակոխս, այլօդագնացս համարէին յոր խնդրեալ հեծանել Դատաէի ուրումն իշխանի Բզնունեաց՝ պարծէր ընչեղագոյն գոլ քան զարքայ:

Եւ եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն. «Ընդարձակետ մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Աօբերանւոյ: Իսկ սոցա առաւել կա բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա բայց զոր ունեինն՝ հաւասար տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ ժառանգութիւն բնակողացն Հաշտնից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի և Աօբերանւոյ:

Յաւուրս սորա ասեն լեալ զպատանի ոմն յազգէն Անձաւացեաց, սէզ յամենայն, Երուախնաւու անուն կոչեցեալ, որ առնէ կին զվերջին կանանցն Արտաւազդայ, զոր ի Յունաց էր ածել: Եւ քանզի գաւակ ոչ գոյր Արտաւազդայ՝ արքայ թողու յԵրախնաւու զամենայնտունն Արտաւազդայ: Զի ասէին զնա այր ընտիր լինել և համեստ յամենայնի, այլ և ի ցանկութիւնս մարմնոյ իբրև գօրինաւոր ոք: զոր սիրեալ արքայ՝ տայ ննա զգահն Երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ. և զիոզ արևելեան գօրուն ի նա հաւատացեալ՝ առ ննա թողու զԴրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամեցեալ ընդ նախաչաչս Վասպուրականի, որում էր գաւանն Տատեօնս հանդերձ ազարակօքն, և զայգին մեծ, յոր մտանէր առուն գետ, հանել ի ծովէն Գայլատուայ: Եւ ինքն զնաց զկողմանքք Եկեղեաց, ի յաւանին Չըրմէս հաստատելով զարքունիսն: Ի հանդարտութեան վարեաց զթագաւորութիւնն ամս քսան և մի, և մեռաւ ի ձանապարհի ձեան հիւսոյ կալեալ:

ԿԳ

### **Յաղազս Տրդատայ Բագրատունոյ եւ անուանց ազգի նորա առաջնոց:**

Տրդատ ոմն յազգէն Բագրատունեաց, որդի Սմբատուիեայ դստեր քաջին Սմբատայ, այր սրտեայ և ուժեղ, կարծ հասակաւ և զծուծ տեսլեամբ, զոր իւր փեսայացոյց արքայ Տիրան ի դուստր իւր յԵրանեալ: Որոյ ատեցեալ զայր իւր զՏրդատ, պշրանօք և պիստելով կեայր գօրհանապազ, աւաղելով զինքն, իբր թէ չքնաղագեղ ընդ վատակերպւոյ և քաջատոհմիկ ընդ վատթարազգւոյ բնակէ: Ընդ որ զայրացեալ Տրդատայ՝ յաւուր միում զանէ զնա սաստկապէս. և կորեալ զդեղձան հերսն և զվարսիցն փետտեալ զխոպոյի՝ հրամայէ քարշել, արտաքս ընկենուլ ի սենեկէն: Եւ ինքն զնաց ապստամբեալ ի կողմանս ամրութեանն Մարաց. և հասեալ ի Սիւնեացշխարհն՝ ժամանէ ննա համբաւ մահուանն Տիրանայ, զոր լուեալ՝ դադարէ անոյ:

Եւ եղէ յաւուր միում կոչել զնա յընթրիս Բակրոյ նահապետին Սիւնեաց. և յուրախանալն գինւով, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր երգէր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ՝ տրփացաւ և ասէ զբակուր. «Տուր ինձ զվարձակս զայս»: և նա ասէ «Ոչ տամ, զի հարծ իմ է»: Իսկ Տրդատայ բուռն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վաւաշէր ըստ օրինակի Երիտասարդի անարգել տարփաւորի: Ընդ որ խանդացեալ Բակրոյ՝ յարեաւ հանել զնա ի նմանէ: Բայց յոտն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկտեղբն իբրև զինու վարեցաւ, նա և զբարձակիցն ի բազմականացն ի բաց պուղեաց: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Ռդիսևս՝ զՊենելոպայ զսեղեսս սատակելով, և կամ զԴապիթեայցն և զՅուշկապարկացն կոհւս ի վերայ Պերիթեայ հարսանեացն: Եւ այնպէս յիւր վանսն Եկեալ, իսկոյն ի ձի Եկեալ՝ հանդերձ հարծիւն ի Սպեր զնաց: Զայս աւելորդ եղէ պատմել մեզ զնահատակութիւն առնն ցանկասիրի:

Բայց գիտեա, զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զօրէնս հարցն՝ նախ խժական յորջորջումն–Բիւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն, որպէս կոչէին յառաջ քան զուրանալն–Բագրադիա, Տուրիա, սենեքիա, Ասուր, Սահատիա, Վագարիա, Ենանոս: Եւ ինձ թուի, թէ որ այժմդ կոչին Բագրատունիք Բագրատ՝ Բագրադիա է դա, և Ասուր՝ Աշոտ. դոյնապէս և Վագարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ:

## Եթե զիարդ Տիգրան վերջի, եւ զինչ ի նմանէ գործք:

Փոխանորդէ զՏիրան եղբայր իւր տիգրան վերջին, թագաւորեալ հայոց ի քսաներորդի և ի չորրորդի ամի Պերոզի Պարսից արքայի. և երկայնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի, ոչ ինչ գործ արութեան արժանի յիշատակի ցուցեալ, այլ ի յաղջկանէ միոցէ յունէ ի կալանս ըմբռնեալ, ի ժամանակին յորում վախճանեցաւն Տիտոս երկրորդ թագաւոր Հռոմայեցւոց, որ անուանեցաւն Անտոնինոս Աւգոստոս: Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռոմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի յառաջ անուանէր Վաղեգեսոս ի յունաց լեզուն. բայց թէ Պարսք զինչ կոչոն զնա, ոչ գիտեմ:

Արդ՝ յասպատակելն Պերոզի ընդ Ասորիս և կողմանս Պաղեստինացւոց վասն նորա և հրամանաւ նորին՝ և մերն Տիգրան ի Միջերկրեայս ասպատակեալ և ի կալանս ըմբռնեալ յաղջկանէ միոցէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչև դեռ Դուկիանոս կեսր յարէնս զմեհեանն շինէր. որոյ և անցեալ զօրօք բազմօք ի Միջերկրեայս յետ մեռանելոյն Պերոզի նուաձեաց զՀայս, և արձակեաց զՏիգրան: Ետ զ՛Ոփի զկոյս, զմերձաւոր իւր, նմա կոնութեան զոր եկեալ ի Հայս ի բաց թողուր, և զլեալ ի նմանէ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան. և զառաջին մանկանցն՝ զլուխ նահապետ կացուցանէ, և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Արշակունիք:

Եւ այլ որ ինչ կրտսերագոյն ազգք, եթէ աստ և եթէ զկողմամբք Կործէից, հաստատէ այս Տիգրան. որք միանգամ անազգիք էին ի վաշտս և անձամբ երևելիք, և վասն նորա փրկութեան պատերազմեալ ընդ Յոյնս, որք ի Կործէից և որք ի մերմէ կողմանէս, զյառաջագունից ասեմ, մօտաւորաց վճենից, ի զարմից Հայկազանց, ոմանք ի յերկաց: զոր ոչ անուամբ պատմեսցուք. է ինչ՝ որ վասն յայտնի լինելոյ մեզ, և է ինչ՝ որ վասն աշխատութեան, ի վաստակելն խոյս տալով. երրորդ, զի և անհաստատութիւնն բազմաց՝ կարծիս ի ներքս ածէ ընդ բնաւն անցանել: Եւ այսորիկ աղագաւ ոչ ինչ վասն այնց ազգաց, որք ի վերջնոյն տիգրանայ կարգեցան, ճարեսցուէ, թէն բազում անզամ վասն այսր ի մէնջ աղերսիցես. այլ միայն զորս հաւաստին գիտեմք զկնիսն: Զի որչափ էր հնար՝ փախեաք յաւելորդ և ի պաճուճեալ բանից, և որ ինչ յանհաւաստին հայէր բանն և մտածութիւնն. միայն զիետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ և կամ ի մէնջ՝ զարդարոյն և զՃշմարտի: Զնոյն և աստանօր պատրաստելով՝ արգելում զնթացս բանիցս յոչ պատշաճէն և որ զանհաւաստութեանն ի ներքս ածէլ ակնարկէ կարծիս: Եւ զքեզ, որպէս բազում անզամ, և այժմ աղաչեմ, մի յաւելորդսն հարկաւորել զմեզ, և սակաւ և կամ յոլով բանիւք՝ զմեծ և զիաւաստի բովանդակ աշխատութիւնս մեր ընդ վայր և աւելորդ ցուցանել գործ. զի նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս:

ԿԵ

## **Յաղազս թագաւորելոյն Վաղարշայ, եւ շինելոյ զաւանն Բասենոյ, եւ պատել պարսպաւ զՆոր քաղաք, եւ պատերազմ ընդ Խազրաց եւ մահ նորին:**

Յետ նահուան Տիգրանայ թագաւորէ Վաղարշայ Պարսից արքի: Սա շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ ի վերայ ճանապարհին. ուր ի զնալ մօր իւրոյ ի ծմերոց յԱյրարատ, յանկարծակի պատահեալ երկանց ի զնացսն՝ ծնաւ ի վերայ ճանապարհին, ի զաւարին Բասենոյ, ի տեղլուզն, ուր խառնին Մուլց և Երասխ. զոր շինեաց յիւր անուն և կոչեաց Վաղարշաւան: Սա պատեաց պարսպաւ և զիզօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. զոմէ յառասպելսն ասեն. «Հատուած զնացեալ Վարդգէս մանուկ ի Տուհաց զաւառէն, զՔասաղ գետով, կրել կոփել զդութեան Երուանդայ արքայի»: Այս Երուանդ՝ առաջինն է, սակաւակեացն, որ սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի շինեաց զաւանս զայս, յորում և Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց

զիասարակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղև քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց վաղարշապատ, որ և Նոր քաղաք:

Սա թագաւորեալ ամս քսան, մեռավ: Թէ լոկ և այլքն կեցին, բայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղազ բարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորացն: Վասն զի ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն իհիսիսականաց, գլուզարաց ասեմ և զբավլաց, արտաքս քան զդուր ծորայ ելանեն, առաջնորդ և թագաւոր ունելով ինքեանց զՎնասպետ ունն Սուրբաաց. որք անցեալ վտարին այսր զկուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ և արամբք մարտկօք ցիր դիաքաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշտին, և փիզ զիետ երեալ՝ անցանէ ընդ կապանն ծորայ: Ուր միւսանգամ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ձակատ. զորս թէպէտ և վանեալ քաջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի ի ծեռաց կորովեաց աղեղնաւորաց:

Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի: Եւ նոյն հետայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեառնն մեծ, վրէժս պահանջելով զմահուան հօշն. և վանեալ սրով գեղարդեամբ զիզօր ազգսն զայնոսիկ, մի հարիւրոց յամենեցունց պիտանեաց առնու պատանդս, և զիւրոյ տէրութեանն նշանակ՝ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել Հռոմայեցւոց:

## ԿԶ

### **Եթէ ուստի զայսոսիկ պատմէ:**

Զրուցէ մեզ զայս Բարդածան, որ յԵղեսիայ: Քանզի նա յաւուրս Անտոնինոսի վերջնոյ երևեցաւ պատմագրող. որ յառաջ աշակերտեալ էր աղանդին Վաղենտինոսի, զոր յետոյ անարգեալ յանդիմանեաց. ոչ զալով ի Ճշմարտութիւն, այլ ի նմանէ զատուցեալ՝ այլ հերձունած յարդարեաց յինքենէ: Սակայն զպատմութիւնս ոչ ստեաց, զի էր այր կորովի բանիք. որ և առ Անտոնինոս համարձակեցաւ գրել թուղթ, և բազում ասցուածս արար ընդդէմ աղարդոյն մարկիոնացւոց և բաշխից ո կորց պաշտաման, որ ի մերում աշխարհիս:

Վասն զի եկն նա այսր, որպէս զի աշակերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացա. և իբրև ոչ ընկալեալ եղև՝ եմուտ նա յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելով իւր և որ ինչ առ իւրեաւն, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ և ապա անտի լեղաւ ի յոյն բան: Յորում պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բազնացն աւանի, որ ի Բազրւանդ գաւառի, բագին ի վերայ զերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցառոք վայելեսցեն, և ընդունիցին հիւրք երեկօթիք: Յորում և զկնի Վաղարշ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամին նորոյ, ի մուտն Նաւասարդի: Յայսմ պատմութենէ յարձանն Խոսրովու:

## ԿԷ

### **Եթէ որպէս Ազաթանգեղոս պատմեց համարօս:**

Որպէս ասացաք՝ ի Վաղարշայ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորին, հայր սրբոյ մեծին Տրդատայ: Յաղազ սորա և համատոհմիցն կարձ ի կարձոյ իմն անցանելով աջող քարտուղարն Տրդատայ Ազաթանգեղոս, թօքր ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ Պարսից թագաւորին, և զբառնալ տէրութեանն Պարթևաց յԱրտաշէ որդույ Սասանայ, և զնուածելն Պարսից ընդ ծեռամբ նորա, և զքինախնդիր լինել Խոսրովայ հօր Տրդատայ, և ասպատակաւ իհնից աւերել զաշխարհն Պարսից և Ասորեստանեայց: Յետ որոյ ասէ, թէ յղեաց Խոսրով յիւր բնիկ աշխարհն, ի կողմանս թուշանաց, զի իւր տոհայինքն ի թիկունս հասցեն, և արտաշրի ընդդէմ կացցեն: Այլ նոքա, ասէ, չինէինունկնդիր, զի հաւանեալք և միամտեալք էին ընդ տէրութիւնն Արտաշրի քան ընդ

տէրութիւն ազգատոհմին իւրեանց և Եղբայրութեանն, Ե Եթէ Խոսրով առանց նոցա Վրէժ պահանջէ. և զնովիմբ ածեալ ասէ, թէ ամս տասն ստէպ զայս օրինակ աւար առեալ զամենայներկիրն յապականութիւն դարձուցանէր: Ասէ ապա և զգալն Անակայ նենգութեամբ, հրապութեալ ի խոստունս Արտաշրի, որ ասացն Եթէ «զբուն պատուական զձեր սեպիական Պահլաւն, զայն անդրէն ի ձեզ դարձուցից, և զքեզ թագաւ փառաւորեցից»: Վասն որոյ յանձնաւեալ Անակայ՝ սպանանէ գլխուրով:

Արդ՝ թէպէտ և Ազաթանգեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս, բայց Ես հաւանեալ Եմ ձիգ և յերկար առնել զպատճութիւն ժամանակիս այսորիկ, Ճառելով ի սկզբանէն, և Ճշմարիտ ասացուածովք հոծ և խիտ:

ԿԸ

### **Զթագաւորական ազգացն, յորմէ ցեղը պարթեականը որոշեցան:**

ՅԱղամայ քսաներորդ առաջներորդ նահապէտ մեզ զԱբրահամ աստուածայինքն ցուցանեն պատճութիւնք, և ի նմանէ Եղեալ ազգոյ Պարթևաց: Քանզի ասէ, յետ մեռանելոյն Սառայի՝ առեալ Աբրահամու կին զՔետուրայ.յորմէ ծնան Եմրան և Եղբարք նորա, զորս Աբրահամ ի կենդանութեանն իւրում մեկնեաց յիսահակայ, արձակելով յերկիրն արևելից: Յորոց սերեալ ազգ Պարթևաց. և ի նոցանէ Արշակ քաջ, որ ապստամբեալ ի Սակեդոնացւոց թագաւորեաց յերկիրն քուշանաց ամս Երեսուն և մի. յետ նորա որդի նորին Արտաշէս ամս քսան և վեց. ապա Արշակ նորին որդի, որ կոչեցաւն մեծ, որ զԱնտիռոսն Եսպան և զՎաղարշակ զԵղբայր իւր թագաւոր կացոյց Հայոց, Երկրորդ իւր առնելով: Եւ ինքն չուեալ ի Բահլ՝ հաստատեաց զթագաւորութիւն իւր ամս յիսուն և յերիս. վասն որոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան, որպէս և Եղբօրն Վաղարշակայ ի նախնաւոյն անուն՝ Արշակունիք: Եւ Են թագաւորք պահաւիկք այսորիկ: Յետ Արշակայ մեծի առնուզթագաւորութիւն նորա Արշական, յերեքտասաներորդի ամի Վաղարշակայ թագաւորին Հայոց՝ ամս Երեսուն. ապա Արշամակ՝ ամս Երեսուն և մի, յետ որոյ Արշէզ ամս քսան. ապա Արշաւիր՝ ամս քառասուն և վեց: Սորա լինին որդիք Երեք և դուստր մի, որպէս յառաջազոյն ասացի. որոց անուանքն՝ անդրանկանն Արտաշէս կոչէր, Երկրորդին՝ Կարէն, Երրորդին՝ Սուրէն, և դուստրն անուանեալ Կոշմ:

Արդ՝ յետ հօրն վախճանելոյն, կամ Եղև Արտաշիսի ազգաւ ի վերայ Եղբարցն թագաւորել. զոր յանձն առեալ Եղբարցն, ոչ առաւել ողոքական բանիք և պատրողօք, քան թէ սաստիւ նուածեալ նորա: Եւ Արգարու պայման ուխտի և դաշինս ի միջի հաստատեալ-թագաւորել Արտաշիսի ծննդովք իւրովք. իսկ Եթէ հատցին զարմք նորա՝ Եղբարցն մատչել ի թագաւորութիւն ըստ կարգի աւագութեան: Եւ Արտաշիսի զայս ի նոցանէ գտեալ՝ գաւառս պարզեւ, ազգ զնոսա սերելով յանուն իւրաքանչիւի. և ի վերոյ քան զամենայն նախարարութիւնս կարգէ, զնախնականն ի վերայ պահելով զանուն ազգին, զի կոչեսցին այսպըս. Կարենի Պահլաւ, սուրենի Պահլաւ, և քոյրն՝ Ասպահապէտի Պահլաւ, քանզի ի վերայ զօրաց էր այր նորա: Եւ այսու կարգաւորութեամբս ձգեցան բազում ամս, մինչև վերացաւ ի նոցանէ տէրութիւնն:

Բայց մի աստանօր բամբասեսցն զմեզ իբրու զաւելագործ ոք, որպէս թէ զմի անզամ պատճեալսն դարձեալ ասացաք. այլ գիտեա, զի ախորժելով վասն ազգականաց մերոյ Լուսաւորչին քաջահմուտ կամեցեալ լինել ընթերցողացն՝ կրկնագրեցաք Երկրորդելով:

ԿԸ

### **Թէ զիարդ ցեղն Արտաշիսի Պարսից արքայի մինչեւ ցվախճան:**

Արդ՝ անցցուք այսուիետն ընդ թիւ թագաւորաց ցեղին Արտաշիսի՝ մինչև ցբառնալ ի նոցանէ տէրութեանն: Յետ Արշաւիր, որպէս ասացաք, թագաւորէ Արտաշէս ամս Երեսուն և չորս. Դարեհ ամս Երեսուն. Արշակ ամս ինն և տասն Արտաշէս ամս քսան. Պերոզ ամս Երեսուն և չորս. Վաղարշակ ամս յիսուն. Արտաւան ամս Երեսուն և մի: Զսա

սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի, որդուոյն Սասանայ, բառնալով զթագաւորութիւնն Պարթևաց, հանելով ի նոցանէ զաշխարհն ժառանգութեան: Բազում են ժամանակիս այսորիկ պատմողք օ Պարսից և յԱսորոց, այլ և ի Յունաց: Քանզի ի սկզբանէ թագաւորութեանն Պարթևաց մինչև ցողադրումն՝ ընդ Հռոմայեցւոց կալան գործ, երեմն հնազանդութեամբ և երեմն պատերազմաւ, զոր պատմէ Պաղեփատոս և Պորփիր և Փիլեմոն, և այլք բազումք: Բայց մեք ասացուք ի մատենէն, զոր եբեր Խոռոհբուտ, զԲարսումայի:

Հ

### **Եթէ զինչ առասպելք Պահլաւկաց:**

Այս Խոռոհբուտ դաիր եղեալ Շապիոյ թագաւորին Պարսից, և ի ձեռս Յունաց անկեալ, յորած Յուլիանոս, որ Պառաբատոսն, զօրու հանդերձ ի Տիգրոն չոգաւ, և ի մեռանելն նորա անդ, ընդ Յորիանու ի Յոյնս ընդ արքունական սպասաւորսն եկն. և մերոյ հաւատոյս դաւանեալ անուանեցաւ Եղիազար. և յոյն լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապիոյ և Յուլիանու: Ընդ նմին թարգմանեաց և զարաջնոցն պատմութիւնս, մատեան մի, որ զերեկից իւր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստահուն կոչեն. յորմէ մեր ուսեալ՝ երկրորդեմք այժմ ի գրիս յայսմիկ, թողլով զարասպելաց նոցա բարբազմուն: Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զարասպելսն յաղագս Երազոյն Փափագոյ, և արտադատութեան իրոյն մանուածոյ՝ որ ի Սասանայ, և պատումն զիօտիւն, և լուսնակն, և ախտարմողացն յառաջասացումն՝ որ են քաւեայք, և որ ինչ զկնի այսորիկ. և պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութեամբք, և անմիտ հանճարաբանութիւն մոգին դստեր վասն նոխազին, և որ ինչ այլն ամենայն: Նա և այծին դիեցումն մանկան ընդ հովանեաւ արծույն, և գուշակումն ագրաւուն, և զերապանծին պահպանութիւն առիտուն հանդերձ արբանեկութեամբ գայլուն. և միայնամարտութեանն առաքինութիւն, և որ ինչ այլաբանութեանն բերէ կարգ: Այլ մեք ասացուք միայն զստոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւն:

ՀԱ

### **Առաջին արշաւանք Խոսրովայ յԱսորեստան, յորում համարէր օգնել Արտաւանայ:**

Քանզի յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշրի որդուոյն Սասանայ, երկու ցեղք Պահլաւին, որ ասպահապետի և Սուրենի Պահլաւն հարազատութեն ազգին, որ է Արտաշսին՝ կամաւ յանձն հելով առ Եղբայրութիւն ազգականութենն տան Կարենի Պահլաւին՝ ընդդիմացան պատերազմաւ Արտաշրի որդուոյն Սասանայ: Բայց յառաջագոյն իբրև լուաւ զաղմուկ շփոթին թագաւորն Հայոց Խոսրով, զիմեաց յօգնականութիւն Արտաւանայ, եթէ հնար լիցի ածապարել ապրեցուցանել միայն զԱրտաւան. և միջամուխ եղեալ յԱսորեստան՝ լսէ զբօթ մահուանն Արտաւանայ, և զմիաբանութիւն ամենայն զօրաց Պարսից և նախարարաց, նա և զիւրոյ ազգին Պարթևաց և Պահլաւկաց, բայց ի ցեղէն Կարենեան. առ որ հետշտակս առաքեալ, դաշնայ յաշխարհս մեծաւ տրտմութեամբ և զկծանօք: Եւ նոյն հետայն փոյթ ընդ փոյթ ազդ առնէ Փիլիպպոսի կայսեր Հռովմայեցւոց, օգնականութիւն ի նմանէ խնդրելով:

ՀԲ

### **Խոսրովայ օգնականութիւն գտեալ ի Փիլիպպոսէ, դիմէ ի Վերայ Արտաշրի պատերազմաւ:**

Աղմուկ խռովութեան լեալ ի թագաւորութեանն Փիլիպպոսի՝ ոչ կարաց ի Հռովմայեցւոց գնդացն պարապեցուցանել, առ ի զօրավիզն լինել Խոսրովայ: Այլ օգնէ նմա ի ձեռն գրոյ, հրամայելով սատարել նմա յամենայն կողմանց: Որոց ընկալեալ զայսպիսի հրաման՝ հասանեն նմա յօգնականութիւն յԵզիպտոսէ և յանապատէն մինչև ի ծովեզերսն Պոնտոսի: Որոյն գտեալ զայսչափ բազմութիւն, խաղայ ի Վերայ Արտաշրի. և Ճակատ տուեալ՝ ի փախուստ դարձուցանէ, թափելով ի նմանէ զԱսորեստան և զայլ արքայանիստ աշխարհս:

Դարձեալ յηէ ի ձեռն հրեշտակաց առ իւր տոհմայինսն Պարքև և Պահլաւիկ ազգս, և առ ամենայն օրս աշխարհին Քուշանաց, զի առ նա Եկեալ վրէժ յԱրտաշրէ պահանջեսցեն, և զարժանաւորն ի նոցանէ թագաւորեսցուցէ, զի մի տէրութիւնն հեռացի յինքեանց: Իսկ նոցա ոչ առեալ յանձն, յառաջասացեալ ցեղիցն, որ Ասպահապետ և Սուրենեան անուանին՝ դաշնայ Խոսրով յաշխարհս մեր. ոչ այնչափ ուրախացեալ ընդ յաղթութիւնն, որչափ ընդ վերջակացութիւն ազգականացն դժգմեալ: Յայնժամ հասանեն առ նա ոմանք ի հրեշտակաց իւրոց, որք ի պատուականագոյն ազգն երթեալ էին. ի խորագոյն աշխարհն, ի նոյն ինքն ի ներքս ի Բահկ. բերին նմա համբաւ, եթէ «ազգական քո Վեհսածան, հանդերձ ցեղիւն իւրով Կարենեան Պահլաւին, ոչ հնազանդեաց Արտաշրի, այլ ի կոչ քո դիմեալ զայ առ քեզ»:

ՀԳ

### **Դարձեալ յարձակումն Խոսրովայ ի վերայ Արտաշրի, առանց Հռոմայեցւոց օգնականութեան:**

Թէպէտ և յոյժ զուարձացաւ Խոսրով ընդ լուր զալստեան ազգականացն, սակայն ոչ յամեաց ուրախութիւնն, ընդ հուա հասանելով բօթն, եթէ ինքնին Արտաշրի հանդերձ միաբանութեամբ զօրացն հետահաս Եղեալ՝ կոտորեաց զամենայն ցեղ Կարենեան Պահլաւին, ջնջելով զամենայն արու, յերիտասարդաց մինչև ցատընդիայս, բայց ի միոյ տղայոյ, զոր առեալ մտերիմ տան նորա, Բուրգ անուն, փախեալ յաշխարհն Քուշանաց, առ հզօրս ոմանս նորա հասուցանելով ազգայինս. զոր բազում ջանիւք խնդրեալ Արտաշրի զմանուկն ի ձեռն առնուլ՝ ոչ կարաց յազգականացն կուսակցելոյց. մինչև յոչ կամաց երդնուլ՝ անկասկած լինել մանկան. վասն որոյ բիւր առասպելս յօդեցին Պարսք զննանէ, –անբանիցսապասաւորել մանկան: Սա է Պերոզամատն, նախնի մեծի ազգին Կամսարականաց, զոր յիւրում տեղւոջն պատմեսցուք:

Այլ մեք այժմ որ ինչ զկնի կոտորածի ազգին Կարենեան Պահլաւին, զորոյ զվրէժն ոչ թուլագոյնս ինչ խնդրեաց թագաւորն Հայոց Խոսրով: Թէպէտ վախճանեալ Փիլիպոսի և շփոթեալ թագաւորութիւնն Հռոմայեցւոց, մարդ ի մարդոյ առնելով զտրութիւնն սակաւ ժամանակեայ, դեկիս և Գալլոս և Վաղերիանոս կայսերք, որք ոչ օգնեցին նմա, սակայն Խոսրով զօրօք իւրովք և այլովք սիրելեօք յարեցեալովք յինքն և հիւսիսային ազգօք Արտաշրի յաղթեաց, հալածական առնելով մինչև յաշխարհն ընդկաց:

ՀԴ

### **Յաղագս զալստեանն Ահակայ եւ լինելութեան սրբոյն Գրիգորի:**

Արդ՝ փախուցեալ ի Խոսրովայ Արտաշրի մինչև ի յաշխարհն Հնովկաց և նեղեալ յոյժ բազում խոստմունս նախարարացն առնէր, թէ ոք բուժեսցէ յայնմանէ, եթէ հնարիւք դեղոց և եթէ գաղտի խողխողմամբ սրոյ. պէս պէս պարզէն տալ խոստանայր. «Մանաւանդ Պարթևազանցդ, ասէ, դիւրահնալր գոզցես ի ձեռն կեղծաւոր սիրոյ զդաւելն. ազգականութեան անուամբ պատրել՝ ի դոսա վստահանայ»: Խոստանայր զբուն տունն դարձուցանել ի նոսա, որ Պահլաւն կոչէր, զարքայանիստ քաղաքն Բահկ, և զամենայն աշխարհն Քուշանաց: Նա և թագաւորութեան ծև և շուր խոստանայր, և զիասակ Արեաց, ընդ իւրով ձեռամբ երկրորդ իւր լինել: Յոր հրապութեալ Անակ, որ էր ի ցեղէն Սուրենեան Պահլաւէ՝ յանձն առնու սպանանել զխոսրով: Եւ հատուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշրէ. և զիետ մտանելով զօրացն Պարսից առ պատճառէ, որպէս թէ փախստական վարելով զնա ընդ Ասորեստան՝ հանեն առ Եգերբ սահմանացն Ասորպատականի ընդ մէջկորդուած: Զոր լուեալ մեծին Խոսրովայ յՈւտէացւոց գաւառին, իբր զկարենեանց կարծեալ Եկաւորութիւն՝ գունդ առաքէ յօնականութիւն Անակայ: Որոց պատահեալ Անակայ՝ ածեն զնա հրամանաւ թագաւորին ի գաւառն, որ անուանեալ կոչի Արտազ, ի տեղի դաշտավայրս, ուր յայտնեցան նշխարք սրբոյ և մեծի առաքելոյն մերոյ թադէի:

Եւ աստ ասեմ զրոյն զպանչելի ծերոյն որ ասէն, եթէ «ի նախնեաց ունիմ սովորութիւն, որդի ի հօրէ առնելով զիշատակ զբուցաց այսոցիկ», որպէս Ոլիմափողորայ յաղագս: Տարօնոյ և Սիմն կոչեցեալ լերինն: Արդ ի բնակելն Անակայ ի դաշտին Արտազու՝ պատահ ննա տեղի օքարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն, որպէս թէ ի ներքսագոյն սրսկապանի խորանին. և անդ ասեն զյուրիթիւն մօր սրբոյ և մեծի մերոյ Լուսաւորչին: Վասն որոյ և զնորին Առաքելոյն շնորհսն ընկալեալ որ առ հանգստարանաւ նորին զինելութիւն էաւ՝ զնորին ելից զիոգնոր մշակութեանն պակասութիւն:

Եւ յետ անցեանելոյ երկուց ամաց զալստեանն Անկայ ի Հայս՝ յերրորդումն սպանանէ գլուխորով, որ թագաւորեաց ամս քառասուն և ութ: Եւ մեռանի ինքն և իւրին ամենայն, պահելով խնամոցն Աստուծոյ զսա միայն, որ ակնարկութեամբն Աստուծոյ և շնորհօք Առաքելոյն ստեղծանել կամ լուսաւորել ասենք յարգանդի մօրն, զառաքելութեան իւրոյ զշնորհս ի ձեռն տալով նմա: Իսկ զմնացեալսն ի զրուցաց ուսուցանէ քեզ Ազարանգեղոս:

## ՀԵ

### **Յաղագս Փերմելիանայ Եպիսկոպոսի Կեսրու Կապադովկացւոց եւ պատմութեան նորին:**

Փերմելիանոս Եպիսկոպոս Կեսրու Կապադովկացւոց էր այր սքանչելի յուսումնասիրութեան, որ և ի տղայութեան իւրում առ Որոգինէս երթեալ վարժեցաւ: Սա բազում խօսս արար, յորոց մի է պատմութիւն հալածանաց եկեղեցւոյն, որ յառաջ յաւուրս Մաքսիմիանոսի և Դեկոսի յարեաւ և որ հուսկ յետոյ յամն Դիոկլետիանոսի, շարայրեալ ի նա և զգործս թագաւորացն: Յորում ասէ՝ վեշտասաներորդ Եպիսկոպոս կացեալ Աղեքսանդրացւոց Պետրոս, վկայեալ յիններոոդի ամի հալածանացն: Գրէ զբազումս վկայեալս և ի Խոսրովայ, ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օստարք յօտարաց: Բայց զի ոչ ծշմարտութեամբ և ոճով պատմէ, և ոչ զանունանսն նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել: Նոյնակու և զԱնտոնինէ որդույն Սլերեայ ասէ՝ պատերազմեալ ընդ Վաղարշայ Պարսից արքայի ի Միջազետս, և մեռանել ի մէջ Եղեսիայի և Խառանու, և մերոյն Խոսրովու ոչ յոք հակամիտեալ:

Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովայ մինչև զթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ՝ ստոյգ համարելով երկրորդեմք քեզ համառօտ բանիք: Բայց և որ ինչ ի թագաւորութեանն Տրդատայ և յետ նորա, ոչ հեղգութեամբ և անզգուշաբար վրիպեալ, և ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մատենիցն Յունաց: Իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ, արդարաբար քեզ զրուցեցաք:

## ՀԶ

### **Ղմումն ի մեզ Արտաշրի, եւ յաղթել կայսեր Տակիստոսի:**

Նոյն այր ասէ, եթէ յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու, միաբանեալ նախարարք Հայոց՝ ածեն իւրեանց յօգնականութիւն զզօրս, յունաց որ ի Փօթիգայ՝ Պարսից ընդդիմանալ և պահել զաշխարհս: Եւ իսկոյն ազգեցին Վաղերիանոսի կայսեր: Բայց վասն զի Գումիք անցեալ ընդ Դանուր գետ զբազում զաւառս գերի վարեցին, և զԿիւկուայ կղզիս աւար առին՝ վասն որոյ ոչ ժամանէ մերայ աշխարհիս թեարկել Վաղերիանոս. նա և ոչ յերկարէ զկեանսն, առնելով ի ննանէ զթագաւորութիւնն Կղաւիիս, և յետ նորա Աւելիանոս, հուա ընդ հուա փոխանորդելով զմիմեանս. այլ և ամսականօք թագաւորեալ Կիւնտոս և Տակիստոս և Փղոթիանոս Եղբարք: Վասն որոյ համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ գերելով զյուրով մասն աշխարհիս՝ յաւեր դարձուցանէ: Յորմէ գաղթեալ նախարարքն

Հայոց, իհանդերձ ազգաւն Արշակունեաց ի յոյնս ապաւինէին. յորոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովով՝ ի դուռ կայսեր հասուցանէր: Վասն որոյ հարկաւորեալ Տակիտոս՝ ընդդէմ Արտաշրի գայ զկողմանք Պոնտոսի, և զեղբայր իւր զՓղորիանոս այլով զնդաւ ընդ Կիլիկիայ արձակէ: Իսկ Արտաշրի հասեալ ի Տակիտոս՝ ի փախուստ դարձուցանէ, որ և սպանաւ ի յիւրոցն ի Ճանիւս Պոնտացւոց, որ են Խաղտիք. նոյնպէս և եղբայր նորա Փղորիանոս յետ ութսուն և ութ աւուր ի Տարսոն:

#### ՀԵ

### **Յաղագս Խաղաղութեան Պարսից եւ Յունաց, եւ շինելոյ Արտաշրի զՀայսյամս անիշխանութեանն:**

Բայց Յունաց թագաւորեաց Պոնտոս, և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս, սահմանադրութեամբ փոսս գործելով: Եւ Արտաշրի նուաճեալ զազգ նախարարացն՝ զգաղաթեալսն անդրէն դարձուցանէ, և զամբականսն ի վայր իջուցանէ, բայց ի նախարարէ ումեմնէ, որոյ անուն Օսոյ կոչէր, ի տոհմէն Ամատունեաց, որ փեսայ էր ազգին Սղկունեաց և սնուցող Խոսրովիդիստոյ, դստեր Խոսրովայ, որջացեալ յամուրն Անի՝ իբր ի կաղաղի հանդարտութեան դօղեալ:

Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց ի կարգ առաջին հաստատէր: Նա և զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ռոճկօք, որպէս և էինն: Եւ զմեհենիցն պաշտամունս առաւելս յորդորէ. այլ և զիուրն որմզդական, որ ի վերայ բազմին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնի յԱրմաւիր, և փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշրի: Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով անկարէ, և ամենսիմբ զիւր անունն հաստատէ:

Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրիկացուցանելով, նորոգեաց, ո յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց: Եւ կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, պարսիկ գործակալօք, ամս քսան և վեց. և յետ նորա որդի նորին, որ անուանեցաւն Շապուհ, որ լսի Արքայամանուկ ցրագաւորելն Տրդատայ, ամ մի:

#### ՀԸ

### **Կոտորումն ազգին Մանդակունեաց:**

Բայց Արտաշրի լուեալ էր, թէ ոմն ի նախարարացն Հայոց առեալ զմի յորդուցն Խոսրովայ, փախուցեալ ապրեցոյց, ի դուռն կայսեր հասուցանելով: Եւ քննեալ թէ ով ոք նա ից՝ եղև Վերահասու, թէ նա է Արտաւազդ յազգէն մանդակունեաց. հրամայեաց զամենայն ազգն ջնջել սատակմանբ: Քանզի ի գաղթելն հայոց յԱրտաշրէ՝ գաղթին և նոքա ընդ ցեղս այլոց նախարարացն. և ի նուաճելն Արտաշրի զայլս՝ դաւնան և նոքա, և սատակին սրով ամենեթին: Բայց զկոյս գեղեցկադիմակ, ի քերցն Արտաւազդայ, գողացեալ Տաճատայ ուրումն, որ էր յազգէն Աշոցան, ի զաւակէ Գուշարայ հայկազնոյ, փախուցեալ ի Կեսարացւոց քաղաքն ապրեցուցանէր, ամուսնաւորեալ ընդ ինքեան վասն անաղագեղ կերպարանին:

#### ՀԹ

### **Յաղագս նահատակութեանն Տրդատայ յամս անիշխանութեանն Հայոց:**

Պատմէ զնահատակութեանցն տրդատայ, նախ ի մանկութեանն յերիվար կամակար աշտանակեալ, կորովի ծիավարեալ, և զէնս շարժեալ յաջողակաբար, և այլ պատերազմականս ուսանել ախորժակս. ապա քստ Պեղոպոնէսացւոց մեհենական հրամանին Հիփիտեայ ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿողիտոստրադոս հռոդացի, որ զվգէ նեթ կալեալ յաղթէր. դարձեալ և քան զԿերասոս արգիացի, զի նա զկճղակ եզին թափեաց. իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց. միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ զախչախմանբ: Եւ ի ծիընթացս մեծի կրկիսին

կառավարել կամեցեալ՝ ի հմտութենէ հակառակորդին ոստուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառսն. ընդ որ ամենեքին զարմացն: Եւ ի պատերազմելն Պրոբոսայ ընդ Գութս, եղև սով սաստիկ. և յոչ գտանելոյ շտեմարանաց՝ յարեան զօրքն ի վերայ և սպանին զնա. նոյնպէս և ի վերայ ամենայն իշխանացն դիմեցին: Իսկ Տրդատ միայն ընդդէմ կացեալ՝ չեթով զոք մտանել յապարանսն Լիկիանոսի, առ որում ինքն Տրդատ էր:

Բայց Կարոս հանդերձ որդուվքն Կարինեաւ և Նոմերիանոսի թագաւորեաց. և զօրաժողով եղեալ, ետ ճակատ ընդ Պարսից արքային, և յաղթեալ՝ դարձաւ ի Հռոմ: Վասն որոյ բազում ազգս ի սատարութիւն կալեալ Արտաշրի, թիկունս արարեալ զանապատն Տաճկաստանի՝ դարձեալ ետ ճակատ ընդ զօրս Հռոմայեցւոց կրկին, աստի և անտի Եփրատու, յորմէ սպանաւ Կարոս ի Յահնովն: Նոյնպէս և Կարինոս, որ ի վերայ Կոռնակայ չոզաւ յանապատ, ըդն որում Տրդատ. ևստակեցաւ նա և զօրն, և մնացեալքն ի փախուստ դարձան: Յորում և Տրդատայ վիրաւորեալ Երիվարն՝ ոչ աճապարեաց փախստեայսն, այլ առեալ զզէն իւր և զկազմած ձիեյն՝ ի ընդ լայնատարած և խորայատակն անցանէր ընդ Եփրատ ի բուն զօրսն իւրեանց, ուր Լիկիանոսն էր: Ընդ նոյն աւուրս լինի սպանեալ և Նոմերիանոս ի Թրակէ, և փոխանորդէ զթագաւորութիւնն Դիկողետիանոս: Իսկ որ ինչ ի նորա ժամանակի Տրդատայ գործք ուսուցանէ քեզ Ազարանգեղոս:

## 2

**Յայտարարութիւն սակաւուք սմնդեան եւ վարուց Գրիգորի եւ որդուցն, և թղթոյն Արտիթեայ Եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնակեցի ի Յագրոձանի:**

Այր ոմն ի Պարսից, ոչ ի փոքրունց և յաննշանից, որում անուն էր Բուրդար, զնացեալ անտի և Եկեալ ի կողմանս Գամրաց՝ պանիշդիստեցաւ ի Կեսարիայ: Եւ առեալ կին ի հաւատացելոց, որում անուն Սոփի կոչէր, զքոյր ուրումն մեծատան, որ Եւթաղիոս յորջորջէր, դարձաւ անդրէն գնալ յերկիրն Պարսից հանդերձ կնաւ իւրով, զորոյ զիետ մտեալ Եւթաղեայ՝ հանոգեալ արգելոյր: Որոյ հանդիպեալ ծնընդեան մերոյ Լուսաւորչին՝ ըստ պատահման մտանէ ստրնտու մանկան. և ի հասանել աղետին՝ առեալ Եւթաղեայ զքոյր իւր և զայր նորա հանդերձ մանկամբն ի Կապադովկացւոց աշխարհն դառնայր: Այլ զայս ամենայն գործէ յառաջատեսութիւնն Աստուծոյ, որպէս կամք են ինոյս ասել բանի, յաղազս որ ի մեզ փրկութեան ձանապարհ: Ապա թէ ոչ, որո՞ւմ յուսոյ ակն ունելու զմանուկն պահալաւիկ ի Հռոմայեցւոց իշխանութեանն սնուցանէին, և Քրիստոսի ընծայէին հաւատոց:

Բայց յարբունս հասակի հասեալ մանկան՝ փեսայացուցանէ հաւատացեալ ոմն այր, որում անուն էր Շաւիթ, ի դուստ իւր մարիամ. որ յետ երկուց որդուց լինելոյ, ի կամաց Երկոցունց մեկնեալ ի միմեանց զատիչն: Մարիամ հանդերձ մանկամբն կրտսերաւ ի վասն կանանց երթեալ կրօաւորէր. որոյ յարբունս հասեալ մանկան, զիետ ընթանայ միայնաւորի ուրումն, որում անուն էր Նիկոնաքոս: Իսկ անդրանիկն առ դայեկաց մնացեալ որ ապա աշխարհավարեալ ամուսնացաւ: Բայց հայր նոյն Գրիգորիանցեալ գնաց առ Տրդատ՝ զիայրենեացն հատուցանել պարտիս, կամ որպէս պարտ է ասել ճշմարտութեամբ՝ զառաքելութեանն վիճակ մերոյ աշխարհիս և զթահանայապետութեանն հանդերձ մարտիրոսութեամբն վարժելով:

Բայց արդարն հօր սքանչելոյ որդիք զարմանալիք առաւել քան զառաւել. զի ոչ նա խնդրեաց զորդիսն՝ յորած դարձաւ ընդ Տրդատայ, և ոչ նոքա չոզան առ նա. և այն գրետ թէ վասն Երկիւլի հալածանացն. բայց և ոչ ի քահանայանալն և ի փառաւորել հօրն Երևեալ պերձացան նոքա: Վասն որոյ և ոչ նա յամեաց ի Կեսարիայ, այլ փութապէս դարձեալ՝ ի Սերաստացւոց քաղաքի անսայր հաւաքել զնիւթ Վարդապետութեանն: Այլ թէ և բազում աւուրս արարեալ ի Կեսարիայ՝ ոչ ինչ, գորոց զմտաւն ածէր՝ առնելոց էին,

անսպառին և անանցականին միայն սկելով. որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին. այլ պատիւն գիետ նոցա ընթացաւ, որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս:

ՉՍ

### **Եթէ ուստի եւ զիարդ ազգ Մամիկոնէից:**

Վախչանեալ Արտաշրի որդույ Սասանայ՝ թողու զթագաւորութիւնն Պարսից որդույ իւրում Շապիոյ: Ի սորա աւուրս ասեն Եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ և ի զիխաւոր աշխարհէ և ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զՃենացն. որ ունին զբոյցս այսպիսիս:

Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն Ճեն–քակուր, որպատէս ասի ի նոցա լեզու պատիւ թագաւորութեան. սորա Երկու դայեկորոդիք, Բգրտիս Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Չոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ զայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշրի թագաւորն Պարսից: Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. և ի չսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ճենաց: Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուի:

ԱՐԴ՝ թէպէտ և ոչ տայ Շապուի զՄամգոնն ի ճեռս տեառն իւրոյ, այլ և ոչ յԱրեաց Երկրին թողու. բայց ամենայն աղխիւն իւրով առաքէ զնա իբրև զվտարանդի առ գործակալս իւր որ ի Հայս: Եւ յդէ առ թագաւորն Ճենաց՝ ասելով, թէ «Մի թուեսցի քեզ դժուար, զի ի ճեռս քո ոչ կարացի տալ զՄամգոն. վասն զի Երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյսն արեգական. այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի նմա մահու. և արդ մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ»: Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ Երեսաց Երկրի խաղաղասէր ասեն զոյ զազգն Ճենաց՝ յանձն առնու առնել զհաշտութիւն ուստի յայտ իսկ է, եթէ են արդարև խաղաղասէր և կենասէր ազգն Ճենաց:

Սքանչելի է և աշխարհ առատութեամբ ամենայն պտղոց, և գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքնաւէտ և սիրամարգաշատ և բազմամետաքս, անքաւութիւն յամուց և հրեշից, և որ էշայծեմունսդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զար մեզ պատուական և սակաւուց ճաշակելիս՝ զփասեան և զպոր, և այլք այսպիսիք: Այլ զականց և զմարգարտաց ոչ ասեն զիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ: Եւ այս յաղազս աշխարհին Ճենաց:

Իսկ Մամգոնայ յոչ կամաց Եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ զալստեանն տրդատայ. և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղխիւն իւրով ընդ առաջ զնաց նմա մեծաւ պատարագաւ. և Տրդատընկալաւ զնա, բայց ընդ իւր ի պատերազմ ոչ էաւ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղխի նորա և ռոճիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղուցէ ցրովանդակ ամս:

ՉԲ

### **Նահատակութիւնք Տրդատայ ի թագաւորութեանն յառաջ քան զիաւատալ:**

Քանզի ոչ է պատմութիւնճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրախուզի քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրոդ ամի Դիոկետիանոսի, և զալ այսր հանդերձ մեծաւ զօրու: Որոյ հասեալ ի Կեսարիայի՝ յոլովք ի նախարարացն ընդ առաջ լինէին: Եւ Եկեալ յաշխարհ՝ գտանէ զՕտայ սնուցեալ զքոյր իւր զիսորովիդուստ, և պահեալ զգանձսն ամրոցաւն հանդերձ յոյժ Երկայնմտութեամբ. քանզի էր արդարև համբերող, ժուժկալ և առաւել իմաստուն. զի թէպէտ և ոչ ծանեաւ զծնարտութիւնն յաղազս Աստուծոյ, սակայն զստութիւն կրնոց զիտաց: նոյնպէս էր սան նորա Խոսրովիդուստ, կուսն համեստ որպէս զօրինաւոր ոք, և ոչ ամենսին ունել անդուռն բորան, նման այլոց կանանց:

Իսկ Տրդատ ի հազարապետութիւն Հայոց զՕտայն կացուցանէ և շնորհակալութեամբ պատուէ զն, և առաւել ևս զիւր դայեկորոդին, զՄամդակունին

Արտաւագդ, վասն լինելոյն նմա պատճառ փրկութեան և հայրենականացն հասելոց փառաց. յաղագս որոյ ի ձեռս տայ նմա զսպարապետութիւն զօրացն Հայոց: Նորին աղագաւ ի գՏաճատ քեռայր նորին իշխան ի վերայ գաւառին Աշոցաց կարգէ: Սա էր որ յապայսն զգացոյց աներոյն իւրոյ Արտաւագդայ, և նա արքայի, նախ գԳրիգոր Անակայ լինել որդի, և ապա զկնի՝ վասն որդուցն Գրիգորի, որպէս հմուտ Եղեալ, ի Կեսարացւոց քաղաքին բնակելով:

Իսկ քաջին տրդատայ Երագապէս բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս և ապա ի Պարսս՝ իւրով անծամբ առնէր զյաղթութիւնն: Որ ի միում նուագի, առաւել քան զԵղիանանն զայն ի հնումն, կանգնաց զնիզակն յոզնական համաթիւ վիրաւորաց: Դարձեալ յերկրորդումն՝ կորովեաց Պարսից զփորձ առեալ զսպասկութեան սկային և կուռ վառուածոցն, բազում վիրօք պատեալ զձին՝ սատակեցին նետաձգութեամբք. որոյ զարկուցեալ յերկիր ընկենոյր զարքայն: Իսկ նորա յարուցեալ և հետի յարձակեալ, փոխանակ իւր զբազումս ընկենոյր ի թշնամեացն, և զմիոյ ուրումն զձին կալեալ, արիաբար աշտանակէր: Դարձեալ յերկրորդին միւսանգամ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զերանակս փղացն պուղէր: Եւ այսպիսի նահատակութեամբք յամեալ ի Պարսս և յԱսորեստան՝ անդր ևս քան զՏիգրոն յարձակի:

24

### **Յաղագս առնելոյ կին Տրդատայ զԱշխէն, եւ Կոստանդնի զՄաքսիմինայ, եւ թէ որպէս հանդիպեցաւ հաւատոց:**

Եկեալ Տրդատայ յաշխարհս՝ առաքէ զՄբրատ ասպետ, զիայր Բագրատայ՝ ածել զկոյսն Աշխէն, զդուստրն Աշխադարայ, իւր ի կնութիւն. որ ինչ նուազ էր կոյսն արքային հասակի: Եւ իրանայէ գրել զնա արշակունին և զգեցուցանել ծիրանիս և թագ կապէլ, զի հարսնացի արքայի: Յորմէ եղև որդի Խոսրով, ոչ համեմատ հասակի ծնողաց իւրոց:

Ընդ նոյն աւուրս լինին հարսանիք և Մաքսիմինայ դստերն Դիոկետիանոսի ի Նիկոմիդայ, փեսայանալով նմա Կոստանդիանոսի կեսարի որդուոյն Կոստայ թագաւորին Հռոմայ, որ ոչ էր ի դստերէն Մաքսիմիանոսի, այլ Հեղենայ պոռնկէ շնեալ: Այս Կոստանդիանոս բարեկամացեալ ի հարսանիստ ընդ Տրդատայ մեր թագաւորի: Եւ յետ ոչ բազում ամաց մեռեալ Կոստանդ փոխանորդ նմա առաքէ Դիոկետիանոս զնորին որդի և զիւր որդիացեալն Կոստանդիանոս:

Սա յառաջ քան զբազաւորելն, մինչ դեռ կեսար էր, պարտեալ ի մարտն, և տրտմութեամբ մեծաւ ննջեալ՝ Երևութացաւ նմա ի քուն խաչ աստեղեայ յերկնից, պարունակեալ գրով, ասէ. «Այսու յաղթեա». զոր արարեալ սիրանոյն և յառաջաբերեալ՝ յաղաթեաց պատերազմացն: Բայց յետոյ իրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմինայ, ի դստերէն Դիոկետիանոսի, յարոյց հալածանս Եկեղեցւոյ. և զբազումս վկայեալ՝ ինքն Եղեփանդական բորսուութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ վասն յանդգնութեամն: Զոր ոչ կարացին բուժել արհորդական կախարդքն և մարսիկեան բժշկքն, յաղագս որոյ յղեաց առ Տրդատ՝ առքել նմա դիւթս ի Պարսից և ի Հնդկաց. սակայն և այնք ոչ հասին նմա յօգուտ: Զոր և քուրմք ոմանք ի դիւթս խրատուէ հրամայեցին բազմութիւն տղայոց զենուլ յաւազանս և ջերմ արեամբ լուանալ և ողջանալ: Որոյ լուեալ զլալիւն մանկանցն, հանդերձ մարցն կականմանբք, զբացեալ մարդասիրեաց, զնոցայն լաւ Վարկուցեալ քան զիւրն փրկութիւն: Յաղագս որոյն զփոխարէնն յԱստուածոյ ընդունի, յանրջական տեսութիւն յԱռաքելոցն առեալ հրաման՝ սրբի լուացմանբ կենսատու աւազանին ի ձեռն Սեղբեստրոսի Եպիսկոպոսի Հռոմայ, որ ի նմանէ հալածանացն էր ի Սերպտիոն լերին. յորմէ և աշակերտեալ հաւատաց. զբնաւորսն ամենայն բառանալով Աստուածոյ յերեսաց նորա, որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ազարանգեղոս:

27

### **Սատակումն Ակունեաց ի Ճենազնոյն Մամգոնայ:**

Ընդ հանգչելն Շապիոյ արքայի Պարսից ի պատերազմացն, և ի գնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս, պարապ առեալ խորհրդոց Շապիոյ՝ նիւթէ չարիս ի վերայ մերոյ աշխարհիս. թովեալ զիհսիսայինսն ամենայն, ելանել ի Հայոց՝ –ամ դնէ և իր գալ Արեօք ի միւս կողմնէն: Ի նորին բանս հրապուրեալ Սղուկ նահապետ ազգին Սլկունեաց, զինքեանն սպանանէ զիեսայ, զժերացեալն Օտայ, որ էր ի տոհմէն Ամատունեաց և սնուցող Խոսրովիդատոյ քեր թագաւորին: Եւ այն ինչ ընդ հուպ եկեալ մեծին Տրդատայ յարևմտից և լուեալ գայս ամենայն, և գիտացեալ, թէ ոչ ի ժամադրութիւնն եկն Շապուհ՝ խաղայ ի վերայ հիւսիսականացն: Իսկ նահապետ ազգին Սլկունեաց ամրանայր յամրոցին, որ անուանեալ կոչի Ողական, ապաւէն առնելով իւրեանց գբնակիս Սիմն կոչեցեալ լերինն.և ընդդիմացեալ թագաւորիմ՝ աղմկէր զերկիրն, և մերփ առ լերամբն ոչ թողացուցանէր այլուր պարապել գործոյ: Ասէ ցամենայն նախարարութիւնս տասն Հայոց արքայ. «Որ ոք ածցէ առ իս զնահապետն ազգին Սլկունեաց՝ տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեուս և գրաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց»: Չոր յանձն առնոյր ճենազնեայն Մամգոն:

Եւ ի խաղալ թագաւորին զկողմամբք Սղուանից ի վերայ հիւսիսականացն՝ գնաց Մամգոն ամենայն աղխիւն իւրով զկողմամբք Տարօնոյ, որպէս թէ ապստամբեալ ի թագաւորէն. և ի չու անկեալ, առաքէ զաղտագնաց հետևակս, զարգուցանելով նահապետի ազգին Սլկունեաց զգնալն թագաւորին զկոմամբք Սղուանից. «Վտանգ մեծ է, ասէ, թագաւորին Տրդատայ, վասն որոյ գնաց զկոմամբք Սղուանից պատերազմել ընդ ամենայն լեռնոտնեայսն. վասն որոյ մեր է ժամանակ ի Ճահ խորհել և գործել որ ինչ կամք են. զի խորհեալ եմ դաշնաւոր լինել ընդ քեզ՝ վասն արհամարհանաց իմոց որ ի թագաւորէն»: Ընդ որ յոյժ ուրախացեալ նահապետ ազգին Սլկունեաց՝ ընդունի զնա երդմանք ուխտից. բայց յամուրն ոչ թողու, մինչև տեսանել, թէ ուսպէս պահիցէ զմտերմութիւն երդմանցն և դաշնաւորութեանց: Իսկ ասացեալն Մամգոն ամենայնի ջանացեալ զմտերմութիւն ցուցանել առ ապստամբն՝ հաւատարմացաւ նմա որպէս արդարէ միամիտ գործակից. մինչև հրամայեաց նմա համարձակ մտանել յամուրն և ելանել:

Եւ յետ բազում վստահութեանն, ի միում աւուրց հաւանեցուցանէ զնահապետ ազգին Սլկունեաց ելանել արտաքս յամրոցէն և որսալ երէս. և ի միջամուս լինել որսոցն՝ ոհաբեցուցանէ աղեղամբն ընդ մէջ թիկանցն, և կործան յերկիր զարկուցանէ զապստամբն: Եւ ընթացեալ իւրովք արամբքն ի դուռն ամրոցին՝ ունի զբերդն, կապելով զամնեայն արս որ ի ներքս: Նա և զազգն Սլկունեաց խորհեցաւ բառնալ, և կոտորչեաց զամնեսեան. երկուք ունանք փախստական անկան յաշխարհն Ծոփաց: Իսկ Մամգոն վաղվաղակի զգացուցանէ թագաւորին. ընդ որ ուրախացեալ Տրդատայ, գրէ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի զոր խոստացաւան, և կարգէ զնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգոնեան: Բայց մնացելոցն Սլկունեաց հրամայէ չվնասել:

## ԶԵ

### **Նահատակութիւնք սրդատայ ի պատերազմին յԱղուանս, յորում միջակտուր արար զբագաւորն Բալաց:**

Իսկ թագաւորն Տրդատայ ամենայն Հայաստանօք իշեալ ի դաշտն Գարգարացոց՝ պատահէ հիւսիսականացն ձակատու պատերազմի. և ի խառնել երկոցունց կողմանցն՝ յերկուս ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայաբար շահատակելով: Ոչ կարեն ասել զերագութիւն ծեռինն, որպէս անբաւք ի նմանէ յերկիր անկեալ թաւալագլոր խաղային, օրինակ իմն ի գեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր թօթափեալ ցանցոյն, կայտուէին յերեսս երկրին: Չոր տեսեալ թագաւորին Բալաց՝ մօտ հասանէ յարքայն. և հանեալ յասպագինէն զներսեայ քեմխտապատ պարանն, և կորովութեամբ ձգեալ յետուստ կողմանէ՝ Ճահ դիաբեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ

աջակողմանն. զի էր վերացուցեալ զձեռնն ածել ումեք սուսերաւ. և ինքն վարեալ վերտ պահապանակօք, ուր ոչ գծէին նետք: Եւ քանզի ոչ կարաց շարժեալ ձեռամբ գիսկայն՝ զլանջօք առ երիվարին. և ոչ այնչափ ինչ շութափեաց մտրակել զերիվարն, քան թէ ահեակ ձեռամբն ի ներդեայն աճապարեալ սկային, և սաստկութեամբ ուժոյն գիրեաւ ցանցեալ՝ ի ճահ դիմեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտրէր զայրն և զոյգ ընդ պարանոցին զգլուխ երիվարարին:

Իսկ զօրացն ամենայնի տեսեալ գթագաւորն իւրեանց և զգօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դաշնային. զորոց զիետ մտեալ Տրդատայ, վարէ մինչև յաշխարին Հոնաց: Եւ թէպէտ ոչ փոքր հարուած եհաս զօրացն, և բազմաց անկումն մեծամեծաց, յորում մեռաւ և սպարապետն ամենայն Հայոց Արտաւազդ Մանդակունի, սակայն Տրդատ անտի ըստ հայրենի օրինին պատանդս առեալ դաշնայ: Որով պատճառաւ միաբանեալ զամենայն իհիսիս, հանեալ զօր բազում, գումարտակ արարեալ՝ խաղայ յաշխարին Պարսից, ի վերայ Շապիոյ որդույ Արտաշրի, չորս յիւրոցն առնելով զօրավարս, զՄիհրան առաջնորդ Վրաց, Վստահացեալ վասն ի Քրիստոսի հաւատոցն, և զԲագարատ ասպետ և զՄանաչիր նահապետ Ռշտունեաց և զՎահան նահապետ Ամատունեաց: Բայց յաղաս հաւատոցն Միհրանայ և աշխարիին Վրաց ասել կայ մեզ առաջի:

## 22

### **Յաղաս Նունէի Երանելոյն, եթէ որպէս պատճառաք փրկութեան Վրաց:**

Կին ոմն, անուն Նունէ, յընկերաց սրբոց Հօփսիմեանց ի ցրուելոցն, փախստեամբ հասեալ յաշխարին Վրաց ի Մծխիթայ, ի նոցա քաղաքն նախազահ, յոյժ ձգնութեամբ ստացեալ շնորհս բժշկութեան, որով և զբազում ախտամետս բժշկեալ, և զլխովին զկին Միհրանայ առաջնորդին Վրաց: Վասն որոյ հարցեալ զնա Միհրանայ, եթէ որով զօրութեամբ առնես զայս սքանչելիս՝ ուսաւ զքարոզութիւն Աւետարանին Քրիստոսի. և ախորժելով լուեալ՝ պատմեաց իւրոց նախարարացն հանդերձ գովեստի: Եւ իսկոյն եհաս նա լուր սքանչելեացն, որ եղեն ի Հայս ի թագաւորն և ի նախարարսն, զընկերացն երանելոյն Նունեայ. ընդ որ հիացեալ՝ զրուցեաց երանելոյն Նունեայ, յորմէ և ստուգագոյնս ևս տեղեկացաւ զամենայն ոձով:

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ելանել Միհրանայ յորս. մոլորեցաւ ի դժուարս լերանց խաւարեալ օդով, այլ ոչ տեսանելեօք, ըստ այնմ՝ եթէ կոչէ զմէգ բարբառով, և դարձեալ՝ թէ զտիւ ի գիշեր մթացուցանէ: Այսպիսեալ Միհրան ընթանեալ խաւարաւ, որ եղև նմա առիթ մծտնշենաւոր լուսոյն. քանզի զարհութեալ, յիշեաց զոր լուաւն վասն Տրդատայ, եթէ ի Ճանապարհ ելեալ, կամելով յորս զնալ՝ հասին նմա հարուածք ի Տեառնէ. զոր համարեցաւ, թէ և նմա այնպիսի ինչ դիմելոցն է: Եւ երկիրդի մեծաւ պաշարեալ, խնդրեաց աղօթիք՝ լուսաւորիլ օդոյն և դաշնալ խաղաղութեամբ, և պաշտել զԱստուածն Նունէի խոստանայր. որում հանդիպեալ՝ կատարեաց զասաղեալս:

Իսկ երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս՝ զդեաց առ սուրբն Գրիգորի, եթէ զինչ իրանայեսցէ նմա գործել այնուիետն. քանզի յօժարութեամբ ընկալան Վիրք զքարոզութիւն Աւետարանին: Եւ իրաման ընդունի՝ կործանել զկութսն, որպէս ինքն արար, և կանգնել զպատուական նշան խաչին մինչև գօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա: Եւ իսկոյն կործանեաց զամարոպային պատկերն Արամազդայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն, գետոյն հօգորի ընդ մէջ անցանելով. զոր սովոր էին երկրագել այգուն ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա երևէր. իսկ եթէ ոք զոհել կամէր՝ անցեալ ընդ գետն առաջի մեհենիցն զոհէր:

Բայց ի վերայ նորա յարեան նախարարք քաղաքին, եթէ ո՞ւմ արդեօք փոխանակ կրոցն երկրագենք. ուսան՝ եթէ նշանի խաչին Քրիստոսի. զոր արարեալ կանգնեցին ի վերայ վայելուն բլբոյն յարեւելից կուսէ քաղաքին, մեկուսի բաժանեալ և նա փոքրագոյն

գետով: Եւ Երկրպագեցին ամենայն բազմութիւնն ընդ առաւօտն նոյնպէս ի տանեաց իրաքանչիր: Բայց յորած ելեալ ի բլուրն տեսին փայտ կոփեալ, ոչ ճարտարաց ինչ գործ՝ յոլով քան զսակաւս արհամարհեցին, իբր թէ այնպիսեաւ լի իցէ ամենայն անտառն նոցա, և թողեալ ի բաց գնացին: Իսկ բարեբարին Աստուծոյ նայեցեալ ի գայթակղութիւն նոցա՝ առաքեաց յերկնից սիւն ամպոյ, և լցաւ լեառն բուրմանք անուշութեան. և ձայն բազմութեան սաղմուերգուաց լսելի եղև քաղցր յոյժ, և ծագեաց լոյս տպաւորութեամբ խաչի, ըստ ձևոյ և չափոյ փայտեղինին, և կալով ի վերայ նորա հանդերձ Երկուտասան աստեղօք. յոր ամենեցուն հաւատացեալ՝ Երկրպագեցին նմա: Եւ յայն հետէ զօրութիւնք բժշկութեան կատարէին նմանէ:

Իսկ Երանելին Նունէ ել գնաց անտի աշակերտել և զայլ ևս զաւառսն Վրաց յանապակ լեզուէն, շրջելով անպաճուճաբար և առանց աւելորդաց, օտարացեալ յաշխարհէ և որ ի սմա. կամ թէ Ճշմարտագոյն ասել՝ ի խաչ ելեալ, կրթութիւն մահու զկեանսն առնելով, բանիւ վկայ Բանին Աստուծոյ, և յօժարութեամբն իրով որպէս արեամբ պսակեալ: Չոր համարձակին ասել, առաքելուիի եղեալ քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասրից մինչև ի սահմանս Մասքթաց, որպէս ուսուցանէ քեզ Ազաթանգեղոս: Բայց մեք դարձուք անդրէն ի պատմութիւն Տրդատայ յարձակմանն ի Պարսս:

## ԶԵ

**Պարտումն Շապիոյ եւ ակամայ հնզանդութիւն ւնդ ծեռամբ մեծին  
Կոստանդիանոսի. եւ Տրդատայ ունել գԵկրատան, եւ զալ ազգականացն. եւ թէ յայնժամ  
եղեւ գիւտ փրկական փայտին:**

Բայց Տրդատայ թէպէտ և զյաղթութիւն ստացեալ էր, այլ ի հարկանելոյ զօրուն և ի բազում անկելոց նախարարացն՝ զանգիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապիոյ, մինչև եհաս բազմութիւն զօրուն Հռոմայեցուց, որք ընդ Ասորեստան յարձակեցան. և ի փախուստ զՇապուհ դարձուցին, յաւարի զամենայն Երկիրն առեալ: Քանզի և Տրդատայ միահամուռ իրովքն, և որք ընդ իրովք էին զօրքն, ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց տարեակն չուաւորութեամբ:

Յայնժամ զայ առ նա ազգականն իր և հարազատ Կամսար, առաջին որդի Պերոզամատայ: Այս Պերոզամատ է այն տղայն, որ ի կոտորելն Արտաշրի գցեղն Կարենեան Պահլաւին, փախուցեալ Բուրզայ ապրեցուցանէր: որոյ հասեալ յերիտասարդութիւն՝ ի պատիւ հօրն և ի վերայ զօրուն կարգի յԱրտաշրէ, առ ի պատերազմել ընդ խուշադուժ ազդսն ընդ այնոսիկ, նենեցութեամբ խորհեալ զնա ի ծեռս բարբարոսաց: Որոյ եղեալ այր քաջ՝ սքանչելապէս մղեաց զպատերազմունս. և պարել զՎզըրկն որ անուանէր Խաքան, նուաճեալ՝ տայ զդուստր իր նմա կնութեան. նա և այլ կանայս առեալ, զմերձաւորս Արտաշրի, և բազում որդիք եղեալ, զօրացեալ բռնութեամբ ունի զկողմանսն զայնոսիկ. թէպէտ և էր ի համար Արտաշրի՝ այլ ոչ տեսանէ զնա: Եւ ի մեռանելն Արտաշրի ոչ հնազանդի որդւոյն նորա Շապիոյ. և ի մարտնչելն ի բազում պատերազմունս յաղթէ, և ի մտերմացն Շապիոյ դեղկուր եղեալ մեռանի:

Առ նովինք ժամանակաւ այլ ոմն կացեալ Վզըրկ Խաքար, որ թշնամութեամբ ընդ Կամսարայ որդւոյն նորա վարէր: Իսկ Կամսարայ դժուարին վարկուցեալ ի մէջ Երկուց հզօր թագաւորաց բնակել թշնամութեամբ, մանաւանդ զի եղբարքն ոչ միաբանեցան ընդ նմա՝ խաղացեալ ամենայն ընտանեօք իրովք և աղխիւ զայ առ Տրդատ մեր թագաւոր, եղբարց նորա առ Շապուհ Երթալով: Այս Կամսար ահազին քաջութեամբ նահատակեալ առ հարբն ի պատերազմունս, ի շահատակելն իրում հարկանի յումենն սակերք զգլուխն. և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին, բժշկեալ ի դողոց, պակաս գոլով բոլորութիւն գագաթանն անուանեցաւ Կամսար այնր աղազաւ:

Բայց Տրդատայ իր հաստատեալ գեօթնպարսպեանն Եկրատան, Երկրորդ և վերակացուս յինքենէ թողեալ՝ դաւանայ ի Հայս, ընդ իր ածելով զԿամսար

ամենայնիւքն: Քանզի Շապուհ աղաքեաց զյաղթողն Կոստանդիանոս՝ խնդրել զիաշտութիւն և հաստատել գխաղաղութիւն մշտնչենաւոր. զոր արարեալ սրբոյն Կոստանդիանոսի, յետ այնորիկ, առաքեաց զՀեղինէ զմայր յԵրուսաղէմ ի խնդիր պատուական խաչին, զոր և եզիտ իսկ զփրկական փայտն հանդերձ իինգ բնեօքն, ի ձեռն Յուղային հրէի, որ ապա եկաց եպիսկոպոս յԵրուսաղէմ:

ԶԸ

**Կապումն Լիկիանոսի, եւ փոխումն արքունեացն ի Հռոմէ, եւ շինել  
Կոստանդնուպոլիսի:**

Ի բառնալն Աստուծոյ զբանաւորսն ամենայն յերեսաց Կոստանդիանոսի՝ մեծարեաց նա զԼիկիանոս մեծութիւն յոյժ, և ետ նմա ի կնութեան զքոյր իւր ոչ համամայր, ծիրանեօք և պսակաւ կայսերական զարդարեաց զնա, և յերկրորդականս հասուցեալ պատիւս՝ արքայ ամենայն արևելից կացոյց: Բայց զոր աստուածային բանն առ Եբրայեցիսն անհնարին համարեալ, չարութեանն փոփոխումն՝ նոյն և աստանօր պատահի, ընծու անկարելի է զխայտուցսն փոխել, և Եթովպացոյ զքխութիւն, նոյնպէս մարդոյ ամպարշտի՝ զբարսն: Քանզի սա նախ առ ի հաւատսն գտանի դրժող, և երկրորդ առ բարեգործն իւր ապստամբ: Յարոյց հալածանս եկեղեղոյ, և նենգութիւն գաղտնի ընդդէմ Կոստանդիանոսի. նա և չարիս բազմազանս հասոյց ամենեցու ն, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, ցանկասէրս այս և գարշելի ալսոր, ներկածոյ ունելով զհերս. որ և զկին իւր ի մեծ նեղութիւն արգել, սակա տարփութեան երանելոյն Գլափիւռայ, վասն որոյ սպան զսուրբն Բասիլիոս Ամասիոյ Պոնտացոց եպիսկոպոս:

Եւ իբրև յայտնեցաւ գաւն, և գիտաց եթէ նմա լուր ոչ լինի Կոստանդիանոս՝ ժողովեաց զօրս ընդդիմանալ պատերազմաւ: Եւ ցրտացեալ ի սիրոյն Տրդատայ մեր թագաւորի, ակնածէր որպէս արդարէ ի թշնամոյ. քանզի գիտէր եթէ ատելի է արդարոյ ամենայն ամբարիշտ: Իսկ իբրև եկն յաղթողն Կոստանդիանոս՝ մատանեաց Աստուած ի ձեռս նորա զԼիկիանոս. յոր խնայեալ որպէս ի ծերունի և ի քեռայր՝ ետ տանել ի Գաղղիուս հանդերձ երկարի կապանօք, դնել ի մետաղս, զի աղօթեսցէ առ Աստուած, որում մեղաւն, թերևս երկայնամիտ լիցի առ նա: Եւ ինքն հանդերձ որդուվքն մի թագաւորութիւն զՀռոմայեցոցն ցուցեալ՝ զքսանեմեակն ի Նիկոմիդացոց քաղաքին կատարեաց: Զի ի չօրորորդ ամէ հալածանացն սկսեալ թագաւորել մինչև ցերեքտասաներորդ ամն խաղաղութեան, զոր և այսօր տօնէ աշխարի:

Եւ ոչ պարտ վարկուցեալ ի Հռոմ դարնալ, այլ ի Բիւզանդիոն անցեալ՝ հաստատէ զարքունիսն, յանրջական իմն նախատեսութեանց հրամայեալ. զերապայշառս իմն առնելով շինուածս, ինգապատիկ յաւելեալ մեծացուցանէ: Քանզի ոչ ուրութ մեծի թագաւորի կայր ի նմա ձեռնարկութիւնք այնպիսիք, բայց ի սակաւոց ինչ իրաց, որպէս տիեզերակալին Աղեքսանդրի Սակեղոնացուց, յորաժամ անտի ընդգէմ Դարեկի սպառագինեցաւ, և սակա այնորիկ շինեաց ի յիշատակ իւր զասացեալն Ստրատիզին. քանզի ի նմա զպատերազմականսն յօրինեաց զկազմութիւն: Զոր յետոյ Սեւերիոս արքայ Հռոմայեցոց նորոգեաց. և ինքն շինեաց զբաղանիսն ի տեղուց սեանն, որ ունէր ստորագիր խորհրդական անուն Արեգակն, ըստ Թրակացոց բարի Զեւսիպոն, որոյ կոչմանբ յորջորջեցան և բաղանիքն: Սա շինեաց և զտեսարանն և զգազանամարտկացն և զխաղալկացն, և զձիրնթացսն ոչ կատարմամբ: Այլ Կոստանդիանոսի ամենապատիկ յարդարեալ՝ անուանեաց նոր Հռոմ. այլ աշխարհ կոչեաց. զնա Կոստանդիանու քաղաք: Ասեն և զայս, եթէ գաղտնի եհաս ի Հռոմայ զասացեալն Պաղադիոն քերածոյ, և եղ զնա ի փորոնին ներքոյ սեանն, որ առ ի յիւմէ կանգնեալ: Բայց այս մեզ անհաւատալի է, այլոց՝ որպէս կամք իցեն:

ԶԸ

**Յաղագս Արիոսի չարափառի, եւ ժողովոյն որ եղեւ վասն նորա ի Նիկիա, եւ  
սքանչելեացն որ երեւացաւ ի Գրիգորիոս:**

Ընդ այն ժամանակս երևեցաւ Արիոս աղեքսանդրացի, որ ուսոյց չարչար ամբարշտել, ոչ գոլ զՈրդի հաւասար Հօր, և ոչ ի բնութենէ և յէութենէ Հօր. և ոչ ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյափտեանս, այլ օտար զոնն և արարած և կրտսեր, և յետ ժամանակի գոյացեալ. որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտ այս Արիոս ի զարշելիսն ընկալաւ զսատակումնն: Վասն որոյ ել հրաման յինքնակալէն Կոստանդիանոսէ՝ ժողով լինել բազմութեան Եպիսկոպոսաց ի Նիկիա Բիւթանացւոց: Եւ ժողովեցան Բիստոն և Բիկենդ երիցունք ի Հռոմ քաղաք, ձեռնարկութենք սրբոյն Սեղբեստոսի, Աղեքսանդրոս Աղեքսանդրի, Եւստաթիոս Անտիոքայ, Մակարիոս Երուսաղէմի, Աղեքսանդրոս Կոստանդնուպօլիսի Եպիսկոպոսը:

Յայնժամ զայ հասանէ հրովարտակ ինքնակալին Կոստանդիանոսի առ մեր արքայ Տրդատ, զի զսուրբն Գրիգորի առեալ ընդ իւր ի ժողովն երթիցէ. զոր ոչ առ յանձն Տրդատ: Քանզի լուեալ էր զխնամնայն Շապիոյ ընդ Հնդկաց թագաւորին և ընդ արևելեանն Խաքանայ, և զօրավարեն Ներսէի, որ թագաւորեաց ամս, ինն, և Որմզդի, որ ապա և նա թագաւորեաց ամս երիս նահատակութեամբք: Եւ ի կասկածի եղեալ, զի մի արդեօք պայմանին ստիցէ ըստ սովորութեան հեթանոսութեանն՝ վասն այնորիկ ոչ եթող առանց իւր զաշխարհս:

Բայց և ոչ սուրբն Գրիգորի հաւանեցաւ Երթալ, զի մի զառաւել պատիւ վասն խոստովանողական անուանն ի ժողովոյն ընկալցի. որպէս զի այնպէս փափագանօք և մեծաւ փութով կոչէին: Այլ նոքա առաքեն փոխանորդ իւրեանց զԱրիստակէն, հանդերձ Ճշմարիտ խոստովանութենք, Երկոցունց գրով: Որոյ Երթեալ հասանէ մեծին Ղեւոնդի. և հանդիպի յայնմ ժամու, զի մկրտէր զԳրիգոր զիայր Գրիգորի աստուածարանի. որ իբրև ել ի ջրոյն՝ լոյս շուրջ փայլատակեաց զնովաւ, զոր ոչ ոք ի բազմութենէն ետես, այլ միայն Ղեւոնդիոս, որ մկրտէրն, և մերն Արիստակէս, և Եւթաղ Եղեսիայ, և Յակոբ Մծբնայ, և Յոհան Պարսից Եպիսկոպոսք, որք նոյն շաւոք ուղևորէին ի ժողովն:

## Ղ

### **Դարձ Արիստակեալ ի Նիկիոյ, Եւ հաւատալ ազգականացն, Եւ որ ինչ ի Գառնի շինուածք:**

Երթեալ Արիստակէս ընդ մեծին Ղեւոնդի, հասանէ ի քաղաքն Նիկիացւոց, ուր եղեն ժողովեալ հարք Երեք հարիւր և ութեստան ի քակտումն արիանոսաց. զորս նզովեալ մերժեցին ի հաղորդութենէ Եկեղեցւոյ, սոյնպէս և ինքնակալն արտասահմանեաց ի մետաղս: Ապա դարձեալ Արիստակէս արժանահաւատ քանիւ, և քսան կանոնեալ զիշովք ժողովոյն՝ զայ հանդիպի հօրն և արքային ի Վաղարշապատ քաղաքի: Ընդ որ ուրախացեալ սրբոյն Գրիգորի, սուլ ինչ զգուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել զգուշութեն իւրոյ վիճակին:

Յայնմ ժամուն ազգային նոցա ԿԱմսար մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի. արքայի ընորունելով ի ջրոյն՝ տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի: Այլ նա ոչ աւելի քաւեալ քան զեօթն աւուրս յետ մկրտութեանն, վախճանի: Բայց թագաւորին Տրդատայ միխթարեալ զգուխս որդւոցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ զնա սերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց: Յաւելու և այլ պարզև-զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի. միայն զի ի մտաց նորա հեռացուսցէ զիշատակ բնիկ աշխարհին որ Պահլաւն, որպէս զի անվորով զիաւատսն պահիցէ: Իսկ Արշաւիր առաւել սիրեալ զգաւառն՝ յիւր անուն կոչէ Արշարունիս. քանզի յառաջ Երասխանոր կոչէր: Ահա ասացաք և զպատճառս զալստեան Երկուցցեղիցն, Պարթևաց և Պահլաւկաց:

Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնիոյ, զոր որձաքար վինօք, Երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց,

մահարձանօք, սքանչելի դրաջուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեզ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զիշատակ իւր հելլենացի գրով:

Բայց սրբոյն Գրիգորի դարձեալ ի նոյն լերինս՝ ոչ ումեք յետ այնր յաւելոյր երևել մինչև ցվախճան:

## ՂԱ

### **Յաղագս մահուանն Գրիգորի Եւ Արիստակեայ, Եւ թէ էր աղագաւ կոչի լեառնն՝ Մանեայ այրը:**

Յեօթն և ի տասներորդի ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զիայրն մեր Գրիգորիոս և ըստ Աւետարանի ծնող: Յետ լուսաւորելոյ Հայո լուսով աստուածգիտութեան, և ջնջելոյ գիսաւար կրապաշտութեանն, և լնլոյն զամենայն կողմանն եպիսկոպոսօք և վարդապետօք՝ սիրեաց զլերինս և զամայութիւն և զիանդարտութեամբ մտաց յինքեան կեալ, որպէս զի խօսեսցի ընդ Աստուծոյ անգբաղապէս. փոխանորդ իւր թողլով գորդի իւր զԱրիստակէս, ինքն կալով ի գաւառին Դարանադեաց, ի լերինս մանեայ այրս:

Այլ ասասցուք, թէ էր աղագաւ կոչի Մանեայ այրը: Քանզի էր կին ոմն անուն Մանի, յընկերաց սրբոց Հռիփսիմեանց, որպէս զնունէ Վրաց վարդապետուիի. որ ոչ շութակեաց հետևել նոցա ի գալն առ մեզ, գիտելով զամենայն տեղիս՝ Աստուծոյ, բնակեցաւ ի լերինս յայսոսիկ, յայրս ինչ քարանց. վասն որոյ կոչեցաւ անուն լերինն Մանեալ այրք. յոր այրի յետոյ բնակեցաւ և սուրբն Գրիգոր:

Այլ թէպէտ և բնակեցաւ անդ, սակայն ընդ ժամանակս ժամանակս յայտնեալ շրջէր ընդ աշխարհս, հաստատէր ի հաւատս զաշակերտեալսն: Բայց իբրև եկն նորին որդին Արիստակէս ի ժողովոյն Նիկիայ՝ յայն հետէ ոչ ևս երևեցաւ յայտնել ումեք սուրբն Գրիգորիոս: Վասն որոյ յիսկզբան քահանայանալոյ նորա, յեօթն և ի տասներորդ ամէ թագաւորութեանն Տրդատայ մինչև ցքառասուն և վեցերորդ ամն նորին, յորմէ հետէ ոչ ևս յաել ումեք երևել՝ համարեալ թուին ամք երեսուն:

Եւ յետ նորա Արիստակէս ամս եօթն, ի քառասուն և յեօթներորդ ամէն Տրդատայ մինչև ցիսուն և երրորդ ամն նորին, յորում եղև կատարումն Արիստոկեայ: Զի արդարս էր սուսեր հոգեսոր ըստ ասացելումն, վասն որոյ թշնամի ամենայն անիրաւաց և զազրագործաց թուէր նա: Յաղագս որոյ և Արքեղայոս, որ էր կարգեալ ի վերակացութիւն Չորրորդն կոչեցեալ Հայոց, կշտամբեալ ի նման՝ սպասեաց դիպոլ աւուր. և պատահեալ նմա ի ճանապարհի ի Ծոփաց գաւառին՝ սպան զնա սրով, և ինքն զնաց փախստական ի Տաւրոս Կիլիկեցւոց: Իսկ զմարմին երանելոյն բարձեալ աշակերտաց նորին՝ բերին յԵկեղեաց գաւառն, հանգուցանել ի Թիլն, յիլում աւանին: Եւ յաջորդեաց զաթոռն երէց եղբայր նորին Վրթանէս, ի յիսուն և ի չորրորդ ամէն Տրդատայ և անդր:

Բայց սրբոյ Գրիգորի ի Մանեայ այրն կեցեալ աներևութաբար ամս բազումն՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց: Եւ հովուացգտեալ զնա վախճանեալ՝ ի նմին տեղուց թաղեցին, ոչ գիտելով թէ ով ոք նա իցէ: Վայելէր իսկ նոցա. որք Փրկչին մերոյ ծննդեանն եղեն խորհրդածուք, լինել և աշակերտին յուղարկմանն սպասաւորք: Եւ ծածկեալ ամս բազումս աստուածային իմն գոգես տեսչութենք, իբրև զՄովսէսն զայն ի հնումն, զի մի ի պաշտօն ի դեռահաւատ բարբարոսացս առցի ազգաց: Իսկ յորած սերտեալ հիմնեցան հաւատք կողմանց այսոցիկ՝ յետ բազում ժամանակաց յայտնեցաւ ճգնաւորի ումեն Գառնիկ անուն կոչեցելոյ, և բերել եղաւ ի գեօղն Թորդան նշխարք սրբոյն Գրիգորի:

Սա, որպէս ամենեցուն յայտնի է, աշխարհաւ Պարթև, գաւառաւ Պահլաւ, յազգէ թագաւորեցելոյ զատուցեալ Արշակունի, ցեղէ Սուրենական, ի հօրէ Անակ կոչեցելոյ, յարևելից կողմանց աշխարհիս մերոյ՝ արևելք Ճմբարտիտ ծագեալ մեզ և իմանալի արեգակն և հոգեսոր ճառագայթ, ի խորին չարութենէ կրապաշտութեան ելք, երանութեան և շինութեան հոգեսորի առիթ, աստուածային արդարև արմաւենի տնկեալ ի տան Տեառն

և ի գալիքս Աստուծոյ մերոյ ծաղկեալ: Եւ այսպիսէօք և այսքանօք ժողովրդովք բազմացեալ, ի ծերութիւն պարարտութեան հոգնորի զմեզ ժողովեաց ի փառս և ի գովեստ Աստուծոյ:

## ՂԲ

### Յաղագս Վախչանի Տրդատայ թագաւորի, ընդ որում եւ ողբերգական մեղադրութիւն:

Զսրբոյ և զմեծէ և երկրորդ նահատակի և զմերոյ լուսաւորութեան հոգնոր վերակացուէ ճառելով, զի Քրիստոսէ հանուրց եղելոց ճշմարիտ թագաւորէ՝ հրաշափառագունի պարտ էր անցանել բանի, որպէս զգործակցէ և զհաւասար ճգնողէ մերոյ նախաշաւալի և լուսաւորութեանց նահապետի. որպէս թուեցաւ հաջոյ Հոգուոյ սրբոյ՝ երիցացուցանել զիմ լուսաւորիչն վկայութեանն միայնոյ վիճակաւ, ի վերայ բերեմ թէ և արքելութեանն. իսկ որ ինձ զկնի այսորիկ, զուգաբան և հաւասարագործ: Այլ զարաւելութիւն ասեմ աստ զթագաւորին. քանզի խորիելն յաղագս Աստուծոյ և ճգնազեցիկն լինել՝ զոյզ երկոցունց. իսկ նուածել հաւանողական կամ բռնաւորական բանի՝ առաւել էր թագաւորին շնորհ. քանզի ըստ հաւատոցն ոչ ինչ կասեցուցանէր զգործսն: Այսորիկ աղագաւ կոչեմ և զսա նախաշաւալի ճանապարի և լուսաւորութեան մերայ հայր երկրորդ: Բայց զի պատմութեանց, և ոչ գովեստից է ժամանակս, մանաւանդ զի և հագնեգութիւնս ըստ իրաքանչիւր պատմագրաց արտասանութեանց և ոչ յատուկ ի մէնջ շարագրեցաւ, անցցուք ի կարգ բանից որ ինչ յաղագս սորա:

Սա յետ հաւատոցն որ ի Քրիստոս, ամենայն առաքինութեամբք բացափայլեալ՝ ևս քան զևս յաձախէր յաղագս Քրիստոսի գործ և բան. սաստելով և հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն և զամենայն բազմութիւն ռամկին, լինել արդարս Քրիստոսի. որպէս զի վկայեսցեն հաւատոցն՝ ամենեցուն և գործքն: Այլ զխստասրտութիւն կամին ասել, թէ և զամբարհաւաձութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր. որպէս անհամբոյր բարոյ և ճշմարտութեն անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնից քրիստոսականաց, զիետ երթալով կամաց կանանց և հարձից: Որում ոչ կարացեալ ներել թագաւորին, ընկեցեալ զերկրաւոր պսակս՝ զիետ ընթանայր երկնաւորին, արագ հասանելով ի տեղի սուրբ ճգնաւորին Քրիստոսի, ծակամուտ լեռնակեցիկ եղեալ:

Աստանօր ամաչեմ ասել զՃմարտութիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի զսցա գործս: Քանզի զիետ առաքեալ, կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն: Իսկի չհաւանել սրբոյ՝ տան ննա արբումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աքենացիքն Սուլրատայ զմոլեխինդն. և կամ թէ զմերն իսկ ասել, կատաղեալ Եբրայեցիքն ընպելի լեռեալ խառնեալ Աստուծոյ մերոյ: Եւ զայս արարեալ շիջուցին յինքեանց զբազմափայլ ճառագայթն աստուծպաշտութեան: Վասն այսորիկ ես ի վերայ իմոց ողբալով ասեմ, որպէս Պաւոս յաղագս իւրոցն և թշնամեաց խաչին Քրիստոսի. բայց ասեմ ոչ զիմ բանս, այլ զՀոգուոյն սրբոյ: Ազգ թիւր և դառնացող, ազգ, որ ոչ ուղեւաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի նորա: Արք Արամեանք, մինչև յե՞րբ էք ծանրասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և զանաստուածութիւն: Ո՞չ ծանեայք, զի սքանչելացոյց Տէր զսուրբն իւր. և ոչ Տէր լուիցէ յաղաղակել ձերում առ նա: Զի բարեկացեալ մնդայք, և յանկողինս ձեր ոչ զղացարուք. քանզի գենէք գենումն անօրէնութեան, և զյուսացեալն ի Տէր արհամարհեցեք: Վասն այսորիկ եկեսցէ ձեր որոգայէ՝ զոր ոչ ծանեայք,. և զոր որսայցէք՝ ըմբռնեսցէ զձեզ, և նովին որոգայթիւն անկօշիք: Այլ նորա ցնծասցէ Տէրամբ և ուրախասցի ի ձրկութեան իւրում, և ամենայնի ինքեամբ ասասցէ. Տէր, ով նման է քեզ:

Եւ զի այսոքիկ Ճմարիտ այսպէս՝ մխիթարեսցուք մերովք վտանգիւքս և մեք. «զի եթէ ընդ ձայտ դալար զայս արարին, ասէ Քրիստոս, իսկ ընդ չորս զի՞նչ լինիցի»: Արդ՝

Եթէ ընդ սուրբս Աստուածոյ, և որք ի թագաւորութենէ յաղազ Աստուածոյ զինքեանս նուաստացուցին, այս է, զի՞նչ մեր բանս առ Աստուածոյ յաղազ ի ձենջ Վտանգից, որոց Վտանգը և աղքատութիւն սեպհական է: Այլ սակայն ասացից: Ո՞վ ոք ի ձենջ թշակս յաղազ մեր, ո՞վ ոք Վարդապետացն մաղթանս, ո՞վ ոքբան յօժարեցուցանող կամ յորդորական, ո՞վ ոք յերթալս մերում բեռնաբարձս, ո՞վ ոք ի գալն մերում հանգիստ, ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց: Թողից զայլն, զի և ոչ զլեզուս չարս և զտգիտութիւն, հանդերձ սմոտի փառամոլութեամբ և կատաղի լեզուանութենմբ, սանձահարեցէք. այլ նիւթ նոցա անմտութեանն զձեր ուսումնատեացդ տալով բարս, բորբոքեցէք առաւել քան զինցն Բարելովնի:

Կասն որոյ իրաքանչիլ առ անձին է քուրմ և պաշտօնեայ, արպէս ասէ Գիր, որ է ըստ այժմունս ի դէպ ուր բազում խօսողք աստուածայնոցն, և զօրութեան մտացն ոչ հասուր. և խօսողք՝ ըստհաճոյից Հոգույն, այլ ըստ օտարին: Վասն որոյ իհացումն իմն են Ճառքս և սարսափելի՝ որոց միտս ունին. քանզի խօսի որ խօսին՝ զԱստուածոյ և զաստուածայինսն, և խորհուրդք խօսողին յօտարն հային: Զի վասն որոյ խօսին՝ կրէ զաշխատութիւն, և ոչ մեղմով և հեզիկ, որպէս ուսաւն, թէ «Մի ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա», այլ յաղազ փառաց մարդկայնոց, և Ճայթեցուցանելով հնչեցուցանեն ի լսելիս մարդկան: Ուր շատխօսութեանն հիսանք իբրև յաղբերէ դիմեն, որպէս ասաց ոմն ի հնոցն, և զկտեցուցանեն զամենայն գինարբուս և զիրապարակս: Ո՞վ ոք զսոս ոչ ողբասց՝ որ միտս ունիցի. և եթէ ոչ ոք զչարից՝ ասեմ, թէ և որք յորդորենն զսոս այսպիսի լինել: Արգելումն ասել զԹրիստոսին– տալ ի մէջ տաճարին և սեղանոյն:

Այլ աստանօր դադարեսցէ բանս, որպէս աշխատութիւն կրեալ՝ յականջս լինել խօսեցեալ մերելոց: Այլ պատմութիւնս յաղազ սրբոյն Տրդատայ Ճշմարիտ է. քանզի արբուցեալ նմա դեղ մահու՝ զրկեցան ի լուսոյ շնորհաց Ճառագայթից նորա, որ թագաւորեաց ամս յիսուն և վեց:

*Բովանդակեցան Գիրք Երկրորդ,  
յառաջադիմութեան Հայոց մեծաց*

## ՀԱՏԱԾ ԵՐՐՈՌԴ

### ԱՄԱՐՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵՐՈՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ Ա

Ոչ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս, և ոչ ընդ ամենայն յունականսն անցանել ատակեալ սակս կարչութեան Ճամանակին. նա և կոչ մատենագրութիւնք Դիոդորի հուա առմեզ են, զի նմա պահելով զկն՝ անմոռաց անցանէաք ընդ բնաւն, զի մի ինչ ի մէնջ մնասցէ ի զլխաւորացն և ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոց շարագրութեանց: Այլ որչափ ջան և յիշողութիւնք բաւեցին՝ պատմեցաք ստուգապէս ի մեծէն Աղեքսանդրէ մինչև ի վախճան սրբոյն Տրդատայ, յոյժ կանուխ և հերի ժամանակօք: Վասն որոյ մի զմեզ այպանեալ պարսաւեսցես. զի ահա որ ինչ առ մերով ժամանակաւ եղեալ կամ դոյզն ինչ հերի՝ զրուցեցից քեզ անսխալ, Երրորդ առնելով Գիրս, որ ինչ յետ սրբոյն Տրդատայ մինչև ի սպառել Արշակունեաց ազգին ի թագաւորութենէ, և զաւակի սրբոյն Գրիգորի ի քահանայապետութենէ. հասարակաց խօսիւք ընդ պատմութիւնս, որպէս զի մի ոք երևսցի ի պերճաբանութիւնս զրաւեալ առ փափազն, այլ Ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ և անյագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց:

Բ

*Որ ինչ յետ վախչանին Տրդատայ ընդ մեծն Վրթանէս եւ ընդ Երիս  
նախարարութիւնսն անցը:*

Ի ժամանակի վախճանին Տրդատայ հանդիպեցաւ մեծն Վրթանէս ի վկայարանի սրբոյն: Յովիհաննու, որ ի հօրէ նորին շինեալ էր ի Տարօն: ՈՒր նենգ գործեալ լերին այնորիկ բնակչաց, ի սաղրելոյն նախարարացն՝ կամեցան սպանանել. որք անընթառնելի ձեռամբ կապեալք, որպէս առ Եղիստիւն այնուիկ ի հնումն, կամ նորին ինքեան Քրիստոսի Աստուածոյ մերոյ զարկուցեալ Հրեայքն, անվտիտ անցեալ գնայր յԵկեղեաց զաւառ, ի Թիլն աւան, ուր էր ի հանգստարան Եղբօր նորին Արիստակեայ. սպացեալ ի վերայ աշխարհիս Հայոց, որք յանհշխանութեան մնացեալք՝ յարեան ազգ յազգի վերայ նախարարութիւնք կոտորել զմինեանս. ուստի և երեք տոհմքն, որ Բզնունականն և Սանաւազեանն և Որդունին անուանէին, սպառեալ բարձան ի մինեանց:

Գ

### **Կատարումն սրբոյն Գրիգորիսի ի բարբարոսաց:**

Մեծաւ պնդութեամբ առնէր վրէժխնդրութիւն հաւատոց և վարուց երանելին Տրդատ, առաւել այնոցիկ, որ բացեայ կողմանքն էին յիւրում իշխանութեանն: Վասն որոյ Եկեալ գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեմբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա նոցա Եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափագելով խնդրեն. և գիտեմք հաւաստի, թէ ի հօչչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեսցեն ի նորին զաւակէ, առնել զամենայն ըստ հրամանի»: Այս հաւանեալ երանելին Տրդատ՝ փայ նոցա Եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, գերէց որդին Վրթանիսի: Թէպէտ և յանլիութիւն աւուրցն հայելով՝ պարականոն զիրն վարականէր, այլ տեսեալ զիոգույն մեծանձնութիւն, և զմտաւ ածել զՍողմոն երկոտասանամեայ թագաւորեալ Խսրայելի՝ առաքէ բազում համարձակութեամբ, հանդերձ Սանաւորուկ ոմամբ յիւրմէ ազգէն Արշակունեաց:

Որոյ երեթեալ՝ լինէր օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեմբք. այլ կուտութեամբ գեր ի վերոյ քան զիարսն, և պատժականաւ զոյգ ընդ թագաւորին: Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանաւորկոյ և այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից՝ սպանին գերանելին, ընթադրալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասրիականն կոչեցեալ ծով: Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս թաղեցին յԱնարաս աւանի: Իսկ Սանաւորկոյ թագ կապեալ ինքեամ՝ ունի զքաղաքն Փայտակարան. զօրութենք օտար ազգաց խորհեր տիրել բոլորունս Հայոց:

Դ

### **Որոշումն Բակուր բղեօխին ի միաբանութենէ Հայոց, եւ խորհուրդ նախարարացն թագաւորեցուցանել գլուխորով:**

Որպէս յաստուածայինսն գտանեմք ասացեալ պատմութիւնս, Եբրայական ազգին, յետ դատաւորացն, ի ժամանակի անիշխանութեանն և անխաղաղութեն, ոչ լինել թագաւոր, և առն ըստ հաճոյից իւրոց գնալ՝ սապէս և ի մերսումն էր տեսանել աշխարհի: Քանզի ի վախճանել երանելոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր, որ բդերաշխն Աղձնեաց կոչէր, տեսեալ զՍանաւորուկ թագաւորեալ ի Փայտակարան՝ զնոյն խորհեցաւ և ինքն. թէպէտ և ոչ թագաւորել, զի ոչ էր Արշակունի, այլ տիրագլուխ կամեցաւ լինել. Ճեղքեալ ի միաբանութենէ Հայոց՝ ձեռս ետ յՈրմիզդ արքայ Պարսից: Ուստի ուշ ի կուրծս անկեալ և ի միտս Եկեալ նախարարցն Հայոց՝ ժողովեցան առ մեծն Վրթանէս, և առաքեցին երկուս ի պատուական իշխանացն, զՄար իշխանն Ծոփաց, և զԳագ իշխանն Հաշտենից, երթալ ի նահագահ քաղաքն, առ կայսրն Կոստանդոս, որդի Կոստանդիանոսի, հանդերձ պատարագօք և թղթով, որ ունէր օրինակ զայս.—

Ե

### **Պատճեն թղթոյ Հայոց:**

«Եայսկոպոսապետ Վրթանէս և որք ընդ նովաւ Եայսկոպոսունք և ամենայն նախարարք Հայոց մեծաց. տեառն մերոյ Կոստանդնեայ կայսեր ինքնակալի խնդալ:

«Յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդնիանոսի, որ առ մերում թագաւորի Տրդատայ. և մի տացես զաշխարհս քո Պարսից անաստուածից, այլ օգնեսցես մեզ զօրօք՝ թագաւորեցուցանել զորդի Տրդատայ գլուխորով: Քանզի Աստուած զձեր որ միայն Եւրոպայ, այլ և ամենայն Միջերկրեայց տիրեցոյց. և ահ զօրութեն ձերոյ Եհաս մինչև ի ծագս երկրի: Եւ խնդրենք առաւել քան զառաւել տիրել ձեզ: Ողջ լերուք»:

Այս լսող Եղեալ Կոստանդնեայ՝ առաքեաց զԱնտիոքոս յարդարիչ իւրոյ պալատանն զօրու ծանու, և ծիրանիս հանդերձ պսակաւ, և թուղթ՝ որ ունէր օրինակ զայս.—

### **Թուղթ Կոստանդնեայ:**

«Աւգոստոս ինքնակալ կայսր Կոստանդնոս.մեծիդ Վրթանիսի և ամենայն աշխարհիականց քոց խնդալ:

«Առաքեցի ձեզ զօր յօգնականութիւն, և իրաման թագաւորեցուցանել ձեզ զլուսրով որդի արքայի ձերոյ Տրդատայ. որպէս զի ի բարեկարգութիւն հաստատեալ, մեզ ծառայեսցիք միամտութենմբ: Ողջ լերուք»:

Զ

### **Գալուստ Անտիոքայ եւ գործք նորին:**

Եկեալ Անտիոքոս թագաւորեցոյց գլուխորով, և զչորեսին սպարապետոսն մատոյց ի նոյն իշխանութիւն զօրու, զորս կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռանելոյ դայեկին իւրոյ Արտաւազդայ Մանդակունւոյ, որ միագլուխ սպարապետ էր և ամենայն Հայոց զօրավար: Առաջին՝ Բագարատ ասպետ, զօրավար արևմտեան գնդին. Երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բղեաշխ Գուգարացւոց, սպարապետ զօրավար արևելեան գնդին. Երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զօրավար արևելեան գնդին. չորրորդ՝ Մանաձիհր նահապետ Ռշտունեաց, սպարապետ հարաւային զօրուն: Եւ բաժանեալ ետ նոցա զիւրաքանչիւր զօրս: Եւ առաքեաց զՄանաձիհր հարաւային զօրօք և զԿիլիկեցի զօրն ընդ ննա զկողմանքը Ասորեստանի և Միջագետաց. և զՎահան նահապետ Ամատունեաց արևելեան գնդաւն և զԳաղատացի զօրս ընդ ննա առաքեաց զկողմանքը Աստրպատականի, ունել պահ յարքայէն Պարսից:

Եւ իւր թողեալ զթագաւորն Խոսրով, – քանզի փոքր էր յանձնէ և անօսր ոսկերօք և ոչ գոլով ի նմանութիւն պատերազմողական հասակի, – և առեալ ընդ իւր զՄիհրան և զԲագարատ զօրօք իւրեանց, և միահամուռ ամենայն յունականօքն խաղայ ի Վերայ Սանատորկոյ: Իսկ նորա պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան՝ ինքն առ արքայն Ծապուհ փութացեալ անկանի, հանդերձ Աղուանից նախարարօք: Չոր տեսեալ Անտիոքայ, եթէ ոչ ի հնազանսութիւն խաղաղութեան նուաճեցան՝ իրաման տայ առիւ զիշխանութիւն պառակտելոցն նուաճեցուցանել. և իւր ժողովեալ զիարկն՝ առ կայս գնայ:

Է

### **Յանցանք Մանաձերի առ մեծն Յակոբ, եւ մահ:**

Երթեալ Մանաձիհր Հայոց հարաւային գնդաւն և Կիլիկեցւոց զօրօք զկողմանքը Ասորեստանի, Ճակատ տուեալ ընդ Բակուր բղեշխի՝ սատակէ զնա, և զզօրս նորա և զպարսիկա օգնականն ննա հալածականս առնէ. և զորդին Բակրոյ զՀեշայ ձերբակալ արարեալ՝ հանդերձ Երկարի կապանօք առաք Խոսրովու. և զգաւառ իշխանութեան նորա սրով դատի յանխնայ, ոչ միայն զմարտիկս. այլ և զքամիկշինականս. թագում զերիս առեալ ի կողմանցն Մծբնայ, ընդ որս և սարկաւագունս ութ զմեծի Եպիսկոպոսին Յակովքայ: Չորոց զիետ Եկեալ Յակովքայ՝ համոզէ զՄանաձիհր արձակել զգերութիւն ռամկին, իբչև զոյ մեղուցելոց. որում ոչ հաւանեալ Մանաչիհր՝ պատճառէ զարքայ:

Եւ Յակոբու դէմ եղեալ առ արքայ, առաւել ևս զչարի Մանաձիիր, և ի սադրելոյ գաւառականց՝ զութեսին սարկաւագունս նորա, որք ի կալանսն էին, հրամայէ ի ծով ընկենով: Զոր լուեալ մեծին Յակոբու՝ դաշնայ ի տեղի իւր լի բարկութեամբ, որպէս Մովսէսն յերեսաց Փարաւոնի: Եւ եղեալ ի լեառն ինչ, յորմէ երկէր գաւառն ամենայն, անէծ զՄանաձիիր և զգաւառ նորին: Եւ որ ինչ յամենցին դատաստանքն Աստուծոյ հասանել ի վերայ. և նման Հերովդի պէս պէս ցաւովք սատակի Մանա-իիր. և պտղաբերութիւն ջրաւորաց գաւառի դարձաւ յաղտադտուկ, եղեալ ի վերայ նոցա երկինք պղնձի ըստ Գրոց, և ծովն հակառակեալ յինքն ընդունէր զսհմանս անդաստանցն: Զոր լուեալ մեծին Վրթանայ և արքային Խոսրովայ՝ ցասուցեալ հրամայեն արձակել զգերեալսն, և առ նոյն այր մաղթել ապաշխարութեամբ, զի դարձցի սրտմտութիւն Տեառն. զոր յետ ելից Յակովբայ յածխարհէս՝ ժառանգ որդի Մանաձիիր գեղեղիկ ապաշխարութեամբ, ուժգին արտասուօք և հառաձնամբ, նորին բարեխօսութեամբ գտեալ զբժշկութիւն գաւառին:

Ը

### **Յաղագ թագաւորելոյն Փոքր Խոսրովու եւ փոխելոյ զարքունիսն եւ տնկելոյ զանտառն:**

Յերորդ ամի Որմզդի Պարսից արքայի և յութերորդ ամի ինքնակալութեանն Կոստանդեայ, յօգնականութենէ նորին թագաւորեաց Խոսրով. ոչ ինչ աչութիւն քաջութեան ցուցեալ որպէս զիայրն, այլ և ոչ վասն հատուածելոց կողմանցն հակառակեցաւ ինչ, յետ միոյ նուագին, զոր ի յունկանացն կրեցին զօրացն. այլ ի կամս թողեալ զարքայն Պարսից՝ խաղաղութիւն առնէ ընդ նմա. բաւական վարկուցեալ մնացելոց սահմանացն տիրել, ամենակին ոչ ունելով փարել զգնուական մտածութիւնս: Զի թէպէտ մարմնով փոքր, այլ ոչ որքան Մակեդովնացին Աղեքսանդր, որ միայն երից կանգնոց ունէր զչափ հասակի, և ոչ զիոգույն խափանէր աշխոյժս: Իսկ սորա զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ՝ զբուանաց և հաւորսութեանց և այլոց որսոց պարապեալ. նորին աղագաւ և անտառ առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակի:

Նա և զարքունիսին փոխէ վերոյ անտառի յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկակն լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր: Քանզի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և ողք ջերմայինք պղտորեալք ժանդահութութեամբ փչէին. յորմէ ոչ կաչացեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումնն:

Ծ

### **Որ ինչ յաւուրս սորա ի հիւսիսականաց ազգաց արշաւանք ի մեզ, ուր եւ նահատակութիւնք Վահանայ Անատունոյն:**

Յաւուրս սորա միաբանեալ բնակիչք հիւսիսոյ Կաւակասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա և զյուլութիւն, և առաւել ի հրապուրելոյ մաղթանաց Սանատորկոյ՝ ի գաղտնի հրամանէ Շապիոյ Պարսից արքայի, արշաւեալ ի միջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամբոխիւ, որպէս թէ երկու բիւրովք: Որոց պատահեալ պատերազմաւ արևելեայ և արևմտեայ զօրուն Հայոց՝ հանդերձ զօրապետօքն Բագարատու ասպետիւ և Վահանաւ նահապետիւ Անատունեաց. քանզի հարաւային մեր գունդք առ արքային Խոսրովայ էին յաշխարհին Ծոփաց, և զՄիհրան սպանեալ, և զիհիսիսային մեր գունդն հարեալ, ի թիկունս ընկեցեալ թշնամեացն, և հասեալ ի դրուսն Վաղարշապատու պաշարէին: Որոց յանկարծակի ի վերայ անկեալ արևելեայ և արևմտեայ մեր զօրուն, և անտի մերժեալ զՕշական առապարաւն, ոչ ետուն ժամանել ճապաղել ի նետաձգութիւն ըստ օրինի իւրեանց սովորութեանն, երագեալ սաստկապէս զիետ ունելով քաջածիոցն ի դժուարս քարանց և ի վիմուտ տեղիս:

Մինչև յոչ կամաց գումարեալ թշնամեացն ի ճակատ. և զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ոմն սկայ վառեալ, և թարեաւ կաձեայ բոլորով ամենահմք պարածածկեցեալ, շահատակէր ի մէջ զօրացն: Յոր ակնակառոյց լեալ քաջացն Հայոց և յարձակեալ՝ ոչ ինչ կարէին զնասել. քանզի հարեալ նիզակաւ՝ ճախր առնոյր կաձեայն: յայնժամ քաջին Վահանայ Ամաստունույն հայեցեալ յեկեղեցին կաթուղիկէ, ասէ. «օգնեա ինձ, Ասուտած, որ զԴաւթեան պարսաքարն դիպեցուցեր Ճակատու Խրոխտացելոյն Գողիաթու. ուրդեա և զնիզակս իմ ական հզօրիս այսորիկ»: Եւ ոչ վրիպեցաւ ի խնդրոյն. ընդ գաւակ ծիոյն հարեալ՝ յերկիր կործանեաց զահազին զվիրազն: Այսպիսի դիպուած ի փախուստ յորդորեաց զթշնամիսն, և ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց: Եւ աստի դարձեալ յաշխարին Ծոփաց Բագարատ՝ վկայ հաստատուն առանց նախաձու լինի առ արքայի վասն Վահանայ քաջութեանցն և առաքինի դիպուածոյն: Վասն որոյ պարզէ նմա արքայ զտեղի Ճակատուն՝ զՕշական, ուր ինքնակամ դիմագրու նահատակ եղի: Եւ փոխանակ Միհրանայ կարգէ զԳարջոյլ Մաղլսագ նահապետ Խորխոռունեաց ի վերայ զօրուն:

Ժ

**Կախճան Խոսրովու, եւ պատերազմ Հայոց ընդ Պարս:**

Յետ այսորիկ զիտացեալ Խոսրովայ, թէ ձեռն Շապիոյ Պարսից արքայի ընդ թշնամիսն է՝ լուծանէ զխաղաղութիւնն որ ընդ նմա, և զնասնաւոր հարկսն արգելու ի նմանէ, տալով և զայն կայսեր. և ածելով զգօրս Յունաց՝ ընդդիմանայ արքայի Պարսից: Բայց ոչ յերկարեալ զկեանս իւր՝ վախճանի, թագաւորեալ ամս ինն. և բարձեալ զնա՝ թաղեցին յԱնի առ հարս իւր: Եւ ժողովեալ մեծին Վրթանիսի զամենայն նախարարս Հայոց, հանդերձ զօրօք և զօրապետօք, յանձն առնէ զաշխարհս Արշաւրի Կամսարականի, որպէս զիտաւորի և յոյժ պատուականի յետ արքայի: Եւ իւր առեալ զՏիգրան որդի Խոսրովու՝ զնայ առ կայսր, զի թագաւոր Հայոց ի տեղի հօր իւրոյ կացուացէ:

Իսկ արքայն Պարսից Շապուի իբրև լուաւ զմահն Խոսրովու, և եթէ որդի նորա Տիրան առ կայսր զնաց՝ գումարէ զօրս բազումս ի ձեռն Ներսեիի եղբօր իւրոյ, որպէս թէ թագաւորեցուցանել զնա Հայոց խորհեցեալ, և առաքէ յաշխարիս մեր, իբրև անառաջնորդ զսա վարկուցեալ: Որոց պատահեալ քաջին Արշաւրի Կամսարականի հանդերձ ամենայն Հայաստանեացս զօրու, Ճակատ տուեալ ի Մօռուն անուանեալ դաշտի: Եւ թէպէտ և թազումք ի մեծամեծ նախարարացն անկան ի պատերազմին, սակայն յաղթեալ Հայոց զնդին՝ փախստական առնեն զգօրս Պարսից, և պահեն զաշխարհս մինչև զգալն Տիրանայ:

ԺԱ

**Յաղազս թագաւորելոյն Տիրանայ, եւ փոխելոյ յաշխարհէս մեծին Վրթանայ, եւ փոխանորդելոյ զաթոռն սրբոյ Յուսկամն:**

Յեօրն և ի տասներորդի ամի ինքնակալութեան իւրում Աւգոստոս Կոստանդոս, որդի Կոստանդիանոսի, թագաւորեցուցանէ զՏիրան որդի Խոսրովու, և առաքէ ի Հայս հարդերձ մեծաւ Վրթանաւ: Որոյն եկեալ, ունի զաշխարհս մեր խաղաղութեամբ, հաշտութիւն ընդ Պարս առնելով և ոչ պատերազմունս. հարկելով Յունաց, այլ մասնաւոր ինչ Պարսից՝ կայր ի հանդարտութեան իբրև զիայր իւր, ոչ ինչ արութիւնքաջութեան և սորա ցուցեալ. նա և ոչ հայենի առաքինութեամն հետևեալ, այլ թուլացեալ յամենայն բարեպաշտութենէ զադոնի, ոչ իշխելով համարձակ պատուել զախտն ի մեծէն Վրթանիսէ:

Իսկ յետ լնլոյ հնգետասան ամաց եապիսկոպոսութեան մեծին Վրթանայ՝ փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ: Եւ ի իրամանէ նորին տարեալ հանգուցանեն ի գեօղն Թորդան, իբրև մարգարէական ակամք հայեցեալ՝ որ զկնի թազում ժամանակաց և

հօրն ի նոյն տեղուց հանգուցան նշխարք: Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետևող եղեալ հարցն առաջինութեան:

ԺԲ

### Պատերազմ Շապիոյ ընդ Կոստանդեայ:

Բայց Շապուի Որմզդեան առ տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց, մինչև զօրավիզն օգնականութեան եղեալ՝ թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ ելին արտաք քան զկապանն ծորայ և բանակեցան ի սահմանս Աղուանից ամս չորս: Եւ զայլ յոլով թագաւորս նուածեալ Շապիոյ, և զազգս բարբարոսաց բազումն ի սատարութիւն կալեալ՝ յարձակեցաւ ի Միջերկրեայս և ի Պաղեստինէ: Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս՝ սպառազինեցաւ ընդդէմ Պարսից. և տուեալ Ճակատ, երկոքին կողմանքնպարտեցան. քանզի բազումք անկան յերկաքանչիրոցն. և ոչ մի ի միւսոյ թիկունս դրձոյց. մինչև ի հաւանութիւն եկեալ՝ արարին խաղաղութիւն ամս սակաւ: Եւ ի Պարսից դարձեալ Կոստանդեայ՝ յերկար հիւանդացեալ վախճանեցաւ ի Սոմքիւստի քաղաքին Կիլիկեցւոց թագաւորեալ ամս քսան և երիս: Ի սորա աւուրս երևեցաւ խաչն լուսեղէն առ երանելեաւն Կիւրոիի:

ԺԳ

### Եթէ զիարդ Տիրան իջեալ ընդ առաջ Յուլիանոսի պատանդս տալ:

Չայսու ժամանակաւ թագաւորեաց Յունաց ամբարիշտն Յուլիանոս. ուրացաւ նա զԱստուած և պաշտեաց զկուուս, և յարոյց հալածանս և խռովութիւն ի վերայ եկեղեցւոյ. և բազմադիմի ջանայր շիջուցանել զիաւատ քրիստոնէութեան, բայց ոչ բռնութեամբ հաւանեցուցանէր, այլ խորամանկեալ ինարէր, զի քրիստոսի պաշտօնն խափանեսցի և դւք երկրպագեսցին: Եւ յորած զնա ընդդէմ Պարսից իրաւունքն զգինեցին, և անցեալ ընդ Կիլիկիայ հասանէր ի Միջագետս. և զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զչուանս նաւակամրջին Եձրատու, զգուշանային անցիցն: Իսկ Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի, դիմէ ի վերայ Պարսից զօրացն, և հալածականս առնէ. և հարեալ սպասաւորութիւն՝ անցուցանէ զամբարիշտ Յուլիանոս հանդերձ բազմութեամբ այրեածիոյն, և մեծարի ի նմանէ յոյժ:

Եւ խնդիրս առնէ, զի մի տարցի զնա ընդ իւր ի Պարսս, իբր անկար գոլով ծիավարել, և յանձն առեալ Յուլիանոս՝ խնդրէ զօրս և պատանդս: Եւ Տիրանայ խնայեալ յԱրշակ որդի իւր երկորդ՝ տայ զնա զորդի իւր զՏրդատայ գերրորդ, հանդերձ կնաւ և որդուովք, և զթոռն իւր զՏիրիթ, զորդի մերելուկն Արտաշիսի, որդույ իւրոյ անդրանկան: Զորս առեալ Յուլիանուէ նոյն հետայն առաքէ ի Բիւզանդիոն. և զՏիրան արձակէ յիւր աշխարին. և տայ զիւր պատկերն նկարեալ ի տախտակս, յորում և ի դիւաց զոմանս ընդ նմա. և հրամայէ յԵկեղեցւոց կանգնել յարևելից կուսէ. ասելով, թէ որք միանգամ ընդ Հռոմայցւոց տէրութեամբն հարկին՝ գոյնակէս առնեն: Զոր յանձին կալեալ Տիրանայ՝ առեալ բերէ, ոչ ածելով զմտաւ, թէ խարեւութեամբ՝ դիւաց երկրպագին պատկերք:

ԺԴ

### Վկայութիւն սրբոյ Յուսկանն եւ Ղանիելի:

Արդ՝ հասեալ Տիրանայ ի գաւառն Ծոփաց՝ յիւրում արքայական եկեղեցւոց կամեցաւ կանգնել զպատկերն: Զոր յափշտակեալ սրբոյ Յուսկանն՝ եհան ի ձեռաց արքայի. և ընկեցեալ յԵրկիր, կոխեալ մանրեաց, զգացուցանելով արքայի զիրին խորամանկութիւն: Որում ոչ ինչ ունկնդիր եղին Տիրան, քանզի երկեաւ ի Յուլիանոսէ, զմտաւ ածելով՝ մեռանել ինքեան իբրև զկոխող թագաւորական պատկերի. ո յաւելեալ բորբոքումն չարութեանն, զոր ունէր ընդ սրբոյ Յուսկանն, յաղագս հանապազորդ յանդիմանութեան իւրոց յանցանաց՝ հրամայեաց ջալոտիք հարկանել յԵրկար, մինչ ի գանելն աւանդեաց զիոգին:

Եւ յետ կատարման նորա թշնամանեալ անիծիւք Տիրան ի ծերունույ քահանայէն Ղանիելէ, որ աշակերտ էր սրբոյն Գրիգորի և հիւպերետ, հրամայեաց զնա խեղդամահ

առնել: Զոր բարձեալ աշակերտացն՝ թաղեցին ի միայնաբանի նորին, որ կոչի Հացեաց դրախտ: Իսկ զմարմին սրբոյ Յուսկանն բարձեալ տարան առ հայր իւր ի գիւղն Թորդան. որ եկաց յեպիսկոպոսութեանն ամս վեց:

ԺԵ

**Եթէ զիարդ Զօրայի առեալ զգօրս Հայոց դարնայ ի Յուլիանոսէ, Եւ սատակի ազգաւ:**

Լուր սպանման սրբոյ Յուսկանն և քոթմնջիւն ամենայն նախարարցն եհաս առ նահապետն Ռշտունեաց Զօրայ, որ փոխանակ Մանաճիրի սպարապետ էր Հայոց հարաւային գնդին, և Տիրանայ հրամանաւ զիետ Յուլիանոս զօրօք: Որոյ լուեալ զայսպիսի համբաւ, ասէ զգօրս իւր. «Մի վարեսցուք հրամանաւ այնորիկ, որ զայթագութիւն արկանէ յերկրագութիւնն Քրիստոսի, և սպանմանէ զսուրբս նորա. և մի ծանապարհակցեսցուք այսմ ամբարիշտ թագաւորի»: Եւ զգօրսն համակամս իւր արարեալ՝ դարնայ, և եկեալ ամրանայ ի Տմորիս, մինչև տեսցէ, թէ զինչ արասցեն այլ նախարարքն: Բայց սուրիհանդակըն Յուլիանու յառաջ ժամանեն քան զգալն նորա, բերելով Տիրանայթուղթ, որ ունէր օրինակ զայս.—

**Թուղթ Յուլիանոսի առ Տիրան:**

«Ինքնակալ Յուլիանոս, ծնունդ Ինաքայ, Արամազդայ որդի, և Ճակատագրեալ յանմահութիւն. Տիրանայ մերում գործակալի խնդալ:

«Զգօրս, զոր արձակեցեր ընդ մեզ, առեալ զօրագլխի նոցին՝ ի բաց դարձաւ. և մեք բաւական էաք յանթիւ գնդացս մերոց զիետ առաքել՝ ունել զնոսա. այլ թոյլ տուաք վասն երկուց պատճառաց. առաջին՝ զի մի ասիցեն զնէնց Պարսիկը, եթէ բրնութեամբ և ոչ կամաւ ածէ զգօրսն. երկրորդ՝ փորձել զքո միամտութիւնդ: Արդ՝ եթէ ոչ ի քումնէ կամաց արար նա զայն՝ սատակեսցեն զնա ազգաւիմբ, առ ի չթողոլ նմա մնացորդ. ապա եթէ ոչ՝ երդուեալ ի Ուս, որ զթագաւորութիւնս շնորհեաց մեզ, և յԱթենաս, որ զյաղթութիւնն, զի ի դառնալն մերում անպարտելի զօրութեամբս վանեսցուք զքեզ և զաշխարհ»:

Տեսեալ զայս Տիրանայ և յոյժ զարհուրեալ՝ առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր, և հանդերձ երդմամբ կոչէ առ ինքն զԶօրայ: Իսկ զօրաց նորա տեսեալ, թէ լուեալ կան նախարարքն ամենայն՝ ըստ սովորական անժուժութեան մերոյ ազգիս ցրուեցան ի տունս իւրաքանչիւր: Եւ միայնացեալ Զօրայ, զայ առ արքայ յոչ կամաց. և արքայի զԶօրայ ի բուռն առեալ՝ ունի և զամուրն նոցին զԱղթամար, և բարնայ զամենեսին սատակմամբ: Բայց զմանուկ մի, որդի Մեհենդակայ երթօր նորա, փախուցեալ դայեկաց ապրեցուցին: Իսկ արքայ փոխանակ նորա կարգէ զԱղամուք տէր Անծտայ:

ԺԶ

**Յաղագս մահուան որդւոցն Յուսկան, Եւ յաջորդելոյ զարոռն Փառներսեիի:**

Բայց ի Տրիրանայ խնդրեն նախարարքն Հայոց այր արժանի՝ կացուցանել յեպիսկոպոսութիւն փոխանակ Յուսկան: Քանզի որդւոցն նորին ոչ զովելի վարս ստացեալ՝ անարժանք այնմ առաքելականին աթոռոյ. այլ և մահ ևս հասեալ նոցա յաւուրսն յայնս, յոյժ ահագին և սարսափնան լսողաց արժանաւոր, ի միում տեղուց շանթահար եղեալ երկոցունցն, որոց Պապ և Աթանազենէս կոչէին անուանքն. ոչ թողլով զայակ հասակեայ պատշաճ այնմ, բայց մանուկ մի որդի Աթանազենի, որում Ներսէս անուն ձանաչէր, որ ի Կեսարիայ էր հրահանգս, և զայնու ժամանակաւ գնացեալ ի Բիւզանդիոն՝ առնուլ կին զդուստր Ասպինայ ուրումն իշխանի մեծի: Եւ վասն ոչ կալոյ այր յազգէ Գրիգորի, ընտրեցին զՓառներսեի ոմն յԱշտիշատից Տարօնոյ, և կացուցին քահանայապետ ի տասներորդ ամի Տիրանայ. որ կալաւ զաթոռն ամս չորս:

ԺԷ

## Եթէ զիարդ Շապիոյ խաբեցաւ Տիրան, երթալով ի կոչ նորա եւ կուրացաւ ի նմանէ:

Յետ այսր ամենայնի ամբարիշտն Յուլիանոս ըստ արժանի խորհրդոցն վեր ընկալեալ ի փորոտիսն՝ սատակի ի Պարսս: Եւ զօրացն դարձեալ, թագաւոր ունելով զՅորիհանոս, որ ի ձանապարհի վախճանեալ՝ ոչ ժամանեաց ի Բիւզանդիոն: Իսկ առքային Պարսից Շապիոյ զիետ նոցա կրթեալ, և խաբեցաւ կոչ գՏիրան առ ինքն, գրելով թուղթ այսպէս:—

## Թուղթ Շապիոյ առ Տիրան

«Մազդեզանց քաջ և բարձակից արեգական Շապուի արքայից արքայ. ի բարւոց մերում յիշեալ եղբայր սիրելի Տիրան Հայոց արքայ ողջոյն շատ:

«Ճշմարտի ի վերայ հասաք, եթէ զսէրն մեր հաստատուն պահեցեր, ոչ գալով ընդ կայսեր յաշխարհս Պարսից. այլ և զգունոն զոր էաւ ի քէն՝ զիետ յեալ կոչեցեր ի բաց: Եւ զառաջինն զոր արարեր, գիտենք, զի մի ընդ աշխարհ քո անցանցէ՝ արարեր, զոր ինքն իսկ առնելոց էր. ուստի և մեր պահապանք զնոհին վատասրտեալ ի բաց Եկին, զքեզ պատճառելով. վասն որոյ մեր ցասուցեալ՝ սալարի նոցա ցլու արբուցաք արիւն: Եւ քում թագաւորութեանդ ոչ ինչ վնասեցուք, երդուեալ ի միհր մեծ աստուած. միայն փութա տեսանել զմեզ, զի խորհել ինչ մարթասցուք վասն հասարակաց օգնի»:

Զայս տեսեալ Տիրանայ՝ խելազարեալ զնաց առ նա քանզի արժանն տանէր զնա ի տեղի հատուցմանն: Զոր տեսեալ Շապիոյ՝ կշտամբեաց զնա բանիւք յանդիման զօրաց իւրոց, և զաչս նորա կուրացոյց՝ որպէս զՍեղեկիային այնու ի հնումն. թէ և արդեօք վրէժս ընդ սրբոյ առնն այնորիկ պահաջեցաւ, որով լուսաւորէր աշխարհս, ըստ Աւետարանին ձայնի՝ գոլով լոյս աշխարհի, յորմէ խաւարեցոյց Տիրան զՀայս: Խաւարեցաւ և ինքն, կալեալ զթագաւորութիւնն ամս մետասան:

ԺԸ

## Յաղագս թագաւորեցուցանելոյ Շապիոյ զԱրշակ, եւ արշաւանաց ի Յոյնս:

Բայց Շապուի թագաւորեցոյց փոխանակ Տիրանայ զորդի նորա զԱրշակ, ակն ածելով ի զօրացն Հայոց, զի մի խակիան ինչ առաջի արկելոց իւրոց գործոցն լինիցին. այսպիսի իմն պատեհ համարեալ, բարերարութիւն առնելով՝ իւր հաստատել զաշխարհս. նուածեաց և զազգս նախրարացն, պատանիս առնելով յամենեցունց: Եւ փոխանակ Վահանայ Անատունոյ սպարապետ կացուցեալ Հայոց արևելեայ զօրուն՝ զհաւատարիմ իւր զՎաղինակ Սիւնի, և նամա յանձն արարեալ զՀայս՝ ինքն զիետ յունական զօրուն կրթէր, և հասեալ ի Բիւթանիա, և նստէր ամիսս յոլովս: Եւ ոչ ինչ կարացեալ առնել՝ սիւն առ ծովուն կանզնէ, և առիւծ ի վերայ դնէ, մատեան ընդ ուտիւքն ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. քանզի հզօր է ի զազանս, նոյնպէս և պարսկանն ի թագաւորս. և մատեան ժողովիչ է իմաստութեան, որպէս Հոռմայեցւոց տէրութիւնն:

ԺԸ

## Թէ որպէս արհամարիեաց Արշակ զթագաւորն Յոյնաց:

Ընդ այնոսիկ ապա ժամանակս յարեաւ խռովութիւն արքային Պարսից Շապիոյ ի հիւսիսականաց ազգաց: Եւ Յոյնաց թագաւորեալ Վաղենտիանոս, և զումարտակ ի Միջերկրեայս առարեալ՝ հալածականս առնէ զզօրս Պարսից: Ապա առաքէ առ Արշակ մեր թագաւոր թուղթը:

## Թուղթ Վաղենտիանոսի առ Արշակ:

«Ինքեան Վաղենտիանոս Աւգոստոս, հանդերձ աթոռակցաւ մերով և թագակցաւ Վաղեսի կայսերաւ. Արշակայ Հայոց արքայի խնդալ:

«Պարաք էր քեզ յիշել զչարիսն, որ անցին ընդ ձեզ անաստուածիցն Պարսից, և զերախտիսն՝ որ ի մէնջ ի վաղնջուց մինչև զքեզ, և հեռանալ ի նոցանէ և մօտել ի մեզ: Որպէս զի խաւնեալ ընդ զօրս մեր՝ մարտիցես ընդ նոսա, և հանդերձ գոհացողական

թղթովք մերոց զօրավարացդ առաքեսցես գիարկս աշխարհիդ. և առեալ գեղբայրս քո, և որ ընդ սմա վտարանդիքս՝ ի բաց ածցեն: Ողջ լեր ամենայն հնազանդութեամբ Հռոնայեցոց տէրութեանս»:

Իսկ Արշակ և ոչ պատասխանի առնէ թղթոյ, այլ նշկահեալ արհամարհեաց զնոսա. նա և ոչ զիետ Շապիոյ միտեցաւ ամենայն սրտիւ. այլ անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս և յերգս վարձակաց. քաջ և արի երևեալ քանզԱքիլևս, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կազի սրագլսոյ. վտարանցեալ յիւրոց նախագլխացն, մինչև զամբարտաւանութեանն ընկալաւ վարձս:

Ի

### **Յաղաց սրբոյն Ներսիսի Եւ բարեկարգութեանն որ ի նմանէ:**

Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ Եկաց Եախսկոպոսապետ Հայոց մեծն Ներսի, որդի Աքանագինեայ, որդուոյ Յուսկան, որդուոյ սրբոյ Գրիգորի: Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, և Եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս. քանզի զբաեկարգութիւնն զոր Ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սնա նկարագրէ: Ժողով որորեալ Եախսկոպոսաց և համօրէն աշխարհականօք, կարնոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, Խելով և զայթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում: Քանզի բորոտք հալածեալ լինէին, իբր պիղծ համարեալ յօրինաց. և զուրուկս փախստեայս առնէին, զի մի ի նոցանէ յայլս փոխեսցի ախտն. որոց դադարք՝ անապատք և ամայիք, և ծածկոյթ՝ վէմք և մացառք, ոչ յումեքէ գտանելով մխիթարութիւն թշուառութեանցն: Առ այսոքիւք և հաշմք անդամովք ոչ խնամեալ լինէին, և իհրք անծանօթք ոչ ընդունէին, և օստարք ոչ ժողովէին:

Իսկ նորա հրամայեալ՝ ըստ գաւառաց շինել աղքատանոցս ի խորշս և ի գերօ տեղիս. զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինիցին ի մխիթարութիւն մարմնոց վշտացելոց: Եւ բաժանեաց ի նոսա զաւանս և զագարակս, պտղաբերել յարդեանց անդաստանաց և ի կթից արօտականաց և ի գեղմանց. զի պաշտեսցեն զնոսա հարկաւ, բացէ ի բաց, նոքա մի ելցեն ըստ բնակութիւնս իւրեանց: Եւ յանձն արար Խաղայ ումենն, որ էր ի Մարգաց Կարնոյ սարկաւագ իւր: Սահմանէ և յամենայն գիւլս Վասն շինել, զի լինիցին օտարանոցք, և տեղի սննդեան որբոց և ծերոց, և անունողաց տածումն: Շինէ և յանապատ և յանմարդ տեղիս եղբայրանոցս և մենաստանս և յատկանձնակաց խրճիք. և հայր և տեսուչ նոցա կարգէ զՃաղիտայ և զԵպիփան և զԵփրեմ, և զԳինդ որ յազգէն Սլկունեաց, և զայլ ունան:

Եւ գերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպիական ազատութեանն առնէին. և միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն: Եւ էր այնուիետև տեսանել զախսարհս մեր ոչ որպէս զբարբարոս այլանդակեալս, այլ իբրև զբաղաքացիս համեստացեալս:

ԻԱ

### **Սպանումն Տրդատայ, Եղբօրն Արծակայ, Եւ Երթալ սրբոյն Ներսիսի ի Բիւզանդիոն, Եւ դարձուցանել զպատանդսն:**

Սաստիկ և յոյժ ահաւոր էր ի վերայ անիրաւաց Վաղենստիանոս. ուստի և զբազում իշխանս վասն յակշտակութեան սատակեաց, և զՌոդանոս ոմն ներքինապետ այրեաց կենդանւոյն. քանզի Երիցս հրամայեաց, և ոչ դարձոյց զյակշտակութիւն ընչից կնոշ միոյ այրուոյ: Եւ ի նմին աւուր հասեալ այնց հրեշտակաց զորս ի Հայսն առաքեաց՝ ցասուցին զնա առաւել զրուցով խրոխստալոյն Արշակայ: Եւ վասն զի ի ժամուն յայնմիկ առ ձեռն ունէր զբարկութիւն՝ հրամայեաց զՏրդատ Եղբայր նորա, զիայր մանկանն Գնելոյ, սպանանել, և թէոդոսի զօրու ծանու ի վերայ Հայոց դիմել: Որոյ հասեալ ի սահմանս Հայոց զարհուրի Արշակ և առքէ ընդ առաջ նորա զմեծն Ներսէս. և ի հաշտութիւն

մաղթեալ՝ տայ լիով գխափանեալ հարկսն, և պայծառ պատարագօք ընդ նմին իսկ արձակէ զմեծն Ներսէս: Որոյ Երթեալ և ի հանդարտութիւն զթագաւորն շրջեալ՝ մեծարի ի նոցանէ յոյժ. նա զպատանդսն խնդրեալ առնու և դառնայ: Եւ կոյս մի անուն Ողոմափաղայ, յազգէ կայսեր, կին աօէ Արշակայ: Բայց կայսերն բարերարութիւն արարեալ մանկանն Գնելոյ, յաղազ զուր ի նոցանէ մահուանն Տրդատայ հօր նորա, տայ նմա զպատիւ հիւպատոսութեան, և զանձս յոլովս: Ընդ որ խանդացեալ Տիրիթ՝ խորիկ նմա չարիս հանապազ, սպասելով ի դիպող աւուր:

Ի՞բ

### **Եթէ որպէս եղեւ խռովութիւն Արշակայ ընդ Գնելոյ, եւ մահ Տիրանայ:**

Իսկ գնէլ եկեալ յաւանն Կուաշ, որ յոտին Արագածն կոչեցեալ լերինն, առ կուրացեալ հաւան իւր Տիրան, զի ցայնժամ կենդանի էր: Եւ Տիրանայ ողբացեալ դարնապէս զՏրդատ զորդի իւր, զհայրն Գնելոյ, իբր զինքն ունելով պատճառ սպանման նորա. վասն որոյ տայ Գնելոյ զամենայն ինչս իւր, և զկալուածս գիտից և դաստակերտաց. և ի նմին աւանի Կուաշ հրամայէ բնակել: Ապա առնու Գնէլ իւր կին զՓառանձեն ոմն յազգէն Սիւնեաց. և թագաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս պարզես ամենեցուն նախարարացն: Որոց հաճեալ ընդ նա և սիրեալ՝ ետուն առ նա զզաւակս իւրեանց. զորս առեալ, մեծապէս հանդերձեաց զինու և զարդու. և յաւելին ևս սիրելի զնա:

Աստանօր եգիտ Տիրիթ պատճառս քսութեան. և մատուցեալ առ արքայն հանդերձ բարեկամաւ իւրով Վարդանաւ զինակրաւ արքայի, որ ի Մամիկոնեան տոհմէն էր, ասէն.«Ո՞չ գիտես, զի խորիեալ է Գնելոյ սպանանել զբեզ, զի ինքն փոխանակ քո թագաւորեսցէ: Աիհա տես, արքայ, զնշան իրին, զի բնակեցաւ Գնէլ յԱյրարատ, ի կալուածս ձեր թագաւորաց, և սիրտ ամենայն նախարարացն եղև ընդ նմա: Քանզի կայսերքն նիւթելով զայդ՝ ետուն նմա զպատիւ հիւպատոսութեանդ, և զանձս սաստիկս, որով՝ պատրեաց զնախարարսն»: Երդնոյր Վարդան յարևն արքայի և ասէն.«Իմովք ականջօք լուայ ի Գնելոյ, զի ասէր, թէ ոչ թողում հօրեղբօր իմում զվրէժ մահուան հօր իմոյ, որ վասն դորա եղև»:

Այսմ հաւատացեալ Արշակ՝ յլէ զնոյն իսկ զՎարդան առ Գնէլ, թէ «Ընդէ՞ր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայրենեաց: (Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդույ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահեին, և այլոց Արշակունեաց բնակել ի զաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանւոյ, հանդերձ ռոճկօք և մտիւր յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի է քեզ, կամ ընդունել զնահ, կամ զնալ յԱյրարատայ, և արձակել ի քեն զուստերս նախարարացդ»: Զայս լուեալ Գնելոյ՝ արար զիրամանս արքայի և զնաց յԱղիովիտ և յԱռեբերանի: Բայց Տիրան հաւան նորա պատգամս խիստս յղեաց առ որդի իւր Արշակ. վասն որոյ հեղձամահ եղև յիւրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի զալտնիս, և ի նմին աւանի Կուաշ թաղեցաւ, ոչ արժանի եղեալ հարցն զերեզմանաց. թէ արդեօք զփոխարէնսն Դանիելի առն Աստուծոյ հասոյց, որով չափով չափեալ եղև ըստ Գրոց:

Ի՞գ

### **Դարձեալ խանդալ Արշակայ Գնելոյ եւ սպանանել զնա:**

Ապա ելանէ արքայ զթիկամբք Մասեաց առնել որսս յիւրում սիրեցեալ զաւառի ի Կոզայովտի. և եղեալ որս սաստիկ՝ ուրախացեալ Արշակ ի զինիս պարծէր, ոչ այլոյ ուրուք ի թագաւորաց նախ քան զնա մեռանել այնչափ բազմութիւն երեց ի միում ժամու: Աստանօր դարձեալ նորոգեն զնենզութիւնն Տիրիթ և Վարդան, ասելով, Գնելոյ բազում երէս քան զայն ունել ընդ նոյն աւուրս յիւրում լերինն, որ Շահապիվանն անուանի, որ ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ Գնունւոյ հասեալ էր ցնա: Վասն որոյ առաքէ առ նա հրովարտակ այսափիսի.՝

**Թուղթ Արշակայ առ Գնէլ:**

«Արշակ արքայ Հայոց մեծաց, Գնելոյ իմում որդուոյ խնդալ:

«Տեսես տեղիս քաջերէս ի լերինդ Ծաղկաց զպարկացիր ջրով, և պատրաստես.զի Եկեալ մեր՝ ըստ արժանեաց թագաւորականաց հանդիպեսցուք որսոց»:

Եւ Երազ զիետ հրովարտակին երթեալ Արշակ՝ խորհեր, եթէ ոչ ըստ հրամանին զոցէ արարեալ Գնելոյ, պատճառս ի վերայ Եղեալ, իբր թէ չարակնեաց զուրախանալն արքայի՝ կապեսցէ զնա: Այլ իբրև Ետես, զոր չէր երբէք տեսեալ զյնափսի պատրաստութիւն որսոց և բազմութիւն Երէոց, խոցեալ խորհրդովք նախանձու և կասկածանաց հրամայեաց նոյն Վարդանայ ի նմին որսին սպանանել զԳնէլ, որպէս թէ ընդ խարս ինչ ի Վրիպակաւ, Երէյ կամելով ձգել՝ նմա պատահեաց նետն: Որոյ առեալ զյսափսի հրաման՝ վաղվաղակի կատարէ, ոչ այնչափյաղազս հրամանի թագաւորին, քան թէ վասն կամաց Տիրիթայ իւրոյսիրելոյն: Իսկ Արշակայ հանդերձ նախարարօքն իջուցեալ ի դաշտն Աղիովիտ զրին Գնելոյ թաղեաց յարքունական քաղաքին Զարիշատի. ի չքմեղս Եղեալ՝ կոծ մեծ առնէ:

ԻԴ

### **Եթէ որպէս Ժարիեցաւ Արշակ առնով զիին Գնելոյ, յորմէ Եղեւ Պապ:**

Թէպէտ և Արշակ կարծեաց զանխով գործել զչարիսն՝ այն որ ոչն ծածկի յամենատես ականէր Աստուծոյ, յայտնի և աշխարհի, առ ի մեղուցելոց պակուցումն, որպէս զմահն Տիրանայ և Գնելոյ: Քանզի զիտացեալ ամենայնուրութ՝ իմացաւ զայս և մեծն Ներսէի, և անէծ զԱրշակ և զարիթ սպանանան. և գնացեալ նստաւ ի սուգ զաւրուս բազումս, որպէս Սամուէլ վասն Սաւուղայ: Իսկ Արշակ ոչ զջացեալ ապաշաւեաց, այլ անամօթեալ, ազահելով ի գանձս սպանելոյնն ի ժառանգութիւն՝ յաւել առնով զկին նորին զՓառանձեն. յորմէ Եղեւ պատանի մի, որ անուանեցաւ Պապ:

Այս Փառանձեմ գործեաց զանլուր և զանկարելի չարիս, և զսար սափման լսողաց արժանաւոր: Անարժանիւ ոմամբ սուտանուն քահանայի ի կենաց դեղն զմահացուն խառնեալ՝ Ետ Ողիմիադայ առաջին կնոջն Արշակայ, և Ելոյժ ի կենաց սակս տիկնութեանն մախանաց: Նոյնպէս և զՎաղինակ տայ Արշակայ սպանանել, և փոխանակ կարգել զիւր հայրն զԱնտիոք:

ԻԵ

### **Սպանումն Տիրիթայ:**

Իբրև Եղեւ խաղաղութիւն Շապիոյ ի հիւսիսականաց ազգաց, և պարապ առեալ ի պատերազմացն՝ յայտնեաց զցասումն զոր ունէր առ Արշակ, վասն ոչ նմա, այլ կայսեր հարկելոյ զայնքան ամս: Սակս որոյ առաքէ առ նա Արշակ զՏիրիթ և զնորին սիրեցեալն Վարդան արժանի պատարազօք՝ խնդրել զիաշտութիւն: Բայց վասն զի քինախնդիր անցելոցն մարտից կամեցաւ լինել Շապուհ՝ ինքն Ելանէ պատերազմել ընդ Յոյնս, որոյ աղազաւ խնդրէ զԱրշակ մեր թագաւոր հանդերձ ամենայն զօրօքն հայոց ընդ իւր լինել: Իսկ Արշակ ոչ կամեցաւ իւրովի Երթալ, այլ բարուրս Եղեալ՝ դոյզն գունդ առաքէ զկնի Շապիոյ:

Եւ իւր բարեկացեալ Տիրիթայ՝ ընկենու զնա ի պատույն, որպէս զի թէ ի նորա հրապուրանաց Եղեւ այն, յաղազս ատելութեանն զոր ունէր առ Յոյսն: Եւ առաւել ևս գրգռէր զարքայ Վասակ զինակիր նորա, նախանձ պահելով ընդ Եղբօրն վասն աղջկան միոց հարձի: Վասն որոյ նախատեաց զնոսա արքայ ամօթալի բանիւք և կսկծեցուցանողք: Որոց ոչ կարացեալ այնպիսի Վատթարութեան և պարսաւանաց տանել՝ դէմ Եղեալ զնացին առ Շապուհ հատուած: Ընդ առաւել ևս զայրագնեալ Արշակ՝ հրամայէ նոյն Վասակ զիետ նոցա կրթել բազմաձեռն զնդաւ, զի ուր և հասց՝ սպանց զնոսա. զոր ոչ հեղգացաւ կատարել Վասակ, թէպէտ և Եղբայր նորա էր Վարդան: Եւ խնդրեցաւ անպարտ արինն Գնելայ յամբարշտէն Տիրիթայ ըստ անիծիցն Ներսիսի, և Վարդանայ, ի հարազատ Եղբօրէ իւրմէ մեռանել:

## **Պարտումն Շապիոյի ի Տիգրանակերտի:**

«Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքայ. Տիգրանակերտեայց, որք ոչ էք անուանելոց ի մէջ Արեաց և Անարեաց:

«Ես կամէի ի ձէնջ սկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ և քաջօրէն ազատութեամբ զմուտն առնել. և եթէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին եք, ոչ շահատակութեամբ ասեմ, այլ ի մտէ ուղևորութեանս, ընդդէմ կացէք ինձ՝ ի ձենջ ուսցին և այլք զդոյն առնել: Այլ ի դարձին իմում բարեկութեամբ այնպէս վանեցից զծեզ, զի կրկին եղիջիք օրինակ խեռեալ ստահակելոց»:

ԻԵ

## **Եթէ որպէս Արշակաւան շինեցաւ եւ կոտորեցաւ, եւ առաւ Անի:**

Բայց Արշակ ևս ժարիեցաւ առնել գործ անմտութեան: Ի թիկանց կուտէ լերինն Մասեաց շինեաց ձեռակերտ, ժողով մարդական մեղաւորաց. և ետ իրաման, որ ոք անկեալ անդր բնակեսցէ՝ մի լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի: Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն. քանզի աւանդառուք և պարտականք, և ծառայք և վնասակարք, և գողք և սպանողք, և կնահանք և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին, և ոչ կայր նոցա այց և խնդիր: Եւ բազում անգամ բողոքեալ նախարարացն՝ և ոչ ինչ նոցա Արշակ. մինչև առ Շապուհ ևս ունել նոցա բողոք: Եւ եղև ի դառնալն Շապիոյ ի Յունաց առաքեաց զմի ի սպարապետաց իւրոց և հայ գունդ ընդ նմա, եթէ դէպ լինի, ունել զԱրշակ. նա խոյս ետ ի նոցանէ զկողմանքը Կաւակասու, Վրաց միաբանելով:

Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս՝ ի ձեռնտու լինելոյ նախարարացն առնու զամուրն Անի, և գերէ զամենայն զանձս արքունի որ ի նմա, այլ և զոսկերս թագաւորացն. ոչ գիտեմ, թէ վասն նախատի՞նս առնելոյ Արշակայ, եթէ վասն հմայից ինչ հեթանոսականաց: Զոր ապա մաղթեալ նախարարցն՝ թափեալ թաղեցին յաւանին յԱղցա, որ յոտին Արագած կոչեցեալ լերինն: Քանզի ոչ գիտացին ընտրել զոսկերս հեթանոսաց և հաւատացելոց, զի ընդ միմեանս էր խառնակեալ գերողացն, յաղազ այնր ոչ արժանի համարեցան ի դիրս սրբոցն թաղել ի Վաղարշապատ քաղաքի:

Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց. քանզի դառնացեալք էին իւրաքանչիր ի վերայ ծառայից իւրեանց և յանցաւորաց: Զոր թէպէտ և վաղ գիտացեալ մեծին Ներսիսի՝ ոչ յառաջ քան զկոտորելն ժամանեաց հասանել. այլ ի կատար գործոյն հասալ՝ եգիտ բաժանեալ զտղայս կոտորելոցն, զի վարեսցեն ի գերութիւն որպէս զիեռաւոր թշնամեաց: Զորս թափեալ մեծին Ներսիսի, հրամայեաց կրել որթովք ի գոմ մի, և դարմանս և սնուցողս նոցին կարգեաց. որք յետոյ աւանացեալ անուանեցան Որթք այնորիկ աղազաւ:

ԻԸ

## **Առումն Տիգրանակերտի եւ բնարար քանդումն:**

Իսկ Շապուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին ընդդիմանալ նմա. և ելեալ ի պարիսպն աղաղակէին. «Գնա ի մէնջ, Շապուհ, զի մի չարիս յերկրորդումս ընդ քեզ առաւել ևս քան զառաջինն անցուցանիցենք պատերազմաւ»: Եւ նա պատասխանեաց. «Ո՞վ քաջքդ ի Հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ պարսաօքդ Տիգրանակերտի և արտաքս ձայն արկանէք սպանալեաց. զի քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղուց կռուել, և կանաց գործ է արգելու փակել զինքեանս յերկիւտէ առ հանդեւնձեալ կռիւսն»: Եւ զայս ասացեալ՝ դարձաւ առ գերեալ Յոյնսն զինաւորս, ասէ. «Եթէ ձերով մարտի առից զայս քաղաք՝ զամենեսեան զծեզ արարից ազատս հանդերձ ընտանեօք ձերովք»: Եւ պարսկական զօրուն շուրջ զքաղաքան հրամայեաց ընթանալ, և նետիւք խոցոտել զի վերայ պարսպին:

Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էշն: Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սկօք երկրերանովք և կտցաւոր մրձովք՝ ձորել զիհնունսն: Եւ նզախարիսար արարեալ զայն, որ ի հայկազնոյն Տիգրանայ հոսեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին. և հուր ի դրունսն և յամենայն կողմանսն վարեալ, և քարինք և նետր և տէգք արձակեալք լինիին, և խոցոտեալ մերքն յապուշ դառնային: Եւ ի ներքս մտեալ բոլոր գօրքն՝ և ձեռն պարսկական ոչ վաստակէր գրազմախողխող արեամբ արբուցանել, մինչև ապաժոյժ սպանելոցն լցեալ ի հիմունսն ծաւալէր: Այլ յունական ձեռն ի քթել ական հրձիգ առնէր զամնեայն փայտակերասն: Եւ Շապիոյ զմնացեալսն ի կոտորածէն գերեալ՝ չուտ ի Պարս. և հրեշտակս առ որ ի Հայս գունդք առաքեալ՝ անպայազատ զՍիւնեացն հրամայէ առնել զտոհմ:

## Իթ

### **Յաղազս պատերազմին Արշակայ ընդ նախարարս իւր, վտարանդի երթալոյն Պապայ ի Բիզանտիոն:**

Դարձեալ յարեալ խռովութիւն Շապիոյ ի նոյն ազգաց, և խաղաղութիւնն ի Յոյս շրջեցաւ, ըստ այնմ թէ փոխարկեալ միմեանց փոխարինին. սացա խաղաղութիւն ի նոցա խռովութեանն, և նոցա խաղաղութիւն ի սոցա խռովութեանն, որ վախճան միոյն՝ միւսոյն լինին սկզբունք: Քանզի հիւանդացեալ Վաղենտիանու ի բերդին որ կոչի Բերգիտիոն՝ վճարի ի կենցաղոյս, եղբօրն փոխանորդելով զտէրութիւնն՝ Վաղեսի. յետ բարեբախտագոյն պատերազմաւ Գթացն յաղթութեամբ դարձի, նոյն հետայն առաքէ զօրս ի Միջագետս ի Հայս, յաղազս տուելոյ զօրուն յօգնութիւն Շապիոյ:

Բայց Արշակայ եկեալ Վրացի զնդաւ՝ ժողովէ զսակաւս և յիւր մտերմաց, և տայ պատերամ ընդ նախարարսն ընդ այնոսիկ, խնդրելով զվրէժ ձեռակերտին իւրոյ Արշակաւանու: Միաբանեալ և նոցա առաջնորդութեամբ Ներսէի որդույն Կամսարայ, ընդդիմանան Արշակայ պատերամաւ: Եւ հզօր մարտի եղելոյ՝ բազումք յերկաքանչիւրոց կողմանցն անկան. քանզի արք դիպեալ արանց՝ ոչոք զպարտութիւն յանձն առնոյ: Եւ մինչ դեռ նոքա յայսմ էին, հասանեն և զօրքն կայսերականք: Ապա տեսեալ Արշակայ, թէ թշնամի են նորա Շապուի և Վաղէս և իւր նախարարքն, տարակուսեալ յամենեցունց՝ յղէ առ մեծն Ներսէս բազում անզամ աղաչելով. խոստանայր դառնալ յամենայն ձանապարհաց չարաց, և լինել ըստ կամաց նորա, և ապաշխարեալ ի քուրծ և ի մոխիր. միայն զի նա եկեսցէ և արասցէ խաղաղութիւն, և թափեսցէ զնա ի ձեռաց հզօրացն Յունաց: Սապէս և ի նախարարացն ասէաւ զմիմեանց զկնի գային մաղթանք նորին աղազաւ. նա և եախսկոպոսացն ժողովեալ՝ պաղատանս մատուցանէին, զի մի անփոյթ արասցէ զկորստենէ իւրոյ վիճակին:

Ապա հաւանեալ մեծն Ներսէն՝ եկն մէջ նոցա, և արար խաղաղութիւն, լսելով նմա թագաւորին և նախարարացն, բայց նահապետէն Արծրունեաց Մեհրուաժանայ և ի նորին քեռառնէ Վահանայ Մամիկոնենէ, որք անլսող եղեալ՝ ապստամբեալ զնացին առ Շապուի: Իսկ այլ ամենայն նախարարքն հաստատեցին ուխտ, զի յայնմ հետէ թագաւորն վարսեցին ուղղութեամբ, և նոքա ծառայոսցին միամտութեամբ. և այս ի մէջ նոցա: Բայց և առ զօրսն Յունաց երթեալ մեծին Ներսիսի, աղաչէր մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ առնուլ զիարկսն և զորդի Արշակայ զՊապ հանդերձ ամենայն նախարարացն որդուվք պատանդս, և դառնալ: Որում լսող եղեալ քաղցր և մեծն թէղողորս զօրավար՝ դառնայ առ կայսր հանդերձ պատանդօքն, ընդ իւր տանելով զմեծն Ներսէս թղթով Արշակայ, որ ունէր օրինակ զայս.—

## **Թուլք Արշակայ առ Վաղէս:**

«Արշակ արքայ Հայոց մեծաց և ամենայն նախարարք Արամեան ազինս. տեառն մերում ինքնակալի Վաղեսի Աւգոստոսի և որդույ քում Գրատիանոսի խնդալ:»

«Մի դիցէ ինքնակալդ ի մտի, Եթէ առ աստել զձեզ նշկահեցաք, կամ իբրև զիզօրս ինչ զմեզ վարկանելով՝ արձակեցաք գունդ հինից յերկիրդ Յունաց. այլ մեծի խռովութեանդ, որ ի ձերում միջի շարժեցաւ, գիտակ եղեալ՝ Երկուցեալ ի Շապիոյ, Եթէ ոչ ոք թափեսցէ զմեզ ի ձեռաց նորա՝ օգնեցաք նմա դոյզն զնդաւ: Այլ որ ես ինքն Արշակ Եկի ընդ նմա, զմիամտութիւն ընդ ձեզ պահելով. Վասն որոյ աւերեալ զերեաց զաշխարհս մեր, մինչև զոսկերս անգամ հարցն բրեաց ի գերեզմանաց: Եւ արդ՝ հաւատացեալ ձեր Եղելոց՝ զառաջին սէրն առ մեզ հաստատուն պահեցեք, և մեք առ ձեզ զմտերիմն հատուցուք ծառայութիւն»:

Իսկ Վաղէս որ զքուրեմ ընթերցաւ, և ոչ զմեծն Ներսէս ետես. այլ բացէ ի բաց արտասահմանել զնա հրամայէ, և սրոյ զամենայն պատանդսն մատնել:

Լ

### **Յաղազ արտասահման լինելոյ մեծին Ներսիսի, եւ անկանել պատահեալ ի կղզին ամբնակ. եւ որպէս կերակրեալ լինէին ի վերին խնամոցն:**

Ի ժամանակին յայնմիկ էր յաթոր Եպիսկոպոսութեանն Բիւզանդացւոց հոգեմարտ Մակեդոն: Եւ իբրև ել հրաման յարքունուստ աքսորել զմեծն Ներսէս, որպէս զմի անգամ խաբող և դրժող արքայի մատուցեալ առ նա ոնանց ի հերձուածողաց աղանդոյն Արիոսի, ասեն. «Եթէ դաւանես ընդ մեզ՝ թափէ զքեզ հայրն մեր Մակեդոն»: Որում ոչ հաւանեալ՝ աքսորեցաւ. և ի նաւալիւդն ըստ խստաշունչ օդոյ ձմերայնոյն, ընկեցեալ ի կղզի ինչ անապատ՝ ջարդեաց զնաւն. և նաւորդացն ոչ իշխնեցեալ մակուլաւն նաւել, մնային տագնապեալ, ուտելով զարմատս անտարին: Այլ ի տեսչութենէն Աստուծոյ կերակրեալ լինէին ամիսս ութ ի ձկանցն, զոր ծովն ընկենոյր կենդանիս: Բայց Պապայ յանձն առեալ հանդերձ ամենայն պատանդօքն՝ թափեաց Մակեդոն:

ԼՍ

### **Կոտորել Արշակայ զնախարարսն, եւ յաղազ վարուց Խաղայ Եպիսկոպոսի:**

Ի հեռանալ մեծին Ներսիսի՝ ստեաց Արշակ ամենայն ուխտիցն, զոր եղ ընդ նախարարսն, և խնդրեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշակաւանու: Եւ կոտորեաց զբազումս ի նախարարցն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, շարակնելով ազահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ուստանի նոցա Երուանդաշտ: Եւ կոչեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իբր զազգականս իւր, պատճառս պատույ մեծարանաց, միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել: Եւ որոք ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշաւրի. քանզի ունէր Արշակունի, որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից, իբր տրտունջ զիօրելիքորէն իւրմէ Եղեալ զներսեհէ. որոյ աղագաւ և ոչ ի կոտորման նոցա դիպեցաւ: Այլ լուեալ զբօթն՝ հանդերձ որդուվքն Շաւարշաւ և Գագաւոնիւ և բոլոր ընտանեօքն գնաց փախստական ի Յոյնս:

Բայց ի գնալն մեծին Ներսիսի ի Յոյնս՝ էր ձեռնադրեալ զսարկաւագն Խաղ յեպիսկոպոսութիւն Բագրեանդայ և Արշարունեաց, և հաւատաց ի նա զամենայն զործ վերակացութեան աշխարհիս մինչև զժամանակ իւրոյ դարձին: Այս Խաղ յամենայնի նմանել մեծին Ներսիսի, և առաւել ևս ի տեսչութիւն աղքատաց. որոյ և շտեմարանքն իսկ աղբերացան սքանչելապէս իբր առ Եղիայիւ և Եղիսէիւ. և ի յանդիմանել զարքայ՝ ահաւոր և սաստիկ էր և աներկիւդ: Եւ ոչ եղև ի նմա զամագիւտ սատանայ, բայց առ միոյ նուազի, զի էր պձնող առ հանդերձս և ձիասէր. զոր պարսաւեալ այպանէին փոխանաբանեալ՝ որք ի նամէ յանդիմանեալ լինէին: Վասն որոյ թողեալ այնուիետու զպերձագոյն հանդերձսն, խարազնազգեստ Եղեալ՝ իշով շրջէր մինչև ցօր մահուան իւրոյ:

ԼԲ

### **Եթէ որպէս Արշակ քարշել զերանելին Խաղ եւ քարկոծել զնա կամէր սակս յանդիմանութեան իւրոց յանցանաց:**

Եւ եղև ի սատակել Արշակայ զազգն Կամսարականաց՝ հրամայեաց զդիակունս նոցա քարշել և ընկենուլ անթաղ, կերակուր լինել շանց. և ինքն որպէս մեծաւ յաղթութեամբ պսակել, ի բարեկենդանութեան կատարէր աւուրս, կուտել մթերել յԱրմաւիր զնոցայն հրամայելով զհամբարսն: զորոց պեղեալ երկուս հորս յոյժ քաջախորս և սաստկապէս լայնս, որ ի շինին Նախճաւանի, բերին սայլովք նորից աւանի: Իսկ սայլորդացն տեսեալ ոսկերս մարդական զազանակուր եղելոց, ցրուեալս առ եգերք փոսդյն, հարցեալ ուսան՝ իրեանց լինել տերանց. հաւաքեալ ի սայլսն ներքոյ եղեգանն՝ բերեալ թաղեցին ի նոյն հորս: Չոր զգացեալ Արշակայ՝ հրամայէ զսայլորդսն ի վերայ հորոցն կախել զփայտէ:

Բայց Խաղայ ոչ պատահեալ յառաջնում նուագին, այսմ ժամանեալ հասանէ. և սկսաւ կշտամբել զարքայ բանիք յանդիմանութեան: Հրամայեաց Արշակ քարշել զնա և քարկոնել: Եւ քանզի էին դստերաց նորա տայգեչք ի մեծ նախարարութեանցն, ի կորովի ի քաջ ազգէն Ապահունեաց՝ սուսերս հանեալ կիսախողխոր զքարշոլսն առնէին, և յափշտակեալ զիսադ ի ձեռաց նոցա, և յիրեանցն զնացին գաւառ: Եւ Արշակայ ոչ ի հակառակս մտեալ՝ զօղէր, զի մի խռովութիւն ամենայն նախարարացն յուզիցի:

ԼԳ

### **Յաղագս թագաւորելոյն Թէոդոսի մեծի, եւ ժողովոյն որ եղեւ վասն հոգեմարտացն:**

Բայց Կաղեսի կայսեր ըստ արժանի իրոց խորհրդողն զյաւիտենական զեհենին աստէն բերելով զօրինակ, եղեալ յԱղրիանուապօլիս՝ սատակեցաւ. և աւճու զթագն թէոդոս: Սա քակեաց զմեհեանս կրոցն մինչև յատակս, զփակեալսն միայն ի սրբոյն Կոստանդիանոսէ, զանուանեալն Արեգական և Արտեմեայ և Ավրորդիտեայ ի Բիզանդիոն. աւերեաց նոյնպէս և զտաչարն Դամասկոսի, և արար եկեղեցի. նոյնպէս և զտաճարն Իլիու քաղաքի, զլիբանոսի զմեծ և զիշչակաւոր գերեքքարեանն:

Սա դարձոյց զամենայն հարս սուրբս, որք յաղագս ուղղաթառութեանն արտասահմանեալ էին ի մետաղս, ընդ որս և զմեծն Ներսէսի ածեալ առ իւր ի Բիզանդիոն՝ պահէ մեծաւ պատուով, մինչև Ճշմարտութեանն ստորգեցաւ հաւատս, որ յաղագս ամբարիշտին Մակեդոնի հայիոյութեանցն. զի ոչ Տէր պոստովանէր զՀոգին սուրբ, և ոչ Երկրպագելի և ոչ փառաւորելի ընդ Հօր և ընդ Որդուոյն, այլ օստար յԱստուածոյ բնութենէն, և ստացական և ծառայ և պաշտօնեայ, ազդումն ինչ, և աչ էութիւն անձնաւոր: Եւ ժողովեալ սուրբ հարքն ի թագաւորեալ քաղաքն Բիզանդիոն, Դամասկոս Հռոմայ, Նեքտարիոս Կոստանդնուապօլիս, Տիմորէս Աղեքսանդրի, Սելիստոս Անտիոքու, Կիլոդոս Երուսաղէմի, Գրիգորիոս Նիւսիայ, Գեղասիոս Կեսրու, Գրիգորիոս Նաձիանձու, Անփիլոքսիոս Իկոնիու, և այլ Եպիսկոպոսք, միանգամայն հարիւր և յիսուն հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն և զամենայն հոգեմարտս:

ԼՇ

### **Ակամայ երթ Արշակայ առ Շապուի, եւ անդարձ լինել:**

Դարձեալ պարապ առեալ Շապուի ի պատերազմացն՝ առաքէ ի վերայ Արշակայ զԱլանաոզան ոմն պակաւիկ՝ հզօր զնդաւ, որ էր ազգակից Արշակայ: Յորմէ խոյս տուեալ Արշակայ, թափուր ի բազմաց մնայր նախարարաց. որոց ձեռն տուեալ յԱլանաոզանն՝ կամաւ Երթային առ Շապուի, տաղտկացեալ յիրեանց արքայէն Արշակայ. և մեծարեալք ի նմանէ դառնային յաշխարհս մեր: Ուստի տարակուսեալ Արշակայ՝ յηէ պատզամ առ իշխան զօրուն Պարսից, եթէ «Դու արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր այդպիսեաւ վարես զիս զերմութեամբ. թէպէտ և ակամայ զգալուստ քո զիտեմ, ոչ կարացեալ սայթաքել զիրամանս Շապուի՝ գալ ի վերայ քո ազգականիս: Այլ արդ՝ թուլացո ինձ դողել ուրեք վայրկեան մի ժամանակի, մինչև ոգի առեալ՝ անցանել կարացից յԵրկիրն Յունաց. և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեսցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ»:

Դարձուցանք Ալանաոզանն այսպիսի պատասխանիս, և ասէ. «Թէ դու ոչ խնայեցեր յազգայինսն մեր Կամսարականս, որ առաւել քան զիս էին քեզ հարազատագոյքն, դենի ձերոյ մասամբ և աշխարհաւ համարնակաւ, զիարդ յինէն ակն ունիցիս ի քեզ խնայել, հեռացեալ դենիւ և բնակութեամբ. և որո՞վ օրինակաւ ես ի քոյսն յուսալով բարիս, որ անյայտ է թէ առից՝ զգտեալսն յիմմէ թագաւորէն կորուսանիցեն»:

Ապա այնուհետև յոյժ նեղեալ Արշակ, յոչ կամաց երթայ առ Շապուի, և ի պահեստի լինի ի նմանէ. և բռնութեամբ հարկաւորեալ գոտ, զի Փառանձեմ կին նորա Եկեսցէ ի դուռն: Եւ Շապուի հրամայէ ամենայն մեծամեծացն, զի ընդ Փառանձեմայ Եկեսցեն:

## ԼԵ

### **Յաղագս չարեացն որ անցին ընդ Հայս ի Շապիոյ, Եւ մահն Արշակայ:**

Իբրև գիտացին նախարարք Հայոց, այնք, որոց նախ քան զԱրշակ ձեռն տուեալ էր Շապուի արթայ Պարսից, թէ և զնոցա կանայսն խնդրեալ է իբրև զայցն, որք առ Արշակայն էին միամիտք, և զայն ևս տեսին, եթէ զնաց Ալանաոզան, և զունդ փոքր է որ վասն այնր է Եկեալ՝ միաբանեալ հալածեցին զնոսա. և իրեանց առեալ զկանայս և զորդիս փախեան յաշխարն Յունաց: Նա և ոչ դշխոյն Փառանձեմ գնաց ի կոչ առնն իւրոյ, այլ հանդերձ գանձիւք անկաւ յամուրն Արտագերից. լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրեալ ի ձեռաց Շապիոյ: Ընդ որս զչարեալ Շապուի կապէ զոտս Արշակայ Երկաթեղէն զղթայիւք, և տայ տանել յերկիրն Խուժաստանի յԱնուշն կոչեցեալ բերդ: Եւ բազում օօրս գումարեալ ի ձեռն Սեհրուժանայ Արծրունուոյ և Վահանայ Մամիկոնէի, ուրացող զՔրիստոս, արձակէ յաշխարիս Հայոց. որք Եկեալ նստան շուրջ զբերդաւն Արտագերից: Եւ թէպէտ ոչ ինչ կարէին առնել նմա վասն աննատչելի ամրութեանն, բայց զի բարկութիւնն Աստուծոյ էր ի վերայ Արշակայ՝ մարդիկ ամրոցին ոչ անսացին մնալ համբաւուն Պապայ, այլ անձնատուր եղեն ի կամաց, և ոչ ի բռնութենէ: Զորս գերեալ հանդերձ գանձիւքն և տիկնաւն Փառանձեմաւ խաղացուցին ի յԱստեստան. և անդ սայլի ցհց հանեալ՝ սատակեցին:

Ի նմին ժամու եհաս հրաման ի Շապիոյ արթայ՝ զի քանդեալ աւերեսցեն զամրութիւն ամենայն քաղաքաց, և զՀրեայսն խաղացուցեն ի գերութիւն, և զայն Հրեայսն, որ նովին հրեութեան օրինօք կային ի Վանն Տոսպայ, զորս ածեալ էր Բարզավիրանայ Ռշտութեոյ յաւուրս Տիգրանայ. զորս բնակեցոյց Շապուի յԱսպահան: Գերեցին և զայն Հրեայսն որք յԱրտաշաճ և ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ արթայի, որք յաւուրս սրբոյն Գրիգորի և Տրդատայ հաւատացեալ էին ի Քրիստոս, ընդ որս և զՉուիթայ Երէց Արտաշատու: Յայնժամ մատուցեալ առ Շապուի Սեհրուժան և Վահան չարախոսէին զՉուիթայ Երիցուէ Արտաշատու, եթէ յայն սակս Եկն ընդ գերութիւնն, զի խորտեսցէ զնոսա պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան: Վասն որոյ Շապուի հրամայեաց չարչարել զՉուիթայ, զի թողցէ զօրէնս քրիստոնէութեան. որում ոչ հաւանեալ, կատարեցաւ: Զայս ամենայն աղէտս թշուառութեանց լուեալ Արշակայ՝ սաւուղաբար արար ընդ անձին իւրում. որ թագաւորեաց ամս Երեսուն:

## ԼՉ

### **Անցք ընդ մեզ չարեացն ի Սեհրուժանայ Եւ թագաւորել Հայոց Պապայ:**

Յետ մահուանն Արշակայ գումարեաց Շապուի զօր բազում ի ձեռն Սեհրուժանայ, և արձակեաց ի Հայս, ի նա հաւատալով զաշխարիս:

Եւ տուեալ նմա զքոյր իւր զՈրմզդուխտ, և հրովարտակս բազում շինից և դաստակերտաց ի Պարսից աշխարհին, և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով՝ ի զէն մազդեզանց զաշխարիս դարձուցէ: Որոյ յանձն առեալ և Եկեալ, և զբազմուն ի նախարարց կանաց կալեալ՝ ի բերդս բերդս տայր պահել, զդարձ արանցն յուսալով: Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել: Զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց

պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել: Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի ուսանել զդարութիւն յունարէն, այլ զպարսից, և մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենակին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ, այլ Ճշմարիտ՝ խափանել զքրիստոնէութեան ուսումն. զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չե լեալ, և յունականն վարէին եկեղեցւոյ կարգը:

## ԼԵ

### Յաղագս մեծի պատերազմին՝ որ եղեւ ի Զիրաւ, եւ սատակման ամբարշտին Սեհրուժանայ:

Ազգ արարեալ Մեհրուժանայ յերկիրն Խորասանայ առ Շապուի զամենայն օգնականութիւն Թէոդոսի զոր արար առ Պաապ՝ ելանէ հրաման ի Շապիոյ՝ ամենայն զօրացն Պարսից Երթալ ընդ Մեհրուժանայ ի Հայս ի պատերազմ: Դոյնպէս ազգեն ինքնակալին Թէոդոսի Պապ և Տերետիանոս գծապիոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց Ելանել ի Վերայ մեր, բայց դրանկացն: Ապա և աւդոստոսն Թէոդոսի հրամայեաց Արդէի կոմսին մեծի Երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոք թողուլ՝ զոր ոչ առցե. այլ և զիետևակս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայսն ունէին զվիշապս:

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Զիրաւ, և մատեան ձակատ առ ձակատուց: Եւ մանկունք քաջ նախարարացն հայոց, ինքնակամ նահատակեալք, մտնի ի մէջ ձակատուց, առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդուոյ Բագարատայ, ու յազգէն Բագրատունեաց: Ելին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, և խաղացին ի մէջ ձակատուցն. և ցիրք ընդ ցիրս լինէին: Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուա դարձեալ մերոցն զիետ նոցա, օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերևաթափ, այնպէս Երազ յերիվարացն առեալ նիզակօք, դի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ձակատն մտանել: Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին՝ նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վնասելոյ: Քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետևակ զօրուն, իբր պարսպաւ պատեաց վահանօք զձակատն Պապայ:

Քանզի զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և Երիվարք նոցա նոյնպէս զարդու, և էր տեսանել իբրև զպարիսապ ինչ, յորոց յոլովք ի ջղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին Երևոյթս. և ի Վերայ նոցա անխալամ զէքս նշանք արձակեալք իբր զսաղարթս ինչ հովանաւոր ծառոց: Բայց զվիշապացն մանուածս, ահազին բերանաբացութեամբ ուսուցեալ ի փամանէ օդոյն, որ ինչ ուրեք կարեմնմանեցուցանել, այլ միայն զլեաւն ինչ ադամանդեայ խոնարիի ի ծով–բռվանդակ ձակատն Յունաց ի պարսկական զօրսն: Քանզի և զնոսս էր տեսանել իբրև զիզօր ինչ գետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ. արդարև զջորոյ գոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն: Արդ՝ իբրև Ետես մեծն Ներսէս զայս ամենայն՝ ել նա ի կատար լերինն Նպատայ. ամբարձ զծեռս իւր յերիկինս, անխոնակելի պահելով ի խնդրուածս, հանգոյն նախանարգարէին Մովսիսի, մինչև պարտեցաւ Երկրորդն Անաղէկ:

Իսկ ի ծագել արեգականն ընդդէն մերոց զօրացն, ի պենծապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատականց ձառագայթք. յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարեալ հայել ընդդէն արեգականն ծագման: Իսկ ի բաղխել զմիմեանս՝ Եղև ի Վերայ հովանի ամպոյ, հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէն պարսկականին փչեալ: Եւ ի խաօնակել մարտին՝ պատահէ Կամսարականն Սպանդարատ խնդի, յորում էր քաջն Շերգիր Ղեկաց արքայ, զգլուխ միջին գնդին պնդութեամբ զտեղի ձակատուն կալեալ: Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս զշանթահար յերկիր

կործանէր զքաջն, և զխումբն պտուտեալ՝ ի փախուստ դարձուցանէի: Եւ այսպէս ի վերին օգնականութենէն զօրացեալ առ հասարակ զօրքն Յունաց և հայոց, դիակամբք թշնամեացն լցին զդաշտն ամենայն, և զմնացորդն ամենայն ի փախուստ շրջեալ հալածեցին: Ընդ որս և զՈւրնայր Աղուանից արքայ, խոստեալ ի Մուշեղայ որդույ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն:

Բայց ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ձին՝ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն. որում աճապարեալ հասանէ սպարապետն հայոց Սմբատ, և զորս ընդ նմայն էին կոտորեալ՝ ձերբակալ առնէ զվատշուէրն յեզեր շամբին Կոգայովտի: Եւ զմտաւ աօտեալ, թէ գուցէ թափիցէ զնա մեծն Ներսէս, այնորիկ աղազաւ ոչ աօտէ ի բանակն. այլ զտերեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ, և յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. «Պակեմ զքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էին թագաւորել Հայոց. և ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան ինոյ հայրենեաց»: Եւ մինչ դեռ տաքն էր իբրեւ զիուր՝ եղ ի գլուխն Մեհրուժանայ, և այնպէս սատակեցաւ ձարն: Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաչեալ:

## ԼՇ

**Եթէ որպէս Պապայ դեղ մահու արբուցեալ սրբոյ Ներսիսի՝ Ելոյժ ի կենցաղոյս:**

Ետ սպառելոյ պատերազմացն և խաղաղանալոյ երկրիս, մեծն Ներսէս դնէր վկայութիւն ի մէջ արքային Պապայ և ի մէջ նախարարացն՝ գնալ յամենայն ձանապարհս արդարութեան, զի վկայեսցեն ըստ հաւատոց քրիստոնէութեան և գործքն. և զի արքայ մի հօրն իրում ննանեսցի, անիրաւել և զրկել, այլ վարեսցի ուղութեամբ, հայրաբար խնամովք առ նախարարսն. և նոքա մի ևս յաւելցեն վտարանջել, նշկահելով զնա, այլ ծառայել միամտութեամբ: Յայնժամ արքայն Պապ դարձոյց ի Կամսարականն Սպանդարատ զամենայն ինչ՝ զոր յափշտակեալ էր հօր իրոյ Արշակայ, զգաւառն Շիրակայ և զԱրշարունեաց, որ լեալ էին ազգին Կամսարականաց, ոչ իբրև զանիրաւ ազահութիւն հօր Արշակայ, այլ իբրև պարզև ընդ վաստակոց քաջին Սպանդարատայ, որ սպան զԴեկաց արքայն: Այլ և զայլոց նախարարցն դարձոյց զզրկանս, և յոյժ անընչասիրաբար ցուցանէր զիւր ախորժակսն, և առատաբար կեայ:

Բայց զի ամօթալի ախտի զազրագործ էր, և յանդիմանեալ կշտամբէր ի մեծն Ներսիսէ, ընդ ակամբ հայէր ի նա, խորհելով չարիս, և ոչ իշխէր յինքնակալէն թեղողոսէ յայտնի առնել նմա չարիս. դեղ մահու գաղտնի արբուցեալ սրբոյն Ներսիսի՝ Ելոյժ ի կենցաղոյս. որ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեանն ամս երեսուն և չորս: Եւ փոխեալ յաշխարհէս երանելին ներսէս ի գաւառին Եկեղեցաց, ի գեօղն որ կոչի Խախ, բարձրեալ զմարմին նորա արքային Պապայ՝ թաղեաց ի Թիլն աւանին, զանխլաբար ունելով գեղեալսն:

## ԼՇ

**Յաղագս աթոռ ակալութեանն Սահակայ, եւ սպանմանն Պապայ ի թէոդոս:**

Ապա տեսեալ թագաւորին Պապայ սգացեալ զամենայն Հայս ի վերայ երանելույն ներսիսի, հարկաւորեալ յուզեաց և եգիս զոմն յազգէ և ի ժառանգութենէ Աղբիանոսի, որում անուն Սահակ կոչէր, ոչ հետի ի գուութենէ. զոր կացոյց փոխանակ Ներսիսի առանց մեծի արքեապիսկոպոսին Կեսարու. որ կալաւ զաթոռն ամս չորս:

Բայց Պապայ լուեալ, եթէ թեղողոս ել ի Բիւզանդիոյ ի Հռովմ կոյս, և մտեալ ի թեսաղոնիկ հանդերձ սպայիւն, և յաղագս իշավանին եղև խռովութիւնընդ նա և ընդ քաղաքացիսն, և մարտ խռովութեան, և յաղթել յինքնակալին՝ սատակեաց ի քաղաքացեաց արս հնգետասան հազար: Զայս լուեալ Պապայ, վարկուցեալ յերկարել այսպիսւոյ խռովութեան՝ արհամարհեալ նշկահեաց. գրգռեալ զնա կորստեանն իրոյ հալածեաց զՏերենտիանոս հանդերձ զօրօքն, և սկսաւ պատրաստել ի պատերազմ: Եւ

հասեալ իրաման ի մեծէն թէոդոսէ, ընդ կրունկն դարձաւ քաջն Տերենտիանոս: Եւ ըստ իւրում պատահման բախտին յանկարծակի անկեալ ի բանակն, զոմանս կոտորեալ սրով, և զոմանս փախստեայս արարեալ. ուր սաստկապէս նահատակեալ քաջութեամբ ընդդիմանարտ լինէր Գնէլ նահապէտ Անձնացեաց և սպարապէտ Պապայ արևելեան զօրուն. զոր յաղթողին Տերենտիանոսի իւրովի արարեալ սուսերաւ կիսակտուր զգլուխ նորա, ըմբռնեաց զբագաւորն Պապ: Եւ Պապայ յաղերս աղազանաց անկեալ, զի մի մեռցի, այլ յանդիման լինել արքայի. և քաջին Տերենտիանոսի զբագցեալ՝ շնորհեաց զմաղթանսն: Եւ երկարեղէն կապանօք երթեալ առաջի մեծին թէոդոսի՝ ըստ իւրում անզգանութեանն սակրով վճարի, թագաւորեալ ամս եօթն:

Խ

### Յաղագ թագաւորելոյն Վարազդատայ, Եւ կապաչաց նորին:

Բայց Աւգոստոս բարեացապարտն թէոդոս, որ ի մեծ, ի քսաներորդ ամին իւրում թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն ի նմին տոհմէ Արշակունեաց: Այս Վարազդատ էր տիովք մանուկ, սրեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արութեան, և յոյժ կորովի նետաձգութեամբ: Որ ի ժամանկի ի փախստենէն Շապիոյ գնացեալ ի դուռն կայսեր նահատակեցաւ, նախ ի Պիսաս զբանամարտիկսն յաղթելով. դարձեալ յԱրեգ քաղաքի Ելլադացւոց յօր հասակի կոտորեաց առիւծս, յորում փառս Ողոնպիայ խաղուն հանդիսի յմբշամարտկացն երևի և յարգի: Այլ առ ազգին Ղանկուարտացն նորա արութիւնք քաջութեան՝ համարձակին ասել հաւասար սրբոյն Տրդատայ. քանզի հինգ նահատակս ի թշնամեացն ընդդէմ իւր յարձակեալ՝ ի վերայ իրերաց սպան սուսերաւ. և ի բերդ ինչ դիմեալ, ի վերայ պատուարին եօթնետասն այր նետիւք հարեալ՝ վերուստ ի վայր հոսեաց միմեանց զկնի, իբր ի սաստիկ իմն մրրկէ վաղահասուկ թգենեաց:

Որ եկեալ թագաւորութեամբ յաշխարհս մեր ի յիսուն և հինգ ամին Շապիոյ, առաջին մարտին պատահեաց աւազակաց ոմանց Ասորուց ի դժուարս Դարանալոյ, և փախստեայս արարեալ՝ հետամուտ լինէր: Իսկ նոցա անցեալ ընդ նեղուցս կամրջին Եփրատայ՝ ընկեցին զփայտն զկնի իւրեանց. այլ նորա հասեալ՝ վազեաց զԵփրատաւ առաւել քան զղակոնացին Քիոնեայ վազսն քսան և երկուց կանգնոց չափ: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլս ընդ Սկամանդրոս գետ վազելով: Յորմէ զարհութեալ աւազակացն՝ գէնընկէց լինելով ի ծեռն եկին:

Յաղագ որոյ արբեալ ի մանկութեանն արութեինս, առ այսոքիւք և ի թագաւորութեանն ոչ հնազանդէր խրատու վերակացութեան զօրացն Յունաց: Վասն որոյ առաքէ հրեշտակս առ Շապուհ, զի տացէ ի դստերաց իւրոց նմա կնութեան, և սա դարձուսէտ առ նա զաշխարհս Հայոց: Զոր զգացեալ զօրավարացն Յունաց, ազգ առնեն կայսեր: Իսկ կայսրն թէոդոս իրամայեաց ունել, եթէ ոչ իւրովք կամօք երթիցէ ի կոչ ինքնակալին: Վասն որոյ հարկեալ երթայ կամօք իւրովք, յուսացեալ ի սուտ հանել Զալգոստոսն: Իսկ կայսրն և ոչ տեսութեան արժանի արար, այլ երկարի կապօք ետ տանել զնա ի թուղիս կղզի Ովկիանու. որ թագաւորեաց ամս չորս:

Բայց յերկրորդ ամի Վարազդատայ Եկաց Եպիսկոպոսապէտ Հայոց Զաւէն, ի նոյն ազգականութենէ Աղբիանու, ամս չորս:

ԽԸ

### Թագաւորութիւն Արշակայ Եւ Վաղարշակայ:

Ապա փոխանակ Վարազդատայ թագաւորեցոյց Հայոց թէոդոս մեծ զերկուս որդիսն Պապայ զԱրշակ և զՎաղարշակ, այսպիսի ինչ խորհեցեալ, որպէս թէ ոչ միաբանեսցին երկոքին յապստամբութիւն: Եւ անդրէն պահելով զմայր մանկանցն, արձակէ զնոսա հանդերձ վերակացուօք յինքնէն, արամբք հաւատարմօք և զօրու: Որք Եկեալ կալան զաշխարհս մեր և տիրեցին սմա արիաբար մարտիւք ընդ Պարսս: Եւ արին

իրեանց կանայս, Արշակ՝ զդուստոր Բաբկան Սիւնեաց նահապետի, և Վաղարշակ՝ զդուստոր Սահակայ ասպետի, որ ի նմին ամի վախճանեցաւ:

բայց յերկրորդ ամին Արշակայ եկաց յեպիսկոպոսապետութիւն Հայոց Ասպուրակէս, ազգական Շահակայ և Չաւենայ, ամս իինգ:

Իսկ մեծն Թէոդոս ելեալ ի պատերազմ՝ ի Միդուլանոն իհւանդցեալ մեռաւ, թողեալ զթագաւորութիւնն որդոց իրոց, Արկադեայ զթիգանդեայն և Ոնորեայ զհոռմայն. որք ոչ գովելիք և արժանաւորք հայրենականացն գտան առաքինութեանց:

ԽԲ

**Յաղագս բաժանելոյն Հայոց ընդ երկուս ի ձեռն երկուց թագաւորացն**

**Արշակունեաց, ի ծառայութիւն երկուց ազգաց՝ Պարսից եւ Յունաց:**

Իմացեալ Շապիոյ, թէ թերուդիջ է Արկադէ խօսի ընդ նմա խաղաղութիւն. քանզի էր պարտեալ հարեալ ի հօրէ նորա ի մեծէն Թէոդոսս: Յանձն արնու Արկադ առնել զհաշտութիւն, առաւել յիւրոց զօրագլխացն. զի թէպէտ և յԱստուծոյ էր պարգևեալ զյաղթութիւն յամս կենաց Երանելոյն Թէոդոսսի, ասակայն զօրագլուխքն վաստակեալ՝ ձանձրացեալ լինէին յաշխատութենէ հանապազորդ պատերազմացն: Վասն որոյ հաւանեալ՝ կամաւ յանձն առին բաժանել զՄիջագետս և զՀայոց աշխարհս կրկին սահմանադրութեամբ: Վասն որոյ թողեալ Արշակայ զբուն թագաւորութիւն հարց իրոց զԱյրարատ, և զամնեայն մասն բաժնին Պարսից՝ զնաց տիրել արևմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ ի մասն ի բաժնին Յունաց. ոչ միայն մօրն աղագաւ, որ էր ի կայսերական քաղաքին, այլ լաւ համարեալ նուազ կողմանն տիրել՝ և ծառայել քրիստոնեայ թագաւորի, քան յոլովից իշխել՝ և մտանել ընդ լծով հեթանոսաց: Գնացին զիետ նորա հանդերձ կանամքք և որդուվք և նախարարութիւնք որ ի բաժնին Շապիոյ, թողլով զիւրաքանչիւր արարս և զգիւլս և զդաստակերտս:

Ընդ որ զչարեալ Շապիոյ, զրէ առ Արշակ, թէ «Ընդէ՞՞ գրգռեցեր զպատերազմ ի մէջ իմ և կայսեր, տանելով զնախարարութիւնս իմոյ բաժնի»: Եւ պատասխանի լսէ յԱրշակայ, թէ «Վասն զի ոչ համբերէին ընդ Պարսիկ զմասինդ քո իշխանութիւն, որպէս և կայսր զիւրոյ՝ պատրաստ եմ ի պաշտել զթեզ՝ որպէս զկայսր. ապա թէ ոչ հաճոյ թեզ այս, և իրեանց կամաւ դարձցին առ թեզ նախարարքս՝ ոչ արգելում»: Զայս լուեալ Շապիոյ՝ թագաւորեցոյց Հայոց ի վերայ բաժնի իրոյ զլսուրով ոմն ի նմին ազգէն Արշակունեաց. և առ նախարարս իրոյ մասինն, որ ելեալ էին զիետ Արշակայ՝ գրեաց հրովարտակ, որ ունէր զայս.

**Թուղթ Շապիոյ առ նախարարսն:**

«Դիւցազանց քաջ, Շապուի արքայ. նախարաց հայոց, որոց կալուած իշխանութեան յիմ բաժնին հատան. ողջոյն շատ շնորհեմ ձեզ:

«Թէպէտ և ձեր ոչ ազատաբար արարեալ, թողէք զիւրաքանչիւր իշխանութիւնս, և մեզ ոչ ինչ նիազ էր ի ձէնց, սակայն ըստ տիրաբար խնամոց զթացաք ի ձեզ և յաշխարհի ձեր. զմտաւ ածեալ, եթէ ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել, և հովիք առանց բարիոք վերակացուի, վասն որոյ թագաւորեցուցաք ձեզ զլսուրով ոմն ի դենէ ձերմէ, և յազգէ բնիկ ձերոյ տէրութեանդ: Արդ՝ դարձեալ ձեր յիւրաքանչիւր արարս իշխեցէք, որպէս և ցայժմ: Երդուեալ ի հուր և ի ջուր և ի փառս անմահից իմոց նախնեաց, զի առանց նենգութեան և պատրանաց արարք զայդ, և անշրջելի պահէմք: Իսկ այնք որք լուիցեն հրամանաց մերոց՝ գտումս նոցա հանդերձ զիւլօք և դաստակերտօք հրամայեցաք ունել յարքունիս: Ողջ լերուք»:

ԽԳ

**Յաղագս վոկիսման նախարարցն Հայոց յիւրաքանչիւր ժառանգութեանց ի պաշտօն երկաքանչիւր թագաւորացն:**

Եթեև լուան նախարարքն Հայոց, այնք որք ունէին զիշխանութիւն ի գաւառս բաժնին Պարսից, թէ կացոյց Շապուհ՝ թագաւոր հաւատացեալ Արշակունի, և զմուրիհակ ուխտին տեսին՝ թողեալ զԱրշակ դարձան ի բնակութիւնս իւրեանց, բայց յերից պատանեաց սննսակցաց արքայի և ի մօտաւոր մերձաւորաց-Դարա, որդի Բաբկայ տեառն Սիւնեաց, որ աներ էր Արշակայ, և Գազաւոն, որդի Սպանդարատայ, տեառն Շիրակայ և Արշարունեաց, և Պերոզ յազգէն Գարդմանացւոց. և ի նոսին յարեցեալք՝ Ատատ յազգէն Գնունեաց, Կենան յազգէն Ամատունեաց, Սուրայ յազգէն Մոկաց, Ռըստոն Առաւենեան, և այլք անյայտք ոմանք: Վասն որոյ դժառանգութիւնս նոցա կալաւ Խոսրով յարքունիս հրամանաւ Շապիոյ, և ոչ եթոց զկալուածս որդուոյ ի հայր, և ոչ գեղբօր յեղբայր:

Բայց էին ոմանք և ի նախարարացն, որք ունէին զիշխանութիւնս իւրեանց ի բաժնին Յունաց առ Արշակայ, որպէս Սահակ ասպետ, որ էր լեալ աներ Վաղարշակայ, եղբօր Արշակայ, և խնդրեցին զալ առ Խոսրով. ընդ որում խեթի հայէր Արշակ, հանապազ հրապուրեալ ի լնոցէն հիրմէ, որպէս թէ զարդ արքունական ունել նմա՝ ի փեսայէն հիրմէ մնացեալ: Ապա յայնժամ եղև քսութիւն սուտ զնմանէ յազգականաց իւրոց Սպեր գաւառէ վասն որոյ չաշչարեաց զնա Արշակ արքայ: Եւ յայնմանէ խնդրէր Սահակ փախչել յԱրշակայ և անկանել առ Խոսրով. և խորհրդակից նմին իրի գործակցեալ լինէին Սուրէն Խորխոռունի և Վահան Առաւեղեան, և Աշխադար յազգէն Դիմաքսենից: Բայց ի զնալն նորա ոչ ժամանեցին նոքա, խափանեալ ի զօրացն Արշակայ. թաքուցեալ զողեցին ընդ կեղծաւորութեանն առազաստիւ, սպասեալ դիպող աւուր:

## Խ7

### **Եթէ որպէս մեծարեաց Խոսրով զՍահակ ասպետ. Եւ նահատակութիւնք նորին յեղուզակս ազգին Վանանդացւոց:**

Բայց Խոսրով մեծապէս ուրախ եղև զալն Սահակայ ասպետի, և սպարապետ զնա ի վերայ զօրաց իւրոց կարգեաց. և դարձոյց ի նա զկալուածս հայրենիս, և այլ աւանս հանդերձ ագարակօք պարզեաց նմա յայնոցիկ ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից առ Արշակայ մնացին:

Զայսու աւուրբք ոմանք յազգէն Վանանդացւոց ապստամբեցին ի Խոսրովայ. և ոչ յոք ապաւինեցան, այլ ամբացան ի մայրիս լերանց իւրեանց և յանձուկս Տայոց քարանց. յեղուզակաբար արշաւանօք յիշխանութիւն երկոցունց թագաւորացն Հայոց խռովէին զաշխարիս և անհանգիստ պահէին: Յորոց վերայ չոզաւ սպարապետ Խոսրովայ Սահակ ասպետ, և զբազում ի նոցանէ սատակեաց, և զբազում փախստական արար ի կողմանս Չորրորդ Հայոց: Զի ոչ յերկիրն Խալտեաց անկամ, ի Յոյնս ապաւինելով, և ոչ առ թագաւորն Արշակ անցին. այլ զաւազակս ոմանս, որ ի կողմանս Չորրորդ Հայոց էին, ի սահմանս Ասորուց, դիմեցին ապստան առնել: Քանզի Վանանդացիք զաւակութեան գործ մեծ ցանկութեամբ գործին, և որպէս ուտիլ իրք ախորժելի թուէին նոցա: Չորոց ձիգ զիետ մտեալ Սահակայ՝ վարէ յերկար մինչև ի սահմանս Մանամազւոյ:

## Խ8

### **Յաղազս զալոյն առ Խոսրով Սուրենայ, Վահանայ Եւ Աշխադարայ հանդերձ գանձիւք Արշակայ:**

Սուրենայ Խորխոռունուոյ և Վահանայ Առաւեղենի և Աշխադարայ Դիմաքսենի գտեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձսն Արշակայ յամրոցէն Հանուոյ՝ տանել յաշխարին Ծոփաց, զոր յափշտակեալ, և կամեցեալ անցանել առ Խոսրով՝ ոչ ժամանեցին: Քանզի աճապարեալ Սամուելի Մամիկոնենի մտերմի Արշակայ, յոլովածեռն զնդաւ զիետ մտեալ՝ փախստեայս արկանէ յամուր այս ի գաւառին Մանամազւոյ. յոր մուտ ոչ գտանէր, բայց ի կողմանէ դոյզն ելք էին առ ի թաւալ, և առաջի դրաց այրին սեպ էր ուղղորդ միապաղադ. և ի վերուստ պաղանձաւ քուաւոր, որ հայի

յանդունս խորաձորոյն. և որ ինչ զերծանի՝ յանհնարին ուղիսս սաստկութեան անկանի, անդադր հոլովմամբ գլորեալ, ոչ ուրեք լինել ոտնկրիւ: Վասն որոյ տարակուտեալ Սամուէլ վարանէր առ անհնարութեան տեղեացն: Եւ ազդ արարեալ Արշակայ՝ իրամայեաց արկդ գործել երկաթակապ, և քաջ արանց ի ներքս մտանել, և այնպէս շղթայատող կարիւք ի վերուստ ի վայր իջուցանել ի դուրս այրին: Սակայն և ոչ այն ինչ վնասեաց. քանզի յոյժ ի բացեայ պահէր զիրդն:

Եւ մինչև դեռ նոքա յայն էին՝ լիներ ինն ըստ դիպուածոյ բախտի հասանել անդր ասպետին Սահակայ բովանդակ գնդաւն Խոսրովայ, որով հետամուտ յեղուզակացն էր: Թողեալ զնոսա՝ դիմէ ի վերայ այնոցիկ որք ընդ այրին մարտնչէին, և հալածական հանէ զՍուրէն, և զՎահան և զԱշխատար հանդերծ գանձիւքն, փոյք հասուցանէ առ Խոսրով: Խսկ Խոսրովայ առեալ՝ ի գանձուցն հանէ և մասն Շապիոյ. և իրամանաւ նորա տայ նոցա գիւղս և դաստակերտս ընտիրս և յարմարս յայնոցիկ ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից մնացին առ Արշակայ: Եւ այս եղև սկիզբն պատերազմին Արշակայ և Խոսրովայ:

## ԽԶ

### **Պատերազմաւ պարտեալ Արշակ ի Խոսրովայ՝ Վախճանի հիւանդութեամբ:**

Թեպէտ և ոչ եղեն ձեւնտու Շապուի և Արկադ Խոսրովայ և Արշակայ, լինել զօրավիգն օգնականութեան առ ի տալ ընդ միմեանս պատերազմ, սակայն և ոչ արգելին զնոսա: Եւ սպառեալ պատգամաւորութեանն, ժողովեալ Արշակայ զզօրս իւր՝ խաղայ ի վերայ Խոսրովայ: Գնաց և Խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մօրսն կոչեն, ընդ առաջ Արշակայ, զի մի ի սահմանս իւր իջցէ. և ոչ այնչափ ատակեաց աճապարեալ՝ մինչև եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանս, ի գաւառին Վանանդայ: Եւ պատահեն միմեանց ի դաշտին որ կոչի Երևել. և տան պատերամ ընդ միմեանս սաստիկ յոյժ: Հարկանի զօրն Արշակայ, մեռանի և սպարապետն նորա Դարա Սիւնի ի պատերազմին, և փախստական լինի Արշակ սակաւուք: Եւ զիետ նորա մտեալ քաջին Սահակայ սապետի, սպարապետին Խոսրովայ՝ վարէր սաստկապէս: Ու բանօր ահագին նահատակութիւնս ցուցեալ Գազաւոնի, որդւոյն Սպանդարատայ, բազում անզամ դարձեալ յարձակմամբ՝ ցրուէր զիետամուտսն, և տայր պարապ ժամ զնալոյ Արշակայ:

Եւ դարձաւ Խոսրով ի տեղի իւր, և գնաց Արշակ յԵկեղեաց. և հիւանդացեալ անդ մաշարայական ախտիւք՝ ջերանի հիւծմամբ և մեռանի, թագաւորեալ ամենայն Հայոց անս իինգ, և կիսոցն Հայոց ամս երկուս և կէս: Եւ այնուիետու ոչ ևս կացուցին Յայնք ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ առաջներդէր նախարարաց կողմանցն այնոցիկ քաջն Գազաւոն. և աշխարհին իւրեաց մասինն կացուցին Յոյնք կողմէս իշխանս:

## ԽԷ

### **Յաղագս Երանելւոյն Մեսրոպայ:**

Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, և զխռովութիւնն նիւթ իւրոյ համբերութեանս գտեալ Մեսրոպայ, որ էր ի Հացեկաց Պարօնոյ, սնեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ ելից նորա յաշխարհէ՝ ի դրանն արքունի կարգեալ քարտուլար. սա սիրեաց զմիայնակեցութեան վասն. որպէս ասաց ոմն, թէ ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ. նոյնպէս և նորա փախսուցեալ. յաշխարհական զբազմանց, և ընկեցեալ յետու զմարմնական պատիւն՝ զիետ ընթանայր Երկնաւորին: Եւ երեալ ի գաւառն Գողթան բնակէ, զմիայնակեցութեան վարս ստացեալ: Եւ որ ի նմա դողեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց, զայն եբարձ օգնականութեամբ իշխանի գաւառին, որում անուն էր Շաբիթ: Ուր նշանք աստուածայինք լինէին, որպէս առ սրովն Գրիգորի: հալածական լեալ դկր մարմնաւոր տեսեամբ անկանին ի կողմանս Մարաց: Եւ ոչ ինչ պակաս յայնցանէ արարեալ գտանի և ի Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին որ կոչէր Վաղինակ:

Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ ձոքը կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանիչ. և եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխուլ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եղ ի մտի հնարեալ գտանել նշանագիրս Հայոց լեզուիս. և արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիք տաժանէր:

## ԽԸ

### Դարձ առ Խոսրով նախարարցն, որք էին առ Արշակայ:

Տեսեալ նախարարցն Հայոց, եթէ ոչ կացուցին Յոյնք ի վերայ նոցա թագաւոր, և դժուարին վարկուցեալ զանառաջնորդն լինել՝ խորհեցան կամաւ հնազանդել թագաւորին Խոսրովու: Նմին իրի գրեն առ նա թուղթ օրինակ զայս:—

### Թուղթ նախարարցն առ Խոսրով:

«Ստրատելատ Գազաւոն և ամենայն նախարարք Հայոց մասին Յունաց. տեառն մերում Խոսրովայ արքայի կողմանն Այրարատոյ խնդալ:

Ինքնին, տէր, գիտես զմիամտութիւն մեր առ յիշեցեալ թագաւորին մերում Արշակայ, զոր մինչև ցօր վախճանի նորա անշրջելի պահեցաք. և արդ խորհեալ եմք նոյնակտ ծառայել քեզ միամտութեանք, եթէ հաստատեսցես առ մեզ դաշամբք զերիսս զայս. առաջին՝ չիշիշել զյանցանս մեր, զոր պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց: Երկրորդ՝ զի դարձուսցես ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր որ ի մասինդ Պարսից, զոր հատէք յարքունիս: Երրոչ՝ հնարել թափել զմեզ ի կայսերէ, զի մի վրդովեսցեն զբնակութիւնս մեր, որք ունիմք իշխանութիւն յայս բաժնի: Եւ զայս պայման ուխտի գրեալ և խաչ հաստատեալ կնքեսցես. զոր տեսեալ՝ փորթասցուք ի ծառայութիւն ծեր: Ողջ լեր, տէր մեր»:

Գրէ և Խոսրով պատասխանի:

### Թուղթ Խոսրովու առ նախարարսն:

«Քաջ արանց Խոսրով Հայոց արքայ. ստրատելատիդ Գազաւոնի և ամենայն նախարարդ մերոց ողջոյն շատ:

«Ուրախս լերուք, զի և մեք ողջ եմք, և ուրախացաք ընդ լուր ողջունի ծերոյ. և առաքեցաք ըստ խնդրոյ ծերոյ զայս պայման ուխտի: Առաջին՝ չիշել զյանցանս ծեր, զոր չունէաք առ յանցանս իսկ, այլ առ երախտաւորս՝ զմիամտելն առ թագաւորին Արշակունուոյ զոր պաշտէնք. զի և առ մեզ զնոյն յուսամք լինել: Երկրորդ՝ դարձուցանել ի ծեզ զժառանգութիւնս ծեր, զոր ունիմք յարքունիս. բայց յայնմանէ, զոր ումեք պարզեցաք, զի ոչ շրջին պարզեք թագաւորաց առանց վնասու, մանաւանդ զի դիւան հօրն մերոյ Շապիոյ արքայից արքայի եմուտ. այլ փոխանակ ընդ այնր յարքունուստ լնումք և զծերոյն պակասութիւն: Երրորդ՝ թափեմք զծեզ ի գործակալացն Յունաց, թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ ծաղաղութեամբ:

«Եւ զծեզ, Գազաւոն, արիւն իմ հարազատութիւն, ոչ ըստ վաղմջուց ազգականութեանն, այլ ըստ արդեանս, որ ի մօրէ քումմէ Արշանուշայ Արշակունուոյ, հանեալ զծեզ ի հայրենեաց քոց Կամսարականաց, և ի մայրենիս քո յիմս առեալ ազդ՝ Արշակունի անուանբ պատուեցից»:

Զայս տեսեալ Գազաւոնի՝ ընդ հուա դարձուցանէ զբնաւ նախարարսն առ արքայն Խոսրով, և բարեբարաստիկ եղեալ քաջակառութեամբ, հանդիպի ամենայն խնդրոցն և խոստմանցն: Բայց Սամուելի մամիկոննենի յինքն ըմբռնեալ զթուղթն Խոսրովու և զպատէն թղթոյն նախարարցն՝ զատուցեալ ի նոցանէ գնաց առ կայսրն Արկագ: Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան յաղագս ուրացութեան, և զնայր իւր Տաճատուիի, և երկնչելով ի Պարսից և ի թէռեաց իւրոց Արժունեաց՝ ոչ իշխէն զատչել ի Յունաց: Իսկ Արկադայ բարի արարեալ նմա, հրամայէ զհաւասար թղթոցն հելլէն գրով ի դիւանի իւրում դնել, զի պահեսցին յիշատակք ազգաց ապստամբողաց. որ կայ մինչև ցայսօր:

**Միապետել Հայոց Խոսրովայ, Եւ ունել զաթոռ Եպիսկոպոսապետութեանն մեծին  
Սահակայ:**

Իբրև տիրեաց Խոսրով ամենայն նախարարացն Հայոց, որում ցանկայրն՝ յու առ  
Արկադ և խնդրէ ի նմանէ հաւատալ յինքն զմասն Յունաց որ ի Հայս, զոր շէն կալեալ՝  
հարկեսցեն նմա անսխալ, որպէս նորին գործակալաց: Եւ կասկածեալ Արկադեայ ի  
միաբանութեն նախարարացն Հայոց, թէ միաբանութեամբ հանիցեն ի նմանէ և տացեն  
ի Պարսս զբաժինն զայն՝ կատարէ զխնդիրսն Խոսրովայ:

Յետ այսր վախճանեալ Եպիսկոպոսապետն Ասպուրակէս, ի տեղի մորա յաջորդէ  
Խոսրով զՍահակ որդի մեծին Ներսիսի, որդույն Արանագենի, որդույ Յուսական, որդույ  
Վրթանիսի, որդույ սրբոյ Գրիգորի: Սա ամենայն առաքինութեամբ հարցն նմանեալ,  
աղօթցն մասամբ առաւելեաց: Քանզի ստացաւ աշակերտս վարսուն ըստ նմանութեան  
մայրչաքաղաքացն սպուտէից, արք կրօնաւորք, խարազնազգեստք, երկարապատք,  
բոկագնացք, որք յար ընդ նմա շրջէին. որովք մշտնջենաւոր պատշտմամբ կատարէր  
զկանոն, որպէս զայնս որք յանապատսն էին, ի հոգայր զաշխարհս, որպէս որք  
յաշխարհի են: Առ նա Եկեալ Մեսրոպ յաղաս խնդրոյ նշանագրաց Հայոց՝ եգիտ զնա  
առաւել ևս փափագող այնմ. և ետ բազում ջանից րևու ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս  
ապաւինեալ, յԱստուծոյ խնդրելով: Եւ մեկնեալ ի միմեանց, զնաց Մեսրոպ ի դադարս  
իւր. և յանձն առեալ զխստամբերութիւն վարուց ճգնէին առաւել քան զառաւել:

Ծ

**Կապումն Խոսրովայ, Եւ փոխանորդել զթագն Վռամշապիոյ Եղբօր նորին:**

Բայց Շապուի էր ցասմամբ ընդ Խոսրովայ ի բարեկամանալն Արկադայ անձամբ,  
և յանհրաման կարգել յԵպիսկոպոսութիւն զմեծն Սահակ. վասն յեալ մեղադրութիւն  
հանդերձ սպառնալեօք՝ ըմբոստացաւ Խոսրով, և խրոխտմամբ վեսական  
պատասխանեաց, արձակեաց զպատգամաբերսն անարգանօք: Եւ իսկոյն խօսեցաւ ընդ  
Արկադեայ, զի լուծեալ զհաշտութիւնն ընդ Շապիոյ՝ օգնեսցէ նմա զօրու, և սա  
դարձուսցէ ի նա զբոլոր աշխարհս: Այլ Շապուի, ի հրապուրելոյ գուշակութեան  
նահապետաց մերոց նոյն հետայն առաքէ զորդի իւր զԱրտաշրի զօրու մեծաւ ի Հայս:  
Եւ ի հրաժարել Արկադեայ ի կուսակցելոյն Խոսրովայ, և ոչ զոք յօտար ազգաց գտեալ ի  
սատարութիւն, անկարացեալ ընդդիմանալ կամ խուսափել ի նմանէ՝ չզգաւ առ նա:

Եւ Արտաշրի ընկեցեալ զնա ի տէրութենէն, փոխանակ կացուցանելով  
զՎռամշապուի զԵղբայր նորին, ոչ զմեծն Սահակ և ոչ զոք ի նախարարացն կարգելոցն ի  
Խոսրովայ վրդովեաց ի պատուոյ իրաքանչիւր, նա և հրամայեաց ևս ընդ Յոյնս զնոյն  
կարգ ունել: Եւ թողեալ զունդ ստուար, ինքն ի Տիսրոն փութայր հասանել, ի ծերութենէ  
հօրն ակն ածեալ, ընդ իւր ունելով զխոսրով՝ դնել յԱնուշն կոչեցեալ բերդին. որոյ  
թագաւորեալ ամս իինց: Ընդնմա տարաւ և զԳագաաւոն կապանօք, կասկածեալ յառնն  
քաջութենէ. և զտուն նորա հրամայէ ունել յարքունիս, նոյնպէս և զԵղբօր նորա  
Ծաւարծայ, և զՊարգևայ Ամաստումոյ: Քանզի նոքա Երկոքեանն հանդերձ զինուրոք  
իւրեաց Եօրն հարիւրովք նկատեալ որսացան զաջողութիւն ժամու ի Ճանապարհի  
կարաւանին՝ զերծուցանել զարքայն իւրեաց Խոսրով. և ոչ աջողեցան ի պարաւանդելոյ  
ուտից նորա ի շղթայս: Եւ հզօր մարտի Եղելոյ՝ սպանան Ծաւարշ և Մանուէլ որդի  
Պարգևայ, և բազումք ընդ նոսա. իսկ Պարգևն ի կալանս ըմբռնեալ՝ ածաւ առաջի  
Արտաշրի. և տիկտեսակ գործեալ ուռուցմամբ՝ հրամայեաց դնել յանդիման Խոսրովայ  
հանապազ:

ԾՈ

**Երթ մեծին Սահակայ ի Տիսրոն, Եւ դարձ մեծարանօք Եւ պարգեւաք:**

սուրբք ոմանք և Երևելիք, առաջինք ի նախարարացն և ի Վերադիտաց  
աշխարհիս, լուսաւորութեան պատճառք, որդէնութեամբ իջեալ ի մեծն Սահակ՝

դադրումն եղև ուսերաց նորա. ունելով դուստր մի Սահականոյշ կոչեցեալ, որ տուաւ յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնենի: Եւ ի մեռանել քաջ սպարապետին Հայոց Սահակայ ասպետի՝ ի տեղի նորա աղաքը սուրբն կարգել զնա Խոսրովայ արքայի, և զկնի կապանաց նորա՝ եղբօր նորա Վռամշապիոյ: Այլ սա հրաժարէր առանց հրամանաց արքայից արքայի առնել զայն. յիշելով, եթէ սակա այսպիսեաց իրաց կրէ վիշտս եղբայր նորին Խոսրով: Վասն որոյ առեալ ի նամնէ թուղթս, ի թախանձելոյ դստերն՝ ինքնին չոգաւ առ Արտաշիր Պարսից արքայ, որ յետ եօթանասուն ամի թագաւորութեան հօրն կալաւ զտէրութիւնն ամս չորս:

Եւ մեծարի ի նմանէ յոյժ. նախ վասն քաջատոհմիկ ազգին Պահլաւկաց, դարձեալ և զի առաջի անհաւատից արգոյ և պատուական ցուցանէ Աստուած գծառայս իւր: Ութրոյ զբնաւն կատարեալ զիսնդիրսն, նախ վասն փեսայի նորա Համազասպայ, դարձեալ վասն մնացելոցն մեղուցեալ նմա ազգացն Կամսարական և Ամատունի, որք սուզեալք դուշեալք էին յանյայտ տեղիս. վասն որոյ մաղթեաց գթալ, իբր յաստուածային հրաման՝ ոչ բառնալ որդուց զյանցանս հարց. մանաւանդ զի և հարք մեղանն նորքին սակա այնր և մեռան: Որոց մնացելոցն պարզեալ զկեալն՝ հրամայեաց զտունս երկաքանչիւրոցն զկալեալսն յարքունիս դարուցանել ի նոսա. բայց միայն ի զահ հայրենի ոչ հաստատել, այլ ի խոնարի քան զբազումս մատուցեալ նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել: Իսկ զազգն Համազասպայ, որ է տոհմ Մամիկոնեան, ի վերա մատուցանել, զի կարգեսցին ունել զիսնգերորդ զահ նախարարացն Հայոց, և ի դիւանի իւրում գրել:

Զի զերկուս զայս այսպէս պահէին սովորաբար, զի յորաժամ նստէր արքայ նոր՝ նոյն ժամայն փոխէին զդրան զտեալ ի զանձս արքունի, զնորայն տպաւորեալ պատկեր. և զգիր դիւանին յայլ փոխէալ նորա անուամբ, սուղ ինչ զանազանեալ, ոչ բառնալով զինն: Իսկ եթէ յամիցէ ի տէրութեանն ամս բազումս, և արասցէ աշխարհագիր նոր՝ թողուին զայն որ ի հնոյն փոխէցաւ, զի միայն նորոյն վերագրեսցի անուն: Արդ՝ Արտաշիր ոչ ժամանեալ ի կարծութենէ աւուրցն այլ առնել աշխարհագիրէ յայնն որ յառաջնոցն փոխէաց, իւր անուամբն հրամայեաց գրել զայն ամենայն, և տալ զահու և պատուոյ, հանդերձ իշխանութեամբ գիւղից և դաստակերտաց Համազասպայ, և որում ցանկայրն զսպարապետութիւնն Հայոց, հրովարտակ առ Վռամշապուի մեր թագաւոր գրեալ զայս.–

### Թուղթ Արտաշիր առ Վռամշապուի:

«Մազդեզանց քաջ, Արտաշիր արքայից արքայ առ եղբայր Վռամշապուի թագաւոր Հայոց. ողջոյն շատ:

«Ընկալայ զգեալսս քո, որ ինչ վասն եպիսկոպոսի Սահակայ, և յիշեցի զերախստիս նախնեաց հարցն դորա, որք էին նահապետք Սուրենեան Պահլաւոյ, և կամաւ յանձն առին զտէրութիւն ինոյ նախնւոյն և համանուամն Արտաշիր. և այնչափ սիրեալ զնա քան զիւրեանց ազգայինսն, մինչև զի ոչ շատացան միայն ի Պարսից աշխարհիս մատնչել ընդ նոսա, այլ և ի ձերդ եկեալ նորին աղազաւ՝ սպանին զխոսրով զքո նախնին, և զտոյժս սպանութեանն իւրեանց հատուցին մահուամբ: Իսկ որդի սպանողին Գրիգոր՝ զկեանս և զբազաւորութիւն կորուսեալ հիւանդութեամբ Տրդատայ, վերստին ետ իւրով թշկութեամբ, և առաւել առ ձեզ եղև երախտաւոր: Վասն որոյ զորդիացեալդ դորա զՀամազասպ կացուսցես ի վերայ զօրացդ սպարապետ՝ մեր հրամանաւ, և ազգի դորա տասցես զգահն իինգերորդ՝ պատոյ նախարարացդ. և զգիւս և զդաստակերտս, զոր տուեալ է նախնեացն քոց հարց դոցա՝ կալցին դոքա: Սապէս և զտունս վնասակարաց ազգացդ զորս կալաք յարքինս՝ թողցես ի բաց, աներկիւլաբար ժառանգել նոցին մնացորդաց. բայց զահուց հայրեանականաց պատուեյն մի արասցես արժանի. զի մեք ի մերում դիւանի հրամայեցաք գրել: Ողջ լեր»:

Բայց յորաժ եկն մեծն Սահակ և զամենայն պարզեալսն յԱրտաշրէ հաստատեաց՝ մեռաւ արքայն Պարսից Արտաշիր, և փոխանակ նորա թագաւորեաց Վռամ, որ և Կրմանն կոչեցաւ, անս տասն: Եւ զնոյն բարեակամութիւն կալաւ ընդ աշխարհիս Հայոց և ընդ թագաւորին մերում Վռամշապիոյ և ընդ մեծին Սահակայ. և էր խաղաղութիւն ի մէջ Վռամայ և Արկադեայ: Եւ Վռամշապուի ունէր զաշխարհս մեր, և ծառայէր երկոցունց թագաւորացն, տալով հարկս, զմասինն Պարսից՝ Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ:

## ԾԲ

### Յաղագս Դանիելեան նշանագրութեանն:

յայնմ ժամանակի հիւանդացեալ Արկադ, և շարժմանց ահագնից և հրկիզութեանց եղեալ ի Բիւզանդիոն, որ յաղագս մեծին Յովիաննու՝ շփոթեալ լինէր թագաւորութիւնն յունաց. և զօրքն ընդ միմեանս պատերազմէին և ընդ Պարսս: Վասն որոյ Վռամ հրամայեաց Վռամշապիոյ մերում թագաւորին իշեանել ի Միջագետս, զի խաղաղուցեալ կարգեսցէ զնոսա, և համար երկաքանչիւրոց հատցէ գործակալացն: Եւ իշեալ նորա ի կարգել զայս ամենայն՝ ոչ փոքր ինչ կրէր աշխատութիւն յաղագս քարտութարի. զի մինչ զնաց Մեսրոպ յարքունական դրանէն՝ ոչ զոք ի ձարտարաց գտանէր անդ ի դպրաց, քանզի պարսկականաւն վարէին գրով: Վասն որոյ նատուցեալ առ արքայն քահանայի ուրումն Հաբէլ անուն կոչեցեալ, խոստանայր հայկականաց լեզուաց առնել նշանագիր, յարմարեալ ի Դանիելէ եախսկոպոսէ, յիւրմէ մերձաւորէ: Զորով անփոյթ արարեալ արքայի, և ելեալ ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ մեծն Սահակ և Մեսրոպ զամենայն եախսկոպոսունս, հոգալ զդիւտ դպրութեան Հայոց, զոր զգացուցին արքայի. և նա պատմեաց նոցա զասացեալսն վանականին: Զոր իբրև լուեան՝ թախանձէին զնա փոյթ զայնապիսեացն առնել պիտոյից:

Վասն որոյ առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական յաշխարհիս և հաւատարիմ իւր, Խաղունի ազգաւ, Վահրիծ անուն, յոյժ փափագող նորին գործոյ, առ Հաբէլն այն: Զոր առեալ, և երթեալ նովաւ հանդերձ քաջ հմտացեալ ի Դանիելէ, կարգեալ ըստ օրինակի յունականին զվաղնջուցն գրեալ շարագիր տարից՝ ելեալ ետուն զմեծն Սահակ և Մեսրոպ: Որոց ուսեալ, և թևածելով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ գիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել զիեզենայ բարից հայկականաց հագներգաբար, մուրացածոյին այնուիկ զժագրութեամբ:

## ԾԳ

### Յաղագս Մեսրոպեան նշանագրացն, ի վերնոյն տուելոց շնորհեաց:

Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իշանէ ի Միջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն Դանիել, և ոչ աւելի գտեալ քան զառաջինն՝ անցանէ և յշեսիայ, առ Պղատոն ոմն ձարտասան հեթանոս, իշխան դիւանին: Եւ նորա խնդրութեամբ ընկալեալ, և զոր ինչ միհանգամ ի միտ առնոյր քան հայերէն յինքն առեալ, և շատ զանացեալ և ոչ օգտեալ՝ զտգիտութիւն խոստովանեաց հրետորն: Եւ զայլ ոմն ասելով յոյժ հաւու, վարդապետ իւր ելեալ յառաջագոյն, և ապա առեալ զձարտարացն գրեան ի նոյն դիւանէն Եղեսեայ, և զնացեալ քրիստոնէութեան հաւատայ, որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփափագդ քո:

Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բարիլոսէ եախսկոպոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ ի Սամսոն դիմէ. քանզի Եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի անուանեալ Հռոփանոս, հրաշալի արուեստիւ հելլէն գրչութեան, որ ի Սամսոն էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրոպայ, և յայսմ ևս անշահ մնացեալ՝ յալօթս ապաւինի: Եւ տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ծեան վերջք գժին՝ կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք

ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռովհանոսի կերպածնեալ զգիրն առ փեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից Հելլենացւոց: Եւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով զքսան և զերկու յայտնիսն, և զնոր Կտակս յեղու ի հայր բան, նա և աշակերտք նորա Յոհան Եկեղեցացին և Յովգէփ Պաղնացի, միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն:

## ԾԴ

### Յաղագս դպրութեան Հայոց, Վրաց եւ Աղուանից:

Կախճանեալ Արկադեայ՝ փոխանակ նորա թագաւորէ նորին որդի, որ կոչեցաւն թէոդոս փոքր. և զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ մերում աշխարհիս և ընդ արքային մերում Վռամշապիոյ. բայց զմասն իւր ոչ հաւատաց նմա, այլ ինքեան կալաւ գործակալօք և խաղաղութիւն արար ընդ Յազկերտի արքայի Պարսից: Ընդ այն ժամանակս Եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանաւ Վռամ շապիոյ և մեծին Սահակայ ժողովեալ մանուկս ընտրեալս, ուշեղս և քաջասունս փափկածայնս և երկարոգիս, և դպրոց կարգեաց յամենայն գաւառս. և ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից, բայց ի Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեանն տուգանեցան, վիճակեալք յաթուն Կեսարու, վարել Յունական դպրութեամբ և ոչ ասորուով:

Իսկ Մեսրոպայ Երթեալ յաշխարհն Վրաց՝ առնէ և նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհաւն, հանդերձ Զաղայի ոմամբ թարգմանաւ հելլէն և հայ լեզուի, ձեռնտու լինելով արքայի նոցա Բակրոյ և Եպիսկոպոսին Մովսիսի: Եւ ընտրեալ մանուկս և յերկունս բաժանեալ դասս՝ և Վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զՏէր Խորձենացի, և Մուշէ Տարօնացի:

Եւ ինքն յԱղուանս իշեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ Եպիսկոպոսապետն Երեմիայ. որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա՝ Ետուն մանուկս ընտիրս: Եւ կոչեալ զԲենիամին ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկս Վասակ Սիւնեաց տէր, ի ձեռն Անանիայի Եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղևազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարզարացւոց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ դրանս արքունի՝ ինքն դաշնայ ի Հայս. և գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորուոյն, յոչ լինելոյ յունի: Քանզի նախս ի Մեհրուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհս յոյն գիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացութն յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի:

## ԾԵ

### Վրկին թագաւորելն Հայոց Խոսրովայ, եւ յետ նորա Շապիոյ պարսիկ:

Վռամշապուի թագաւորեալ ամս քսան և մի՝ մեռանի, թողլով որդի տասնամեայ, անուն Արտաշէս: Յայնն ժամանակի Երթեալ մեծին Սահակայ ի դուռն արքային Պարսից Յազկերտի՝ խնդրեալ զկապեալս Խոսրով, որ զկնի մահուանն Արտաշրի լուծեալ պահեցաւ արձակ յԱնուշն կոչեցեալ բերդի յաւուրս Վռամայ: Եւ Յազկերտի հաւանեալ՝ կատարէ զհայցուածն. տալով նմա զտէրութիւնն՝ արձակէ ի Հայս: Սա խնդրեաց զՀրահատ որդի Գագաւոնի, զոր յետ հօրն նորա մահուան հանեալ յԱնյիշելի ամրոցէն՝ անդր ևս քան զՍագաստան էր գումարեալ, զոր ոչ ժամանեաց տեսանել Խոսրով, մի և եթ ի կրկնումն թագաւորեալ ամ:

Յետ որոյ Յազկերտի ոչ ևս ի նոցունց, այլ զՇապուի զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս դաշնութեան խորհելով, իբր թէ այնպէս հանապազ առ նմա լինելով

նախարարքն յանգչիցին խօսիւք, տուրեալաթիւք, խրախնձանութեամբ և զբուանօք որոց, այլ և եկամուտ հարազատութեամբ մերձաւորեսցին խնամութեամբ, զի մարթ լիցի զնոսա և ի դեն մազդեզանց սաղապեցուցանել, որով ամենկիմբ զատչիցին ի Յունաց. ոչ գիտելով անմիտ, թէ «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց»» թէպէտ առ ժամայ աջողեցաւ: Քանզի Համազասպայ, և ի սգի մեծի եղեալ Սահակայ՝ ոչ ոք միաբանութիւն հաւաքեաց զգունդս հայոց: Կասն որոյ դիւրամուտ եղև յաշխարհս Շապուի, ընդ իւր ածելով զՀրահատ և զամենայն վտարանդիսն, սակայն ոչ կարաց հաճել զմիտս նախարարացն, անենեցուն ստեցեալ զնա, և ոչ արքայօրէն մեծարէին զնա յորս կամ ի խաղու:

Եր երբուն զիեստ երամակաց ցրուց յանդզնագոյնս արշաւել ընդ խորտաքորտս և ընդ վիմուտ տեղիս. յորմէ կասել սկսաւ Շապուի: Իսկ Աստոմայ Մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ. «Գնա, զնա աստուածորդիդ Պարսից, եթէ այր իցես»: Եւ նա ասէ. «Դու երթիջիր, զի քարինս դիւաց է շահատակել»: Դարձեալ յայլուն ժամու դիպեցաւ ի շամբս կինջու որսալ հրով, և Շապիոյ ոչ համարձակեալ ի թաւուն քաջարշաւ լինել, մինչև շրջապատէր հուրն. և նորա զիայեցուածսն յերկուս բաժանեալ՝ այսր անդր բերել լինէր երիվարաւն: Միւսանգամ ասէ Աստոմ. «Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո և աստուած, ընդդէ՞ր զանգիտես»: Իսկ Շապուի ասէ. «Թողեալ ի բաց զկատակելդ՝ յանցանել ընդ հուրդ դարձն զքեզ, որ ես զկնի քո. քանզի յառաջելն՝ ձիս իմ Խաչի»: Յայնժամ այպանեաց զնա Աստոմ՝ ասելով. «Միթէ և այդ քարի՞նք իցեն, զի ես յառաջեցից. և արդ՝ եթէ դու զՄոկացիս կոչես դիւազգիս՝ ես զՍասանեանդ կոչեմ կնամարդիս»: Եւ մտրակեալ զերիվարն՝ իբրև ընդ հովիտ ծաղկանց անցաներ ընդ հուրն, զեծուցանելով զՇապուի: Եւ յետ այնր գիտացեալ, եթէ նմա լուռ ոչ լինի՝ անցեալ ի Մոկացն զնայր յաշխարի:

Այլ երբեմն ի մանկական խաղուն երկիցս պատահեաց Շաւասպայ Արշունւոյ զգնդակն հանել ի Շապիոյ: Եւ նորա ածեալ մականաւն՝ ասէ. «Ծանիր զքեզ»: Իսկ նորա պատասխանեալ, թէ «Այո, ասէ, ձանաշեմ և զիս արքայօրդի ի սերմանէ Սանասարայ, և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո զբարձք արքայի համբութել, որպէս և անուանակոչեցեալս են»: Եւ զայս ասացեալ յոյժ քանահաբար, ի ծիարձակարանէն արփայագնաց լինէր:

Դարձեալ երբեմն ի խնջոյս ուրախութեան խոսրով Գարդմանացի ի գինւոց զելիսեալ առաջի Ծապիոյ՝ զօրէն սեղեկսի տրփեցելոյ զիեստ զնարահար քաջամատն կնոջ կրթէր: Ընդ որ ցասուցեալ Շապիոյ՝ իրամայէ ունել զնա և ի դահլիչին պահել. այլ նա ի վաղակաւորն հաստատեալ զաջն, պէս զունակ Տրդատայ Բագրատունւոյ, յիւր անցեալ զնայր, և ոչ ի սպասուրացն արքունի համարձակեալ արկանել ի նա ծեռն յառաջագոյն գիտելով զփորձ առնն: Եւ զայս պատմել մեզ՝ քոյդ հարկաւորեաց ընդ վայր խնդիր:

## ԾԶ

### Ոչ զկնի զնալոյն ի Հայոց Շապիոյ, եւ անիշխանութեանն յետ նորա:

Զքառեամ անարգաբար թագաւորեալ Հայոց Շապիոյ՝ հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն, և զնայ փութանակի, իւրուն տեղակալին հրամայելով զօրագիսի՝ ունել զմեծամեծս Հայոց և տանել ի Պարսս: Բայց իբրև եղև հասանել Շապիոյ ի Տիսրոն՝ մեռաւ հայրն նորա Յազկերտ, թագաւորեալ ամս մետասան: Ի նմին աւուր և նա անդրէն ի դրանն մարդկանէ նենգեալ՝ սատակեցաւ: Իսկ ի ծեռն քաջին և բարեբախսին Ներսիսի Ճիճրակացւոց զօրագլուխ եղելոյ ժողովեալ նախարարացն հայոց հանդերձ զօրօք իւրեանց՝ տան ընդ զնդին Պարսից պատերամ. հարկանեն զզօրսն, և սպանանէ Ապրսան Սպանդունի զզօրագլուխն. և ինքեանք շրջէին, յորուն համօրէն Վանանդացին երևեցան նահատակեալք քաջութեամբ: Ուստի աղմկաւ և բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր. վասն որոյ

պակասեալ լինէին հարկը արքունի, և հատեալ ճանապարհը ռամկաց, և ամենայն բարեկարգութիւն վրդովեալ ապականէր:

Ընդ նոյն աւուրս թագաւորեաց Պարսից Վասա Երկրորդ, և զքէն վրիժուց խնդրեաց օ մերմէ աշխարհէս. խաղաղութիւն առնելով ընդ Յոյնս՝ ոչ ի բաժին նոցա հայի:

ԾԷ

### **Առաքումն Մեսրոպայի Բիւզանդիոն, եւ պատճէն թղթոցն հնգից:**

Իսկ իբրև ետես մեծն Սահակ զայս ամենայն չարիս ի մասինն Պարսից՝ գնաց նա զկողմանքը արևմտից մերոյ աշխարհիս, ի բաժին մասինն Յունաց, և ոչ ըստ արժանեաց իւրոց եղև ընկալեալ. Վասն որոյ զդէ զՄեսրոպ և զՎարդան թոռն իւր ի Բիւզանդիոն առ կայսրն թէոդոս հանդերձ թղթով, որ ունէր զայս.—

### **Թուղթ Սահակայ առ Թէոդոս:**

«Խաղաղասիրի կայսեր, տեառն իմում Աւգոստոս Թէոդոսի Սահակ Հայոց եպիսկոպոս, ի Տէր խնդալ:

«Գիտեմ, զի համբաւ նեղութեանս մերոյ հասեալ է ի լսելիս ինքնակալիդ. սակս որոյ յուսալով ի գրութիւն բարերարութեանդ քոյ՝ դիմեալ ապաւինեցայ յոտս ձեր. և ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուաց սոցա: Այնչափ ատեցեալ զմեզ, մինչև զնշանագիրսն անգամ ոչ ընկալան, զորս եթեր նոյն այր՝ զոր առաքեցի առ ձեր բարերարութիւնդ, բազում անգամ ճգնեալ դորա յԱսորւց աշխարհին: Արդ՝ հաճոյ թուեսցի տէրութեանդ ձերում՝ ոչ անիշխան առնել զմեզ իմերում վիճակիս, և հրամայել ընդունել զմեզ և զՎարդապետութիւնս մեր: Ողջ լեր»:

Գրէ և առ եպիսկոպոս թագաւորեալ քաղաքին զայս.—

### **Թուղթ Սահակայ առ Ատտիկոս:**

«Սահակ եպիսկոպոս Հայոց. Վարդապետ մեր Ատտիկոս եպիսկոպոս աշխարհամուտ դրանդ, օրինութեամբ ողջոյն:

«Յուսացեալ ի ձեր սրբութիւնդ առաքեցաք զուսուղո մերոյ աշխարհիս զՄեսրոպ, և զթոռն իմ զՎարդան, որպէս զի լուեալ քո ի դոցանէ զաղէտս նեղութեան մերոյ, բարեխօսեալ առ մեծի թագաւորիդ՝ օգնեսցես մեզ, որպէս արդարև եղբայր սիրելի: Ողջ լեր»

Գրէ և առ Անատոլիոս զօրավար զայս.—

### **Թուղթ Սահակայ առ Անատոլիոս:**

«Սահակ եպիսկոպոս Հայոց. քաջի զօրավարի Անատոլեայ խնդալ:

«Ծնորհ ունին Աստուծոյ յաղազս զքէզ պատրաստելոյ մեզ յապաւինութիւն. Վասն որոյ զգացուցանեմ՝ զի ի հայթայթանս մերոյ նեղութեանս առաքեցի զուսուցողդ մեր զՄեսրոպ և զթոռն իմ զՎարդան ի դուռն արքունի. և աղաչեմ զքո քաջութիւնդ ձեռնտու լինել ճանապարհիդ: Ողջ լեր»:

Զայս տեսեալ Անատոլեայ, միանգամայն և զլուր առաքինութեանն Մեսրոպայ յիշեալ, որ յառաջազոյն հնչեցեալ էր զնմանէ՝ ոչ փոքր ինչ արար նոցա ընդունելութիւն, մինչև ի ձեռն փոփոխ ընթացից գրով զգացուցեալ կայսերն՝ առնու հրաման՝ արժանապէս առաքել փութով: Վասն որոյ արգելեալ ի քաղաքին Մելիստինէ զբազնութիւն աշակերտացն, զորս ընդ ինքեան աժեալ՝ հարդերձ զիխաւորաւս նոցա Ղևոնդի առ եպիսկոպոսին Ակակայ թողու: Եւ իւր առեալ զՄեսրոպ և զՎարդան՝ տայ ցեպիսկոպոսն Ղերջանու ցԳինդ, և բարեփառութեամբ զնոսա յուղարկէ: Որով մտին ի Բիւզանդիոն, և յանդիման եղեալ մեծի թագաւորին՝ աթին զոր յուսայինն և զոր ոչն յուսային: Եւ դարձան հանդերձ թղթով այսպիսի:—

### **Թուղթ Թէոդոսի առ Սահակ:**

«Ինքնակալ Թէոդոս Աւգոստոս և կայսր Հռոմայեցւոց. մեծի Սահակայ եպիսկոպոս Հայոց խնդալ:

«Հրամայեալ մեր տեսանել զթուղթը՝ վերահասու եղաք գրելոց առ ի թէն. և մեղադրեցար յոյժ, զի ամենայն սրտի միտեցար զիեւ հեթանոս թագաւորաց, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ: Եւ առաւել յայս մեղադիր ենք, զի արհամարհեալ զՃարտարօքս, որ ի մերուն քաղաքին՝ յԱսորեաց ոմանց խնդրեցեր զիմաստից գիտս: Վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոց խառայիցդ արհամարհել զայդպիսի ուսումն. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, եթէ կատարումն արուեստիդ ի շնորհաց վերանոյն եղև՝ գրեցաք զի ամենայն փութով ուսցին. և զքեզ պատուեալ ընկալցին որպէս զարդարն վարդապետ իւրեանց, հանգոյն արքեպիսկոպոսին Կեսարու, և զարմանք և ծախք յարքունուստ եղիցին: Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց գօրացդ: Եւ վասն քո արարք ստորատելատ զՎարդան գորդի որդիացելոյ քոյ, և յառաջին վարդապետսն գրեցաք զՄեսրոպ: Ողջ լեր»:

Գրեաց և մեծ եախսկոպոսն Աստիկոս զայս ինչ.՝

### Թուղթ Աստիկեայ առ Սահակ:

«Աստիկոս ինքնագլուխ եախսկոպոս Կոստանդնուպոլիսի. եղբօր սիրելույ և աթոռակցի՝ Սահակայ եախսկոպոսի Հայոց, ի Տէր խնդալ:

«Բազում գրիութիւն Աստուծոյ մատուցանենք յաղագս քո բարեհամբաւութեանդ ի մէջ այդպիսի բարբարոս ազգի. այլ ազատ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց: Եւ առաւել ընս այս զարմանամք, եթէ զիա՞րդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ, զիայր մեր սուրբ Յովյաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ ո սովաւ ամենայն քրիստոնեայք ընդհանուր աշխարհիս ի նմանէ լուսաւորեցան վարդապետութեամբ. ուստի և Ռուկերան կոչեցին զնա: Եւ ձեր զանց զնովաւ արարեալ՝ կամեցայք ի սահանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել. մինչև ամենակալին տեսեալ զսնոտի աշխատութիւնն՝ բզիւեաց ի ձեզ զշնորհս Հոգույն, ընդ որ այժմ ուրախ ենք: Իսկ արդ՝ հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր. և աղանդոյդ բորբորիտոնաց՝ կամ հաւանեցուցանել, կամ հալածել ի քուննէ վիճակէդ: Եւ զառաքեալս ի թէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկղեսիսդութիւնու:

ԾՈ

Վասն զարեւմտեայս մեր վարդապետելոյ, եւ խաղաղնալոյ բոլորումն, եւ թագաւորելոյն Արտաշրի:

Եկեալ Մեսրոպայ և Վարդանայ ստրստելատի՝ գտին զզօրավարն Անատոլ հուա ի մերս եկեալ սահման. որոյ ընկալեալ զիրանանն արքունի՝ առաւել յիխորտաբար և քաջակիոյթ ձեռնարկութեամբ զգործն ի կատարումն աւարտեաց: Քանզի իշխանք և գործակալք և գլխաւորք և որք միանգամ յայտնիք էին ի կողմանն, ի մի վայր եկեալ հասանէին հանսերձ ամենայն քահանայական ազգաւն ինքնակամ, իբրև յաստուածառաք ձայնէ հրաւիրեալք, զորս անյապաղաքար սկսեալ ուսուցանել՝ երազապէս վարգապետեցին զկողմն արևմտեայ, որպէս զարևելեայն:

Յայնժամ գային հասանէին ի բազում նախարարաց կոչնականք զմեծէն Սահակայ, զի մէջ նոցա անցեալ՝ ի միաբանութիւն հաւաքեսցէ զամենեսեան: Քանզի գիտացեալ արքային Պարսից Կոռամայ. եթէ առանց նախարարացն Հայոց ոչ մարթի ունել զաշխարհս՝ հաշտութիւն խօսի ի ձեռն Սմբատայ ասպետի: Վասն որոյ թողու զՄեսրոպ ի վերայ վարդապետութեան կողմանն արևմտից, և առ նմա զթոռունսն իւր զիմայեակ և զՀամազասպեան, զեղբարսն Վարդանայ ստրատելատի: Հրամայէ քննել զժանդագործ բորբորիտոնսն, և եթէ ոչ հեզութեմք և ոչ սաստի զայցեն յուղութիւն՝ չարչարանօք հալածել. զի որպէս թշնամիք ի թշնամեաց վրէժ առնուցուն, և խայտառակեսցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգուց: Եւ ինքն եկեալ անցանէ յԱրարտեան գաւառն. կուտեալ զամենայն նախարարազունս՝ առաքէ զՍմբատ ասպետ և զՎարդան ստրատելատ զթուն իւր ի դուռն արքային Պարսից:

Եւ նորա հաստատեալ զիաշտութիւնն՝ մուրիակ մոռացման յանցանաց կնքէ, ըստ խնդոյ նոցա թագաւոր կացուցանելով զԱրտաշէս որդի Վոամշապիոյ և փոխեալ զանունն, Արտաշիր կոչելով՝ զաշխարհս հայոց ի նա հաւատայ առանց պարսիկ վերակացուի. որ տիրեաց ամս վեց:

## Ծթ

### Շինուած Կարնոյ քաղաքին, որկոչի Թէոդուապօլիս:

Անատոլեայ զօրավարի ընկալեալ զիրամանն արքունի, և եկեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր՝ հաճի ի գաւառին Կարնոյ շինել զքաղաքն արգաւանդահոդ, շատաջուր և բերի. իբր միջոց վարկուցեալ զվայրսն, ոչ կարի ի բացեայ ի տեղեացն, ուր Եփրատայ մասինն ինչ բոլուն աղբիւրք և հանդարտ գնացիւք յառաջացեալ ծովանան մօրաբար երևութիւք. յորում անբաւութիւնք ձկանց և զանազան հաւոց ձարակաւորաց, յորոց ի ձուոցն միայն կերակրեալ լինեին բնակիչքն: Եւ եզերը մօրին շամբք և բազմութիւն եղեանց. և դաշտքն ունին զքանձրութիւն խոտոց և զքաջաբերութիւն սերմանաւոր պտղոս: Եւ լերինքն լի են երեսք կծղակաբաշիւք և որոճայնովք. նա և զանասնոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջանարմինս և յոյրս ցուցանեն, հանակեալս ի գիրութիւն:

Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանունս բոլուն անդ ետեղագրեաց զքաղաքն. զորով շրջափակեալ խոր փոսի՝ անդնդալիր հաստատեաց զիհմունս պատուարին. և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց, յորոց զառաջինն Թէոդոս անուանեաց ի պատիւ Թէոդոսի: Եւ ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ժայռաւորս իբրև գնաւացռուկս, և առանցս զոգաւոր խորշիւք, որք ընդդէմ հային լերինն: Սապէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արևելից և արջմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս: Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակ վայրի մթերանոցս բազմապատիկս շինեաց, և Աւգոստիոն անուանեաց ի պատիւ Աւգոստոսի: Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մտոյց անյայտ գնացիւք: Եւ ելից զինու և պահապան գնդիւք զքաղաքն, և անուանեաց Թէոդոսիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն: Եւ ի վերայ ծերմ դիսեալ աղբերացն՝ յարկս ի վիշատաշ քարանց շինեաց:

## Կ

### Կրկին աւետարանիչ լինել Մեսրոպայ, և եթէ թարգմանչացն ի Բիւզանդիոն:

մեսրոպայ կացեալ յանապատ և ի հովանաւոր տեղիսն, որ Շաղգոմքն անուանին՝ բովանդակեաց զվարդապետութիւնս առաջին առելոց խմբից: Քանզի ոչ որպէս զարուեստ ուսուցանէր, այլ իբրև զիոզի առաքելաբար աշակերտացն տայր: Յետ որոյ թողեալ վերակացուս յիւրոց աշակերտացն ի նմին տեղլոց, զՈւոնդ և զԵնովք ի Սպեր, իսկ ի Ղերջան զնոցին եպիսկոպոսն զԳինդ, և յԵկեղեաց զՂանան՝ ինքն եկեալ յԱյրարա՝ անցանէ յառաջնոյ բնակութեան գաւառն Գողըն:

Քանզի մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն ի ժամանակի անիշխանութեանն ի վեր երեկեալ՝ ի բազումս տարածեցաւ. զոր բնաբարձ արարեալ երանելոյն հանդերձօզնականութեամբ հօրաբարոյի Գտայ որդույ Շաբիթայ, իշխան գաւառին, տեղեկանայր ևս, եթէ չարեացն վարդապետք նախագոյնք ի Բաղասականն են կողմանս: Ուր երթեալ զքազումս յուղութիւն ածէ, և զսակաւսն անդարձս յիշխանութիւն Հոնաց հալածականս առնէ: Հաւատալով զվարդապետութիւն կողմանցն այնոցիկ եպիսկոպոսին, որում Մուշեղն կոչէին՝ ինքն դառնայ զԳարդմանայ ծորովն. զի և ի նմա լուաւ լինել ի նոցին ընկերաց աղանդոյն. զորս գտեալ՝ ածէ և զնոսա ի գիտութիւն ծշմարտութեան, հանդերձ վերոստին ուղղութեամբ իշխանին Գարդմանաց, որում անուն էր խուրս: Հրաւիրի անտի ի բդեշխէն Գուգարացւոց Աշուշայէ՝ յաղագ նորին գործոյ գալ յիւր ծշխանութիւնն ի գաւառ Տաշրաց. ուր երթեալ՝ լաւագոյնս

վարդապետեաց և հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն առ որով ժամանակաւ Արձիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց:

Ապա եկեալ և առեալ Մեսրոպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփի և զմիս ընկեր նմին ի կողք գեղջէ, որուն անուն Եզնիկ կոչէր՝ առաքեն ի Միջազետս ի քաղաքն Եղեսիայ. զի որ միանգամ գտցին անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց՝ թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով, զի յետ այնր ի Բիլգանդիոն առաքեսցին ի նոյն գործ: Որոց ընկալեալ գիրապուրական թուղթս սուտակասպասաց ոմանց, իբր թէ պատրաստին մեծն Սահակ և Մեսրոպ զայլս առաքել ի Բիլգանդիոբ. վասն որոյ առանց հրամանի վարդապետացն իրեանց նոյն ընդ նոյն չուեալ գնացին ի Բիլգանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց. և քաջ վարժեալ հելլէն դպրութեմբ՝ ձեռնարկեցին ի թարգմանել և ի գրել: Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերաց իրեաց աշակերտակցաց, որոց անուանքն Ղևոնդ և Կորիւն կարդային՝ յիրեանց կամաց ելին առ նոսա ի Բիլգանդիոն: Ապա ելանեն ամոր Յովիան և Արծան, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և Մեսրոպայ. որոց յուլաբար ուղևորեալ և ծուլաբար դեգերեալք՝ պատրադեցան ի Կեսրիայ: Որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոս Բիլգանդացոց:

#### ԿԱ

#### Յաղագս ժողովոյն Եփեսոսի, որ վասն ամբարշտին Նեստորի Եղել:

Ընդ այն ժամանակս եկաց յաթոր եպիսկոպոսութեանն Բիլգանդացոց անարժանաբար ամբարիշտն Նեստոր, և իրէական իմացմանց հետևեալ՝ հայինեաց զամենասուրբ կոյսն՝ մարդածին լինել և ոչ աստուածածին: Քանզի ծնեալն ի նմանէ առեալ սկիզբն՝ այլ որդի ասէր շնորհօք ի Մարիամայ, և այլ որդի ի Հօրէ յառաջ քան զյալիտեանս. որպէս զի լինել երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի: Վասն որոյ ժողովեալ սրբոց հարցն յԱսիա ի ծովահայեացն Եփեսոս գրաւորական վերծանութեամբ, Կելեստինոս Հռոմայ, Կիւրդոս Աղեքսանդրի, Յորնադիոս Երուսաղեմի, Յովիաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պաւլոս Հեմեսու, Թէոդոտիոս Անկիւրիայ, և այլք բազումք, համանգամայն երկերիր հարք, նզովեալ զՆեստոր՝ խոստովանեցին մի որդի Աստութոյ զտէր մեր Յիսուս Քրիստոս, և աստուածածին զմենասուրբ կոյս Մարիամ:

Եւ Վասն զի ոչ հանդիպեցան յայնժամ ժողովի մեծն Սահակ և Մեսրոպ՝ գրեն առ նոսա Կիւրեր Աղեքսանդրացի և Պրոկոպոս Կոստանդնուպոլիս և Ակակ Մելիտինեայ եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնոսա. քանզի լուսան, եթէ ոմանք ի չարափառացն աշակերտաց առեալ զգիրսն Թէոդորի Մամուեստացոց, զվարդապետին Նեստորի, և զաշակերտին Թէոդորի գնացին յաշխարհն Հայոց: Ապա եկեալ թարգմանիչն մեր, զորոց զանուանսն յիշատակեցաք յառաջագոյն՝ զտնի զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զթութեան և զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ, և զսոյզ օրինակս Գրոց:

Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդեռ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ: Բայց քանզի անգէտք էին մերունս արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ զործն զտանէր. Վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ, ի լեզու պանծալի, ի ստոյզ յօդանալ Ճեմարանին վերաբանութեան:

#### ԿԲ

#### Ի վականապետսն, յինքն եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդու:

Յարահետևողը իմաստասիրացն և վերահայեցողը չափաբերապէս մակագրութեանց՝ զաստեղս ի լուսոյն ասեն ընծուիլ, և զլուսին արեգակամբ ուրծացեալ, և զբոլոր արեգակն յարփայինն երկնէ. հիկէն արփույն հեղեալ զծագումն յեերկաքանչիւր

գոտիսն, և զանցնիւ գոտիսն ի ձեռն արեգական ընծուի՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակի: Օրինակ իմն, այսպէս և մեք յալիտախաղաց շնորհիւ ցոլացեալ յիմանալի չառագայթից հոգեսոր հարցն, ըստ հարաւային. նասանցն պարայածեալը՝ յԵղեսացոց հասանէաք քաղաք. թեթևակի ընդ խորս դիւանին նաւեալ՝ անցաք ի սուրբ տեղիս Երկրագել, ի մնալ վայրկեան ի Պաղեստինացոց հրահանգ:

Եւ այնպիսեաւ սաղապաշեմիւ մտաք յԵգիպտոս, յաշխարն համբաւատենչ, յանչափից հրաժարեալ ի ցրոյ և ի տօթոյ, ի հեղեղաց և յեղաշտից, գեղեցկումն մասին երկրի զդիրն ունելով, ամեազան պտղովք առլցեալ, և անձեռագործ պարսպեալ Նեղոսիւ. որ ոչ պահապանութիւն միայն, այլ և կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեաց յինքենէ, և առոգմանք տէր գոլ պատահեաց ի չորութեան և խոնաւոյ՝ առ երկրին գործաւորութիւն. և զանեղսն ի նմա դիւրածել գետոյն բերիւք՝ հանգիտակ կղզոյ առատագիւտս առնէ, շորջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով Երկոտոսանից վտակաց: Յորում բարեյարնար մեծն Արեքսանդրայ է շինեալ քաղաք բարեժամանակ ի մէջ ծովուն, և ճեռագործ լիճ կառուցեալ. յորոց օդոցն քաղցրախառնութիւն փշեցեալ, որ ի լճէն բենանք արձակին ի ծովն, և որք ի ծովէքն մօտի ելոյ որ ելանեն ստէպ սոլոյսք օդոյ, անօրունք այն որ ի ծովէն, և թանձրունք որ ի լճեն. որոց խանուածն առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ:

Սորա առաջի այժմ ոչ քնցեալ նստի Պղոտենիոս հինգակատար գագաթամբն, զանսպառ աշխարի պատելով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեմբն. և ոչ վիշապագին դիւցազնակաց գերեզմանք, այլ սրբոց վայելչանան վկայարանք: Եւ ոչ ի քսան և հինգ Տուրի՝ տօնի աղջատանք, գբեռնաբարձս պսակելով գրաստ, և պաշտօն տանել լորատուաց, և աթերաց առնել բաշխումն, այլ ի մետասան նորին Տուրի՝ յայտնութեանն Տեառն կատարի տօն, զյաղթող նահատակս գովել, և օտարաց առնել ընդունելութիւն և յաղքատս տուրու: Եւ ոչ զոհել չար դիւին Մարապեայ, այլ զՔրիստոսի արիւնն մատուցանել. պատարագ, և ոչ խնդրել հրաման պատասխանուոյ ի սանդարամետէն Պրոդէիադայ, այլ ուսանել զզօրութիւնս պէսպէս իմաստից ի նորն Պղատոնէ, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ, և ոչ անկատար վարժմանք ի յանգ ելեալ արուեստից՝ հնքնացայ:

Նաւել յԵլլադայ կամելով՝ յիտալիա բռնութեանք անկաք հողմոց և ողջունեալ ի հանգիստ սրբոց Պետրոսի և Պողոսի, և ոչ բազում և Հռովմայեցոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Ելլադայ յԱստիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս: Եւ ի կատարել ձմերայնոյն՝ դէմ եղեալ ի Բիւզանդիոն ելանել, փափագելով մերոց հայրենեացն:

#### ԿԳ

### Յաղագս չար միաբանութեանն Հայոց ի խորհուրդ կորդտեան անձանց:

Բայց թագաւորն հայոց Արտաշրի անհուն սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւնս, մինչև տաղտկանալ ի նմանէ ամենայն նախարարացն: Որոց Եկեալ առ մեծն Սահակ՝ զբողոք բարձին, հրաւիրելով և զնա յօգնականութիւն ինքեանց, չարախօսել առ արքային Պարսից, և ի բաց ընկենուլ զթագաւորն իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս: Այլ նա ասէ. «Ոչ առ սուտս ունիմ զձեզ. իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց, և բազում անգամ յանդիմանեալ՝ ուրացաւ: Եւ արդ՝ պարտ է փոքր մի տանել թերութեան առնն, մինչև գելս իրացն խորհել մարթասցուք կայսերբն Յունաց թէոդոսի, և ոչ անօրինաց մատնել ի ծաղը և յայպանումն»:

Եւ նոքա ոչ կամէին, այլ ջանային համախորհուրդ իւրեանց զնա առնել: Այլ նա ասէ. «Ինձ քաւ լիցի մատնել զայլոց զիմ մոլորեալ ոչխորս, և ոչ պատեալն կամ զիհիանդացեալն, այլ զահավէժ առնել: Զի եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի՝ փութայի և ոչ յապադէի, յուսալով զկանգնումն գլորելոյն. այլ հեթանոսաց, յառաւել կարծանումն՝ ոչ առնեմ յանձն, ըստ այնմ թէ մի մատաներ դազանաց զանձն խոստովանող քեզ: Քանզի դրոշմեալ է աւազանաւն, թէպէտ և անառակ է պունիկ է, այլ

քրիստոնեայ է. գիճացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգւով. զեղիս է վարուք, այլ ոչ կրակապաշտ. տկար է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարեց: Եւ զիհ՞ոդ լինիցի այդ, փախանակել զիմ ախտացեալ ոչխարն ընդ առողջ գազանին, որոյ առողջութիւնն է մեզ պատուիաս»:

Իսկ նախարարացն զմտաւ ածեալ. իբրև թէ խարկանօք իցէ գործն՝ յապաղել զնոսա, զի զթագաւորն պատաստեցուսց՝ ասեն ամենեքեան. «Վասն զի ոչ համակամեցար մեզ՝ դժագաւորել նմա, արդ և մեք կամեսգուք՝ և քեզ չքահանայանալ ,եզ»: Եւ միաբանեալ ամենեքին, անցին առ արքայն Պարսից Կռամ, հանդեձ Սուրմակաւ ոմամբ Արծկեացի փառամոլ երիցու, չարախոսել զարքայէն իրեանց զԱրտածրէ, և զմեծէն Սահակայ՝ զՅունօք գլեալ խորհրդովն»:

#### ԿԴ

### Յաղագ բարնալոյ թագաւորութեանն Հայոց ինքեանց կամաւ, եւ անարգելոյ աթոռոյ եպիսկոպոսապետութեանն:

յայնժամ արքային Պարսից Կռամայ կոչեցեալ ի դուռն զթագաւորն հայոց զԱրտաշիր և զմեծն Սահակ, և խնդրէին ի նմանէ ամբաստանել զԱրտաշրէ. և նա հրաժարէր բնաւ ասել ինչ չար կամ բարի: Ապա հրամայէ հազարապետին Արեաց, որ էր Սուրենեան Պահլաւ, զի հաւանեցուսց զնա խրատու սիրելութեան, որպէս զազգային: Եւ նորա անկեալ ի բանս հրապութանաց, ասելով.«Զի արիւն իմ ես և հարազատութիւն՝ զբարին քո խորհելով ասեմ. եթէ միայյն այժմ միաբանեսցիս ընդ նախարարսդ՝ մեծարեալ լինիցիս յարքայէն Պարսից. և զթոռն քո զՎարդան կարգեսցէ ի վերայ Հայոց զուգահաւասար թագաւորին և համապարհիւ»: Այլ նա ոչ առնոյր յանձն, ասելով. «Զիհ՞ոդ վասն սնափառութեան և իշխանասիրութեան չարաբանիցեմ զընկերէ. կամ ընդէ՞ր ձեր այդպիսի յօժարութիւն՝ ընկենուլ զԱրտաշիր. զի ես զնորա ապստամբութեան ինչ խորհուրդ ոչ գիտեմ. ապա եթէ վասն անառակ ինչ վարուց, որ նորա ամբաստանեն՝ պատույ արժանի է ի ձէնջ ըստ ձերում աննաքրասէր օրինացդ. թէպէտ մերումն դատապարտի. բայց սակայն յինէն ինչ էք լսելոց ամենկին»:

Ապա զայրացեալ Կռամայ, ի մեծի հրապարակին արարեալ քննութիւն, և ոչ դնելով ունկն Արտաշրի՝ յօժարութեամբ լսէր չարախոսացն, առաւել ևս յոյժ աղտեղութեան բանիցն Սուրմակայ: Քանզի զաթոռ եպիսկոպոսապետութեանն էր խոստացեալ նմա նախարարացն թշնամնակամացն և ոստիսահրացն վասն որոյ ինքնասիրութեամբ պատրաստեաց զլեզուն իւր սուսեր սատակիչ: Մինչև հրամայեաց Կռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշրէ, և անդրէն արգելուլ զնա, և զամենայն ինչս ազգի նորա ունել յարքունիս. նոյնակս և զմեծն Սահակ, և զտունն կաթողիկոսական ունել յարքունիս, և տալ փոխանակ նորա յաթոռ եպիսկոպոսապետութեանն Հայոց զՍուրմակն զայն: Եւ մեծապարզէ զնախարարսն արձակեաց պարսիկ մարզպանաւ, որում անուն էր Վեհմիհրաշապուհ:

Բայց Սւորամայ ոչ աւելի տևելի քան զմի ամ՝ ի նոցին իսկ նախարացն հալածեցաւ յաթոռոյն. որ ապա զիւրոյ գաւառին զԲանունեաց զեպիսկոպոսութիւնն ի Պարսից արքայէն եգիտ ունել ազգաւ: Իսկ նախարարքն մեր խնդրէին ի Կռամայ այլ աթոռակալ. և ետ նոցա զԲրդիշոյ ոմն ասորի: Սա եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան և կանայս տնկալուչս, անժուժաբար և աւելորդօք և յափշտակութեամբ վախճանեցելոցն վիճակաց ամս երիս: Որում ոչ կարացեալ տամել նախարարացն՝ դարձեալ աղաքեցին զԿռամ փոխել զնա, և տալ զայլ ոք ըստ կրօնից նոցա. և կիսոցն ի նոցանէ զմեծն Սահակ խնդրեալ:

#### ԿԵ

### Արձակումն ի Պարսից մեծին Սահակայ հանդերձ Շամուելաւ աթոռակալաւ:

Որպէս ասացաք՝ յերկուս բաժանեալ նախարարքն Հայոց՝ յերկաքանչիւրոցն առաքեցին խնդրել աթոռակալ յարքայէն Պարսից. Վաչէ Արծրունեաց տէր և Հմայեակ

Աշոցաց տէր՝ զոր ոք և արքայ կամեսցի. իսկ Մանէձ Ապահունեաց տէր և Սպանդարատ Արշարունեաց տէր՝ զմեծն Սահակ. նա և զօրավարին Յունաց Անատոլեայ ի Կարնոյ գՀաւուկ ի Կուկայառձոյ. զի եթէ ոչ իցէ ննա հաջոյ ունել յիւրում բաժնին՝ տացէ զնա մասինն Յունաց: Յղեցին և բազմութիւնք Եպիսկոպոսացն հանդերձ Երանելեաւն Մեսրոպաւ և բովանդակ ուխտիւ Եկեղեցւոյն մաղթանս դքահանայն Տիրուկ, զորդի Մովսիսկան ի Զարիշատէ Վանանդայ: Վասն որոյ հաւանեալ Վուամայ՝ դերկաքանչիւրոց կատարեաց գլւնդիրս, տուեալ յաթոր Եպիսկոպոսապետութեանն զայլ ոնն ասորի, Շամուէլ անուն, զի լիցի ընդդիմափառ մեծին Սահակայ և հակառակաթոր. և գործ ննա զատուցանէ զընկերել մարզպանին, կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրեցելոց և դատաստանաց և այլ աշխարհական կարգաց: Եւ զմեծն Սահակ արձակեալ՝ թողու ի նա զեօղս սակաւ ի նորին տանէ, զի նստցի միայն յինքեան վիճակի, իշխանութիւն ունելով միայն վարփապետութեան սովորական կրօնիցն, և ձեռնադրութեն զայնոցիկ՝ զորոց և Շամուէլն յանձն առնուցու:

Բայց յանձակելն զնա յանդիման իւր արարեալ ի բազմակոյտ ատենին. ասէ. «Երդմնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատ՝ միամիտ կալ ի շառայութեն մերում, և ոչ խորհել իրս ապստանքութեան՝ պատրել ի մոլար հաւատակցութիւնն Յունաց, և լինել պատչառ կորստեան ի մէնջ Հայոց աշխարհին, փոխել զբարերարութիւնն մեր ի չարութիւն»: Յայնժամ կանգուն կացեալ մեծին Սահակայ, պարկեշտ և նազելի զինքն կազմեալ ի բենասացութեան ձևի՝ համեստ հայեցուածովք, համեստագոյն ևս ձայնիւ սկսաւ ձառել զերախտիս ծառայութեանն, և զապերախտն ի նոցանէ լինել. ընդ նմին և զկեղծաւոր քաղցրաբանութիւն նոցա յանդիմանելով, զդառնութիւն խորհրդոց և զգործս չարչարս. յարելով ի նոսին զընդդիմաբանել անմիտ հայինութեանցն արտաձառնեցելոց, զոր ասաց մոլար հաւատակցութիւն. և զնոցայն խայտառակելով զպաշտամունս, կատարեաց ի հրաշալի աստուածաբնութիւն, ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց, և ոչ բովանդակ զբանին պայծառութիւն անհաւատիցն արկանել առաջի յայպանումն, որպէս զմարգարիտ խողից ի կոխումն. այլ այնչափ կայծակնածածանչ ցուցեալ, որով զազաղացան մոգուցն լեզուք. և հիացեալ պակեալ ինքնին թագաւորն, և ամենայն բազմութիւն հրապարակին անձնագեղացն Պարսից՝ յակչիռս կալով սականջնել. մինչև հրամայեաց Վուամ արծաթ բազում տալ ննա՝ իբրև քաջաբանի և ուժգնաստրի առն համարձակախօսի առաջի այնքանոյ թագաւորի:

Այլ նորա ոչ առեալ՝ ասէ ցհամազգին իւր զՍուրենեանն Պահլաւ. «արծաթ նորա ննա լիցի. բայց դու հաւանեցուցես զնա՝ տալ ինձ զերկուս զայս միայն. զգահ նախարչացն Հայոց, որպէս կարգեալ յԱրտաշու վարեցան մինչև ցայշմ՝ նորին օրինակաւ հրամայեսցէ և առ յապայ, զի մարզպանք պարսիկք մի կարասեն ծանուցումն սակս այնր առնելով ինչ զերազանցօրէն փոփոխել ըստ կամաց իւրեաց: Եւ միւս՝ զի դարձուսցէ զտուն ազգականին իմոյ և քոյ, զմանկանն Գազաւոնի գորդույն Հրահատոյ, թէ և ոչ յիւրում ետեղ, զԱրշակունին յաշաղելով անուն, գէթ ի կարգ ընկեցեալ՝ ընդ այլ նախարարս թուեսցի, յորում ետեղ ինքն կամեսցի, որպէս համազն նորա Կամսարականն, կամ զԱմատունին թափեալ ի հարցն գահուէ և յառաջանախնն պատույ ի ստորնակայինն, և կամ գրեթէ որպէս զարքունի գործակալութիւն ննա հաւատասցէ և նորուն զաւակաց համանմանակի ընտանութեամբ, մինչև Աստուած քաղցրասցի դարձուցանել ի կարգ հայրենի ընդ ձեռն որոյ և է թագաւորի: Արդ՝ ջանասցիս դու թովելով զօրէն համոզակեր թովչի»:

Այնմ լսող եղեալ Վուամայ՝ հրամայէ զամենայնն կատարել. և դարձեալ հաստատելով զթուն նորա զՎարդան ստրատելատն ի տէրութիւն իւրոյ ազգին Մամիկոնէից՝ արձակէ ի Հայս:

Բայց թէ ասիցէ ոք, պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն գրել՝ գիտասցէ, զի ոչ յումեքէ ի լսելիս մեր հասեալ է

բովանդակն ճշմարտութեամբ, և ոչ մեք ի պատմութեանս հիւսել հաւանիմք: Զի և ես այր եմ ծերացեալ և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց, և զերագելն միայն խոկացի, ոչ ինչ մաքրագունից պարապել բանից, զի քո կամքդ կատարեսցին, և ես չողոպեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց. մարդ զքեզ վարկանելով, կարեկցութեմբ մեզ հաւասարեալ, և ոչ որպէս քեթողքն ասեն, մերձազաւակը և մօտասերք. գոլ և նոյնասերմանք աստուածոց՝ իշխաք:

ԿԶ

### **Գործք Շամուելի անարժան հոմիշխանին մեծին Սահակայ:**

Եկեալ Շամուելի՝ կալաւ զարոր եպիսկոպոսապետութեանն, հետևեալ վարուցն Բրքիշոյի, և առաւել ևս ազահութեանն մասամբ. զի նա զվարժանեալ եպիսկոպոսացն միայն յափշտակոաց զվիճակ, այլ սա և զկենդանեացն. քանզի և փոխանորդ մեռելոցն ոչ տայր թոյլ ձեռնադրել մեծին Սահակայ, և զկենդանեացն դոյզն ինչ գտեալ պատճառս խափանամն հարկացն արքունի՝ հալածականս առներ, յինքն կորգելով զամենեցուն տունս: Վասն որոյ ասեցեալ ի բնաւ եպիսկոպոսացն՝ արհամարհեալ լիներ. զի թէ և բիւրապատիկ չարիս ի նմանէ կրէին՝ ոչ երբէք տեսանէին զնա, բայց ի սուրմակայն յայնմանէ, զորոյ և մեծացոյց իսկ զվիշակն, արքունի հրամանաւ հանեալ զբազմաց՝ նմա հաւատայր: Ընդ որ նախանձեալ և այլ եպիսկոպոսաց՝ ժարիեցան զնոյն առնել, խնդրելով ի Պարսից արքայէն օգնականութեամբ իւրաքնչիւր իշխանաց:

Այլ մեծն Սահակ ոչ ինչ կասեաց զիոգնոր կաթնն դիեցուցանել մանկաց եկեղեցւոյ հանդերձ Մեսրոպաւ, զոր թողեալ խաչսխեաց յեկեղեցւոցն կաթուղիկէ, որ ի Վաղարշապատ քաղաքի, ինքն կալով ի Բագրեանդ գաւառի, ի տեղուցն՝ ուր ծագեաց լոյս յերկնից ի մկրտել սրբոյն Գրիգորի զՏրդատ արքայ և զբոլոր Հայս:

Բայց Շամուել կեցեալ ամս հինգ՝ մերում աշխարհիս: Յայնժամ ժողովեալ ի միասին ամենայն նախարարացն՝ չոգան առ մեծն Սահակ, և զմեղանս յանձն առեալ՝ աղաչէին զնա դարձեալ ունել զաթուն. խոստանային ի Պարսից արքայէն հաստատել զնա, մուրիհակ ամենեցուն կնքեալ՝ ազգաւ տալ թուանց նորա զնոյն իշխանութիւն: Այլ նա ոչ առնոյր յանձն. և ի բազում թախանձելոյ նոցա հարկաւորեալ՝ պատմեաց զտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս երևութացաւ նմա ի քում ապագայիցն յայտնութիւնք: Զոր լուեալ նախարարցն և գրտացեալ, թէ յաստուածային հրամանէ դադարեաց յազգէ նորա քահանայապետութիւնն՝ յարտասուս հարեալ, աւաղեալով զինքեանս ըստ Աւետարանին բանի, թէ Հարկ է գալ զայթակղութեանն, բայց վայ այնոցիկ, ընդ ոյր ձեռն զայցէ գայթակղութիւնն՝ ետուն նմա:

ԿԷ

### **Փոխումն յաշխարհէ մեծին սահակայ եւ Մեսրոպայ երանելույ:**

Զքսան և զմի ամ թագաւորեալ Պարսից Կռամ երկրորդ՝ մերանի, թողլով զտէրութիւնն որուոյ իւրում Յազկերոտի: Որոյ մոխացեալ զհաշտութիւնն՝ իսկ և իսկ ընդ թագաւորելն դիմէ ի Վերայ զօրացն Յունաց, որք առ Մծբնին, հրամայելով զնոյն Աստրապատականի ի մեր աշխարհս ելանել. որք եկեալ անկարգապէս բանակեցան հուա առ Բագմացն աւանի:

Յայնժամ հասեալ մեծին Սահակայ հիւանդութիւն մահու. և առեալ զնա աշակերտացն՝ տարան ի գիւղն որ կոչի Բլուր. որպէս թէ ի վայր և յընտանեզոյն և ի զերծ տեղի մատուցեալ ի զօրացն Պարսից կտտողաց զնոսա: Ուր և եհաս վախճան, կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի, սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ խոսրովայ արքայի Հայոց մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերոտի եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյ նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն: Որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն. և այսքան կենցաղավարեաց՝ իբր զի պակասութեան իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առընդունել: Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագումիւ անցանել

բանիւ, ըստ արժանի սրբոյ հօրն դրուատից. այլ զի մի յերկարութիւն ճառից լիցի ծանձրութիւն ընթերցողաց՝ այլում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողցուք, արտաքոյ այս գրոց, ուր զսկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւն:

բայց զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւազապետին նորին Երեմիայի հանդերձ աշակերտակցօքն և տիկնաւն Մամիկոնենից, նորին նուաւ, որում անուն էր Դստրիկ, կին Վարդանայ ստրատելատի՝ տարեալ հանգուցին յիւրեանց գիւղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարօն: Եւ ցրուեալ աշակերտաց նորա կրօնաւորաց սպուղէից ի գաւառս իւրաքանչիւր՝ շինեցին վանորայս, ժողովեալ եղբարս:

Եւ զկին վեց ամսոց անցելոց կատարման սրբոյ Սահակայ, յերեքտասանն մեհեկանի և երանելին Մեսրոպ յաշխարհէ փոխեցաւ ի Վաղարշապատ քաղաքի, գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն առ ի նորա վասն տեղի գտանել երբէք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ, գործքովք ժումկալ, մարմնով արտափայյեալ, սարասիք անձառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցահաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ:

Այլ վասն զի գրոլոր նորա ուղղութիւնս ոչ եմ բաւական ասել՝ ի հանգիստ նորա նշխարացն դարձուցից զբան: Որպէս լուայ ի բազմաց և ի հաւատի արանց, եթէ եկաց լոյս շողապէս ընդ աղօտ նշան խաչի ի վերայ տանն, ուր երանելին զիոգին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ էանց ծագումն, կամ ակաւուց տեսանելի, այլ ամենայնբազմութեանն. մինչև յոլովից մկրտել յանհաւատից: Յայնժամ լեալ աղմուկ շփոր յամբոխութեանն, բաժանեալ յերիս գունդս, վասն հանգուցանելոյ զպարկեշտն զայն մարմին և նախ քան զմահն կրթեալ ի մեռելութիւն: Կէսքն ասէին տանել ի բնազաւառն իւր ի Տարօն, և ոմանք ի նախ աշակերտեալն Գողթն, և այլքն անդրէն ի նմին ի Վաղարշապատ քաղաքի ի սրբոցն դիրս: Բայց յաղթութեաց քաջն Վահան Ամատունի, զի էր զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ Պարսից զիաազարապետութիւն աշխարհիս հայոց. որոյ բարձեալ՝ տարաւ զնա արժանի յուղարկմանբ յիւր գիւղն Օշական: Եւ նոյն տեսիլ լուսեղէն խաչին ի վերայ դագաղացն երթայր յանդիման ամենայն ժողովրդեանն, մինչև ի հանգիստ զնա փոխեցին Վահան և Թաթիկ նորին արբանեակ. և ապա նշանն աներևոյթ լիմէր: Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէի քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խողոցին գեղջէ:

ԿԸ

### **Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց, Եւ Եպիսկոպոսապետութեանն յազգէ սրբոյն Գրիգորի:**

Ողբան զքեզ, Հայոց աշխարհ, ողբան զքեզ, հանուրց իիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող. Վրդովեցաւ խաղաղութիւն, ամրատացաւ անկարգութիւն. դրդուեսաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ շարափառութիւն:

Ողորմին քեզ, Եկեղեցի Հայաստանեայց, խրնացեալ ի բարեզարդութենէ բեմին, ի քաջէն գրկեալ ի հովուէ և ի հովուակցէ: Ոչ ևս տեսանեմ զբանաւոր քո հօս ի վայրի դալարւոց և ոչ ի ջուրս հանգստեան սնեալ, և ոչ ի փարախ հաւաքեալ՝ զգուշանալով ի գայլոց, այլ ցրուեալ անապատաց և գահավիժութեանց:

Երանի՝ առաջնոյ և երկրորդի փոփոխմանն. զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսաւիրին, և հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս

ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց: Դարձեալ մինչ երբեմն ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առագաստո՞ւ և հարսնդ ոչ աղտեղացար. թէպէտ և բռնութիւնն զփեսայն ի բաց վարեաց, որդուցն բարձրացելոց անարգելով զծնողն, համայն և խորթոցն ըստ արժանեացն զօտար հայրն և գեկամուտ յօրայն. սակայն դու և ոչ յայնմ զքեզ ամայի բոլորիցն ցուցեր. զանդրէն քոյոյն յուսալով դարձ հովուակցաւն, ոչ որպէս տայգերը, այլ որպէս նոյնազաւակ գուգահարը, զմանկունսն փայփայեցեր: Իսկ յերրորդ հեռանալս ոչ է ակնկալութիւն դարձի, լուծեալ ի մարմնոյս ընկերաւն և գործակցաւն:

Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակել, և յԱբրահամեանն հանգչել ի գոզս, և զիրեշտակացն տեսանել զպարաւորութիւնս: Բայց անհոգոր դու այրութեամբ, և երկելիք մեք՝ որ զրկեալք եմք ի հայրենի վերակացութենէն: Զի ոչ որպէս ի հնումն ժողովուրդն այն, այլ առաւել մերս է թշուառութիւն: Վասն զի Սովուս բարձեալ լինի, և Յեսու ոչ յաջորդ՝ առաջնորդել յերկիրն Աւետեաց: Որբովամ մերժեցաւ յիւրմէ ժողովուրդն էն, և փոխանորդեաց որդին Նաբատայ. և զայրն Աստուծոյն ծխեաց ոչ սրիւծ, այլ կատարումն ժամանակի: Եղիա համբարձաւ, և Եղիսէտ ոչ մնաց կրկին ոգուվ ածանել զՅէու. այլ Ազայել հրաւիրեցաւ ի կոտորել զիսրայէլ: Ի գերութիւն վարեցաւ Սեղեկիայ, և Զօրաբարբէ ոչ ուրեք է, որ նորոգէ զպետութիւնն: Անտիօքոս բռնադատէ թողով զօրէնս հայրենիս, և Մատարիայ ոչ ընդդիմակայէ. պատերամ զմեզ շորջ պաշարէ, և Մակարէ ոչ փրկէ: Այժմ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ. արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերամ:

Աւա՞ղ զրկանացս, աւա՞ղ թշուառական պատմութեանս, ո՞րպէս զախսու հանդուրժեցից բերել. զիա՞՞րդ զմիս իմ և զլեզուս պնդեցից, և հատուցից զբանս հարցն՝ փոխանակ ծննդեանն և սննդեանն: Քանզի ծնան զիս իւրեանց վարդապետութեամբն և սնուցին, առ այլս առաքեալով աճեցուցանել: Եւ մինչ նոքա զմերն յուսային զդարձ, և պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիս և կատարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել, անվեհեր երազութեմբ կրթեալք, և առագաստի ասել երզս, – արդ փոխանակ խրախճանութեանն ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ. ուր և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կափուցման, և լսել զվերջին բարբառն և զօրինութիւն:

Այսպիսեաւ անձկաւ հեղձամդուկ եղեալ՝ վտանգիմ կարօտութեամբ մերոյ հօրն: Ո՞ւր է քաղց աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահաւորութիւն առ թիւրս. ո՞ւր զուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն. ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց. ո՞ւր երկայն ճանապարհաց յոյսն հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցանոյ: Կորեաւ ժողովոյն, թագեաւ նաւահանգիստն, ելի՞ք օգնականն, լուսա՞ց ձայնն յորդորեցուցիչ:

Ո՞վ այսուիետն զմերս յարգեսցէ գուսումն. ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս. ո՞վ զիայրականն բարբառեսցի զուարձութիւն, նասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս: Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէն առողջ վարդապետութեան հակառակ յարուցելոցն, որք ամենայն բանիւ քակտեալք և քայքայեալք յոլովս փոփոխեն վարդապետս և բազում գիրս, որպէս ասաց ոմն ի հարցն. առ ամենայն բան նմանապէս դժուարին, և չար օրինակ անձանց գրեն զայն զծիծաղելն զմեօք և զարհամարհելն իբրև զնիաստատնովք, և որ ինչ պիտանացու ունիցի արուեստ: Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով, և զմեզ սփոփեսցէ գովելով, և չափ դնիցէ բանիւ և լռութեան:

Զմտաւ զայսոսիկ ածելով հառաչումն յիս ի ներս ընթանայ և արտօսր, և կամեցուցանէ բարբառել բան տխրական և սպատը: Եւ ոչ գիտեմ, եթէ զիարդ

յարմարեցից գողբերգութիւնս, և կամ զով արտասուցից. զիե՞քն իմ մանուկ և թագաւոր, զխորհրդակցութեամբ վատրարն, զազգաւ ի բաց ընկեցիկն, և նախ քան զմահուն մեռելութիւն՝ անփառութեամբ յաթոռոյն ի վայր կործանեալ, եթէ զիս ինքն, զի վերացաւ ի զիսոյս փարթամացուցիչ պսակն զեղեցիկ և կենցաղօգուտ. զիա՞յր իմ և զքահանայապետ, զմիտսն վսենացեալս, որ երթայր տանէր կատարեալ քան, որով վարերն և յարմարեր, և զերասանակս ի բուռն առեալ՝ ուղղէր զգմսն և սանձահարեր զլեզուս օտարաձայնս, եթէ զիս, թափուր ի Հոգուն մնացեալս խանդից և ցանկանեալ. զծնո՞ղն իմ, աղբիւր վարդապետական, զարդարութեանն ոռոգող, և հեղիեղաւ զամբարշտութիւն արտաքս սահմանելով, եթէ զիս, երաշտացեալ և թարշամեալ պասքութեամբ արբուցմանց խրատու. զաշխարհիս եկե՞ալ աղէտս, եթէ զապագայիցն ակնկալութիւն:

Ո՞վ մեզ յայսոսիկ ձառակցէ հաւասարելով տրտմութեանս, և օգնեսցէ ախտակցելով ասիցս, կամ յարձանս փորագրել: Զարթիր Երեմիաս, զարթիր և ողբա հանդերձ մարգարէանալով որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք. գուշակեա զյառնել հովուաց տգիտաց, որպէս երբեմն Զաքարիս Զաքարիաս յիսրայէլին:

Վարդապետք տիսմարք և ինքնահաճնք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ. արծաթով ընտրեալք և ոչ Հոգուվ. ոսկեսէրք, նախանձուտք, թողեալ զիեզութիւն, յորում Աստուած բնակէ, և գայլք եղեալ՝ գիրեանց հօտս գիշատելով:

Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք:

Վիճակաւորք հապարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վաճառաց և կատակերգութեանց:

Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանք:

Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ:

Զօրականք անարիք, սնապարծք, զինատեացք, պղերգք, հեշտասէրք, անժումկալք, կողոպտիչք, զինարբուք, յուզակուք, համաբարոյք աւազակաց:

Իշխանք ապստամքք, գողակիցք գողոց, կծիկք, կծծիկք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւորք, աղտեղասէրք, ծառայիցն համանիտք:

Դատաւորք տմարդիք, սուտք, խարողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք: Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամօթոյ:

Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուածոյ, և տարերց փոփոխել զբնութիւնս իրեանց: Գարուն երաշտացեալ, ամառն անձրենայոյգ, աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մրրկալից, յերկարացեալ. հողմք բքարարք, խորշակաբերք, ախտահաւաքք, ամպք հրդնկցեք, կարկտածուք. անձրէք անժամանակք և անպիտանք. աղք դաւնաշունչք, եղեմնարկուք. ջրոց առաւելուն անօգուտ և նուազելն ամինարաւոր. երկրի անբերութիւնք պղտոց և անաչելութիւնք կենսանեաց, այլ սասանունք և դղորմունք: Եւ ի վերայ այսր ամենայնի խռովութիւնք յամենայն կողմանց, ըստ այնմ եթէ չիք խաղաղութիւն ամբարշտաց:

Զի թագաւորք տիրեալք խիստք և չարաչարք, բեռինս բաշնալով ծանունս և դժուարակիրս, իրամանս տալով անտանելիս. վերակացուք անհարթարարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք. և թշնամիք զօրացեալք. հաւատ վաճառեալ ընդ սնոտի կենցաղոյս: Հէնք եկեալ անհատք և յոլովից կողմանց. զերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց. կապումն զիսոյս յայտնեաց. յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց. առումն քաղաքք և քանդումն ամրոցաց. աւերումն աւանաց և հրդեհումն շինուածոց. սովքանբաւք և

հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. աստուածաշտութիւն մոռացեալ, և ակնկալութիւն գեհենի:

Յորմէ պահեսցէ զմեզ Քրիստոս Աստուած, և զամենեսեան՝ ոյք Երկրապագեն նմա Ճշմարտութեամբ. և նմա փառք յամենայն Եղականացս ամէն:

ԱՒՐՏԵՑԱՆ ԳԻՐՔ ԵՐՈՈՐԴ«ՑԱՆԿ ԵԼԱՆԵԼՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ